Պերճ Պռոշյան

# ՀՈՒՇԵՐ

ԱՐՄԳԻԶ

891.99.092(Պռոշյ)2
Պ-93

185

13 APR 2011

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք.

ОБЯЗАТЕЛЬНЫЙ
ЭКЗЕМПЛЯР

АКАДЕМИЯ НАУК СССР.—АРМЯНСКИЙ ФИЛИАЛ

ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ И ЯЗЫКА

70.285

ПЕРЧ ПРОШЬЯН

# МЕМУАРЫ

Текст, введение и комментарии подготовил
ХОРЕН САРКИСЯН

Редактор ОВИК МЕЛИКЯН

Издательство АрмФАН-а

Ереван 1940

ԽՍՀՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ.—ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

891.99.092 [Պռոշյան]
Պ-93

ՊԵՐՃ ՊՌՈՇՅԱՆ

# ՀՈՒՇԵՐ

Տեքստը, ներածությունը և ծանոթագրությունները պատրաստեց
ԽՈՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Խմբագիր՝ ՀՈՎԻԿ ՄԵԼԻՔՅԱՆ

ԱՐՄՖԱՆ-Ի ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1940

23. 07. 2013

Տպագրվում է ՍՍՀՄ Գիտ. Ակադեմիայի Հայկական Ֆիլիալի
Նախագահության վորոշումով

Гос. Публ. Библиотека ՀՍԽՀ-ССР им. А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
648
41

# ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Պերճ Պռոշյանի հուշերը— վորի մի փոքրիկ մասը միայն՝ ընդլայնած ու մշակած՝ հրատարակել է հեղինակը «Հուշիկներ» վերնագրով (1894 թ.)— փաստալից մի դոկումենտ է, վորը շատ կարեվոր և հետաքրքրական տեղեկություններ է պարունակում հայ գրականության ու կուլտուրայի պատմության վերաբերյալ, ապա նաև լույս սփռում հեղինակի ուշագրավ կյանքի վրա:

Առատորեն փաստեր մատակարարելով՝ Պռոշյանը միշտ չէ կարողանում ճիշտ ըմբռնել հասարակական յերևույթների ներքին էությունը և այդ իսկ պատճառով հաճախ սայթաքում է իր գնահատականների մեջ:

Այսպես որինակ, իրավացիորեն բարձր գնահատելով Մ. Նալբանդյանի հասարակական գործունեությունը և նրա նշանակությունը հայ գրական լեզվի պատմության մեջ, Պռոշյանը թերագնահատում է Ս. Նազարյանին: Մինչդեռ Նազարյանը, իր քաղաքական-հասարակական հայացքներով, ի հարկե, տարբերվելով Նալբանդյանից՝ խոշոր նշանակություն ունի թե՛ հայ հասարակական մտքի պատմության և թե՛ լեզվաշինարարության մեջ:

Պռոշյանը հաճախ կենցաղային համեմատաբար մանր փաստերից մեծ և սխալ յեզրակացություններ է անում: Այսպես է նա վարվում Գ. Արծրունու հետ, այսպես է նա վարվում Տեր-Ավանդալեյի հետ, աչառու չէ Աղայանի նկատմամբ ու անտեղի վիրավորում է նրան և այլն:

Չնայած այս մի քանի թերություններին, Պռոշյանի հուշերը արժեքավոր նյութ են պարունակում հայ հասարակական կյանքի պատմության համար:

Այդ նկատի ունենալով՝ Ինստիտուտը կարևոր համարեց հրատարակել մեծանուն վիպասանի այս ժառանգությունը:

13 նոյեմբերի, 1940 թ.
Յերևան



Պ. Պռոշյանը 80-ական թ. թ. վերջին:
Ֆոտո: Սեփականություն Պետական Գրական Թանգարանի:

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ա. Պերճ Պռոշյանի «Հուշերը» բաղկացած են յերեք մասից՝ «Ինքնակենսագրություն», «Օրագիր» և «Ներածություն»:

«Ինքնակենսագրություն»-ը գրված է 1886 թ. Յերևանում, սկսված է փետրվարի 15-ին: Ինկատի ունենալով Պռոշյանի արագագրությունը, կարելի յե յենթադրել, վոր նա իր այս աշխատանքն ավարտել է վոչ ուշ քան մարտի վերջին կամ ապրիլին: Համենայն դեպս, Ոստրովսկու «Доходное место» պիեսի թարգմանությունը, վորի ձեռագիրը գտնվում է միևնույն տետրակի մեջ, ինչ և «Ինքնակենսագրություն» ձեռագիրը, ու նախորդում է վերջինիս, կատարված է փետրվարի 2—15-ի արանքում:

«Ինքնակենսագրության» գրության ավելի լայն սահմանները վորոշվում են այն հանգամանքով, վոր նրա 64-րդ եջին Պռոշյանը հասել է Սմբատյան Մեսրոպ յեպիսկոպոսի տեսչության որոք Գեվորգյան ճեմարանում, իսկ վերջինս տեսուչ նշանակվել է 1886 թ. հունվարին ու արձակվել այդ պաշտոնից նույն թվի հունիսին: Հետևապես՝ «Ինքնակենսագրություն»-ը, վոր ունի ընդամենը 96 եջ, ավարտվել է վոչ ուշ քան, համենայն դեպս, 1886 թ. հուլիս-ոգոստոս ամիսներին:

«Ինքնակենսագրություն»-ը ընդգրկում է Պռոշյանի կյանքը՝ սկսած մանկությունից մինչև նրա վերադարձը Հաշտարխանից 1877 թ. կամ մինչև նրա՝ Յերևանի թեմական տեսուչ նշանակվելը 1879 թ. ապրիլին: 1879—86 թ. թ. մասին Պռոշյանը գրում է ընդամենը միքանի տող:

«Ինքնակենսագրության» ավարտումից չորս տարի հետո, 1890 թ. մայիսի 6-ին, Պռոշյանը, վոր արդեն վոչ թե Յերևանում եր, այլ Թբիլիսիում ու Ներսիսյան դպրոցի ուսուցիչ, միևնույն տետրակում սկսում է գրի անցկացնել որվա դեպքերը: Քանի վոր այս եջերն սկզբունքորեն տարբերվում են «Ինքնա-

կենսագրություն»-ից— սրանք հուշեր չեն, այլ որվա տպավորությունների անմիջական արձանագրություններ,— մենք այն անվանեցինք «Օրագիր»։ «Օրագիր»-ը ընդգրկում է 1890-92 թ. թ. ու վերաբերում է գլխավորապես Պռոշյանի կրած հալածանքներին Աբգար Հովհաննիսյանից, ու Գր. Արծրունու թաղմանը։

Բացի այդ ընդարձակ տետրակից, ուր Պռոշյանը գրի յ[illegible] ուել «Доходное место»-ի թարգմանությունը, «Ինքնակենսագ[illegible]թյուն»-ը և «Օրագիր»-ը, նա առանձին ունի նաև 9 մեծադիր եջից բաղկացած մի անավարտ գրություն, որ վերնագրած է. «Հուշիկներ. յերկրորդ շրջան. 1860-ական թվականներ»։ Սա, իսկապես, «Հուշիկներ»-ի յերկրորդ շրջանի ներածությունն է։ Այդպես էլ մենք անվանեցինք այս գրությունը։ «Ներածություն»-ը, իհարկե, գրված է 1894 թ. հետո, այսինքն՝ «Հուշիկներ»-ի ա. շրջանի տպագրությունից հետո։ Նրա մի արտահայտությունը Մխիթարյանների մասին, այն է՝ «...սկսած միաբանության հիմնադիր Մխիթարից, յուր քաջ հայկաբան հաջորդներից մինչև այսոր կամ, ճիշտը, մինչև յերեկ, ամենից ավելի [illegible]նշանավոր ու վաստակավոր մեծ հոգևորականը, աշխար[illegible]չակ Ալիշանը...» (եջ 6) և այլն, թույլ է տալիս մեզ ընդունելու, որ այն գրված է նաև 1901 թվից, այսինքն Ալիշանի մահվանից հետո։ Պռոշյանի մի այլ գրությունը, որ մենք մեջ կբերենք սույն ներածության վերջում, և որը «Հուշիկներ»-ի բ. շրջանին կամ նրա մի մասին վերաբերող ծրագրային նշումներ է ներկայացնում իրենից, թույլ է տալիս մեզ ասելու, որ «Ներածություն»-ը կարող է գրված լինել չուրջ 1904 թ.։ Ընդհանուր ձևով կարելի յե ասել, որ «Ներածություն»-ը գրված է 1901—7 թ. թ. սահմաններում, այսինքն Ալիշանի և իր, Պռոշյանի, մահվան արանքում։

«Օրագրում», 1892 թ. նոյեմբերին Պռոշյանը գրում է. «Ես չեղավ, իզուր յես հիշատակարանս չեմ գրում, պետք է մի օր նորից վերադառնալ և սկսել թեմական տեսչական պաշտոն առած օրից և կարգապահությամբ գրել» (եջ 107)։ Ցեվ իսկապես. «Օրագրին» հաջորդող հենց առաջին թերթի ճակատին գրված է ու յերկու անգամ ընդգծած՝ «Հուշիկների շարունակությունը»։ Սակայն, դժբախտաբար, այս յերկու բառից դենը Պռոշյանը չի գնում, թերթը մնում է դատարկ ու հիշողությունները շարունակելու մտադրությունը առմիշտ չիրագործված։

Այսպիսով, «Պ. Պռոշյանի հուշերը» սպառվում են վերևը հիշված յերեք դրվագներով։

Բ. Պռոշյանի կենդանության որոք նրա հիշողությունների վորոշ մասը հրատարակվել է։ Այս շարքում առաջին տեղը գրավում է «Հուշիկները» հատորյակը։



«Հուշիկներ»-ը հրատարակվել է 1894 թ. Թբիլիսիում ու բաղկացած է 271 փոքրադիր եջից։ Նա ընդգրկում է Պռոշյանի կյանքը, սկսած նրա մանկությունից մինչև 1859 թ., յերբ մեր հեղինակը, ծանոթանալով Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի»-ի հետ ու խիստ վոգևորվելով այդ գրքով, սկսում է գրել «Սոս և Վարդիթեր»-ը, ցույց տալիս գրածը իր ուսուցիչ Հակոբ Կարենյանին ու հավանություն ստանում վերջինից։ Փաստորեն այս ժամանակահատվածը կարող է համարվել Պռոշյանի կյանքի լոկ նախերգանքը։ Մեր հեղինակի կյանքի մեծագույն մասը մնում է «Հուշիկներ»-ի այս հատորից դուրս, հատոր, վորի վերնագրի տակ գրված են «Ա. շրջան» բառերը։ Պարզ է, վոր— ըստ Պռոշյանի հղացման— ա. շրջանին պիտի հետևեյին բ., գ. և այլ շրջանները։ Թե քանի հատորից պիտի բաղկացած լիներ ամբողջ «Հուշիկներ»-ը— այդ մեզ հայտնի չէ, բայց վոր այն մի քանի հատոր պիտի ունենար —դա միանգամայն պարզ է։

«Հուշիկներ»-ի ա. շրջանն ընդգրկում է «Ինքնակենսագրության» 19 և կես եջը, վորոնց վրա, թերթի յերկայնությամբ, խաչեր են քաշված Պռոշյանի կողմից՝ ի նշան օգտագործման։ [illegible] այդ 19 և կես եջից հանենք առաջին 2 և կես եջը, այսինքն՝ մեր կողմից «առաջաբան» անվանված մասը, վորը հետագայում Պռոշյանը չի մտցնում «Հուշիկներ»-ի մեջ և վորտեղ նա խոսում է ինքնակենսագրություն գրելու չարժանիքի մասին— կստացվի ուղիղ 17 եջ։ «Ինքնակենսագրության» այդ 17 եջին համապատասխանում է «Հուշիկներ»-ի 271 եջը. «Հուշիկներ»-ում Պռոշյանը մի կողմից ընդլայնում է «Ինքնակենսագրության» տվյալները, մյուս կողմից ավելացնում բազմաթիվ նոր եջեր։ Յեթե մենք նկատի ունենանք, վոր այդ 17 մշակված եջը կազմում են «Ինքնակենսագրության» միայն $1/5$ մասը, իսկ մնացած $4/5$ մասը մնում է անմշակ, դժվար չի լինիլ պատկերացնել, թե ինչպիսի հարուստ նյութ կտար մեզ Պռոշյանը, յեթե ի վիճակի լիներ մշակելու և այդ մասը ու առհասարակ գրի առնելու «Հուշիկներ»-ի մնացած հատորները։

Տեղն է այստեղ կանգ առնել «Հուշիկներ»-ի հրատարակված հատորի առաջաբանի վրա։ Պռոշյանը գրում է. «Հուշիկներս այսորվա գործ չեն, յերկար տարիների արդյունք են։ Գիտակցության յեկած օրից սովորություն եյի արել՝ ընդհանրության և ի մասնավորի իմ անձին վերաբերյալ աչքի ընկնող դեպքերը գրի առնել։ 1880 թվի սկզբներին՝ ամուսնույս և բարեկամներիս ստիպմամբ և խնդրանոք «Հուշիկներս» ժամանակագրական շրջանների բաժանեցի և կարգի տակ դրի, բայց տպագրությունը վաղաժամ համարեցի»։ Յեթե Պռոշյանի «կարգի տակ դրած» հիշողությունները հենց մեր այս «Ինքնակենսագրություն»-ն է, ապա նրա հայտարարությունը «Հուշիկներ»-ում տեղիք է տալիս

[redacted]

մի շարք տարակուսանքների: Նախ՝ «Ինքնակենսագրություն»-ը կարծես յե բերված ոչ թե 1880 թվի «սկզբներին», այլ, ավելի շուտ, «վերջերին»: Յերկրորդ. «Ինքնակենսագրություն»-ը «ժամանակագրական շրջանների» չի բաժանված, այլ ժամանակագրական կարգով շարադրված է լոկ: Յերրորդ. ժամանակի հետ առընչություն ունեցող Պռոշյանի յերկբայական և անորոշ արտահայտությունները «Ինքնակենսագրության» մեջ («յեթե չեմ սխալվում», «մի որ» և այլն), նրա այնտեղ թույլ տված ժամանակագրական սխալներն ու անճշտությունները, վերջապես, շարադրանքի ամբողջ բնույթը, տրամադրում են մեզ ասելու, որ «Ինքնակենսագրություն»-ը ավելի շուտ հիշողությունների կարգով է գրված, քան թե գրառումների (запись) հիման վրա:

Սրանով մենք չենք ուզում ասել այն քիչ հավանական յենթադրությունը, իբր բացի «Ինքնակենսագրություն»-ից Պռոշյանը ունեցել է հիշողությունների ևս մի այլ, մեզ չհասած տետրակ: Ավելի շուտ պետք է ասել, որ «Հուշիկներ»-ի առաջաբանում Պռոշյանը նորից թույլ է տալիս իրեն անճշտություններ ու միաժամանակ յենթադրել, վոր «Ինքնակենսագրություն»-ը մասամբ գուցե գրված է գրառումների հիման վրա: Չմոռանանք, վոր մեր այս հատորի «Օրագիր»-ը հենց այդպիսի մի «գրառում» է: Վերհիշենք Պռոշյանի խոսքերը «Արձագանք»-ի էջերում այն մասին, վոր ինքը ունի «Մշակ»-ի «սկզբնավորության և շարունակության օրական հիշատակարանը» (1890, № 10) և այլն: Պարզ է, վոր Պռոշյանին այս կամ այն չափով հատուկ է օրագիր ունենալու սովորությունը և վոր այդ օրագրերը— թեկուզ մասնակի կերպով— կարող էին հիմք ծառայել նրան «Ինքնակենսագրության» գրության ժամանակ:

«Հուշիկներ»-ից հետո Պռոշյանի կենդանության օրոք հրատարակված հիշողություններից առաջին հերթին պետք է նշել «Գյուղական վարժապետներ»-ը («Արձագանք», 1888— №№ 43 և 47, 1889— №№ 1 և 2): Այս հուշերում կամ ակնարկներում Պռոշյանը մանրամասն ու շատ հետաքրքիր կերպով նկարագրում է Աշտարակի խալիֆայական դպրոցը, Վահան խալիֆային, Տապուհ Տահնազարյանին, Խ. Աբովյանի գալուստը Աշտարակ: Սրանք ամենը ծանոթ նյութեր են ու դուրս չեն գալիս «Հուշիկներ»-ի, հետևապես նաև «Ինքնակենսագրության» մեջ հայտնի 17 էջերի սահմաններից:

Դուրս չի գալիս այս սահմաններից նաև Պռոշյանի յերկրորդ հիշողությունը, վորի վերնագիրն է՝ «Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» և իմ «Սոս և Վարդիթերը»» («Հանդես Գրականական և Պատմական», 1895, № 6): Այստեղ, մի քիչ այլ ձևով և ընդարձակ, արվում է միևնույն պատմությունը,



ինչ և «Ինքնակենսագրության» յերկրորդ, իսկ «Հուշիկներ»-ի III գլուխներում:

Նորություն է արդեն Պռոշյանի «Հայոց թատրոնի սկզբնավորությունը Թիֆլիզում» հուշերը («Թատրոն», 1893, № 1), վոր 60-ական թվականներին վերաբերելով՝ բնավ բացակայում են «Հուշիկներ»-ում, ու լինելով շատ ավելի մանրամասն և ընդարձակ՝ համապատասխանում «Ինքնակենսագրության» 22—34 էջերին (5—7 գլուխներ): Այս հիշողությունների ու «Հուշիկներ»-ի մի կողմից, մյուս կողմից «Ինքնակենսագրության» համապատասխան էջերի փոխհարաբերության կարևոր կետերը կպարզաբանվեն ծանոթագրություններում:

Հինգերորդն է՝ «Քսան և հինգ տարի առաջ և այսօր» հիշողությունը («Տարազ», 1892, № 47): Սա վերաբերում է Ագուլիսի յերկսեռ դպրոցի հիմնադրմանը 1867 թ. ու համեմատ «Ինքնակենսագրության» հետ՝ վորոշ մանրամասնություններ է պարունակում իր մեջ:

Հիշողությունների շարքին կարելի յե դասել նաև «Լուսանկարչի հիշատակարանից» ակնարկը («Տարազ», 1893, № 24 և «Մասիս», 1893, էջ՝ 458—463):

Սրանով սպառվում են Պռոշյանի՝ մեզ հայտնի՝ հիշողությունները, հրատարակված նրա կենդանության օրոք:

Գ. Ինչպես ասացինք վերև, «Ինքնակենսագրության», «Օրագրի» և «Доходное место»-ի թարգմանության ձեռագրերը գտնվում են մի տետրակում: Տետրակի համարն է՝ 137/79 (առաջին թիվը Պետ. Գրական Թանգարանում գտնվող Պռոշյանի արխիվի ընդհանուր համարն է): Այդ տետրակը դասարանական մատյան է, հավանորեն Յերևանի թեմական դպրոցի, և ունի 21×33,5 մեծություն: Տետրակի 1—204 էջերը համարակալված են թանաքով՝ Պռոշյանի կողմից. սա «Доходное место»-ի թարգմանության և «Ինքնակենսագրության» մասն է: 205—231 էջերը համարակալված են մատիտով՝ Գրական Թանգարանի կողմից. սա «Օրագրի» մասն է: Տետրակի շապկի վրա մեծ ու պարզ տառերով գրված է Պռոշյանի ձեռքով.

Արդյունավոր տեղ (պաշտոն).
Հեղ. Островсկու
Թարգմ. Պերճ
Պռոշյանցի

1886. 2 II-ի. Յերևան

«Արդյունավոր տեղ»-ը գրավում է 1—106 էջերը: Բաց թողնելով 107—108 էջերը, այսինքն՝ մի թերթ, Պռոշյանը 109 էջից սկսել է գրել «Ինքնակենսագրություն»-ը ու ավարտել այն 204 էջի վրա: «Ինքնակենսագրության» առաջին կամ տետրակի

109 էջի վրա, մի անգամ ընդգծած «Ինքնակենսագրություն» վերնագրից վերև Պռոշյանը գրել է՝ 1886, փետրվար 15. սա «Ինքնակենսագրության» սկսելու տարեթիվն է: «Ինքնակենսագրություն»-ից հետո, Պռոշյանը, մկրատով մի թերթ կտրելով, սկսում է «Որոգիր»-ը, որը գրավում է 205—231 էջերը: Վերև հիշված «Հուշիկների շարունակությունը» բառերը գտնվում են 233 էջի վրա:

«Ներածության» ձեռագիրը— ինչպես արդեն մեզ հայտնի է— կապ չունի «Ինքնակենսագրության» և «Որոգրի» հետ ու կազմում է 6 թերթից բաղկացած առանձին, չկարված ու 22×35 մեծություն ունեցող մի տետրակ: Համարը՝ 137/38: Առաջին էջի վերևում գրված է մեզ հայտնի վերնագիրը՝ «Հուշիկներ. յերկրորդ շրջան. 1860-ական թվականներ»: Այս բառերի տակ անմիջապես գրված է՝ Ա, այսինքն առաջին գլուխ, որ մենք— ելնելով բովանդակությունից— Ներածություն անվանեցինք: «Ներածություն»-ը ընդհատվում է տետրակի 9-րդ էջի վրա:

«Հուշիկներ»-ում Պռոշյանը գանգատվում է, որ ինքը թույլ է գեղագրությունից: Պռոշյանի ձեռագիրը, իսկապես, դժվարընթեռնելի է: Պռոշյանն ունի նաև պարզ գիր. դա ստացվում է այն դեպքում, երբ նա դանդաղ է գրում: Բայց քանի որ մեր աշխույժ ու կենդանի հեղինակը գերազանցորեն արագ էր գրում, այդ պատճառով էլ նրա գրության դժվարընթեռնելիությունը մնում է իր ուժի մեջ: Քիչ ժամանակ և յեռանդ չմնաց վերարտադրելու համար Պռոշյանի անտիպ այս հուշերը և այնուամենայնիվ մի շարք արտահայտություններ մնացին տակավին չվերծանված: Առանձնապես դժվարություններ հարուցեց «Ներածության» ձեռագիրը, որտեղ Պռոշյանի արտասովոր ու հանրահայտ արագագրությունը հասնում է իր գագաթնակետին: Հետևելով իր հախուռն մտքին ու պատկերներին, Պռոշյանը կայծակի արագությամբ շարում է բառերը իրար յետևից ու թեև այդ հեղեղում քիչ դեպքում է կուլ գնում բառը, բայց տառերի յուրատեսակ միացումով՝ հաճախ է կատարելապես անընթեռնելի դառնում այն: Այդ տեսակետից ամենից հեշտ նյութը «Որոգիր»-ն է: «Ինքնակենսագրություն»-ը շատ դժվար տեղեր ունի, բայց ամենադժվարինը նրա մեջ այն, մեր կողմից «ծրագրային նշումներ» կոչված մասերն են, որոնք ավելացված են հետագայում ու գրված նեղ լուսանցքներում — բառը հաճախ այստեղ ոչ թե գրվում է, այլ միայն նշվում, վերածվում յերոգլիֆի:

Պարզ է, որ Պռոշյանի այս ծայրահեղ արագագրության, այլև հրատարակվելիք հուշերի ընդհանրապես անմշակ լինելու հետևանքով, պետք էր հիմնական խմբագրման յենթարկել այն,



անկախ ուշադիր դիտման մատակարարած այն տվյալի, որ Պռոշյանը, մանավորապես «Ինքնակենսագրություն»-ը գրելուց հետո, մի անգամ ևս աչքի տակով անց է կացրել այն ու հենց այդ ժամանակ էլ այլ թանաքով արել իր դիտողությունները լուսանցքում («ծրագրային նշումներ») ու տեղ-տեղ գործածել նաև մատիտ: Պռոշյանի հուշերի ուշադիր խմբագրմանը հարկադրվում էր նաև այն, որ այդ հուշերը գրված են հին ուղղագրությամբ, մեզանից բավական շատ առաջ, 80-ական թվականներին— էլ չենք խոսում այն մասին, որ յուրաքանչյուր, նամանավանդ առաջին անգամ տպագրվելիք տեքստ ընդհանրապես— անկախ այլ, բարդացնող հանգամանքներից— միշտ կարոտ է փորձ ու անհրաժեշտ խմբագրման:

Պռոշյանի անտիպ հուշերի տեքստը պատրաստելիս՝ ղեկավարվել ենք հետևյալ նորմաներով.

1. Բացառությամբ վերջակետի, որը շատ քիչ դեպքում է բաց թողնվում, Պռոշյանը տրոհության և առոգանության մնացած նշանների նկատմամբ հաճախ անփույթ է: Այդ բացը լրացվում է:

2. Բաց թողնված կամ տվյալ նախադասության իմաստը լրացնող բառերը գրվում են քառակուսի փակագծերի մեջ: Նույնն արվում է նաև առանձին բառերի բաց թողնված մասերի նկատմամբ:

3. Քառակուսի փակագծերով են նշվում նաև անընթեռնելի բառերը, ըստ որում մեկ անընթեռնելի բառ լինելու դեպքում գրվում է՝ [1 անընթեռնելի], յերկուսի դեպքում՝ [2 անընթեռնելի] և այլն: Հարցական նշանի տակ են առնվում այն բառերը, որոնց ընթերցանությունը կասկածելի է:

4. Խոշոր սխալների սրբագրումը նշվում է տողատակում: Մանր սխալները սրբագրվում են առանց այդ նշումի:

5. Անհրաժեշտ դեպքերում բառերը յետ ու առաջ են գրվում առանց նշումի:

6. Պռոշյանը գրում է՝ «այն տեղից», «առ այժմ», «որպես գի» և այլն: Մենք դարձրինք. «այնտեղից», «առայժմ», «որպեսզի» և այլն: «Աշխարհաբար» և «գրաբար» բառերը թողինք այնպես, ինչպես գրում է ինքը Պռոշյանը. «աշխարհաբառ», «գրաբառ»:

7. Պատիվ ունեցող բառերը գրվեցին լրիվ:

8. Գլխատառով գրված մի շարք բառեր գրվեցին փոքրատառով («Առաջնորդարան» — «առաջնորդարան» և այլն):

9. Պռոշյանը գերազանցորեն գործ է ածում «նորա», «վերա» և այլն, շատ քիչ դեպքում նաև՝ «նրա», «վրա» և այլն: Թողնվեց այնպես, ինչպես յուրաքանչյուր անգամ գրել է ինքը Պռոշյանը:

10. Գրաբար նախադասությունները գրվեցին հին ուղղա-

գրությամբ ու գրվեցին չակերտների մեջ: Առանձին գրաբար բառերը կամ ձևերը գրվեցին նոր ուղղագրությամբ ու առանց չակերտների:

11. Կարևոր ջնջումները վերարտադրվեցին տողատակին:

12. Պռոշյանի այն հակիրճ դիտողությունները, որ չասպ կերպով արված են լուսանցքներում վերընթերցանության ժամանակ՝ հետագայում այն ծավալելու նպատակով, «ծրագրային նշում» անվանվեցին ու տեղավորվեցին տողատակին:

13. «Ինքնակենսագրություն»-ը բաժանված է բազմաթիվ մասերի, որոնք իրարից զատվում են իրար հատող ջուխտ զուգահեռ գծիկներով: Պռոշյանի այդ բաժանումները մինչև ընկատի ունենալով՝ ամբողջ «Ինքնակենսագրություն»-ը վերաբաժանվեց 23 մասի կամ գլխի: Քառակուսի փակագծերի մեջ դրվեցին այն գլուխները, որոնք տրվել են ոչ ըստ Պռոշյանի բաժանման: Պռոշյանի բաժանման նիշերը թողնվեցին այն դեպքում, երբ նրանք այս կամ այն պատճառով ի վիճակի չեյին գլխավորելու ինքնուրույն գլուխ: Դեն ձգելով քառակուսի փակագծերի մեջ դրած գլուխները, ընթերցողը հեշտությամբ կարող է ստանալ Պռոշյանի բաժանման պատկերը:

14. Պռոշյանի հուշերի ձեռագիր տետրակի էջերի հաշիվը նշվում է լուսանցքում: «Ինքնակենսագրության» առաջին էջը ձեռագիր տետրակում դրավում է 109 էջը. այդպիսով, ձեռագրի էջը ստանալու համար յուրաքանչյուր անգամ հարկավոր է գումարել 108: Պռոշյանի հուշերի էջերի մատնանշումները ծանոթագրություններում և այլ տեղերում արվում են համաձայն ոչ թե տպագիր, այլ ձեռագիր էջի: «Ներածություն»-ը առանձին տետրակում գրված լինելով՝ ունի էջերի իր սեփական հաշիվը:

Ծանոթագրություններ կազմելիս մեծ դժվարությունների հանդիպեցինք: Մեզանում բացակայում են տեղեկատուներ (справочники) և այլ օժանդակ ձեռնարկներ: Հաճախ որևէ անձնավորության ծննդյան և մահվան տարեթվերը գտնելու համար հարկավոր էր լինում թերթել մի քանի տարիների պարբերականներ: Այնուամենայնիվ, մենք ամեն կերպ աշխատեցինք, որպեսզի մութ կետեր համեմատաբար քիչ մնան հուշերի ընթերցանության ժամանակ: Կենսագրականները կազմել ենք, ելնելով գերազանցորեն այն բանից, թե որքան տվյալ անձնավորությունը կարևոր է Պռոշյանի ստեղծագործության և կյանքի տեսակետից, աշխատելով միաժամանակ ինչքան կարելի յե հակիրճ լինել: Հանրահայտ մարդկանց, ինչպես նաև այն մարդկանց կենսագրականները, որոնց մասին հատուկ ասելիք չունեինք կամ ի վիճակի չենք յեղել նոր բան հավաքելու— գե-



տեղեցինք ոչ թե ծանոթագրություններում, այլ միայն հատուկ անունների ցանկում: Սպառիչ լինելու հավակնությունը, ի հարկե, չունենք:

Ընթերցողների կարիքները լրացնելու համար, վերջում դըրինք Պռոշյանի կյանքի տախտակը (մանրամասն մինչև 1879 թ., 1879-ից՝ համառոտ) և հատուկ անունների այբուբենական ցանկ (որտեղ քառակուսի փակագծերի մեջ դրած «Ն» տառը նշանակում է, որ նրա կից թիվը վերաբերում է «Ներածության»-ը):

Ընկ. Ցե. Շահազիզը մասնակցեց Գրական Թանգարանի կազմակերպած էքսպեդիցիաներին դեպի Աշտարակ և հաղորդեց մեզ մի շարք կարևոր տեղեկություններ թե՛ Աշտարակի և թե՛ Պռոշյանի մասին: Այս ամենի համար հայտնում ենք նրան շնորհակալություն:

Դ. Վերջում անհրաժեշտ ենք համարում վկայել Պռոշյանի յերկու ինքնագրերը, որոնք անպայմանորեն վերաբերում են «Հուշիկներ»-ի բ. շրջանին, այն է՝ 60-ական թվականներին ու ներկայացնում են իրենցից ծրագիր կամ հուշաթերթ:

## I

Մեծություն՝ 13 × 21: Էջի սկզբին ջնջված է. 9 դեկտ[եմբերի] 1940, Թիֆլիս: Մի շարք ազգանուններից առաջ և հետո դրած + և < նշանները մնացին չբացատրված:

ա. էջ

1859—1860 թվականների գործիչներ

+Պետրոս Շանշյանց
+Պետրոս Սիմոնյանց
+Գաբրիել Խատիսյանց
Դավիթ Մելիքյանց <
Լևոն Եղիազարյանց <
Ստեփան Սարգսյանց <
+ Միք[այել] Միանսարյանց <
+ Գր[իգոր] Իգմիրյանց <
+ Գաբր[իել] Սունդուկյանց <
Նիկ[ողայոս] Փուղինյանց <
+ Մարկ[ոս] Աղաբեգյանց <
+ Համբ[արձում] Ենֆիաճյանց <
+ Գարեգին Մուրատյանց <
+ Կար[ապետ] Ցեզյանց <
Ռոմանոս Նադիրյանց <
[+] + Հակ[ովբ] վարժապետ Կարենյանց <

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССР

\+ Միք[այել] Պատկանյանց
Սող[ոմոն] Աբամելիքյանց
\+ Բժշկապետ Միք[այել] Տեր-Գրիգորյանց <
Ավետիք Ավեշնիկյանց
Դանիել Իզմիրյանց
Ավետիք Ենֆիաճյանց, գրավաճառ
Կողքից՝ Թումանով
Իսահակ Գուրգենբեկյանց

բ էջ.

Բժշկապետ Արտ[եմի] Իվ[անովիչ] Հովհաննիսյանց <
Ցազոն Թումանյանց <
\+ Գալուստ Ծերմազանյանց
Աղեքս[անդր] Լազ[արեվիչ] Թայիրյանց
Ցերեմիա Արծրունի
Դավիթ Խերոդինյանց
Ղազո (?) Մանդինյանց
Իշխ[ան] Հով[հաննես] Արղությինսկի
Հով[հաննես] Ամրիկյանց <
\+ Ստեփ[աննոս] Նազարյանց <
Մսեր վարժապետ
\+ Միք[այել] Նալբանդյանց <
\+ Մկրտիչ Եմին <
[+ + Գաբր[իել] վարդ[ապետ] Այվազովսկի
\+ Ամբրոսիոս [Վ. Այվազյան]
\+ Խորեն [Վ. Գալֆայան]
\+ Սարգիս վարդապետ Թեոդորյան
Մակար եպիսկոպոս <
Գաբր[իել] Մելքումյանց
\+ Աղ[եքսանդր] Ցերիցյանց
Խաչ[ատուր] Արվանյանց
Հով[հաննես] Ղայթմազյանց
Պրոկ[ուրոր] Վասակյանց
Հովսեփ Ջերքեզյանց
Հով[հաննես] Հովհաննիսյանց
Մատթեոս եպիսկոպոս Աստրախանի
Սարգիս եպիսկոպոս Ջալալյանց
Գեորգ եպիսկոպոս Վեհապետյանց
Աջ կողքից՝ թերթը ավարտվելու հետևանքով.
Ռաքել Արարատյանց
Տեր Որբելի
Ցուրի Հախվերդյանց
Վասիլ Հախվերդյանց



II

Մեծություն՝ 18 × 22:

Մի շարք արտահայտությունների առջև դրված —, < և [+] նշանները, ինչպես նաև մի քանի ազգանունների կից փակագծերում նշված էջերը՝ մնացին չբացատրված:

ա. էջ

(+ Տեր Մովսես, Սահառունի, տեր Սրապիոն և տեր Ղազար ավագները սկսած Ներսեսի ժամանակից:
— Մատթեոս կաթողիկոսի Թիֆլիս յերկրորդ գալուստը, տեր Ներսես Աբովյանց.
— Սղնախի, Թելավի դպրոցների իրավունքը.
— Սարգիս յեպիսկոպոսի դեմ դժգոհության ավելանալը. ջնջած՝ Միք[այել] Նալբանդյանց.
— Սահառունու կարճօրյա տեսչությունը...
— Ղայթմազյանց և Շարիֆ.
— Թայիրովի և Մանդինյանցի հաշվետվությունը տված տեր... ձեռքով գրած.
— Հյուսիսափայլի և Մեղուի կռիվները. Հյուսիսափայլի պաշտպաններ և իրանց վերաբերմունքը. Արտեմ Իվանովիչ [Հովհաննիսյանց].
— Կռունկի հրատարակության չարժանիքը. Համբարձ[ում] Ենֆ[իաճյանց] և Գաբր[իել] Մելքումյանց.
— ... կամ բողոքականություն, ծեծ. Սարգիս յեպիսկոպոսի վերա քննիչ, նախ Ցեղխազար և ապա Մակար.
— Ներսիսյան դպրոցի կանոնադրությունը. Ցերեմ[իա] Արծրունի. Միանսարյանց.
— Հոգաբարձական ընտրություններ. պատգամավորություններ.
Կռունկի ծնունդը. իմ մասնակցությունը...
— Խանութների չինելը, հիմքը. Հակոբ վարժապետի ժամանակավոր հոգաբարձությունը և տեր Հակոբի վերակացությունը ու 2000 դողանալը հոգաբարձուաց...

բ. էջ

— Տեր Ներսես Աբովյանց. կաթողիկոսի բ. գալը.
— Մակարն առաջնորդ Սարգսի փոխարեն.
< Արամյան տեր Գեորգ (տես յերես 121).
< Տեր Գալուստ Փափազյանց (տես յերես 125)

< Սահառունի (յերես 129)
< Հայախոսություն 60-ական թվականներին (յերես 130)·
< Պետրոս . . . (յերես 193)·
< Մաթեվոս յեպիսկոպոս . . .(տես 202)·
Նիկողայոս Տեր–Հակոբյանցի գիմնազիան և Մոնասաերցեվը·
Գեորգ Աբովյանց:



# ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## [ԱՌԱՋԱԲԱՆ]

1 Այս գործին ձեռնամուխ լինելուն ինձ առիթ են տվել վոչ իմ հեղինակության վերա ունեցած վստահությունս, վո՛չ անձնապարծության և յեսականության թուլությունը և վո՛չ ուրիշ արտաքին հարկադրիչ հանգամանքներ, այլ այն դժվարությունները, վորոնք ներկայանում են գլխավոր հետազոտիչներին կամ կրիտիկոսներին այս և այն հեղինակաց յերկասիրությունները ի լույս ընծայելիս կամ քննության յենթարկելիս: Թողած ստարազգի հեղինակների աշխատություններից կրած դժվարությունները վորևե մատենագրի կյանքից տեղեկություններ ժողովելու ժամանակը, մեր բանասերներն էլ վերջին ժամանակը սակավ տանջանք չեն կրում և ակամայից յենթարկվում սխալ յեզրակացության և սնոտի խորհրդածության:

Փութացրեց ինձ մանավանդ դարուս նշանավոր մատենագիր Մեսրոբ Թաղիադյանցի[1] կենսագրությունը հայր Հովհաննես Մկրյանի[2] աշխատասիրությամբ[3]:

Թե վորքան հավատալի յե Մկրյանի հառաջ բերած կենսագրությունը, անշուշտ «Վոմն» անձի արածը, հավատալ ծանր է, բայց և այնպես, ցանկալի յեր անշուշտ ամեն գրասիրաց մեր նշանավոր և սիրելի Թաղիադյանցին զերծ ճանաչել «Վոմն» պարոնի գրչի տակից[4]:

Միանգամայն թույլ չեմ տալիս ինձ մի նշանախեցի չափ հավատ ընծայել «Վոմն» անձին ցույց տված արատիքների տասներորդ մասն անգամ Թաղիադյանցի նման ազգասեր և միանգամայն լուսավորյալ անձին վերաբերությամբ:

Վորչափ վոր շնորհակալություն Հայր Մկրյանին յուր
2 և ամենքիս սիրելի Թաղիադյանցի կենսագրությունն ապագա պատմությանն ավանդելու համար, այնքան ցավ և վիշտ Թաղիադյանցի յերկասիրություններով վողևորված բանասիրացը:

Իրավ է, Թաղիադյանցի աշխատասիրությունները կըփայլին Հայոց մատենագրության շարքումը հավիտյանս իբրև Թանկագին գոհարներ, բայց յեթե ուղիղ են «Վոմն» կենսագրի ասածները, ըստ իս ամենասկեպտիկ մարդու աչքումն ևս նույն անդամանդների փայլը աղոտացած պետք է թվի:

Ցանկալի յեր ինձ շատ համախոհներ ունենալ, «Վոմն» անծանոթի անձնական թշնամությանց արդասիք տեսնել յուր՝ մեզ թողած կենսագրությունը մեր քաղցր Թաղիադյանցի դեմը: Ուրախալի յեր Հայր Մկրյանի խնդիրը իրագործված լսել, Հնդկաստանի հայոց առաջնորդարանի փոշիների տակից կամ այլ տեղերից Թաղիադյանցի ստույգ կենսագրությունը աշխարհ գալով՝ մաքրվեր, գեթ մի վորոշ մասը, «Վոմն» անծանոթի կուտակած աղտերի:

Խոսք չունիմ, կենսագրի սուրբ պարտականությունն է անաչառությունը: Հայր Մկրյանը, Թաղիադյանցի աշխատասիրության սիրահարը, անաչառության տիպար է յերևում Մեսրոպ կյանքը հետազոտելու ժամանակ, բայց մի՞թե կիրքը մարդուն կուրացնել չի տալիս շատ անգամ: Սակա՞վ կան որինակներ, արդարը հանցավոր ճանաչված և անբարոյականը՝ խիստ բարոյական:

Ցավ վերջապես հաճախ անհետանում են իրական և անհրաժեշտ փաստեր ժամանակակից կրիտիկոսի տեսությունից, թո՛ղ թե նախնի մատենագիրների վերաբերությամբ, վորոնք բոլորը միմիայն յենթադրությանց վերա յեն հիմնված:

Գիտելով, սակայն, վոր յերբ և իցե և վորչափ և իցե իմ կյանքի մի քանի կետերը հետաքրքրության
3 նյութ պետք է դառնան ազգիս բանախույզներից իմ աննշան աշխատության առթիվ, յես լավ համարեցի անկեղծությամբ, իբրև անաչառ դատավոր, ավելի խստորեն քան թե մեղմաբար, գրել իմ ինքնակենսագրությունս, ներողություն խնդրելով ամենքից մարդկային պակասությունների համար:



1

Յես ծնվել եմ Յերևանու նահանգի Աշտարակ գյուղումը, 1837 թվի հունիս ամսին է յեղել ինձ աշխարհ բերողը[5]: Հայրս՝ Ստեփան տեր Առաքելյան Պռոշյանց[6] և մայրս՝ Ցալաք Մարգարյան Մելումյանց— բուն Աշտարակու ծնունդ են յեղել:

Պատանեկության տարիներում հայրս պարսից տիրապետության ժամանակները, չգիտեմ ինչպես, Վրաստանի և Աստրախանի կողմերը յերկար միջոց թափառելուց հետո, վերջապես ամուսնացել է Մելումյանց Մարգարի՝ Աշտարակու նշանավոր մարդկանցից մեկի[7] դստեր վերա և բուն դրել Աշտարակումը:

Յերևի յուր հայր տեր Առաքելի քահանայական պատիվը, կամ մորս դեմքի տգեղությունն է տվել Մելումյանց Մարգարի պես իշխան մարդուն յուր աղջիկը տալ մի աղքատ տղայի: Մի փոքրիկ այգի միայն պապս թողել է ժառանգություն յուր մի հատիկ զավակ Ստեփանին և այլ վոչինչ: Հետևաբար նոր ամուսինները ապրել են յուրյանց սպողունցով: Հայրս դերձակ է յեղել և մայրս նրա օգնականուհին: Իմ ամենախոր հիշողությունը հասնում է մինչև հորս մկրատը, կիսադազը և ընկուզյա դազգյահը (ցած սեղանը, վորի վերա գործում են դերձակները):

Առաջին այբուբենը յես դաս եմ առել հորիցս կամ ավելի ճիշտը՝ միակ մեծ յեղբորիցս[8]: Յերևանից հայրս այբբենարան եր ուղարկել, բայց մի ամսից հետո յեկավ և
4 գտավ վոր յես կարդում եյի: Լուսահոգին շատ ցավեց, յուր ցանկությունն է յեղել ինքն ինձ վարժեցներ տառաճանաչության մեջ:

Ուղիղն ասած՝ էլ կարիք չկար, յեղբորս աշակերտան յուր վարժապետից անցել եր: Չգիտեմ բնական ընդունակությանս վերագրելո՞ւ յե, թե դասագրքիս նորաձևությանը և պատկերազարդությանը, վոր յես յերկու շա-

թաթի մեջ վարժ կարդում էյի, ավելի վարժ, քան թե իմ յեղբայրը վարժապետը:

Դիպվածո՞վ, թե բաղդի բերմունքով, ինձ վիճակվեց այբուբենը ճանաչել վոչ այն ժամանակվա և նորանից շատ վերջերը ընդհանրացած «Թերական, վոր է այբբենարան» տետրակի վերա: Վորքան հիշում եմ, իմ այբբենարանս Զմյուռնայի տպագրություն էր, միանգամայն արդի մեթոդով գրած և պատկերազարդ[9]:

Տառերը ճանաչելուց և հեգելը փոքր ի շատե վորոշելուց հետո յես սկսեցի անդանդաղ կարդալ դյուրըմբռնելի նախադասությունները. օրինակի համար՝ «Բարի լույս, ի՞նչպես եք, լավ եմ, այս կատու յե, այս մեր շունն է, այս պատկերը ձեր կատվին նմա՞ն է, թե վոչ» և այլն, և այլն:

Զերկարացնենք. մի տարուց հետո հորս շնորհիվ Աշտարակում դպրոց բացող Շապուհ Շահնազարյանց վարժապետի[10] 70 աշակերտներից առաջինն յես էյի, առաջինը՝ վոչ թե տարիներով, այլ «լավ կարդալով»:

Ցավ արդարև, ինչպես յերևում է, մեծ ընդունակություն կամ հիշողություն եմ ունեցած յես մանկական հասակումս, որական յերեք դլուխ Նարեկ առանց դժվարության և առանց մի բառ հասկանալու անգիր էյի անում: Դորանով չեմ կարող ասել, թե որական յես հինգ ասեմ, դու տասն անգամ՝ բարդի ծառի կակուղ շիվերը վրաս չեն փշրվել, վորոնցից վոչ մեկը դաս չգիտենալուս պատճառով չէ յեղել, այլ չարության. իսկ ինչպես այժմ միտքս եմ 5 բերում, բոլոր չարությունս կայացել է մանկական անմեղ խաղերի մեջ, վորոնք իմ վարժապետիս աչքումը գերանաչափ հանցանք են համարվել:

Զիք չարիք առանց բարյաց, ասում է հասարակաց առածը. կարելի յե վարժապետիս հեռանալու և հորս մահից հետո յես կձուլվեյի իմ համարնակիցաց անդարդ[ացած] բոլի մեջ, կմնայի մի կոշտ ու կոպիտ, այլ[և] պարզ գեղջուկ, յեթե հետևյալ դեպքն ինձ չխլեր հայրենիքից:

[18]49 թվականին հորս ձեռքով հանձնվեցա մեր դրացի և Աշտարակի պաշտպան Մողնու սուրբ Գևորգի վանքի նոր վանահայր Մարտիրոս Մժեժյան Կարնեցի աբեղայի[11]



նորաբաց դպրոցը և, ինչպես վստահ էյի, շուտով առաջին աշակերտը և վարդապետ վարժապետիս սիրելին դարձա[12]:

Յեթե մեր բոլոր կուսակրոնները հայր Մարտիրոսի առաքինազդյաց վարուց և բարուց տեր լինեյին, սուրբ հայրերի վերա տարապարտուց շարունակ բարձված բամբասանքները բավական էյին ապաքեն դասել նորանց հրեշտակաց դասումը: Ավելացրու հայ Մարտիրոսի սրբակրոն և անախեղծ բնավորության վերա և մի յերախտապարտական վառ աշխույժ՝ ըստ յուր կարողության յուր ազգի մանկանց դաստիարակության գործում, ապա յերանելին մեր ժամանակի անդուդական և ընտիր հոգևորականներից մեկն է: Մոտ 70 տարեկան է նա այսօր Հառիճո վանքումը և դեռևս չի հանդել նորա սրտի կրակը դեպի դաստիարակությունը:

Անտեղի համարելով մանրամասնել հայր Մժեժյանի Մողնու վանքից հուսահատ փախստյան պատճառը, կասեմ միայն, վոր ըստ կանխապես խոստմանս, նորա գիշերային փախուստից ութն օր հետո, մի գիշեր ել յես ուղևորվեցա 6 նորա ուղարկած մարդու հետ դեպի նա, կամ ինչպես ինքը ցայսօր միշտ կրկնում է՝ դեպի կատարելագործությունը: Նա մտադիր էր Պոլսումն ինձ հանձնելու յուր նախածանոթ Պողոս բեյ Տատյանին[13], նորա ծախքով ինձ Փարիզ ուղարկելու:

Ցավ է ցայսօր իմ սրտին, վոր յեղբորս հետամտության շնորհիվ, մյուս օրը բռնվեցա, հետ բերվեցա և միգամթեք յերկու ամսաչափ պարապ մնացի[14]:

Նախասահմանության կամքն էր ինձ չփտեցնել Աշտարակումը. այդ տարի Մողնու ուխտին իմ նախկին ուսուցիչ Շապուհ Շահնազարյանը՝ քահանայացած Յերեվանու սուրբ Սարգսի յեկեղեցու վերա, ուխտ յեկավ Մողնի, գտավ ինձ Աշտարակ անգործ և լսելով ինձ հետ յեղած պատահարքը, խղճաց անտեր վորբիս և տարավ Յերեվան, ուր թեև ինքը պարապում էր ուսուցչությամբ, բայց ինձ տվեց արքունի դպրոցը, գտնելով անշուշտ ինձ ավելի հառաջադեմ, քան թե յուր դպրոցի ավագ դասակարգը:

Նույն այդ փախուստն էր պատճառը, վոր այնտեղ նա

չմնացի․ յերջանկահիշատակ Ներսես կաթողիկոս Աշտա-
տարակեցին[15], կամենալով մանրամասնորեն տեղեկանալ
հայր Մժեժյանի փախստյան մասին, պահանջեց ինձ Յերե-
վանից[16] և յուր հեռատես հայացքով գտնելով իմ մեջ,
ինչպես ինքը միշտ կրկնում եր, շնորհք, այդ իսկ ձմռանը,
1852 թվի հունվար ամսին, տարավ ինձ յուր հետ Տփխիս
և հանձնեց Ներսիսյան դպրոցը։

Բարեբախտաբար ինձ վիճակվեց Ներսիսյան դպրոցի
վոսկեդարի միջոցը վորդեգրվիլ այնտեղ։ Վոսկեդար վոչ
այնքան ուսման և առարկաների վերաբերությամբ, այլ
այն լուսավոր գաղափարների և բարձր բարոյականության
շրջանը, վորով հայտնի յե Ներսիսյան դպրոցը։ Յերջանիկ
եյինք մենք արդարև․ մեր ղեկավարն եր այդ ժամանակը
7 հայոց մեջ առաջին, լուսամիտ և բարձր բարոյականու-
թյան տեր անձնավորությունը՝ Պետրոս Սամվելյան Շանշ-
յանցը[17]։

Պատմությունն անշուշտ մի որ փայլեցնելու յե այս
մեծ մարդի արժանահիշատակ կյանքի լուսավորությամբ
յուր եջերը, բայց յես բավականանում եմ միայն ասելով,
թե այսոր ել դեռ չեն հառաջ յեկել մեզանում Շանշյանցի
նման մանկավարժներ և, վոր գլխավորն ե, բարոյակրթիչ
ու ազգասեր, ազգային, զուտ հայկական դաստիարակու-
թյան հոգվով սնված ու սնուցանող ուսուցիչներ։ Շանշ-
յանցը գրեց մեր Ռուսաստանի հայ նոր սերնդի մեջ ինք-
նաճանաչության, դու ավելացրու և 'ինքնազարգացման,
հիմնաքարը։ Դորա ձեռնասուններն եյին, վորոնք խրախուս-
ված Շանշյանցին սիրող և գնահատող մեծ Ներսեսի քա-
ջալերիչ խոսքերով, Շանշյանցի ղեկավարության ներքո
առաջին անգամը, գուցե և վերջին անգամը, աստծո բա-
նը հասկանալի լեզվով, գյուղամալս վոճով սուրբ տաճարի
բեմից քարոզող հանդիսացան հայ ժողովրդին։ Գրում ե-
յին Ներսիսյան դպրոցի բարձր դասատուն աշակերտները
յուրյանց քարոզները, սրբագրում դասատունը յուրյանց
ընկերաց մեջ Շանշյանցի առաջնորդությամբ, կարդում Ներ-
սեսի մոտ և քարոզում Թիֆլիզի յեկեղեցիներում։ Մենք
քարոզիչներ եյինք, այո՛, անփիլոն և անմորուք քարոզիչ-
ներ և այդ քարոզիչներս դիտեյինք, վոր մյուս որը ար-



ժամանալու եյինք մեծ հայրապետին սեղանակցելու և
ճաշի վերա նորա քաջալերական խոսքերը և հանաքները
լսելու։

Մեր ընկերության ծաղիկն ու առաջինը համարվում եր
և միշտ յեղել ե հայ ազգի սիրելի ընտրյալ արդի Մելքի-
սեդեկը, այն որվան քաղցրախոս Գարեգին Մուրատյանցը[18],
վորին, ճշմարիտն ասած՝ վոչ միայն Ներսեսն ու Շանշյանցն
և մեր մյուս վարժապետները, մենք ինքներս ել մեզանից
ավելի եյինք սիրում[19]։

8 1855 թվին յես, ի թիվս Գարեգնի և մյուս ընկերացս,
վերջնական հաջող քննությունը տվի[20], արժանացա առա-
ջին աստիճանի մրցանակի[21] և առանձնապես իմ բարերար
Ներսեսի ու այն ժամանակվա նշանավոր իշխան Արղությին-
սկու քաղցր ուշադրությանը[22] և ուրախ սրտով թողի
դպրոցը և վերափոխվեցա վեհարան*)[23], այնտեղից Թիֆ-
լիզի գիմնազիայի 5-րդ դասատունը՝ ուսումս շարունակելու
համար[24]։

Ափսո՛ս, յերկարատև չեղավ բռնած ճանապարհս[25],
հիվանդացա և ստիպվեցա հայրենիք գնալ[26], թողլով
իմ վերա Ներսիսյան դպրոցումը և գիմնազիայում ընկե-
րացս և ուսուցիչներիս համակրանքը։

Գիմնազիայում խեթ աչքով եր նայում վրաս միայն
ռուսաց լեզվի վարժապետը, խեղճի հոգին յերեք-չորս ա-
միս դուրս յեկավ, մինչև իմ լեզուս փափկացրեց прилага-
тельный բառը ճիշտ արտասանելու։

Իմ մտնելու որը Ներսիսյան դպրոցը բաղկանում եր
յերեք դասարանից և յերկու նախակրթարանից[27]. Հա-
յադիտությանս կամ ընդունակությանս կամիք վերագրե-
ցեք, միայն ճշմարիտն այն ե, վոր իբրև բացառություն
մի տարվա մեջ յերկու նախակրթարանը և առաջին և
յերկրորդ դասատունը լոք տվի անց կացա[28]։ Բավական եր,
վոր մեր հոգևոր հորը, Շանշյանցին մոտենայի և հայտ-
նեյի, վոր ինձ պատրաստել եմ հետևյալ դասարանի հա-
մար— և ահա յուր ներկայությամբ ուսուցիչներին քննել

*) Ներսեսը այդ տարիները շարունակ ձմարյա անց եր կացնում Թիֆ-
լիսումը։ Ծ. Հ.

[redacted]

էր տալիս ու յուր փոքևորիչ ձեռքը գլխիս քսելով առաջնորդում դեպի վերին դասատուն*)։

[2]

9 Ինչ պետք է գործեր ինձ պես մի անփորձ պատանին, Աշտարակու նման գյուղում առանց արտաքին միջամտության և խեղճ ընտանիքի զավակ, մանավանդ յերբ ինձ գտա ծանրաբեռնված հորս թողած պարտքերով[29].. բայց վո՛չ, յերևի յես այն մարդկանցից մեկն եմ, վորոնք վորչափ և աննշան են, վորչափ և յուրյանք չկամենան, աչքի յեն ընկնում։

Թեպետ Աշտարակում այդ միջոցում ուսուցիչ կար, բայց գյուղացիք ժողովեցին և ինձ առիպմամբ ընկերացրին ներկա վարժապետի հետ։

Սիրելի եյի ամեն աշակերտատերերին մինչ գործը շարունակվում էր ընկերությամբ, բայց հիշյալ ուսուցչի դպրոցը մի քանի ժամանակից հոժարակամ թողնելուց հետո մի որ սաստիկ հանդիմանություն ստացա համագյուղացիներիցս։ Մի բարի առավոտ բազմությունը ինձ շրջապատեց և յերեսիս ասաց, վոր չես աշխատում։—Իսկ ի՞նչ էր նոցա գրգռելու առիթը, այն, վոր յես աշակերտներին չեյի ծեծում։ Մնաս բարյավ այնուհետև Շանշյանցի ավանդած համոզողական և սիրաշահական մեթոդ. յերկուսից մեկը, կա՛մ պետք է հացից զրկվեյի կա՛մ գաղափարից։ Խոստովանում եմ, վերջինը զոհեցի առաջինին, թեպետ և շատ իզուր։ Յերեք տարվան անխոնջ աշխատության վարձը ընդամենը 100 մանեթի հազիվ հասավ[30]։

Մի կողմնակի աննշան յեկամուտ միջոց էր տալիս այդ ժամանակն ինձ ընտանիքիս գոյությանն ողնելու։

Մողնու վանքի այդ ժամանակի վանահայր Հակոբ վարդապետ Քյանդարյանցը[31], նշանակվելով գործակալ շրջակա 70–ի չափ գյուղերի վրա, ինձ մեջ կարողություն էր դնում գործերը վարելու և փոխարենը վարձատրում էր յուր ստացած պարգևների ավելորդներից։

*) Ջնջված է՝

Կան մարդիկ, վորոնք վորչափ և կամենան հեռու մնալ հասարակական հայացքից, չի հաջողվում, յես ինձ համարում եմ այդպիսիններից մեկը, կյանքիս բոլոր շրջաններում...



Այդ գործը միջոց տվեց ինձ ծանոթանալ մոտիկից Ա-
10 բարանյան գավառի և Արագածոտնի հայ բնակչաց կյանքի հետ, վորոնք վերջումը հիմք դրվեցան իմ յերկասիրությանցս։

Մողնում Հակոբ վարդապետ Քյանդարյանցի մոտ յես հանդիպա*) Եջմիածնից վերադառնալուց Սարգիս Ջալալյան յեպիսկոպոսին[32]։

Նա գալիս էր կաթուղիկոսական ընտրություններից[33] և գնում էր Արարանով Սանահին։

Սարգիս յեպիսկոպոսին յես Թիֆլիզի վեհարանումն եյի յերբեմնապես տեսնում. նա շատ քիչ էր մնում Թիֆլիզում, Ներսեսի հրամանով այս ու այն քաղաքներն էր գնում հոգևոր գործերը քննելու և կարգի դնելու. Ներսեսը նրան բոլոր հոգևորականներից շատ էր սիրում։

[Վորչափ վոր ի որե անտի աշակերտության չեյի համակրում Սարգիս յեպիսկոպոսի գաղափարներին, մի քանի անգամ էլ առիթ եմ ունեցել հետը վիճելու]**)— իսկ այս հակակրությունը տածելով մեջս մնացել եմ մինչև ցայսօր,— այսուամենայնիվ յես մասնավորապես Սարգիս Ջալալյանցին եմ պարտական նորից բարոյական մեռելությունից դեպի կենդանություն փոխվելուս։

Հետևանքը պարզ կարելի յեր գուշակել, վոր յես թերահաս ուսմամբ, հասակով և զարգացողությամբ, անփորձ կյանքի պայմաններին, ընկնելով Աշտարակ և սահմանափակ հասկացողության տեր մարդկանց շրջանի մեջ, պետք է կորցնեյի դպրոցից դուրս բերած բոլոր ստացական տեղեկությունները, պետք է աղխատության և նախապաշարմունքի փոշիների տակ թողնվեյին կարդացածս գրքերից և ուսուցիչներիցս կազմած գաղափարս և դառնայի միանգամայն դուցե ժամանակի վարժ կարդացող քահանաներից մեկը, յեթե Սարգիս յեպիսկոպոսը ինձ բռնի դուրս չկորզեր այնտեղից։

Նա միանգամայն զարմացավ և ուրախացավ ինձ գտնելու համար. և յերբ իմացավ պաշտոնս և դրու-

*) Ջնջված է՝

Յեթե չեմ սխալվում 1858 թվին...

**) Այս նախադասությունը Պռոշյանը ջնջել է, փոխարենը գրելով նախորդ պարբերությունը։

թյունս, վճռական հրաման արձակեց ինձ թողուլ անմիջապես և չտապել Թիֆլիզ, չմտածել ապրուստ և գործ ճարելու համար, Թիֆլիզի առաջնորդարանի սենյակներից մի հարմարը և մի կտոր հացը պատրաստ կլինի ինձ օթևանելու, մինչև գործ բացվելը: «Գիտեք, հայր վարդապետ, դարձավ նա դեպի գործակալը, ձեր մոտ այսօր դըրագրի պաշտոնով պահում եք մեր ընդունակ պատանիներից
11 մեկին. հանգուցյալ Ներսեսը սորա մեջ մի շնորհք էր տեսնում և իմ սիրտս վկայում է, որ սա մեր անկյունի վերա դնելու քարերից մեկը պետք է լինի, որին չի կարելի հողի տակին թաղցնել: —Վեր կաց շուտով արի, հրամայեց նա, մինչև օգոստոս 15-ը յես Թիֆլիզումը կլինեմ և այդ օրերը քեզ կսպասեմ ինձ մոտ»:

Մի՛ զարմանք, ուրեմն, յեթե ասեմ, որ և՛ խոստացա գնալ Թիֆլիզ և՛ նույն րոպեյին մեծ կռիվ ունեցա հետը, յերբ հայտնեց թե ինքը Ծանչյանցին արձակել է Ներսիսյան դպրոցի տեսչությունից[34], թե Ծանչյանցը պրոտեստանտ է և այլն, ինչ որ մինչև յուր մահը տարածում եյին ինքն և յուր համախոհները:

Գործակալ հայր սուրբը շատ էլ ակնարկներով ինձ սաստում եր չհանդգնել սրբազանի նման մեծ մարդու և բարերարի դեմ, բայց յես արյունը գլուխս տված խոսք չթողի, Սարգսի յերեսովը տվի նորա սխալմունքը հաստատելով:

—Վոչի՛նչ, վարդապետ, ժպտալով ասաց Սարգիս յեպիսկոպոսը, մերը գաղափարի կռիվ է, մինչև չգա սա Թիֆլիզ և անձամբ չստուգի ասածներս, դժվար է սորան համոզելը:

Ո՛հ, թե ինչ ձյուն յեկավ իմ գլխիս գործակալ հայր սուրբից Սարգիս յեպիսկոպոսին ճանապարհ դնելուց հետո. յերեք օր կերածս քթերիցս հանեց. ի՞նչպես թե դու համարձակեցար այնպիսի մեծ մարդուն, մանավանդ քո բարերարին, հակառակել:

Յեպիսկոպոսի մոտ առյուծ կտրած տղան վարդապետի մոտ մուկն եյի կտրվել, ակնկոր տանում եյի կծու խոսքերը, չտանեյի, ի՞նչ անեյի, լուսահոգին այն ուղղությամբ եր կրթված, որ հնազանդությունը փոքրների բաժինն է:



Սիրտը վշտացնելս էլ ավելորդ եր. մի ամսից հետո յես իսպառ բաժանվելու եյի իրանից:

Այդպես էլ արի. 120 մանեթ ստանալիք ուսուցչական թոշակիցս ամենայն դժվարությամբ 8 մանեթ ու կես ժողովեցի, վարդապետի ընծայած սպիտակ թևավոր չուխեն էլ հագա և մի ձեռք փոխնորդով հրաժարական տվի մորս և մերայնոց հուլիսի վերջերում: Յեթե ասեմ, որ մինչև Ջալալօղլի, ուրեմն և ճանապարհի կեսը, մեր ձիով, յեղբորս հետ միասին հեծած, գնացի, իսկ այնտեղից չորս
12 մանեթով Թիֆլիզ հասա, ուրեմն պարզվեց, որ 4½ մանեթ կար գրպանումս, յերբ յես օգոստոսի սկզբին յերեկոյան հասալիր մոտ առաջնորդարանի բակը և շփոթված մնացի, լսելով որ սրբազանը չե յեկել և ինձ համար վոչինչ կարգադրություն չի արել:

«Յիշատակն արդարոց օրհնությեամբ եղիցի», հավիտենական հանգիստ Մինաս յեպիսկոպոսին[35], յեթե նա շինած չլիներ վանքի յեկեղեցու հյուսիսային կողմի բուրջը և սենյակները և անտերությունից դռները բաց չլինեյին, յես վո՞րտեղ պետք է գիշերը խոնջացած անդամներիս հանգիստ տայի: Իմ բաղդից մի խոտով լցրած բազմոց (դիվան) էլ ընկած եր այնտեղ յերեք վոտանի, չորրորդն էլ աղյուսներով լրացրի ու կուչ յեկա Մինաս յեպիսկոպոսի սենեկումը: Օրհնվի նույնպես վանքի տեր Մկրտչի[36], այն միջոցը կոնսիստորի անդամ և գանձապահի, հիշատակը, մյուս օրը նա թույլ տվեց ինձ մինչև սրբազանի գալը սեպհականացնել իմ յերեկվան կացարանը:

Այլևս յերկյուղ չկար, այլևս ծանոթներիս, նախկին ընկերներիս և բարեկամներիս նեղություն պատճառելու իրավունք չունեյի, թեպետ և յերեք տարվա բացակայությունից հետո շատ ծանոթներ էլ չեյին մնացել, յեղածներից շատերն էլ ամարանոցումն եյին. ընդամենը մի քանի ընկերներ եյին և հիշատակաց արժանի Ամիրկյան Հովհաննես աղան[37], վորոնց մոտ յես մխիթարություն եյի գտնելու մինչև Սարգիս յեպիսկոպոսի գալուստը:

Շատ խնդրեցին բարեկամքս, մանավանդ լուսահոգի Հովհաննես աղան, յերբեմնապես ճաշի մնալ յուրյանց մոտ, բայց յեսականությունը չեր թույլ տալիս:— Այժմ իմ ճաշս

յնկած կլինի պանդոկից, ասում էյի նորանց և դուրս թռչում, որական քան կոպեկ մախելով ապրում:

Օգոստոս 15-ն էր, երբ ես անհամբեր հուսով սպասում էյի Սարգիս սրբազանին, բայց նա չեկավ: Այդ օրը քսակումս 150 կոպեկ կար: Այդ գումարը տնտեսել էյի ես լվացարարի պաշտոնն ինքս կատարելով. մութը գետինն առնելուն պես պատովն իջնում էյի Կուրի ափը, հանում փոխնորդս և առանց սապնի լվանում, սենեկումս փռում և առավոտը չորացած մաքուր հագնում: Մոռացա ասեմ, վոր մահճի կարիք չունեյի. քաղմոցի խոտը մահճի տեղ էր բռնում, իսկ վերմակի փոխարեն ծառայում էր իմ չուխեն. ամառը այդ բանում ինձ ոգնում էր:

13 Այդ օրն էր, վոր ուրախ տրամադրության վերա տրտմության փոքր ամպ նշույլ ծածկվեց: Ի՞նչ պետք է անեյի յես մինչև սրբազանի գալուստը, մանավանդ, ինչպես լսվում էր, նա ուշանալու յեր մինչև ամսի վերջը կամ ավելի:

— Վոչինչ, կփորձեմ և կապրեմ, ասացի յես և մյուս օրը առավոտյան փողից հինգ կոպեկանոց մի հաց գնեցի, չորս հավասար բաժին արի այն և օրը չորս մասի բաժանելով յուրաքանչյուր մասում մի կտորը կերա, Կուրի ջուրն էլ վրան խմեցի: Փորձս հաջողեց փառավորապես, Կոլումբոսի գյուտովս որական հինգ կոպեկի հացով բավականանում էյի: Ուրեմն մի ամբողջ ամիս կյանքս ապահովացրած է, յեթե ուրիշ չարաղետ դեպքեր չպատահեն:

Ցե՛վ պատահեցավ, և՛ հաջող անցավ. մի տկարություն վերա հասավ, վոտքերիս ույժը պակասեց, աչքերս մթնել սկսեցին, բայց իմ ամենօրյա մխիթարիչ ծերունի Ամբիկյանը յուր բազմափորձությամբ դարմանը գտավ: ուղարկեց ինձ դպրոցի բժիշկ պ. Հովհաննիսյանցի[38] մոտ, դեղագիր գրել տվեց և դպրոցի դեղատան տետրակով, ի հաշիվ դպրոցի, ինձ համար դեղ բերել տվեց և առողջացրեց, վորով և նյութական հարստության վնաս չհասավ:

Իմ խելքիցս էր. ընչո՞ւ Հովհաննես աղային չլսեցի, ընչո՞ւ դառողաբար մերժեյի նորա քաղցր հյուրասիրական



և հայրական առաջարկությունը, ընչո՞ւ չճաշեյի յուր մոտ, վոր հիվանդանայի:

Այսպես թե այնպես, կրիտիկական դրությունս ձգվելու յեր լինելու սեպտեմբեր 16-ի առավոտը, յեթե 15-ի յերեկոյան փոստի զանգակների զողանջոցը ինձ դուրս չվազեցներ մենարանիցս և սրտիս բաբախմանը ուրախության տեսությունը չհետևեր:— «Սրբազանն յեկավ» ձայնը բակը տարածվեց, ամենքը դեպի կառքը վազեցին, իսկ յես յեկեղեցու դուռը ջերմորեն համբուրելով վերադարձա խցիկս անհոգ և միամիտ: Այդ գիշերվան քունս սովորականից խաղաղ անցավ:

[3]

14 Սրբազանի գալուստից մի քանի օր հառաջ, մի փոշոտ և տաք օր, յերեկոյան բավականին ուշ, Թիֆլիզի այն ժամանակվան միակ զբոսարան ծառուղու վերա հանկարծուստ վերևից թափված հեղեղանման անձրևը ուրիշների հետ և ինձ փախցրեց դեպի իմ պալատը, բայց 100 քայլաչափ տեղում անձրևաջուրը գլխիցս մտել, վոտքերովս իջնում էր:

Ավելորդ է շտապել, խորհեցի և տեղն ու տեղը կանգ առա: Ի՞նչ պետք է անեմ տանը, մահիճ, վերմակ, փոխնորդ բոլորը հետս ունիմ, մինչև լույս հագիս չորանան, մերկանդամ գիշերը հո անցնելու չեմ: Կարիքը շտապեցնում է իմացականությունը. աչքս ընկավ մոտիկ տներից մեկի վերա, ուր բնակվում էր իմ համագյուղացի, այժմ հանգուցյալ Հովհաննես Տեր-Հովսեփյանցը[39], գիմնազիայի ուսուցիչը: Մտածել և դուռը սաստիկ բաղխելս միմյանց հետևեցին: Կերևի տանուտերերն էլ զարմացան, ո՞վ պետք է լիներ այս հեղեղին դուռը բաղխողը. ծառան իսկույն ցած իջավ և ներս թողեց ինձ, թրջված մկանս:

—Տանն [է] պարոնը, պատասխանեց իմ հարցին ծառան, բայց այդ դրությամբ դուք ի՞նչպես պետք է վեր գաք:

—Դու ազգանունս տուր և խնդրիր այստեղ պ. Հովհաննեսին:

Ծառայի դեկուցումն ավելորդ էր. սանդուխքների գլխին յերևաց զարմացմամբ ճրագը ձեռքին ինքը, հյուրասեր տանուտերը, յուր մոտ պատսպարված մի քանի գիմնազիստ-

ներով և ձայնս ճանաչելուն պես շտապով ներքև յեկավ ու անմիջապես հրամայեց ծառային բերել ինձ համար յուր հագուստներից:

—Փոխնորդից մինչև դուլպաները և կոշիկները, պ. Հովհաննես, [ասացի]*) յես. ի դեպ, յերեսսրբիչ նույնպես թող բերի ու սանր, արդեն լվացված եմ:

Շնորհակալություն պարոնին վոչ միայն յուր քաղցր հյուրընկալության համար, այլ[և] այն յերջանիկ դեպքի, վորի պատճառն ինքն յեղավ:

Սիրալիր տանուտերս հրավիրելով յուր սենյակը, առաջարկեց ինձ մի գիրք կարդալ, իսկ ինքը ներողություն
15 խնդրելով գնաց պարապելու յուր խնամոցը հանձնված գիմնազիստների հետ: Գիրքը նոր եր ինձ համար: «Վերք Հայաստանի» և Խաչատուր Աբովյանց բառերը լափեցին իմ հետաքրքրությունս, դեռ չբացած մի քանի անգամ շվարածի նման ձեռքումս շուռ և շուռ տվի և սկսեցի հառաչաբանից[40]:

Դժվար է ինձ պատմել այն տպավորությունը և այն հեղհեղուկ զգացմունքներս, վոր անընդհատ միմյանց հետևվում եյին. մի րոպե արտասուք տրտմության, մյուս վայրկենին արտասուք ուրախության, յերրորդ ակնթարթին նստած տեղս անհեթեթ վոստվոստյուններ և յես ինչ գիտեմ ընչեր եյին պատահում հետս. բավ եր, վոր տանուտերս գնացել եր և մոտս վոչ վոք չկար, ապա թե վոչ դուցե կապեյին և հիմարանոց տանեյին:

Թե ինչպես անցավ ժամանակը, վոչինչ չեմ կարող ասել, բայց զգացի մի ժամանակ, վոր աջ կուսս մի բան ծակում է և մի հեռավոր տեղից արձագանքի նման բան է ականջիս դիպչում: Կարելի յե ելի ուշադրություն չանեյի, յեթե արդեն գիրքը վերջացրած չլինեյի:

—Ա՛յ տղա, վերացե՞լ ես, խլացե՞լ ես, թե անզգամ յես, հինգ րոպե կա քեզ հրում և գոչում եմ, չես պատասխանում:

—Ի՞նչ եր այս, պ. Հովհաննես, ասացեք աղաչեմ, ի՞նչ է անում այս Աբովյանցը, այս ինչ նորանշան և սքանչելի յերևույթ մեր գրականության մեջ, ո՞ւր եր մինչև հիմա այս անգին գանձը թաքցրած:

*) Բնագրում՝ պատասխանցի:



—Ա՛յո, միևնույն տպավորությունը թողել է և իմ վերա, այսոր ամենքի խոսելիքը և դատելիքը «Վերք Հայաստանի»-ն է, պատիվ և փառք Հ. Փոնդոյանցին[41] յուր հրատարակության մասին:

—Յեվ ընչո՞ւ, պ. Հովհաննես, հետևողներ չունենա Աբովյանցը, ընչո՞ւ զուրկ պահել մեր ժողովրդին ընթերցասիրությունից, հերիք չեր մեր գրականությունը մի փոքր դասակարգի սեպհականություն թողնել:

—Մենք շատ ենք խոսել այդ մասին, բայց ո՞ւր է այսոր մեր մեջ դորա շավղովը գնացող, հեշտ չկարծես:

16 —Փորձելը հանցանք հո չէ՞:

—Ի՞նչ է դիտավորությունդ,— թերահավատական ժպիտով հարցրեց ինձ:

—Այս շավղով չեղած, կիսով պակասը ներելի՞ յե:

—Քառորդ արժանավորությունն էլ մեզ համար քաղցր և ընդունելի յե:

—Ձեմ խոստանում լիակատար հաջողության համար, բայց ահա իմ ձեռքը, յես սորան աշակերտելու յեմ:

—Ցանկանում եմ փայլուն իրագործումն, բայց ընթրեքը վաղուց պատրաստ է, այնտեղ կշարունակենք գինու ազդեցության ներքո:

Ընթրիքից հետո «Վերք Հայաստանին» անկողնում պառկած կրկին կարդացի[42]:

## 4

Աշունքացել է, Սարգիս յեպիսկոպոսի շնորհիվ յես տեղ եմ գտել Նիկողայոս Տեր-Հակոբյանցի՝ Սարգսի վորդեգրի[43] նորաբաց պանսիոնումը. ամսական 10 մանեթ ռոճիկ, բնակարան, ուտելիք, օրը 6 ժամ պարտավորական դասախոսություն, 7 ժամ դասամիջոցից ազատ ժամերը վերակացություն,— ուրախությունից վոտք[երս] գետնից կտր[վ]ել են: Բաղդիս դռները բացվում են. Տեր-Հակոբյանցը գիջավ խնդրանացս, 200 մանեթ կանխիկ փող տվեց ինձ ուղարկել Աշտարակ՝ հորս պարտքը վճարելու[44], նույն բակում մի աշակերտուհի, մի սիրունիկ 12 տարեկան օրիորդ, ամսական յերեք մանեթ վճարելով ինձ հայերեն սովորելու, խլեց վերակացության ժամերից մեկը: Ներսիսյան դպրոցի իմ համաբնակիչ ավագ վերակացուն էլ ամսական հինգ մանեթով որբ

յերեք ժամ դասատվություն դառավ ինձ համար. մանկության ասպնջական դպրոցի պատրաստական դասատուն 120 աշակերտների վերա[45], առել և թե ամիսը 18 մանեթ ռոճիկ ունիմ, ի՞նչն էր արգելում ինձ գիշերվան մի քանի ժամերը նվիրել յերազական ցնորքներս ի գլուխ տանելու[46]: Վեց թերթից մի մեծ տետրակ կարեցի և առաջին գիշերը «Սոս և Վարդիթեր»-ի առաջին գլուխը կորեցի: Գրեցի, մի քանի անգամ կարդացի և վեր կացա առավոտը շտապեցի Ներսիսյան դպրոցը:

17 — Պողո՛ս[47], սիրելիս, խնդրեցի իմ ընկեր ուսուցչին, յերբ լսեցի, վոր վերին դասարանումը առաջին դասը պարապելու յե իմ հայկաբանության ուսուցիչ և առանձնապես ինձ վերա խնամք տանող Հակոբ վարժապետ Կարենյանցը[48], Պողոս, նվիրիր այսոր ինձ քո ազատ ժամերդ և թույլ տուր գնալ Հակոբ վարժապետի դասը լսելու:

Ի՞նչ կարծիք, վոր Պողոսը սիրով ընկալավ և յես ինձ ներս ձգելով դասարանը, դրի վարժապետի առաջին մի շարադրության տետրակ, վոր նոր սկսում էր ուղղել:

—Տուր, Պառշ, քթախոտը ներս ծծելով ժպտաց ինձ հայր վարժապետս և սկսեց կարդալ գրվածքս:

Սիրտս ժամացույցի յեր նմանում, քանի վարժապետը յուր հատ արտասանությամբ շարունակում էր կարդալը, այնքան սրտիս զարկերը սաստկանում եյին:

— Կա՛ց, քթախոտը կրկնեց գրիչը վեր գնելով վարժապետը և աչքերը առաստաղին հառելով մտածեց:

Նոր չեր այդ հայացքն ինձ համար. յես հասկացա, վոր վարժապետիս հաճո յեղավ աշխատությունս և ինքը պատրաստվում է բան ավելացնել: Այդպես և յեղավ, «արդի իմ Պառշը», փնթփնթաց նա և հավանական վստահությամբ յերկու տող ավելացրեց: Յեթե վոչինչ ես չասեր, այս յերկու տողը բավական եր ինձ վոգևորելու և ամբողջ գրվածքիս ուղղություն տալու: Բայց նա վերջացրեց ընթերցումը և կրկին հավանական ժպիտով շարժեց գլուխն ու՝ «ա՛ռ, ասաց, լավ ես սկսել, շարունակիր, իմ դուշակությունները կատարվելու յե[ն], աշխարհաբառի հարազատ մշակներից մեկը դու պետք է լինես: Հիմի Մսերին[49] ու Առաքել Արարատյանցին[50] ավետիս գնալ է հարկավոր, թող



հայհոյեն աշխարհաբառը գրականական լեզու դարձնողներին»:

18 Յես հասկացա վարժապետիս հեղնությունը. ինքը թեև հիանալի, քաղցր և գյուրըմբռնելի գրաբառ գրող եր, թեև շարունակ խորհուրդ եր տալիս յուր սաներին կարդալ նախնյաց մատենագրությունները, թեև աշխարհաբառ շատ սակավ եր գրում, բայց ջերմ պաշտպան եր աշխարհաբառի: Շատ անգամ եր դասատանը դատապարտում Մսերի և Առաքել Արարատյանցի աշխարհիկ լեզվի դեմ ունեցած անհաշտ թշնամությունը:

—Աբովյանցը փակ լեզուդ բաց արեց, ավելացրեց վարժապետը, շարունակիր, չթողնես:

—Ավելի շուտ ասացեք, վոր դուք ինձ առաջնորդեցիք անցյալ տարի գրած «Շուշան» վոտանավորս[51], վոր սրբագրեցիք և «Մեղու»-ի[52] մեջ արդեն տպվեցավ, կեղծավորեցի յես:

—Ձե՛, ասաց, շողոքորթությունն ավելորդ է, այն մի փորձ եր և իմ ծեր ծառուկին նմանողությունն[53]. ուղիղը խոստովանած, յերկուսս էլ հայր Ալիշան — Նահապետին եյինք նմանացրել, բայց այս վիպասանությունովդ դու Աբովյանցի շավիղին ես հետևում. շնորհավորում եմ:

Թեպետ յերեսս կարմրում է, կենսագրության մեջ Սարգիս յեպիսկոպոսին և Հակոբ վարժապետ Կարենյանցին հիշելուս, բայց անաչառությունը պահանջում է խոստովանել իմ ապերախտությունս դեպի այդ յերկու անձնավորությունները: Նոքա յերկուքյանն ևս ինձ բարերարներ են յեղել. յերկու—յերեք ամիս դպրոցը թողնելուց հետո, Ներսես կաթուղիկոսի կարճ միջոցով Եջմիածին գնացած միջոցը, Կարենյանցը ինձ ասպնջական է յեղել յուր տանը և վորդու նման սիրել, բայց յես ապերախտ եմ գտնվել նոցա դեմ. չնայելով գգվալից ընդունելության և փայփայանքներին, յես միշտ խույս եմ տվել նոցանից և մխացել նոցա
19 հակառակ բանակին:

— Պառ՛շ, ո՞ւր ես կորած, չեչտում եր ինձ վարժապետը, բայց յես կապկապվել եմ և զանազան պատրվակներով ցանվել:

—Պառ՛շ, ում արի չարի, քեզ ի՞նչ արի, վոր մոտս չես

դալիս, յես կամենում եմ շնորհավորել քո «Սոս և Վարդիթեր»-ի ընդհանուր ընդունելությունը, մի օր նեղ փողոցներում կտրեց հառաջս վարժապետս։ Յես հանդգնություն ունեցա ասել, վոր համոզմունքիս ընդդեմ չեմ կարող գնալ։

—Դո՛ւ գիտես, սրտի խորքից ցավակցական հառաչանքով պատասխանեց վարժապետս և հեռացավ։ Ամո՛թ ինձ, յես նրա աչքերում արտասունքի շիթեր նկատեցի և չմոռեցա, հենց փողոցի միջին վոտքերն չընկա և ներողություն չխնդրեցի. ընդհակառակը, գոռոզաբար, մեծ հաղթանակ տարած զինվորի նման վիզս բարձր, հեղինակային ակնարկ ձգեցի վրան և գնացի*)։ Յեթե չեմ սխալվում, «Կռունկ»-ի[54] մեջ արդեն դուրս եր յեկել անդրանիկ վիպասանության յերրորդ կտորը։ Թվականը 1860-ն եր և մարտ ամիսը[55]։

Պատշաճ է այստեղ մեջ բերել «Սոս և Վարդիթեր»-ի լույս տեսնելու դրդիչ հանգամանքը։

Ծանոթություններս որ ըստ որե ավելանում են, ընկերակցական շրջանս ընդլայնվում է և յես դեռ Տեր-Հակոբյանցի մոտ եմ։

Պ. Ալեքսանդր Ցերիցյանցը[56], իմ գիմնազիական ընկերներից, մեր գրականական ժողովների գլխավոր պատճառներից մեկը, մի յերեկո ինձ մոտ է գալիս։

Զանցնենք. գիմնազիայի հինգերորդ դասարանցիներից և Ներսիսյան դպրոցի նորավարտներից մի քանիսը, չեմ հիշում ում մոտ, շաբաթը մի անգամ ժողովվում և հայերեն ընթերցանությամբ եյինք պարապում. այդ ընկերությանը մի յերկար ու բարակ անուն ես հատկացրել եյինք, վոր չեմ մտաբերում. Ցերիցյանցը գլխավորներիցն եր[57]։ 1859 թվի վերջերումն եր այդ։

20 —Տնաքանդ, ել վո՞ր օրի համար ես պահել աշխատությունդ, դոչեց Ցերիցյանցը, յերբ յուր խնդրանոք ընթերցումս վերջացրի. մենք այդ կտպենք և վարձատրություն

*) Իմ անհամակրանքս դեպի իմ յերկու բարերարները քանի գնում ավելանում եր այդ միջոցին ընդհանրացած շանշլական և ճակաշանշլական կնճռոտ խնդրի աստիճանաբար խճճվելովը. վերջը կասեմ, թե ո՞ւր հասավ և ինչքան թանգ նստավ ինձ վերա ապերախտությունս։ Ծ. Հ.



ես կտանք, մենք առաջիկա հունվարին ամսաթերթ պիտի հրատարակենք, մենք ընկերություն ունենք, Համբարձում Ենֆիաճյանն[58] և Ազարբեգյանն[59] են գլխավոր անդամները, յես վաղը Համբարձումին կասեմ և քեզ նորան կներկայացնեմ։ Շատ լավ է, շատ լավ է, դու մեզ պետք ես, սիրտ տվեց ինձ Ցերիցյանցը։

Մինչև այսոր էլ չեմ հասկանում ինչպես յեղավ, վոր Ցերիցյանցը ապագայումը անմիջական ընկերություն կամ մասնակցություն չունեցավ «Կռունկ»-ի խմբագրական ընկերությանը, բայց արդարև մյուս օրը գնի ճաշուն նորա հետ միասին ներկայացա Համբարձում Ենֆիաճյանցին, ծանոթացա հետը և կարդացի գրվածքիցս մի յերկու գլուխ։

—Նորից սկսի՛ր, ասաց ուրախալիր Ենֆիաճյանցը, յերբ ներս յեկավ մի կարճահասակ գեղեցկադեմ յերիտասարդ և տաճկահայ բարբառով ողջունելուց հետո ձեռք տվեց ինձ, անվանելով յուրյան Մարկոս Ազարբեգյան։

— Ծո՛ Համբարձում աղա, ծո մեր գործը կհաջողի, կնայիս դեռ չսկսած ինչ աշխատակիցներ և հոդվածներ կունենանք. չիտեմ պիտի համաձայնի թե վոչ, միայն այսորվնե այսոր յես մեր խմբագրության կարևոր անդամներեն մեկը կճանաչեմ։

—Իսկ յես այս րոպեյից կխնդրեմ սորան մեր մշտնջենավոր աշխատակից լինելով հանդերձ, հայտնե յուր պայմանները խմբագրատունը տեղափոխվելու և ամսագրի խմբագրի օգնական ու սրբագրիչ լինելու։

Ասած՝ կատարած. բոլոր պաշտոններս (թողի*) և
21 բավականին ռոճիկով ու «Սոս և Վարդիթեր»-ը ամսագրից արտատպված 600 հատ գիրք ստանալու պայմանով մտա խմբագրատունը, սենեկակից լինելով Ենֆիաճյանի տպարանի վարպետաց, յերկու յեղբայր Կ. Պոլսեցի Ազարյաններին։

Իմ մասնակցությամբ յեղած առաջին ժողովումը ամսագիրը կնքվեցավ «Կռունկ հայոց աշխարհի» անունով։

Առաջիկա 1860 թվի հունվարին թռավ «Կռունկ»-ը[60]։

Խմբագրությանը թեև համակրանքով մասնակցում է

*) Թող ընդունի պ. Նիկ. Տեր-Հակոբյանցը սրտանց շնորհակալություն յուր մարդասիրաբար և ներողամտաբար ինձ ազատ կացուցանելու համար։ Ծ. Հ.

յին մի քանի յերիտասարդներ և ժողովներին հաճախում, բայց մշտականներն էյին հրատարակիչ Համբ. Ենֆիաճյանցը, խմբագիր Մարկոս Աղաբեկյանը, Գաբրիել Մուրատյանը և Պերճ Պռոշյանը:

***

Մոտ յերկու տարի աշխատակցում էյի «Կռունկ»-ին: «Սոս և Վարդիթեր»-ս վորքան և ծանոթացրեց ինձ ընթերցող հասարակության հետ, բայց և այնպես 600 տպված օրինակներից 150 հատ միայն բաժանորդագրերին ուղարկվեցավ[61]. մնացածը դանազան հաստատությանց և մասնավոր բարեկամների ընծա տալով օձիքս թափ տվի: Պահելու տեղ չունեյի. յերևակայական ցնորքներիս և ինքնասիրությանս տեղիք տվեց տխուր իրականությունը, անընթերցասիրությունը մերայնոց մեջ շոշափելի կերպով կենդանացավ առաջիս և յես կիսահուսահատ, արտակարգ
22 թողի խմբագրությունը*): Թողի, բայց պատանեկական տարիները արյունս յեռացնում են և գործունեյություն են պահանջում:

[5]

Անցյալ ձմեռ մի քանի տղայք Միք. Պատկանյանցի[62] առաջնորդությամբ հայկական ներկայացմանց ճաշակն էյին տվել Թիֆլիզի հայերին[63]: Ներսիսյան դպրոցի աշակերտները Հակոբ վարժապետի և Արամելիքյան Սողոմոնի[64] ղեկավարությամբ մի յերկու ներկայացում ևս տվել էյին դպրոցի հին շինության դահլիճումը[65]: 1862 թվի սկզբներումն եր, վոր մտքումս հղացավ մի հաստատ հայ թատրոնական խմբի ստեղծագործությունը[66]: Ներսիսյան ուսումնարանի մի յերկու ավարտավարժ աշակերտաց հետ խորհրդակցելուց հետո, հանգուցյալ Թովմաս Ջարդեցյանցի հետ մի որ յերեսս խաչակնքեցի և Գրիգոր Իզմիրյանի[67] դուռը բախեցի: Գրիգոր Իզմիրյանցին մեր ընկերությունից վոչ վոք ծանոթ չեր և վոչ յերեսը տեսել էյինք: Յերբեմնապես խմբագրու-

*) Ծրագրային նշում (լուսանցքում)՝
Գրել ֆոտոգրաֆիա սովորելուս առիթը. բողոքական անունով Սարգիս Ջալալյանցի և յուրայնոց մերկացրած [?] հալածանքներս. Ներսիսյան դպրոցի կանոնադրությունը:



թյան մեջ լսել էյի նորա յեռանդի և քաղաքական վարչության մեջ ունեցած աշխատասիրությանց մասին և այդ բավական եր ինձ պատկառանքով մոտենալ նորա դուռը:

Յես և ընկերս սպասում էյինք Իզմիրյանցի մեջ գտնել մի բարձրահոն, վսեմադեմ և քիթը ցցած անձնավորություն, վոր ամենաշատը վոտքի վերա կանգնացրած արժանացնելու յե մեզ, աննշան արարածներիս, մի յերկու կարճ նախադասության: Բայց սխալվեցանք, անծանոթ պարոնը անուններս լսելուն պես ինքը դիմավորեց մեզ և իբրև նախածանոթ ընկեր յերկուքիս մեջ տեղով կուռներս բռնած բազմացրեց բազկաթոռի վերա:

—Բայց ինչո՞ւ Հակոբ վարժապետին և Պատկանյանցին չհիշեցիք, հարցրեց նա, յերբ իմացավ մեր մտադրությունը՝ Թիֆլիզում հաստատ թատրոնական խումբ կազմելու:

23 — Դիմել ենք պ. Իզմիրյանց, բայց անհաջողության ենք հանդիպել:

—Պատմեցե՛ք:

—Ժողովեցի ինձ հետ մի քանի ընկերակիցներ և ներկայացա Հակոբ վարժապետին: Մեր բաղդից այնտեղ գտանք և Արամելիքյանցին: Վարժապետը այդ միջոցում խռով եր Պատկանյանցի հետ:

Լսելով մեր ցանկությունը, Կարենյանցը շատ ուրախացավ, խոստացավ գործակցել մեզ, խոստացավ աղի շտեմարանի շինությունը ձեռք բերել մեզ համար և այլ այլպիսի խոստումներ: Իմ խնդրանացը հրավիրել և Պատկանյանցին, վարժապետը յուրյան հատուկ սառնությամբը հանդիմանեց ինձ և հանձնեց յուր գրած «Վարդան Մամիկոնյան» վողբերգությունը[68]:— Կարդա՛, հրամայեց, Պռոշ, Ադիբեկյանցի[69] հետ մտախով արեք ձեր նկատողությունքը և յերբ հավանիք, առանց Պատկանյանների միջնորդության յես Արամելիքյանցի գործակցությամբ և՛ գլուխ կկանգնեմ խմբին և՛ հառաջ կտանեմ (ուրախ եմ, Պռո՛շ, շարունակեց խեղճը, վոր յես և դու վերջապես հաշտվելու յենք): Սիրտ ի թունդ, ազգային յերգեր ասելով ընկերացս հետ դուրս յեկանք ժամը 11-ին գիշերը և Խարբուղի թաղից ցած իջանք:

Ափսո՛ս անհեռատեսությանս, վստահացել էյինք Հակոբ

վարժապետի աշակերտներս՝ մատխով «Վարդան» ողբեր-
գության լուսանցքում մեր նկատողությունները գրել: Ես
յերբեք այնպես բարկացած չեյի տեսել վարժապետիս, միան-
գամայն կրակ թափեց գլխներիս և պարզ ու պարզ ասաց,
վոր ինքը ամոթ է համարում յուր թանկագին ժամերը զո-
հել մեր նման փծին և չնչին մանուկների համար և վոչ
միայն ինքը չի մասնակցիլ, թույլ անգամ չի տալ ուրեի-
ցե ումեիցե ձեռքով իրագործելու մեր միտքը: Այն էլ
շատ քաջ հայտնի յե ինձ, ասաց, վոր յեթե յես չխառնվեմ,
քաղաքումս վոչ մեկի գործը չե:

Գլխիկոր յերեքկնեցինք և չորեքկնեցինք Ադիբեգյան-
ցի հետ մեր աղերսանքը՝ ներել մեր հանդգնությանը, բայց
վարժապետը անդեղջ մնաց:

24 Անիծելով մեր որը, հուսահատ դուրս յեկանք վարժա-
պետի մոտից և յերեք որ խելքի չեյինք գալիս, մինչև
վոր այսոր, ներկա ընկերակից Զարդեղյանցի հետ, ձեր
խոհական խորհրդին կարոտած սպասում ենք ձեր կողմից
կարեկցական ոգնության:

—Բայց ընչո՞ւ պատեպատ սայթաքել, ասաց Իգմիրյան-
ցը, լավ չե՞ր ուղղակի խումբը կազմակերպել և քաղաքա-
կան թատրոնումը ներկայացումները շարունակել:

—Հնարավո՞ր է արդյոք, կտա՞ն:

—Ես կարծում եմ որինաց ընդդեմ վոչինչ չկա այդ-
տեղ, թատրոնը քաղաքական է և քաղաքի բնակչաց մե-
ծամասնությունը հայ, վորոնց համար ուրախալի կլիներ
շաբաթը մի անգամ մի ներկայացում տեսնել մայրենի լեզ-
վով:

—Գնացեք այսոր, մի՛ վհատեք, հուսադրեց Իգմիրյան-
ցը, յես վաղը ում հետ ինչ խոսելու յե կանեմ և յերրորդ-
որը յեկեք մի վճռական պատասխան կտամ ձեզ:

—Այս յերեկո ժողով ենք նշանակել բժշկապետ Հար[ու-
թյուն] Հովհաննիսյանցի մոտ, հայտնեց ինձ Իգմիրյանցը,
դու էլ առ քո ընկերներիդ և ժամը ութին ներկա յեղիր,
այնտեղ կլինեն Հակոբ վարժապետը, Միքայել Պատկան-
յանցը և Աբամելիքյանցը:

—Բայց պ. Իգմիրյանց, վարժապետը խռով է Պատկան-



յանցի հետ, մեզ հետ էլ չի ցանկանում գործել, ավելորդ
չե՞ր նորանց հրավիրելը:

— Վոչի՛նչ, կհաշտեցնենք բոլորիդ և մի յելքի կգանք:

***

Ժողով գնալուց հառաջ հարկավոր է նկարագրել Կարեն-
յանցի և Պատկանյանցի խռովության պատճառը:

Պատկանյանցը յուր ներկայացումներից մեկում անցյալ
տարին ակնարկություն եր արել Կարենյանցի ընտանեկան
կյանքի կետերի վերա[70]:

Վարժապետը սրտամնա դուրս քշել տվեց Պատկանյան-
ցին յուր խմբով Ներսիսյան հին դպրոցի դահլիճից և ներ-
կայացրեց յուր հանրահռչակ «Շուշանիկ»-ը[71], վոր մեծ
25 ընդունելություն գտավ հասարակությունից: Չեմ հիշում
տպվա՞ծ եր այդ ժամանակ «Շուշանիկ»-ը, թե ձեռագիր[72]:

Պատկանյանցը մի փոքրիկ բրոշյուրով ցեխը կոխեց
վարժապետի «Շուշանիկ»-ը[73] և իբրև կատարելագործու-
թյան որինակ գրեց ինքը «Շուշանիկ» անունով ուրիշ վող-
բերգություն[74], վորը քանի անգամ կամեցավ բեմի վերա
դնել, բայց Տերմազանյանցի սրահը անհարմար եր (Պատ-
կանյանցը այդ սրահում մի քանի ներկայացումներ տվեց),
իսկ Ներսիսյան դպրոցի դահլիճը վարժապետի ահից վոտ
դնել չեր համարձակում:

Մեր խումբը կազմելու միջոցին, բացի Պատկանյանցի
քանի մի աննշան պիեսները, հրապարակի վերա դրված եյին
Հակոբ վարժապետի և Պատկանյանցի «Շուշանիկ»-ները
և վարժապետի «Վարդան»-ը:

***

Հովհաննիսյանցի տան ժողովը աղմկալից եր. ներքևը
շարվել եյինք մենք, նորակազմելիք խմբի անդամներս, բո-
լորս վարժապետի և Պատկանյանցի աշակերտներ, իսկ վե-
րի կողմը տան տերը, Իգմիրյանցը, [1 անընթեռնելի] յերեք
վարժապետներ և մի քանի աղաներ, վորոնց հետ ծանո-
թանալու վո՛չ վստահություն և վո՛չ պատիվ ունեցանք:
Հետզհետե միայն ճանաչեցինք, վոր յեղել են իշխան Մի-
քայել Արսենյան Բեհբուդյանցը, իշխ. Գրիգոր Բեհբուդյան-
ցը, Բարսեղ Խոջայանցը և այլ ուրիշները:

Շատ վիճաբանություններ յեղան, Իգմիրյանցը և
Հովհաննիսյանցը յուրյանց վերա առան քաղաքական թատ-

[redacted]

րոնի ձեռք բերելը, մյուս աղաներն էլ խոստացան օգնել, բայց Հակոբ վարժապետը անկոտրում էր։— Վո՛չ կհաջողեք ձեռք բերել, ասաց, և վո՛չ մենք կհամաձայնենք այդ անփորձ մանուկների հետ գործ բռնել։ Թեպետ Միքայել Սերաֆիմիչի հետ յես փոքր ինչ սրտամոտ եյի, ավելացրեց նա, բայց հուսամ, վոր դա ևս ժամավաճառ չի լինիլ դոցա հետ։

—Այո՛, մատա՛ղ Յակով Գրիգորիչ, այո, շտապեց պատասխանել բարեմիտ Պատկանյանցը և վեր թռավ սեղմեց Կարենյանցի ձեռքը ու հաշտվեց։

26 —Վարժապե՛տ, տեղիցս վեր կացա յես և խոնարհաբար մի քայլ հառաջ յեկա, խոստովանելով միանգամայն իմ հանցանքս դեպի ձեր հայրական քաղցր ակնարկությունը, աղաչում եմ, վորովհետև հաշտվեցաք մեր սիրելի Պատկանյան վարժապետի հետ, ներողամիտ գտնվեցեք դեպի ձեր փոքրիկ վորդիքը և յերեքդ միասին ձեռք ձեռքի տված առաջնորդեցեք դեպի հայ թատրոնի վերակենդանության գործը։

—Մենք ևս ձայնակցում ենք Պռոշյանցին, վոտքի կանգնեցին ընկերքս, օգնեցե՛ք մեզ։

—Շատ լավ են ասում, վարժապե՛տ, ձայն ձայնի տվին բազմականները, հանձն առեք և շուտով մեզ մի ներկայացում տվեք քաղաքական թատրոնում։

Փափկեց վարժապետի սիրտը, ժպտաց յերեսիս և խաղաղության ձայնը հնչեցավ։

Դժվարալուծելի հարցը վերջումն էր, ի՞նչ ենք ներկայացնելու. յերեք պիեսայից վորի՞ն ենք նախապատվություն տալու. Կարենյանցի «Վարդան»-ը անհարմար լինելուն նորից հանդգնեցա յես. մնացել եյին յերկու «Շուշանիկ»-ները։

Վճռվեցավ ընտրողությունը թողուլ խմբի վերա. և յես, խոստովանեմ հանցանքս, ձայն տվի Պատկանյանցի «Շուշանիկ»-ի համար, պատճառելով թե Կարենյանցինը արդեն հայտնի յե հասարակությանը, թող Պատկանյանցի աշխատությունը ևս լույս աշխարհ գա։

Ինձ հետ անկարծիք համաձայնեցան ընկերներս։

—Իսկ յեթե վո՛չ յես տամ իմ պիեսս և վո՛չ Միքայել Սերաֆիմիչը, մատ խառնեց նորից վարժապետը, այն ժամանակ ի՞նչ կանես, Պռոշ։



—Այո՛, մատաղ Պռոշյանց, այո՛, վոչ յես կտամ և վոչ Յակով Յեգորիչը, դու ի՞նչ պետք է անես, արձագանք տվեց խեղճ Պատկանյանցը։

— Ցանկալի կլիներ, վարժապետ, ասացի, ձեր հովանավորության ներքո գտնվիլ, իսկ յեթե դուք այսքան իշխանների խոսքը արհամարհում և հեռանում եք, յես իմ ընկերացս հետ միասին կխնդրեմ այս մեծապատիվ այցե-
27 լուների և մասնավորապես պ. Իզմիրյանցի խնամատարությունը և թատրոնի իրավունքը ձեռք բերելուն պես կդնեմ բեմի վերա հայր Խորեն Գալֆայանի[75] «Արշակ Բ»-ն[76]։

—Այն կույրի լեզվով գրածն ես ասո՞ւմ, մատաղ Պռոշյան։

—Կույրի լեզվով է, այո՛, չեշտեցի «կու» խոսքի վերա, խոստովանեմ՝ վարժապետին ծակելու համար (վարժապետն ևս իբրև գաղթական կու յեր, նույն մտքով գործ ածեց կու բառը և Պատկանյանցը)։ Կույրի լեզվով է, բայց վարժապետին քաջ հայտնի յե, վոր յես այն կույրի բարբառը կարող եմ արարատյան մաքուր բարբառի դարձնել։

—Այո՛, այո՛, Պռոշը կարող է, քթախոտին զոռ տալով հաստատեց վարժապետը։

—Շատ ես խոսում, Պռոշյանց, մեջ մտավ բժ. Հովհաննիսյանցը. իմ կամքս է, վոր ձեր յերեք վարժապետներից անբաժան գործեք և մենք կխնդրենք Հակոբ վարժապետից թույլ տալ այս անգամ Պատկանյանցի «Շուշանիկ»-ը ներկայացնեք, յերկրորդ անգամին յուրը։

— Հնազանդ եմ, պ. բժիշկ։

—Յես ևս ընդունում եմ Արտեմ Իվանիչի առաջարկությունը, նորից ժպտաց յերեսիս վարժապետը և վերջնականապես վճռվեցավ Պատկանյանցի «Շուշանիկ»-ը։

Ժողովը վերջացավ սիրո ձեռնասեղմությամբ, բայց յես Հովհաննիսյանցի բակի շեմքից դուրս գալուս լսեցի Կարենյանցի և Պատկանյանցի քչփչոցը։

—Զխարըլիս Սերաֆիմիչ, թելադրում էր վարժապետը, մի քանի օր կրկնությունները շարունակի և վերջը մի

հնարքով մերժիր պիեսդ տալը, թող ցրվի այս անզգամների խումբը և մենք Սրամելիքյանցի հետ յերեքով միասին որինավոր կերպով գործ կսկսենք։

—Հա՛, մատաղ, Յեղորիչ ջան, լավ ես ասում, նորից արձագանք տվեց պարզամիտ Պատկանյանցը և ցրվեցան։

Յես չհուսահատվեցա և ընկերացս չհայտնեցի...

6

28 Իմիրյանցի և բժ. Հովհաննիսյանցի միջնորդությամբ իշխան Յաղոն Թումանյանցը[77] հանձն եր առել մյուս օրը խոսել քաղաքական Թատրոնի կապալառու իտալացի Տորոչելլոյի հետ և ստացել նրա հաճությունը 12 օրից Թատրոնը մի գիշեր մեզ զիջանելու 350 մանեթ վարձով։ Գումարի մեծությունը մեզ սաստկացրեց, բայց մեր նոր պաշտպանների հույսը քաջալերեց։

Խումբը կազմվեցավ, մեզ հետ միացավ և իմ մոտ բնակվող բարեկամ Վաղարշակ Շահխաթունյանցը[78]։ Պատկանյանցը ամեն յերեկո անընդհատ հաճախում է կրկնություններին, փորձերը հաջողություն են խոստանում, պատրաստվում է Պատկանյանցի «Շուշանիկ»-ը. կանանց դերի համար իգական սեռի մասնակցությունը բնավին անհնար համարելով հրավիրել եմ գեղեցկատեսիլ գիմնազիստներ։

Ուրբաթ օրն է, առաջիկա չորեքշաբթի ներկայացում է, շտապում եմ Ներսիսյան դպրոց Պատկանյանցից խնդրելու աֆիշները պատրաստելու, վորպեսզի տանեմ տպել տամ։

— Չէ, մատա՛ղ, չէ, չեմ տալիս իմ պիեսան, յուր հանդարտությամբը պատասխանում է Պատկանյանցը։

— Ինչպե՞ս։

— Դերասաններից մի քանիսը, ի միջի վորոց գլխավորապես դու, անհարմար եք, պիտի փոխվին։

— Յես ուրախությամբ, վարժապետ, մյուսների անունը տվեք։

— Կանացի դեր խաղացողները բոլորեքյան պետք չեն։ Յեթե կանայք կգտնեք կտամ, ապա թե վոչ գնացեք հեռացեք. ճշմարիտն ասած՝ Հակոբ վարժապետի սիրտն էլ ձեզ վերա ջերմ չէ, և ինձ խորհուրդ է տալիս չտալ։

—Ինձ շատոնց է հայտնի այդ, ասացի, և վերադարձա սենյակս, ձեռք առի հայր Խորենի «Արշակ»-ն ու սկսեցի թարգմանել։



29 Յեթե ընթերցողը կմտածի գտնել իմ սենեկումս շենք ու շնորհքին կահկարասիք, շատ կսխալվի. թե իմ տունը, թե տատրակի բունը մեկ եր, յերկու հասարակ փայտե մահճակալներ եր անկյուններում դրած իմ և Աղիբեղյանցի համար. մի սպիտակ աժանագին սեղան, մի կոտրած թանաքամանի և մի յերեք ու կես վոտնանի աթոռի հետ լրացնում եր պալատիս ամբողջ զարդարանքը։

Վառելիքի սղությունից տունս տաքանում եր յեկող հյուրերի և այս քանի օրը կրկնություն անող խմբի շնչերով։ Յեվ վորովհետև դեռ ճաշից հետո եյի ընկերներս ժողովելու և օրը փոքր ինչ սովորականից ցուրտ եր, գրիչը մատներիս մեջ հարմար բռնելու համար վառարանի տեղ ծառայում եր ծոցս։

Այդ դրությամբ յերկրորդ գործողությունը վերջացրել եյի թարգմանելուց, յերբ հանկարծ դուռս բացվեցավ և մի պարոն այցազգեստով, վերարկուն նախասենյակումը թողած՝ տուն մտավ։

Պարոնին թեպետ առաջին անգամն եյի տեսնում, բայց քայլվածքից ճանաչեցի, նրա քայլվածքի մասին քանիցս ընկերներս պատմել եյին։

— Ա՞յս է Պռոշյանցի կացարանը, ինձանից ավելի շփոթված, սենեկի կենտրոնում կանգնած հարցրեց պարոնը։

— Ներեցեք... կմկմացի, յես ինքս եմ Պռոշյանցը...

— Խնդրեմ ծանոթանանք, Ռոմանոս Նադիրյանց...

— Հազար ներողություն*), պ. Նադիրյանց, տանս ցրտության պատճառով կաղաչեյի ծածկեյիք վերարկուդ։ Շնորհ անեյիք նստելու։

Ձեռքով միակ աթոռահենս [?] ցույց տվի և վերարկուն ներս բերելով ծածկեցի։

— Ի՞նչ եք գրում, մատնացույց արեց տետրակը։

— Թատրոնական պիեսա յեմ թարգմանում։

—Այո՛, շատ ուրախ եմ, այդ իսկ պատճառով և յես

30 յեկել եմ առաջարկելու ձեզ իմ չնչին գործակցությունս,

*) Հանում ենք «խնդրելով» բառը։

ինչ կարևոր կլինի զգեստի և բեմի համար, կարող եք մեր խանութից տանել տալ:

Այդտեղ կարճառոտ պատմեցի յես այս ոլվան անցքը, վորի համար սաստիկ վշտացավ ազգասեր պարոնը և խորհուրդ տվեց հրավիրել Մարկոս Աղաբեկյանին իբրև վարժիչ[79]:

Ճաշից հետո մեծ դժվարությամբ համոզեցի ընկերոջս հեռու կենալ Կարենյանցի և Պատկանյանցի վերա կազմած նախապաշարմունքից, սեպհական ուժի վերա հույս դնել և «Արշակ»-ը պատրաստել:

Առաջիկա չորեքշաբթի առավոտ Թատրոնի տոմսակների վաճառքն սկսավ իմ կացարանումս 10 ժամին: Բավական է ասել, վոր 11 ժամին և վոչ մի տոմսակ չմնաց և ահա կհասկացվի թե ինչ եր տոմսակավաճառ խեղճ Աղիբեկյանցի դրությունը այդ մի ժամումը:

Այդ որը մեր դուռը չծածկվեց, յերկու մարդ կանգնած փողոցում մունետիկի նման ձայնում եյին տոմսակաց վերջանալու համար, բայց հավատող չկար, մինչև 10-նից չպահանջեյին, չնեղանային, հեռանալ չեր լինում:

20 կոպեկանոց տոմսակը յերեկոյան դեմ 3 մանեթի յեր ձեռքե ձեռք հափշտակում:

Գալերեյի դռնապան խալացին տոմսակները ժողովելով այցելուներից և յուր վորդու ձեռքով կրկին ծախելով 150 մանեթ եր վաստակել: Մյուս որը միայն սարսափեցան ճարտարապետները, յերբ իմացան թե 300 մարդու տեղանոց գալերեյում 900 հոգի յե ամփոփված գտնվել. նոքա զարմացել եյին Թատրոնական շինության կայունության վերա, վոր չի կործանվել:

Ներկայացումն սքանչելապես հաջողվեց, ժողովրդի հրճվանացը սահման չկար[80]: Վաղարշակ Շահխաթունյանցը հասարակության սիրելին դարձավ, նրա խաղը աննման եր[81]: Հինգ րոպեյի մեջ 100 մանեթ ինքնաբերաբար ժողովեցին և ընծա տվին նորան[82], ծափահարությունը ողը թնդացնում եր. ավելին սպասել պետք չեր: Այդ յերեկո առանձնապես խրախուսեց ինձ դրամական օժանդակությամբ և պ. Նադիրյանցը, խառը միջոցին ձեռքս սխմելով մի ծրար իբրև կոչկացին և խույս տալով: Նադիրյանցի շնորհը վայելելու



յես վերջերումը շատ եմ արժանացել. լսելով տկարությունըս, ինքն յեկավ մոտս և ամսական 30 ռուբլի թոշակ կապեց ու արգիլեց ուսուցչությամբ պարապել: «Ազատի» վողբերգությունը[83] Նադիրյանցի շնորհաց արդասիքն է:

Թատրոնի ամբողջ յեկամուտը 650 մանեթ պետք է լի-
31 ներ, բայց 900 մանեթ ժողովեցավ[84]: Ազատվել չկարողացա,
մինչև ամեն խորշերը առանց տոմսակի վաճառեցի:

7

Մյուս որը մեզ նեղություն կրելու հարկ չմնաց. քաղաքի նշանավոր անձինքներից ինքնուրույնորեն ժողովեցան Իզմիրյանցի մոտ, հրավիրեցին մեզ, հոգաբարձություն և կոմիտետ կարգեցին, Իզմիրյանցին դիրեկտոր, Աղաբեկյանցին վարժիչ և ինձ Իզմիրյանցի ոգնական և միջնորդ ընտրեցին խմբի և հոգաբարձության մեջ ու վճռեցին շաբաթական մի ներկայացումի իրավունք խնդրել կառավարությունից:

Հասարակության առխողական պահանջը կատարելու համար, մենք հարկադրվեցանք չորս որից հետո կրկնել «Արշակ»-ը[85] և ի նշան մեր շնորհակալության համքարի ցույցերի դեմ, յեկամտի կեսը հոգուտ համքարի կասսային հատկացրինք[86], վորի համար ճրագալուսու[թյուններով?] և ազգային յերգերով ու անհրաժեշտ զուռնայով, շրջապատված ամբողջ համքարից՝ նույն գիշերը մինչև լույս խնճույքի մեջ եյին յուրյանց ուստաբաշի զառափ Գիքոյի մոտ[87]: Չափազանցություն թող չթվի, յեթե ասեմ՝ Թատրոնից մինչև Գիքոյի տունը, բավականին տարածություն, մեր խմբի վերջին խորխոտն անգամ համքարի ուսերին բազմած է գնացել. Շահխաթունյանցի և մի քանի առաջինների վոտքը գետին չի կոխել: Մեծ իշխան փոխարքա Միքայել Նիկոլայեվիչը[88] շնորհ արեց վճռել հայ խմբին շաբաթական մի ներկայացում և այնուհետև գործը կարգի ընկավ: Այս վողորմած իրավունք[ի] ձեռք բերողներից գլխավորն յեղավ հայազգի իշխան Ցաղոն Թումանյանցը, վորը հոժարակամ ցանկացավ անդամ լինել Թատրոնական հոգաբարձության: Մեր մասնաժողովը սիրով հարգեց պայծառափայլ իշխանի ցանկությունը և Իզմիրյանցի սեպհա-

կան առաջարկությամբ դիրեկտոր ընտրվեց. ինքը Իզմիր-
32 յանցը մնաց փոխդիրեկտոր[89]: Ո՞ւր է հասել ընդհանուր վո-
դեվորությունը. Ցաղոն Թումանյանցը մինչև այդ որը հայ հասարակության մեջ չէ յեղել մտած, վորի ապացույցը յուր հայադխտությունից զուրկ լինելն եր: Այդ արխատոկրատը պատիվ եր համարում յուրյան ինձ նման փոքրիկ արարածներին թույլ տալ ցեխոտ և պատառոտուն կոշիկներով կոխոտել յուր փայլուն հատակները և նման այն թոթովախոս մանկանը, վոր սուտ ու սխալ բառերով ուրախացնում է յուր մորը, այդ մարդը առաջին անգամը յուր կյանքումը մայրենի լեզվով եր թոթովում մեզ հետ. հետն ել աղաչում չծիծաղել յուր խոր հայաչգիտության վերա: Թատրոնի մասնաժողովի անդամքն եյին, բացի վերոհիշյալներից, հանգուցյալ բժշկապետ Միքայել Տեր-Գրիգորյանցը[90], վոր մի քանի պիեսներ ել ունի, թատրոնագիր հանրահռչակ Գաբրիել Սունդուկյանցը, Նադիրյանցը, Ալ[եքսեյ] Ալեքսանդրյանցը, բժ. Փուղինյանցը[91], Բաղդ[ասար] Խոսրովյանցը և դերասանական [կազմից] Գեորգ Ադիբեգյանցը, մեր քաջավարժ հուշարարը[92]:

Մի քանի ներկայացումներ չարունակվում եյին միմյանց յետևից[93]: Թատրոնը միշտ լիքն եր լինում և դերասանները մյուս որը ուրախ-ուրախ ստանում եյին հոնորարձությունից յուրյանց աշխատանաց վարձը. շնորհիվ Ցաղոն Թումանյանցի Տորոչելլոն 350 մանեթի տեղ 200 եր ստանում, բայց այդ միջոցում հառաջ յեկան յերկու արգելառիթ հանգամանքներ: Ա) Իշխան Թումանովի թատրոնասեր յեռանդը դարձրեց յուր վերա կառավարության ուշադրությունը և [նա] նշանակվեցավ պաշտոնապես քաղաքական թատրոնի դիրեկտոր, վորով իշխանը թողեց հայ խումբը ի ցավ ամենքիս. ինքը իշխանն անձամբ ինձ ասաց՝ չուրախանալ յուր նոր պաշտոնի համար, ըստ վորում յուր և մեր մեջը այսուհետև մրցումն է լինելու, ինքը աշխատելու յե դժվարացնել մեր ճանապարհը յուրյանը բարձրացնելու աղագավ: Այդպես ել արեց. ինքն եր խրավունք ձեռք բերել մեզ համար, ինքն եր միջնորդում Տորոչելլոյին թատրոնական թանգագին զգեստներով չքեղ կացուցանել մեր ներկայացումները և այնուհետև մեծ դժվարությամբ և





1862—63. թ. թ հայթատրոնական խումբը:
Ձախից աջ. նստած են—բժ. Մ. Տ.-Գրիգորյան, բժ. Ռ. Նադիրյան, իշխ. Յաղ. Թումանյան, Գ. Իզմիրյան և բժ. Ն. Փուղինյան:
Կանգնած են—Ա. Սուլխասյան, Հ. Արովյան, Գ. Ադիբեգյան, Պ. Պռոշյան, Պ. Վարշամյան, Մ. Աղաբեգյան, Հ. Կուտիկյան, Վ. Շախխաթունյան, Թ. Զարդեղյան, Գ. Արովյան. վերջին յերկուսը մնացին անորոշ:
Ֆոտո: Սեփականություն Պետ. Գրական Թանգարանի:

խնդիրքներով կարողանում էյինք պարտ ու պատշաճ զգեստ-
ներ ձեռք բերել իրանից: Բ) արդէլքը՝ Կարենյանցի ձեռքով
Զմշկյան Գեորգի[94] խմբապետությամբ մի նոր խումբ ստեղծ-
վեցավ[95], տվեց Կարենյանցի չարաբաստիկ «Վարդան»-ը[96]
և Պատկանյանցի կատարելության տիպար «Շուշա-
նիկ»-ը[97], վորից վերջրու Հակոբ վարժապետի «Եր հեռա-
33 նաս» յերգի[98] փոխարեն գրած վեց տուն «Պարկեշտասուն»
և «Լյառն Կովկաս» յերգերը[99], մնացածը կրակ ձգիր:

Բնական եր, վոր ույժը կխլվեց և թուլացավ:

Ցես պետք է ավելացնեմ այստեղ և այն, վոր մենք արդեն կազմակերպված ունե[յի]նք որինավոր դերասաններ և դերասանուհիներ[100], յեղան քունջ ու պուճախից ժամանակավորապես ձեռք բերված մի քանի կանայք և աղջկունք, վորոնք պոչավոր աստղերի նման յերևեցան թատրոնական հորիզոնումն և անհայտացան, բայց չահեցանք յերկու հաստատուն և քանքարավոր դերասանուհիներ. անդրանիկը՝ որիորդ Ցեղիսաբեթ Տեր-Աբրահամյանց (վերջը տիկին Սաթենիկ Զմշկյանց)[101] և յերկրորդը՝ տիկին Սոֆիա Մելիք-Նազարյանց (վերջը տիկին Իզմիրյանց)[102]:

Հակոբ վարժապետի խումբն էլ քնած չեր, զնում [եր] կաղեկաղ, մինչև վոր յերկու խմբից ձուլվեցան հաստատ և անձնվեր պաշտպաններ և դերասաններ, Զմշկյան, Ամրիկյան[103] և այլն:*)

Ի դեպ՝ «Փորձ»-ում և այլ պարբերական հրատարակության մեջ, մեր գեղարվեստի սիրահար Գեորգ Զմըշկյանի թատրոնական հիշողությունների մեջ[104], պետք է ասած, վոր սկզբներումը միակողմանի պատմվածքներ պակաս չեն, ինքը Զմշկյանցը կաց ու կամ, բայց հայտնի մատնացույց է անում հայ թատրոնի սկզբնապատճառին, ավելի լավ՝ պատճառներին, սակայն ճանաչելով Զմշկյանի մեծ անձնազոհությունը, տոկունությունը և կրած զրկանքները հայոց բեմական գործը Թիֆլիսում, վորով և գավառներում միշտնջենավորելու համար, հայ բեմի ծնունդը և չա-

*) Թող ների ինձ Զմշկյանը և տաղանդ[ավոր] Ամրիկյանի հիշատակը, թատրոնի պաշտպան կոչել մեր սիրելի Գաբրիելին, վորին հենած իրենք գնում էյին վստահաբար և անհոգդողդ: Գեորգ, այդպես է թե՞ վոչ: Ծ. Հ.

բանակությունը ցայսոր լիովին վերապրում եմ այդ ազգային նահատակին, խնդրում եմ բոլոր ականատես ներկա յեղողներին և ընթերցող հասարակությանը հայ թատրոնի պատմության աղբյուր ընդունել բացառապես Ջմշկյանի և այլ վոչ վոքի գրվածքները: Բայց, սիրելի Գևորգ, մի՛ ընկճվիր, ձեռք-ձեռքի տված մեր թատրոնական քաջ ախոյան Գաբրիել Սունդուկյանի հետ[105], աշխատեցեք չմեռցնել ձեր որով հայ բեմական գեղարվեստը:

***

34 Ասացի, վոր հաստատ խումբ կազմվեցավ, Շահխաթունյանցը Թիֆլիզից գնաց, յես գտնելով արդեն պատրաստ անձնվերներ, հոժարակամ իջա ասպարեզից, ինձ հետ հետըհետե տեղիք տվին և սկզբն[երում] անվեհեր [աշխատող], գործն ուսերին շալակող Իզմիրյանցը և ամբողջ հոգաբարձական կոմիտեր, վաղաժամ վախճանվեցավ բժշկապետ, թատրոնի ջերմ պաշտպան Տեր-Գրիգորյանցը, թողնելով յուր հիշատակը մի քանի կատակերգություններ և վոդեվիլներ հայ բեմի համար[105ա]:

[8]

Ի՞նչ գործի յես, հարցնում ես ընթերցող. յես անգործ չեյի կարող մնալ, վորչափ [ել] վոր [18]59 թվից ինձանից անբաժան կրծացավը և չարունակ արյանթքումը վոտքերս կամենում եյին կաշկանդել. բայց չհաղթվեցա:

Այդ ժամանակ Թիֆլիզում հայ աղջկանց դպրոցի գոյությունը ամենքին ծաղրելի յեր թվում. կար ИНСТИТУТ-ը, վոր ձեռնհաս եր միայն ազնվականներին և արտոնատերներին: Յերևեցան վանքի թաղումը հինգ-տասը աղքատ աղջկանց համար այսպես անվանած Մամիկոնյանցի և Մարկոսյանցի վարժոցներ, բայց և դրանք անհետացան. հրեշավոր բան եր թվում ավելի զարգացած ռուսազգիներին, թո՛ղ թե հայերին, աղջկանց ուսումը:

Վաղուց մտքումս ծնել եր այդ նպատակը. դերասանուհի պատրաստելու հետևանքն եր, զգում եյի մեջս բարոյական ույժ, բայց հարկավոր ոժանդակության վերա հույս չունեյի. գիտեյի հավաստյալ, վոր ինձ պես մի դեռահաս յերիտասարդի աղջիկ հավատացող չի լինիլ, վո՛չ մորուք ունեյի և վո՛չ փարաջա: Կարծիքս ուղիղ դուրս յեկավ,



բոլոր լողները ծիծաղեցին, թերահավատությամբ հետ քաշվեցան գործակցելուց և իմ ընկեր, նույն ժամանակի բանագետ յերիտասարդ քահանայքը և յես չվարեցա[նք]:

Ո՞ւր գնամ, մնացել եր միայն իմ դասընկերներից Մուղնու յեկեղեցու ծխատեր Սիմեոն Նորընծա Ջմշկյանը:

Առավոտը յերեսս խաչակնքեցի Մուղնու յեկեղեցումը. զուգադիպությամբ այդ որը Գայանյանց կուսանաց տոնն եր կատարվում: Ժամից հետո ստացա տեր Սիմեոնի սրտաբաց համաձայնությունը և յեկեղեցու մեջ սեղանի առաջին

35 ապագա դպրոցիս անունը կնքեցի Գայանյան[106]:

Տեր Սիմեոնը համաձայնեց ընկերակցել, բայց ո՞ւր է նախապատրաստական նյութականը, ո՞ւր բնակարան և գլխավորը, ո՞ւր աշակերտուհիք:

Պատրաստ ունեյի մեկը, դա յեր մեր դերասանուհի 14 ամյա Յեղիսաբեթը—Սաթենիկը, դեռ չիմացած թե ի՞նչ գումարով, ամիսը 9 մանեթով տուն վարձեցի մի դրասեղանով և վեց աթոռով ու Յեղիսաբեթին մեջը բազմացրի:

Մի շաբաթ Տեր-Սիմեոնի հետ որը վեց ժամ մնում և պարապում եյինք Յեղիսաբեթի հետ (աստված պարապմունք համարի): Յերկրորդ շաբաթը հաջողեցա համոզել իմ սափրիչ, նշանավոր դալլաք Արզումանին՝ յուր յոթը թե ինն աղջիկներից մեկին գոնե հանձնել ինձ ձրիաբար ուսում տալու: Այդ յերկու աղջիկները յերկու սյուներ յեղան դպրոցիս հաստատության համար:

Ամսավերջը մոտենում է, տան տերը վարձ կպահանջի, մրրիկը գլխիս կուտակվում է, քսակումս մկունք են պարում, տերտերն ել հազիվ յուր յերեխայից որական պարենն է հոգում: Վոչի՛նչ, ելի սրտապնդվեցի և բժ. Հովհաննիսյանցի դուռը բաղխեցի, ուղղակի տիկնոջ[107] տեսությունը խնդրեցի: Հանգի՛ստ գերեզմանին, անմիջապես ընկալավ քաղցրությամբ:

—Ամենայն սիրով ընդունում եմ, պ. Գոռշյանց, խնդիրըդ, հանձն եմ առնում հոգաբարձությունը նորաբաց դպրոցիդ վերա, ամսական յերեք մանեթ մի աղքատ աղջկա վարձ ինձանից եմ վճարում. բայց վորովհետև ըստ ասությանդ [?] 9 մանեթ է տան վարձը, այս րոպեյից հատկացնում եմ ինձ ընկեր հոգաբարձուհիներ տիկ. Նազիրյանցին և տիկ.

Ծոլոյանցին, վորոնք յուրյանց կողմից չէն խնայել յերեքական մանեթի ավչությունը: Ա՛ռ ահա այս 9 մանեթը, ներկա ամսականը տար վճարիր, յես նոցանից կստանամ...

Քեզ եմ հարցնում, ընթերցող, վո՞ր ձեռքն ինձ համար ավելի քաղցր և պատկառելի կլիներ համբուրելու, քան ինձ մատուցածը. յերեք անգամ համբուրեցի և նույն որը բաղդ ունեցա տեսնել դպրոցում մեր պաշտպան տիկին Յեղիսաբեթին և, ո՛վ հրճվանացս, յուր հետ բերել է մի աշակերտուհի, կոչելով իրեն սանը:

Փառավորի ընկեր տերտերս, մի պահպանիչով շնորհավորեց տիկնոջ վոտնամուտը:

36 Վեց ամսաչափ միջոց նստած էյինք տերտերի հետ և անվհատ շարունակում պարապմունքը, տերտերին բաժին էր ընկել միայն կրոն և վայելչագրությունը, մնացյալ առարկայքը բոլոր իմ վզին էյին: Հետզհետե աշակերտուհյաց թիվը 30-ի հասավ և դպրոցը տեղափոխվեցավ հողաբարձուհի տիկին Հովհաննիսյանի տունը: Տիկնոջ անխոնջ հոգատարությունը և սակավավոր նյութական վարձատրությունը յեռապատկել են յեռանդս. մի վարժուհի ևս ունինք[108]: Մի տարի բացումից հետո նշանակեցինք հրապարակական հարցաքննություն և ամենադովանի հառաջադիմություն ցույց տվինք[109]:

Այնուհետև ձայն տվեց Թիֆլիզի բոլոր խորշերում մեր դպրոցը, սնկան նման սկսեցին բուսնել ուրիշ այդպիսի աղջկանց դպրոցներ:

Մեզանից հետո յերկրորդ օրինակն յեղավ սուրբ Բեթղեհեմ յեկեղեցվո նորընտիր յերեսփոխան, հիշյալ մեծաջան բժշ. Տեր-Գրիգորյանցը, վորը իմ խորհրդատվությամբ յեկեղեցական գումարով բացեց Բեթղեհեմի բակումը աղջկանց դպրոց[110]:

Կառավարության կողմից զգալի յեղավ նույնպես և իգական սեռի տարրական կրթությունը, բարեգործական ընկերություններ հիմնվեցան մի քանի նշանավոր տիկնանց նախագահությամբ և Թիֆլիզի զանազան թաղերում դասավորություններ սկսան, մեր հողաբարձու տիկ. Յեղ. Հովհաննիսյանցի խնամքը նույնպես հանձնվեցավ մի թաղական բարեգործական դպրոց: Զավեդենիան յուր կողմից կա-



րևոր համարեց հրավիրել հաշակն որ ըստ որե ավելացնող տիկին Հովհաննիսյանցին յուր վարչական կազմակերպության անդամ[111]:

Դորանից մի քանի տարի հետո էր, վոր Խորեն Ստեփանեն (այժմ վարդապետ)[112] յերևեցավ Թիֆլիզի հորիզոնում և մի քանի համալսարանականների, Զաքարիա Գրիգորյանցի[113] և այլոց հետ հիմնեց յերկրորդ, վերջումը նշանավոր, Գայանյան դպրոցը[114]: Բայց Ստեփանեն ըստ յուր բնավորության ընդունակ չլինելով ընկերակցական և համախոհ գործունեության, կարճ միջոցից կովեց, ապաբեղը մյուսներին թողեց, ինքը հիմնեց նախ Նորաշենի և ապա Հավլաբարի Մարիամյան դպրոցները[115]:

9

37 1863 թվի վերջերումն է, բացի աղջկանց դպրոց[ից] բացել ենք նույնպես չորս անձանց ընկերակցությամբ և արական թաղական վարժոց[116], վիճակիցս գոհ եմ:

Մի որ լսում եմ մեր նահապետի, յեթե կարելի յե այսպես ասել, Պետրոս Շանշյանցի գալուստը[117]. շտապում եմ տեսության:

—Յես այսոր ինքս քեզ կանչելու էյի, ասաց պատկառելին Պետրոս, պատրաստվիր յերեք որից գնանք միասին դեպի Շուշի, յես հրավիրված եմ այնտեղի հայ հոգևոր դպրոցի տեսուչ[118] և քեզ տանելու յեմ:

—Իմ յերկու սեռից ուսումնարանները...

Խոսքը բերանումս սառեցրեց,— «հանձնիր ուրիշներին և գնանք, այստեղ գործողներ պակաս չեն, իսկ այնտեղ դու հարկավոր ես»:

Յես հանդգնություն կհամարեյի դիմադրել նորան, վորի խոսքը իմ և բոլոր ընկերացս համար սուրբ և հեղինակություն էր:

Տիկին Հովհաննիսյանցի համաձայնությամբ նշանակեցի իմ փոխարեն Գեորգ Ադիբեկյանցին տերտերի հետ միասին դասատվություն անել աղջկանց դպրոցում, տղայոց վարժոցն էլ մյուս ընկերացս թողի և յերեք որից ինքս ուրախ և տրտում կառք նստա Շանշյանցի հետ[119]: Ուրախ՝ ուղեկցի տեսակցությունը և հայրական սերը վայելելուս և տխուր՝ աղջկանց դպրոցը թողնելուս համար: Տրամությունս բազմա-

պառկվեց, յերբ աներևութացավ աչքիցս Թիֆլիզը, վորի մեջ մնացել է իմ սիրտս։ Սրտիս չորս խորշերից յեթե յերեքում Գայանյան դպրոցն եր ամփոփվում, չորրորդում, խոստովանում եմ, մի անկյուն շնորհելու յեր առաջին անգամ ինձ աշակերտող որիորդին։ Սերս պլատոնական և սուրբ եր. չեմ կարող յերաշխավոր լինել նորա կողմից փոխադարձ սիրո անկեղծության, բայց վոր յես՝ դժված սիրում եյի։ Յերևակայեցեք այսոր ուրեմն իմ դրությունը. յերկու սիրահարներից զրկվելը յես տանել կարո՞ղ եմ։

Շատ լավ հիշում եմ, հին ճանապարհովն եյինք գնում, Թիֆլիզից անցել եյինք և իջնում եյինք Կոմիսի հովիտը,
38 յերբ հանկարծ աչքերիցս արտասուքն ակամայից դուրս թափվեցան ու սիրտս թունդ յեղավ։

—Ի՞նչ պատահեց քեզ, զարմացմամբ հարցրեց Շանչյանցը։

—Խոստացի՛ր պ. Պետրոս, ինձ ոգնել Ղարաբաղումը մի աղջկանց դպրոցի հիմք դնելու, յես առանց աղջկանց դպրոցի ապրել չեմ կարող։

—Վատ չի լինիլ, տիկին Հախումյանցը[110] Թիֆլիզումն է, հիվանդ է, յերկու շաբաթից նա կվերադառնա Շուշի, քեզ հետը կծանոթացնեմ, նա քեզ կոգնի։

Սրտիս վերա պատած մշուշը անմիջապես վերացավ։ Ուրախ մտա Շուշի, ուրախ հանձն առա հայկաբանության դասատուի և տեսչի ոգնականի պաշտոնները տարեկան 700 մանեթ ռոճկով և ավելի ուրախ դիմավորեցի տիկին Մարիամ Հախումյանցին և առաջին տեսակցության խնդիրս առաջարկեցի։ Սիրեցի տիկին Մարիամին, յերկու վոտքով տկար, յերկու վայրերի ոգնությամբ քայլելով տակի շաբաթը ինձ հետ միասին տունե տուն շրջում եր՝ վեց մանեթական պատվավոր հոգաբարձուական տուրք ժողովելու։ Տերը շատ հարուցանե մեզ համար նույն ժամանակի առաջնորդ Ստեփանոս Բաղալյանց արքեպիսկոպոսի նման [մարդկանց], լսելուն պես ուրախությունից վոտքերը գետնից կտրվեցին, կարդալ տվեց աղջկանց դպրոցի համար Շանչյանցի ղեկավարությամբ գրած կանոնադրությունը, վոր վերջումը տպվեցավ փոքրիկ բրոշյուրով «Ղարաբաղու տիրամայր սուրբ Մարիամյան աղջկանց ուսումնարանի կանոնադրությունները» վերտառությամբ[121] և տիկին Հախումյանցի ստորագրությամբ— ու յուր վավերացումը նույն րոպեյին փութացրեց։ Խրախուսեց գործը Բալաբեգ Մելիք-Ղարադյոզյանը հարյուր մանեթով[122]։ Շնորհակալ եմ Հոգևոր դպրոցի ուսուցչական խմբից, զիջան խնդրանացս և նվիրեցին յուրյանց ազատ ժամերը։ Դպրոցը բացվեցավ տիկ. Հախումյանցի սեպհական դահլիճում, վորի դռները մինչև որս բացվում եյին խնճույքների և պատվավոր հյուրերի համար, [և վորը] այսոր լուսավորության տաճար
39 յեղավ Շուշու հայ աղջիկներին*)։ Վոչ միայն Հախումյանցի դահլիճն եր վոտնատակ տրորվում Շուշու հայ աղջիկներից, նոցա բոլոր տունը, կարողությունները և կյանքները առանց ակնկալության նվիրված եր Ղարաբաղցվոց լուսավորության գործին[124]։

Յերկու սեռից դպրոցների հառաջադիմությունն արագորեն ընթանում եր, բարձր բարոյականությունը լուսավորության և զարգացման հետ, ավետարանի և լուսավորչու հարազատ զավակ Շանչյանցի ձեռքով տարածվում եր, սերը և խաղաղությունը թագավորել եր խռովասեր շուշեցիների մեջ, Ստեփաննոս յեպիսկոպոսն յուր ուսումնասիրական աջով հովանի յեր լինում այդ հաստատությանցը, բոլորը մի հոտ և մի հովիվ եյին դարձել, բայց յես յերկար չկարողացա վայելել այդ քաղցրությունը։ Շուշու լեռնային և սառնասառն դիրքը, գուցե և չափազանց աշխատություն սաստկացրին կրծքիս տկարությունը, արյանթքությունն ավելանալով ինձ զգալի կերպիվ հյուծում և մաշում եր, յերկու շաբաթ մերձ ի մահ գլուխս բարձին մնաց։

Այդ տաժանելի տկարության մեջ, յես, մահը վրա չհասնելով աղաղավ, ձեռքս առած պ. Յեզյանցի[125] «Внутренний быт древней Армении» աշխատությունը՝ թարգմանում եյի[126], շտապում եյի վերջացնել, վոր տպարանում թարգմանության տպագրությունը դադար չառնի։

Վերջացրի, մի գեղեցիկ հարցաքննություն ել հուլիս

---

*) Ծրագրային նշում (լուսանցքում).

Աղաջան բեգի մեզ չընդունելը։ Մայիկո խանումի ընկնելը։ Գասպարյանցի բժշկությունը[123]։

ամսին տվլի, լույս աշխարհ հանեցի մի քանի ծածկամիտ չահամոլական ձգտումներով ժողովրդի խաղաղությունը վրդովողներ տիրացու և տերտեր հին վարժապետների խարդավանքը[127] և ժողովրդի շնորհակալությունը շալակած 1864 թվի օգոստոս 8-ին Ստեփանոս յեպիսկոպոսի հետ թողի խապառ Շուշին*):

Շնորհակալություն բժիշկ Գուլբինսկուն, յեթե նա ինձ չստիպեր բժշկական տեսակետով հեռանալ Շուշուց, անշուշտ յես և մոտիկ ապագայում Ղարաբաղում փրթած փոթորիկների մեջ զոհ եյի գնալու:

Այդ այն նշանավոր եպոխի համար եմ ասում, վոր Ստեփան յեպիսկոպոսին հաջորդող Արամյան Գեորգ վարդապետը, վախեցած շուշեցիների արդար ցասումից, գլուխն ազատելու համար փախչում է Շուշիից Եջմիածին, իսկ մի քանի պատվավոր անձինք, տեսուչ Շանշյանցը, իմ փոխարեն յեկած ուսուցիչ Գարեգին Մուրատյանցը և հոգևոր դպրոցի հառաջադեմ աշակերտներից յերկուսը քայլ առ քայլ փութալով ամոթակոր վարդապետի յետևից Եջմիածնում
40 միայն**) հանդիպեցան նորան փոշեթաթախ (կառքից իջնելուս***):

Յեթե չարը գրված չլիներ, յեթե Թիֆլիզից նամակներ և դրամով ձեռք բերած վարձկաններ չցրվեյին Շուշու անմեղ ժողովրդի մեջ և յեթե Գեորգ Արամյան վարդապետը խաբված ազդեցիկ անձանց խոստացած րոպեյական հույսերով չմոլորվեր, Ղարաբաղի դպրոցի այդ վոսկեդարի գոյությունը այդ չափ կարճատև չեր լինիլ:

---

*) Տրագրային նշում (տողամիջում)՝

Գրել մեզ ուղևորելու և Թանի քաղում պատվելու անցքը[128]:

**) Տրագրային նշում (լուսանցքում)՝

Շուշու անցքերը նկարագրել. Իվան բեգը, Տեյանց մասնակցությունը, Մատթեոս կաթողիկոսի դեմ բողոքը, Շուշեցոց առաջին և յերկրորդ վերաբերմունքը, Համբարձում ադայի ճառը, Գանձասարի վանքի [2 անընթեռնելի]. Թոփխանեն և մեր դպրոցը. Մհաղյամի սուգը և Համ[բարձում] բեգի բողոքը. Միրզի կնոջ մասին պատմվածքը, և այլն, և այլն[129]:

***) Ջնջված է՝

Այո, կամ շատ յերջանիկ եյի յես, վոր հառաջ փոթորիկը չփրթած ականջս հանգիստ հեռանալուս համար և կամ շատ անբաղդ եյի, վոր չարժանացա անմեղ զոհերի թվումը դասակվելու:



Շանշյանցի յետևից քայլ առ քայլ հետևող անբարեմիտները ծածուկ արտագրել տվին նորա դաս տված կրոնագիտության տետրակը, այն, վորով դաստիարակվել ենք մենք և վորը ուղղությամբ գրելով մեր քարոզները՝ Ներսես Աշտարակեցու խրախուսանացն [ենք արժանացել] և Թիֆլիզի հասկացող դասի քաջալերությունքն ենք լսել, արտագրել տվին, ցրվեցին ղարաբաղցիների տները յուրյանց թյուր մեկնություններով հանդերձ և պղտորեցին ժողովրդի լուսի նման պարզ միտքը:

Գործիք դարձավ նորանց և Արամյան վարդապետը, փորել սկսեց Շանշյանցի տակը և վերահասու լինելով ամբոխի գրգռմանը, յերկյուղից մի առավոտ վոստ նստավ ու փախավ, նորա քամակից էլ, ինչպես ասացինք, իշխանները և ուսուցչական ու հոգաբարձուական խումբը:

Վերջիններս բերել եյին հառաջադեմ աշակերտներին քննել տալու Մատթեոս կաթողիկոսին[130], ջնջելու Շանշյանցի անաղարտ անվան վերա բռնությամբ բերած արատիքը, բայց ուշացել եյին, թշնամիքը քնած չեյին: Մատթեոս կաթողիկոսը բարձ դրեց վերջիններիս գլխատակը և վերադարձրեց և այնուհետև թանձր խավարը պատեց Շուշու բանավոր պարտեզի վերա:

Արամյանցն էլ Շուշի վոտք չդրեց. նա ուղարկվեցավ Նուխվա մոտ Յեղիշեյի վանքը[131]:

[10]

Գարեգին Մուրատյանցը թողել եր Ներսիսյան դպրոցը այնտեղ ծագած անբավականություններից, լավ միջոց եր, նա հրավիրվեցավ իմ տեղս Շուշի[132] և յես նույն ժամա-
41 նակվա տեսուչ բժ. Հովհաննիսյանցից կոչվեցա Ներսիսյան դպրոց նորա տեղ[133], բայց տկարությունը ինձ վոչ թե տեղից զրկեց, փոքր եր մնում կյանքս եր խլում, յեթե չհասներ հանդուցյալ բժիշկ Տեր-Գրիգորյանցի օգնականությունը և Նազիրյանցի խնամատարությունը— ինչպես վերը պատմեցի*):

---

*) Ջնջված է.

Այդ ձմեռ յես ապրեցի Թիֆլիզում Նազիրյանցի ձեռնտվությամբ և գարնանը Ղազարոսի նման հարություն առած ուղարկվեցա հայրենիք այնտեղ մեռնելու կամ ապրելու:

Վերադառնալով Շուշիից, դատ Գայանյան դպրոցս կերպարանափոխված՝ ո՛չ տեր Սիմոնը կար և ո՛չ Աղիբեկյանը: Մի քանի պատճառներ իրավունք են տվել տիկ. Հովհաննիսյանցին հեռացնել յերկուքին ես[134]: Աշակերտուհյաց ճաշը նույնպես տիկինն էր տալիս ի հաշիվ դպրոցական մուտից:

Այդու հանդերձ հանգուցյալը տնտեսել էր իմ համար ղուտ 95 մանեթ փող, վորը առաջարկեց խուլյն ինձ. յես փողը չվերցրի, գործ դրվեցավ դպրոցի վերա, բայց դասավորությունը նորից շարունակեցի, մինչև վոր վերոգրյալ տկարության պատճառով խափան թողի:

Ուշադրության արժանի է իմ արյանթքության դադարումն և առողջության վերականգնումը: Ինչպես ասացի, [18]59 թվից շարունակ արյուն եյի թքում, հազում, տնքում վոտքի վերա և գործում[135]: Շուշին մեջս ունեցած ֆիզիքական ույժը քայքայեց և կարճ միջոցից կամ ինքը կամ Թիֆլիզը ինձ գերեզման պետք է լինեյին, յեթե հետևյալ դեպքը վրա չհասներ: Մի ամիս գետնախշտի ընկնելուց հետո աշնան վերջերում տուն յեկա հևալով և դատ ընկերներիս ամսական բողկն ուտելուս: Այդ միջոցում իմ սնունդս յերկու բաժակ կաթից և մի ֆրանսիական փոքրիկ հացից էր բաղկանում, կարմիր բողկի տեսքը և հոտը փարթամ հարստաց շատյլ խորտիկներից ավելի գրավիչ յեղան ինձ համար և մոտեցա մի հատ հափշտակեցի: Շատ ել աշխատեցան ընկերքս խլել, վոր չվնասեր, բայց արդեն կուլ եյի տվել:

Այդ բավական չե, ուղարկեցի ծառային մի նոր կապ բերել տվի, ընկերացս համոզական թախանձանքը բանի տեղ
42 չդրի և առանց հացի կերա:

Յես ժամից սև որս տեսա. ամենասարսափելի խեղդոց, չտեսածս հազը և վոչ [թե] արյանթքություն[ը], այլ արյանհեղությունը շնչել չեն տալիս ինձ: Յերկու կոնք արյուն թափվեցավ, յերրորդ կոնքի մեջ վայր ընկան բերանիցս արյան հետ յերկու բնդքաշյափ սպիտակ խճճված ծալծալված թաղանթներ: Յես մոռացա ասել, վոր տկարությունիցս հետո անտանելի մի գարշահոտություն էր արտաշնչվում շարունակ: Ինքս անգամ հոտն զգում և զզվում եյի, իսկ իմ անձնվեր ընկերքս՝ Աղիբեկյանց (վախճանված), Կուսիկյանց, Ստեփաննոս— Շուշանիկ մականվանյալ— Տեր-Հովհաննիսյանց (վախճանված)[136], Վասիլ Շերմազանյանց[136ա], Նալյանց, Պետրոս Վարշամյանց և այլք սիրով տանում եյին:

Բնական է, վոր այդքան արյանհոսության հետ գարշահոտությունը սենեկում ամպացած կլիներ: Յեվ իրոք. հանգուցյալ բժիշկ հուշակավոր Մարկոսյանցը, լինելով դրկեց, ընկերացս խնդրանոք ներս յեկավ, զզվելով հոտից մահակի ծայրով հարևանցի շրջշրջեց թաղանթներից մինը և խորհուրդ տալով ինձ շարունակել իմ սովորական դեղս, փախավ սենեկից քիթը բռնած, դուրսը հայտնելով ընկերացս, թե յերկու թաղանթները յերկու թոքերս եյին, վորոնք փտելով արտաթորվել են, ուստի կյանքիս տևողականությունը կես ժամից ավելի չի քաշիլ:

Խեղճ մարդ, վորչափ սխալմունք, քանի տարի յե ինքը մեռել է, իսկ յես դեռ կամ և ապրում եմ, առողջ և պարարտ:

Թաղանթի մյուս կտորը խեղճ Աղիբեկյանցը թղթում փաթաթած թողել է վերստաչափ հեռի բնակվող իմ բժշկիս՝ հողելույս Տեր-Գրիգորյանցին, բայց տանը չգտնելով նորան՝ ցաված սրտիվ գրել է չափաբաստիկ բողկի պատմությունը և թողել այնտեղ:

Թաղանթները ընկնելուց հետո արյունը աստիճանաբար դադարեց, հազս վերջացավ, շնչառությունս կանոնավորվեց, բայց յես մնացի թուլացած, ուժահատ„ անկողնում պառկած:

43 Վերջն իմացա, թե ինչո՞ւ կես ժամ չքաշած սենեկումը տեղ չմնաց, բոլոր ընկերներս և ծանոթներս տուն լցվեցան: Նայում եյին նոքա միմյանց, մի խորհրդավոր ակնարկ ձգում վերաս և լռում: Յես խոսել չեմ կարողանում, բայց դոցա վարմունքից վատ հետևանք եմ գուշակում: Ժամը մինչև յերկուսը կես գիշերից հետո վո՛չ իմ քունս տարավ և վոչ ընկերքս ցրվեցան: Ապա յերբ վոր այդքան ուշ ձեռքերս թուլացած կրծքիս վերա յեն ընկնում և աչքերս փակվում ե[ն], այդ ժամանակ միայն նոքա ծաղրում

*են Մարկոսյանցի անհամառությունը, թե ինչպես կես ժամից հետո մեռնել վորոշած հիվանդը 8 ժամաչափ է ապրել: Բայց արի տես, վոր իրենք էլ Մարկոսյանցի հետ չարաչար սխալված են. նոցանից մեկը մոտենում է վորպես թե գլուխը ուղղելու և [1 անընթեռնելի] հրաշիցն, մեռյալը կենդանի, ապա չնչում է և խաղաղ քուն է մտած, ավելի խաղաղ, քան յերբևիցե [18]59 թվից այսոր, իսկ բերանի դարչ հոտը միանգամայն անհետացել է:*

*Մեր տղայքը ուրախ զվարթ ցրվում են, խոստովանելով ամտական բողկի փրկարար զորությունը:*

*Բայց ինչ գգվանոք, հրճվանոք և գրկախառնությամբ ընկալավ ինձ մյուս որը սիրելի բժիշկս, Տեր-Գրիգորյանցը, յերբ Ալիբեգյանցի հետ սենեկը մտան:*

— Счастливый исход, *սիրելիս, զվարթությամբ ասաց նա, շնորհավորում եմ նոր կյանքդ, «էլ չես մեռնի, տո՛, Պռոշ», կրկնում և յերեքկնում եր նա, «հիմի կուտես բողկն քեզ ապառի ե՞լի», մի քանի հարցեր միմյանց հետևից յուր [1 անընթեռնելի] Թիֆլիզի բարբառով շարեց հանդուցյալը:*

*Ըստ նորա ասության ամրացել և ջղային կազմություն եր ստացել ներսս խուխը և սեղմելով թոքերիս յերակների խողովակները, արգելք յեղել շնչառությանս, խմածս կաթը հոտեցրել է այն բաղկացությունը, իսկ կերակրից հետ սովորած ստամոքսս բողկի ներկայությունից սաստկապես գրգռվելով՝ ալեկոծել է և շնչառության գործարանները, վորով և հոտած ու փտած խուխը թաղանթացած վայր է ընկել՝ տանելով յուր հետ և պատճառած դարչահոտությունը:*

— *Յերբ յես ժամը տասին գիշերը տուն յեկա, պատմեց բժիշկս, և կարդալով Ալիբեգյանցի տեղեկագիրը, գննեցի թաղանթը, ուրախությունից վազեցի կնոջս մոտ և ավետեցի նորան քո փրկությունը և իսպառ առողջությունը:*

*Կեցցե՛ գիտությունը, բժշկիս ասածը ճշմարտություն եր, այն որից ցայսոր վո՛չ արյուն և վո՛չ կրծացավ կամ հազ տեսած չեմ*[137]:





44 *Յայս վայր յես վոչ մի անգամ չեմ հիշած իմ արհեստավորությունը, բայց արհեստ ունեյի:* 1863 *թվին Համբարձում Ենֆիաճյանը մտադիր եր լուսանկարով հանել տալ Հայաստանի հնությունները և «Կռունկ»-ի գործը հաջող ընթանալուն պես՝ զարդարեր ամսաթերթի յերեսները: Նորա հաշվով յես լուսանկարչություն սովորեցա, մեքենայք և գործիքներ ձեռք բերի, բայց ավաղ վոր «Կռունկ»-ի վիճակը մեր վոչ մի պարբերական թերթերից յերջանիկ չեղավ*[138], *բաժանորդների թիվը ծախքը հազիվ եր ծածկում և իմ սովորած արհեստս ինձ միայն պետք յեկավ: Մի քանի ամիս փոտոգրաֆիայով նույն թվին ճանապարհորդեցի առողջության կազդուրելու նպատակավ Կախեթիայի կողմերը: «Շահեն» վիպասանությունս նույն տարվա հիշողությունից է առած*[139]: *Իմ հերոս Շահենս վոչ այլ վոք է, յեթե վոչ հայազգի հանգուցյալ բժիշկ Մկրտիչ Աբրահամյան Շահինյանցը, այն պարսկատանցի մշակը, վոր կատարելահասակության մեջ ինքնակրթությամբ համալսարանական նստարանից մարդկության հիվանդ անդամներին ոգնելու շնորհքն ստացավ**):

*Ֆոտոգրաֆիան շալակած, առողջությունս ընդմիշտ կազդուրելու նպատակավ* 1865 *թվին մի քանի ամիսներ անցրի Յերևանումը. գործիքներս ծալած մնացին այդ ժամանակը. Շուշի մեզ հովանավորող Ստեփաննոս յեպիսկոպոսը այդ ժամանակն առաջնորդ եր Յերևանում և յես նորա թանգագին հյուրն եյի:*

*Ստեփան յեպիսկոպոսի մյուս մարդկային պակասությունները հարթվում են յուր ուսումնասիրության առջև: Նա ինքն եր կառուցել կարծեմ* [18]58 *թվականի վերջերին Յերևանու հոգևոր դպրանոցը և առաջնորդարանը կոն–*

---

*) Ջնջված են նոր տողից սկսվող հետևյալ պարբերությունները.

*Ֆոտոգրաֆիայով ճանապարհորդեցի 1865 մինչև 1867 սկի լըները Յերևանու նահանգումը, մինչև վոր նույն տարվա գարնանը հանդիպեցա Ագուլիս գործիքներս շալակած:*

*Դեռ Ագուլիսի վերա չխոսեցած, հարկ եմ համարում ասել վոր 1866 թվին...*

15 սիստորիայի հետ միասին*)[140]: Նա ինքն այսօր բարեկարգել էր ըստ հնարավորության Թեմական դպրոցը[142]:

Ինձ հետ միասին, բնական էր, ցավում էր Շուշիի յուր բարձր հովանավորությամբ բացված աղջկանց դպրոցի և առհասարակ այն ձախողակի հանդիպումների վերա. մենք շատ անգամ [էյինք] խոսակցության բռնվում այդ առարկաների համար:

Թող ինչ կուզեն ասեն Ստեփան յեպիսկոպոսին ճանաչող մեր սուրբ հայրերը, թող կամա թե ակամա, նախանձով թե ճշմարտությամբ աշխատեն սևացնել նորա հիշատակը, յես ասել եմ և կասեմ, որ Ստեփան յեպիսկոպոսը մեր ընտիրյալ և ազգասեր հոգևորականներից մեկն էր, որոնց կցանկայի նորա թերություններով հանդերձ արժանավորությունը ունեցած տեսնել ժամանակիս հոգևորականներին:

Ջղայուն էր Ստեփան յեպիսկոպոսը. Ղարաբաղի արկածները հաճախ նորա աչքերից արտասունք են հոսեցրել:

—Յեվ մի՞ թե, Պռոշյա՛նց, մենք Յերևանումը կարող ենք ստեղծել Շուշիի նման մի աղջկանց դպրոց, հարցրեց մի օր:

—Ավելի լավը սրբազան տե՛ր, յեթե կամիք:

Նույն յերեկոյան խորհրդի հրավիրեց դպրոցի ուսուցիչ Ռուբեն Ջալալյանցին[143], Նահապետ Աթանասյանցին[144] և մի քանի յերիտասարդների և պատվ նոցա յուր նպատակին խոսք համաձայն:

Շտապեց փութեռանդն յեպիսկոպոսը հեռագիր խփել Թիֆլիզի առաջնորդ, ներկա վեհափառ, Մակար սրբազանին[145] և իմանալ հիմունքը, վորոնցով նորին սրբազնությունը հրամայել է Թիֆլիզի աղջկանց դպրոցների բացումը:

Հեռագիրը, ինչպես և մենք կանխապես հայտնել էյինք, մատնացույց էր արել 1836 թվի բարձրագույն պոլոժենիայի հոդվածի վերա, վորով առաջնորդներին տրվում է [իրավունք] յուրյանց թեմերում ծխական դպրոցներ ունենալ[146]:

Ստեփաննոս յեպիսկոպոսի հաճությունը կար:

---

*) Տպագրային նշում (լուսանցքում)՝
Գրել Կախեթիայի ճանապարհորդությունս. Սղնախի դպրոցը. Թիֆլիս գալով Սարգիս Ջալալյանցի թելադրությամբ բողոքականության...[141]



Մնում էր մտածել յեկամուտների և այլ նախապատրաստությանց համար. Ռուբեն Ջալալյանցի, Վասիլ Յեղիազարյանցի[147], Աթանասյանցի*) և մի քանի սակավաթիվների հետ ժողովինյալ մատյանը կոնտակերիս տնետուն ընկանք:

46 Բացվեցավ Յերևանի Գայանյան դպրոցը[148], բայց վոչ Ստեփան յեպիսկոպոսի օրով. վողորմելին միայն սկզբնական դժվարությունները հարթելու պետք յեղավ. նեղությունները նա կրեց, իսկ բացումը տեսավ մոտիկ ապագայումը ժամանակավորապես նորան հաջորդող Արշարունի Հովհաննես յեպիսկոպոսը:

Դույն այդ ծմեռը հանկարծահաս մահը շատ համարեց ապրիս համար Ստեփաննոս յեպիսկոպոսին. կորուստը անփոխարինելի յեր, յեպիսկոպոսի քրտանց արդյունքները՝ Թեմական դպրոցն յուր չինությամբ և ապագա աղջկանց ուսումնարանն յուր մարմնավորությամբ կենդանի դրդիչներ էյին նորան գնահատողների համար անմահացնել նորա հիշատակը:

Խորհրդեցավ խնդրել Սինոդից իրավունք՝ մարմինը սուրբ Սարգիս յեկեղեցվո հյուսիսային կողմը դպրանոցի դիմացն ամփոփելու:

Թաղման հանդեսը կատարելու շնորհ բերող Սինոդի անդամ Հովըյան Գրիգոր յեպիսկոպոսը[149] պնդեց յուր խոսքի վերա և մարմինը կամեցավ տանել Եջմիածին:

Քաղաքն յուր կողմից պատգամավորներ ուղարկեց Սինոդ, իրավունք ստացավ Յերևանումը թաղելու, բայց Հովըյանը հաստատ մնաց:

Կառավարությունն ևս յուր կողմից հաճություն ցույց տվեց Սինոդի տնօրենությանը, բայց Գրիգոր սրբազանը հետևյալ առավոտը շատ վաղ դարմանոտ Փուրգոնը յեկեղեցու դրանը կանգնեցրեց և մարմինը մեջը դրեց:

Լավ էր, վոր վրա հասան մի յերկու քաղաքացի իշխաններ դեպուտատ Մկրտչի հետ և չթողին անարգել յեպիսկոպոսի մարմինը:

---

*) Աթանասյանցի ազգանունը՝ յերկու անգամ էլ ավելացրած է մատիտով:

Խուռն բազմությունը սուրբ Սարգսի բակը լցվեց, յերկրորդ անգամ Փուրգոնը սրբազան Հովբյանի հրամանով վռնդվեց յեկեղեցու դռանը, բայց շուտ զղջաց Բարոյի տղա Գրիգորը՝ սանձերից ու յերասանակներից զրկված սոսկված յեղավ թողուլ փախչել:

Փոքր հետո Հովբյան սրբազանը քահանայական դասու հետ դուրս բերեց յերկրորդ անգամ դագաղը և հառաջեց վոտքով դեպի Եջմիածին, կարծելով անշուշտ թե հեռվումը կգտնի Փուրգոնը և կհանձնի:

Յերեվանցիներին յես չեմ տեսած այն որվան պես վոգե-
վորված, կիսաճանապարհից դագաղը խլեցին քահանայաց
47 ձեռքից և հետ բերին յեկեղեցին: Ձայնը հասավ նահան-
գապետին, վորը շտապեց սուրբ Սարգիս: Հովբյանը զիջել
եր սակայն մինչև նահանգապետի գալուստը շատերի խընդ-
րանացը և իրավունք տվել տեղ փորելու:

Այդպիսով գործը հանդարտեց, բայց յերեք անբաղդներ մատնվեցան յեպիսկոպոսից իբրև խռովարարներ և յուր նպատակներին արգելիչներ: Դոքա եյին դեպուտատ Մկրտիչը, Ռուբեն Ջալալյանցը և տողերիս գրողը:

Տարվեցանք մենք նահանգապետի մոտ, և անմեղությունները պարզվելուն պես արձակվեցանք: Միջոց չանցավ՝ վոտքի վերա կանգնած տեր նահանգապետը մեր անմեղության համար ինքը վկայեց և ներողություն խնդրեց մեզ նեղություն տալու համար ու հայրաբար արձակեց:

Ժողովրդի ցանկությունը կատարվեց, Ստեփան յեպիսկոպոսը թաղվեց սուրբ Սարգսի բակում, բայց յեթե ցայսոր մի կոտրած կարմիր քար առանց հիշատակագրի ժամանակակիցներին հիշեցնում է այն նշանավոր առաջնորդի անունը, շատ կարճ միջոցից մեր անհայտ հոգևորականաց շարքն է անցնելու հանգուցյալը:

Մեզ քաջ հայտնի յեր, վոր Ստեփան յեպիսկոպոսի կայքը և դրամը բավական կլիներ թե՛ յուր վերա մի արձան կանգնեցնելու մարմարոնյա յուր կիսակենդանագրով՝ մասով դպրանոցը ցույց տալուս և թե՛ Եջմիածնին բավականին օգուտ կմնար, բայց ունեցած չունեցածը վոչնչացավ, ինքն ել հողի հետ վաղը մյուս որը կհավասարվի:

Այդ ժամանակը Մատթեոս կաթողիկոսը վախճանված



եր և Պոլսում զանազան ժողովներում կաթողիկոսական ընտրության պատրաստություններ եյին տեսնվում: Ասում են վորպես թե, կարծեմ, կրոնական ժողովում ի թիվս չորս ընտրելյաց մինն ել Ստեփան յեպիսկոպոսի անունն է յեղել:

Ստեփան յեպիսկոպոսի գերեզմանի վերա յես յերկու ճառ կարդացի, վորոնք մեծ աղմուկի առիթ յեղան, բայց բավական է սաղերին գրգռել:

## 12

Սաղերին գրգռելը վտանգավոր է առավելապես, յեթե սկսեմ այստեղ նկարագրել 1866 թվի կաթողիկոսական ընտրությունը, վոր տեղի ունեցավ Եջմիածնում, ուր լուսանկարով ներկա և շատ ծակամտական հերոսության ականատես յեղա յես, բայց ամեն բան մի՞թե կարելի յե կամ պատշաճ է այստեղ պատկերացնելու:

48 Վերջին յերեք կաթողիկոսական ընտրությունքը[150] մի հաստատակազմ հատոր կկազմեն, մի հետաքրքրական նյութ է հայոց յեկեղեցական պատմության համար. չշտապեմ ուրեմն խլել քաջատեղյակ բանասերից փառաց պսակը... Մանավանդ, վոր այդ միջոցը յես ել հեղինակ չեմ, յես պարապած եմ ֆոտոգրաֆիայով [ինձ վիճակված եր] թափառել և մտավորապես հանգիստ մնալ, մինչև վոր թավրիզեցի Ծատուր խանի հետ Գեորգի[151] ընտրության ժամանակ Եջմիածնում արած բանավոր պայմանս կատարեմ՝ մի տարի Թավրիզ մնամ և անցնեմ Հնդկաստան:

Կենդանի մարդուն ի՞նչ հանգստություն, այդ ձգտողին գերեզմանն են խորհուրդ տալի, ինքդ ել չուզես, յեթե մեջդ ույժ կա, ուրիշներն են ասպարեզ հրավիրում:

Ապացույցը 1867 թվի սկզբներին Ագուլիսի դեպքն է[152]:

Ծատուր խանի հետ իմ բանավոր պայմանս եր մի տարի Թավրիզում ֆոտոգրաֆիայով յուր համար ռոճիկով գործելը. ներկա տարույս մարտին յես գտնվելու եյի Թավրիզում և քայլ առ քայլ համբաշարժ դիմում եյի այնտեղ[153]: Ձմեռը Նախիջևան և վերջը Որդուբաթ վոքր ինչ ճանապարհածախք պատրաստեցի: Այդ քաղաքների բնակիչ պարսիկ խան ու բեգերը սիրեցին ֆոտոգրաֆիական պատկերները և այդ իմ քսակիս շահ եր:

Հույսս միանգամայն խաբուսիկ չեղավ, յերբ յես նույն նպատակով գնացի մեր հռչակավոր Ագուլիսը[154]:

—Նեղություն մի՛ տար ֆոտոգրաֆիական գործիքներդ, ասաց ինձ Տեր-Մկրտչյան անվանի տան ղավակ Մկրտիչ ծերունի աղայի[155] վորդի Քրիստափորը[156], մի կոպեկի գործ չեմ թույլ տալ ունենաս, առանց պատկերի էլ մենք միմյանց ճանաչում և կառավարվում ենք:

Ի՛նչ սառներես մարդ, ի՛նչ անքաղաքավարություն, մտածեցի յես, առաջին անգամ յուր տունն այցելողին այդ խոսքերը հավասար են արտաքսման:

— Մի՛ բարկանաք խնդրեմ, յեթե արդարև դուք Պերճ
49 Պռոշյանցն եք, մենք ձեզ հետ ֆոտոգրաֆիայից կարևոր գործ ունենք, իսկ յեթե մի այլ վոքը նորա անունով յեկած, այլ խնդիր է:

—Պատիվ ունիմ ներկայանալ նույն ինքն Պերճ Պռոշյանցը:

—Ի՞նչ ես ասում յեղբայր, Քրիստոսի ասածին պես մենք կամենում ենք քեզ չինել վորսորդ մարդկանց[157]: Ճանապարհ տվեք մեզ դուրս գալ մեզ պատած ագիտության անդունդից. նեղություն տվեք ձեր ուղեղին և վոչ գործիքներին. ահա թե ինչի՛ համար եք մեզ պետք: Տասը տարի յե, չարունակեց արտասրոփ մեծեռանդն յերիտասարդը, տասը տարի յե մենք մտադիր ենք մի դպրոցի սկզբնավորություն անել, միջոցը կա, գետինը պատրաստ է, տղայքն փողոցներում թափառում են, մի քանի ձեռնահասներս խլում ենք մեր մանուկներին մայրական գրկից, ոտարության մեջ փիզիքապես սպանում մտավորապես լուսավորելու առթիվ, իսկ հասարակությունը վայ է տալիս յուր գլխին յուր վորդոց կորուստը տեսնելով. տեսնում ենք, զգում ենք և չենք կարողանում իրագործել, չկա մեկը, վոր գլուխ կանգներ և մեզ առաջնորդեր խավարից դեպի լույս: Մենք անձամբ ծանոթ չենք ձեզ հետ, բայց տեսել ենք Թիֆլիզում և Ղարաբաղում:

Պարոնը սկսեց պատմել յուր հանգուցյալ յեղբայր, համալսարանական կրթության տեր Գրիգորի[158] գործ դրած ճիգը Ագուլիսում դպրոց հիմնելու և չհաջողելու համար, ցույց տվեց նորա գրած կանոնները, ցույց տվեց 300 մանեթական հիմնադրական դրամագլխի մատյանը և ցավեց.



ի՞նչ թաքցնեմ, մեր ագուլեցվոցս մեծ պակասությունն, ասաց նա, [այն է, վոր] միմյանց աչքում լույս տեսնել չենք ցանկանում. քո իմ ձեռքով տված ծաղիկն քեզ համար է փուշ և ընդհակառակն. իսկ ձեզ իբրև ոտարականի, ավելացրավ, և Պռոշյանցի մենք միաբան սրտով ուրախ կլինենք մեզ ղեկավար տեսնելու:

—Ծառայել հոժար եմ, վորքան ուժս կների, ա-
50 սացի յես և հյուրասիրվեցա Վերին Ագուլյաց Թովմա Առաքելո վանքի խցերից մեկում:

Այդ որը Քրիստափորի հետ այցելեցի յուրյանց գյուղական դպրոցին, յերկու ղարաբաղցի տղայք 30 կոպեկ վարձատրությամբ 30-ի չափ մանկանց հետ այբուբենով պարապում եյին հայ և ռուս լեզվով:

—Շնորհակալ ենք սոցանից, ասաց Քրիստափորը, ինքնին յեկել են Շուշիից և մեր լուսավորիչները դարձել:

Մյուս որը յերեկոյան դպրոցական սրահում ասեղ ձգելու տեղ չկար. 70-ի չափ Ագուլյաց առաջավորներ, չհաշված լուսամուտներում և դուրսը խռնված ամբոխը, ինձ գրկաբաց ընդունեցին յուրյանց ժողով[ում]:

Գտնելով արդարև Քրիստափորի խոսքերը ճշմարիտ, հավատալի լինելով ագուլեցվոց անկեղծ ցանկությանը մի որինավոր դպրոց հիմնելու, տարեկան մինչև 6000 մանեթ նախահաշվով, յես հանձն առա գրել յուրյանց համար կանոններ և յերկու որից նույն ժողովում բաղդ ունեցա կարդալ:

Կանոնադրության համար յես ձեռնարկ ունեցա հանգուցյալ Տեր-Մկրտչյան Գրիգորի թողած ավանդը: Փոխեցի միայն յերկու գլխավոր կետեր. դպրոցի բարձր հովանավորությունը ամենայն Հայոց կաթողիկոսի իրավասությանը հատկացրի և հիմնադրական սիստեմը հավասար արտոնությամբ վերածեցի: Ի՛մ կանոններով մանեթ կամ կոպեկ տվողը միևնույն իրավունքն ունին. նոքա յերկուքն ես դպրոցի նվիրատուքն են:

Յերկու փոփոխությունքս էլ մի քանի հարուստ աղաներին հաճո չեղավ, բայց ժողովրդի մեծամասնության հրճվանքին չափ չմնաց. միաձայն ընդունելություն գտավ:

Ժողովը վերջացած էր, համարում շատերը, բայց յես ունկնդրություն խնդրեցի և կարդացի մի աղջկանց դպրոցի ևս կանոնադրություն: Ամենքը խոժոռեցան իմ ինքնագլուխ վստահությանս վերա, նոցա ցանկությունն է յեղել տղայոց և վոչ աղջկանց դպրոցը:

Ըստ կարողությանս սկսա բացատրել իգական սեռի կրթության կարևորությունը և յերկար վիճաբանություններից հետո կարող յեղա համաձայնություն շահել: Յերկու դիմադրական փաստ եյին դնում իմ առաջ ագուլեցիք. վորոշած գումարից ավելին ծախսելու անկարողությունը և կանանց սեռի կրթության վնասակար և վաղաժամ լինելը:

Առաջին պատճառի դեմը, ճիշտ ասած, 6000 մանեթով յես խոստացա յերկու դպրոցի գոյությունը հնարավորել,
51 յերկրորդ նախապաշարմունքը ընկճելու մեջ մեծ դժվարություն կրեցի, բայց փառք աստուծո ներգործեցի:

Շատ պատճառներ մեջ բերի յես այնուհետև համոզելու ագուլեցիներին ձեռք քաշել ինձանից և ավելի արժանավոր տեսուչ գտնել, մանավանդ վոր լավ փող եյին տալիս, համալսարանական կարող եյին հրավիրել, շատ ասացի, Ծատուր խանի հետ պայմանս ռուխթ բերի, Հնդկաստանը մեջ բերի, բայց հնար չեղավ: Նոցանից մի պատվելին, պ. Բաղդասար Փանյանցը[159], կանգնեց տեղից և խոսք խնդրեց:

— Պարոննե՛ր, ասաց նա, յես վաղուց կասկածում եյի մեր յերիտասարդաց գրվածների և քարոզածների անկեղծության մասին, մի փոքր հառաջ պ. Պռոշյանցը կասկածս փարատելու վերա յեր, բայց հիմա յես հաստատվեցի իմ կարծիքների վերա, յերիտասարդներին հավատալու չէ, դոցանք խոսք են և վոչ գործ, Քրիստոսի ասածին համաձայն՝ «բառնան մարդկան բեռինս ծանունս և դժուարակիրս և մատամբ իւիք ինքեանք ոչ կամին շարժել զնա»[160]: Այս մարդը ինչ կամեցավ մեզ հետ արեց, մեր հայկական արմատացած նախապաշարմունքը 10 խոսքով խորտակեց, մեկի փոխարեն յերկու դպրոց ավեց և ահա յերբ գործը գլուխ տանել հարկ է՝ փախս է տալիս: Ե՛հ, ասաց նա և ձեռքը օդումը շարժելով՝ յես գնացի, ասաց, դուք էլ ինձ հետևեցեք:

Տունդ չքանդվի պ. Բաղդասա՛ր, ի՞նչ դժվարության



մեջ գրեց ինձ, շտապեցի դուրը կտրել և աղաչել հինգ րոպեյի չափ խոսք տալ ինձ:

—Պարո՛ն Բաղդասար, դարձա յես դեպի քաջակորով ատենախոսը. ձեր խոսքերը քանդեցին իմ իրավացի փաստերի հիմունքը, յես հետ եմ թողնում [իմ] նպատակը այսօրից մինչև մի տարի, մնում եմ տեսուչ, [1 անընթեռնելի] հիմնադրում եմ ձեր յերկսեռ դպրոցները և ապացուցանում եմ, վոր յերիտասարդության է հատուկ անձնազոհությունը, վոր նոցա քարոզածները գործ և վոչ խոսք են[161]:

—Կեցցե՛մ յես, այս յերկար մորուքս, յուր կես կանգուն մորուքը բուռն արած հառաջ յեկավ Բաղդասարը և ձեռքս սեղմեց, գնդակս չեչտեցի մեր ջահելների թույլ տեղը, ագուլեցի՛ք, գոչեցե՛ք, կեցցեմ յես, ապա թե վոչ շինածս նորից քանդում եմ, կարմիր կովի նման տված կաթս թափում եմ:

— Կեցցե՛ Բաղդասար աղեն, թնդաց սրահը, կեցցե՛ և պարոն Պռոշյանցը՝ արդար պահանջը գնահատողը:

Վերջը ճանաչեցի, վոր Բաղդասար աղան յուր բարեմտության հետ մի սիրելի և հաճոյական սրախոսություն ևս ունեցել է:

52 Նույն րոպեյին քվեյարկությամբ ընտրվեցան չորս հոգաբարձուք: Ագուլիսա նահապետ և հանրապատիվ ծերունի Մկրտիչ աղա Տեր-Մկրտչյանցը, վորի ստորագրությունը միայն պետք է վայլի հոգաբարձուական գործերում, իսկ պաշտոնը կատարելու յե յուր վորդի, բազմաշխատ և գործի սկզբնապատճառ Քրիստափորը, պ. պ. Հայրապետ Արասխանյանց[162], հիշյալ Բաղդասար Փանյանցը և քրիստոսընկալ Զաքեոսի[163] հորեղբոր վորդի Հովհաննես Կոստանդինյանցը[164] (հասակի կարճությամբ անշուշտ), այժմյան կորիճ տանուտերը:

[13]

Բնական է, առաջին գործերս հոգաբարձության հետ յեղավ՝ նվիրատվության մատյանը կոնտրակներս տունե տուն մտնել: Թող խոսի այստեղ նույն թվին գրած և Մոսկվայում տպված տետրակս «Ագուլյաց յերկսեռ դպրոցաց բացումը» վերտառությամբ[165], թող նա անմահացնի

մեծագործ նվիրատուաց անունները, և յես բավականանամ միայն ասելով, թե յերկու շաբաթի մեջ 25000-ի չափ խոշոր թվեր պայծառացրին մատյանի եջերը: 1867 թվի ապրիլի սկիզբն եր այս:

Ի դեպ համարեմ ասել, վոր յեթե ստորակի մեջ գըրվածքս փոքր ինչ տարբերվի ներկա տողերից, ձեռքս սրտիս դրած ասում եմ, պետք ե զանազանությունը վերագրել իմ համեստությանս: Յես աշխատել եմ, վորքան կարելի յե վարագույրի քամակին պահել ինձ և ագուլեցվոց սրտին մոտիկ և սիրելի գործը յուրյանց վերապահել, իսկ այսոր, վորովհետև գրում եմ վոչ ներկայիս, այլ ապագայի համար, ճշմարտությունը ծածկելու հարկ չեմ տեսնում: Յեթե Ագուլյաց տղայոց դպրոցը յուրյանց հառաջադիմական ձգտումների և լուսավորության հասնելու արդյունքն ե, նոցա Հայկանուշյան աղջկանց դպրոցը իմ գլխիս ծնունդն ե: Վերոհիշյալ որինակները հուսամ բավական լինին ընթերցողացս, իմ՝ աղջկանց դպրոցաց սիրահարությանս [վկայելու]:

Շտապեցինք այնուհետև յես և պ. Քրիստափոր Տեր-Մկրտչյանցը առաջիկա մայիս 21-ին նշանավոր հանդիսացնել մեր դպրոցաց սկզբնավորությունը և տարեդարձը:

Այդ հոդելույս ուսումնասեր Գեորգ կաթողիկոսի ոծման որն եր: Ըստ հառաջադույն խորհրդակցության և ագուլեցվոց ցանկության, մենք Ագուլյա պատգամավորներս, արժանացանք Եջմիածնում ոծման հանդեսից հետո մայիս 21-ին արժանի լինել նորին վեհափառության սուրբ աջը համբուրելու և մեր կանոնադրությունքը ագուլեցվոց արանց և կանանց խնդիրների հետ խոնարհաբար ներկայացնելու:

53 Վեհափառ տեր Գեորգը, տեղակալ սրբազան Գեորգ արքեպիսկոպոս Վեհապետյանի[166] միջնորդությամբը հայրական քաղցրալիր սիրով ընդունեց մեր խնդիրը, խոստացավ յերկու որից ճանապարհ դնել մեզ և մեր ցանկությունը իրագործելու համար՝ որհնության և հաստատության կոնդակների որաթիվը մայիսի 21-ից նշանակել:

Վորքան կամիք, անխոհեմաբար միանգամայն, թշնամական աղբյուրներից քաղած սուտ ու սխալ լուրերով լցրեք ձեր



թերթերը, անհեռատես հրապարակախոսներ, իզուր և ստահոդ ե Գեորգ կաթողիկոսի վերա ձեր տարածած վարդապետությունը, հանդուցյալն յուր մարդկային թերությունններով հանդերձ հայոց ազգի վերաշինության գործի մեծ աշխատավորների առաջիններիցն ե. յես կարծում եմ, այնքան չեր ուրախացել նա յուր կյանքի այդ ովան մեծ փոփոխությամբը, վորքան մեր բերած ավետյաց լուրով:— Գոհանամ, զատվածո, աչքերը արտասունքով լիքը յերկինք նայեցավ նա, վորպիսի՜ բարեգուշակ զուգադիպություն. ի՞նչ կմտածեյի թե իմ ոծման որիս հիշատակը պետք ե կապված լինի ազգիս կրթության գործի առաջին բաղձանացըս հետ: Յեկե՛ք զավակներս, մոտ կանչեց նա մեզ, համբուրեմ ձեր ճակատը, դուք ինձ համար յերկու ավետաբեր հրեշտակներ եք: Գնացեք հանգստացե՛ք, սուրբ աջը մեզ ձգելով՝ արձակեց մեզ ազգասեր հայրապետը, յերկու որից ձեզ կկանչեմ:

Յես սիրելի գոռոզությամբ զգում եմ ցայսոր ճակատիս վերա աներևութաբար դրոշմած լուսաբեր հայրապետի սուրբ շրթունքների ջերմությունը: Այս լեզվով չպետք ե ստիպված լինեմ որագրիս մեջ շատ տեղ խոսել Գեորգ կաթողիկոսի մասին, բայց համբույրի կնիքը մի փոքր կերերի [?] ճակատիս, վոթորիկներ կկուտակվեն հանուն կաթողիկոսի գլխիս վերա, վերջը պատճառներն ամոթապարտ կլինեն, արդարությունը լույս աշխարհ կգա և կնիքը կամրանա հավիտյանս:

Յերկու որից նույն լեզվով չի խոսում մեզ հետ վեհափառ տերը, կանոնադրության մի քանի կետերի փոփոխությամբ, մանավանդ յերեսփոխանական ժողովին վերաբերյալ հոդվածներին, շատ տհաճություն ե ցույց տալի, նմանողություն ե համարում այն Տաճկահայոց սահմանադրու-
54 թյան զեվզեկ հոդվածներին, հայտնում ե, վոր ինքն ինձ վաղուց գիտե, Պոլսեն սկսած մինչև Եջմիածին շարունակ լսել ե իմ հանդուգն բնավորությանս և առ հայոց յեկեղեցին անհարազատությանս մասին և այլ այսպիսի խոսքեր:

Վերջը կամելով մեզ ցանել, ճանապարհ ե կամենում դնել առանց իրավունք տալու, ասելով թե մոտիկ ապագա-

յում ինքը գրելու յե մի ընդհանուր դպրոցական կանոններ, վորով ի թիվս ուրիշների կարենա գոյություն առնել և Ագուլյաց դպրոցները:

Գլխներիս սառը ջուր մաղվեցավ, ծակամուտների լարած վորոգայթները հաստատուն են յեղել. Նրանք հաջողացել են. խեղճ Քրիստափորը մոլորվել եր, յես վոչ պակաս եյի չփոթված:

— Վեհափառ տեր, ներեցեք հանդգնությանս, մի փոքր հառաջ յեկա յես, նախ քան մեր գնալը յես կկամեյի մի բանով միայն յերկմտելի կացուցանել Ձեզ համար իմ վերա տարածած լուրերը և ապա հեռանալ: Իրավ չե՞ արդյոք, վոր Ձեր սրբության ականջներին Կ. Պոլսում իմ մասին ձանձրություն տվողը յուր բամբասանքները շարունակել ե մինչև Թիֆլիզ և այնտեղից մինչև Եջմիածին և մի ժամ առաջ ևս այս գահու վոտքի տակ սրած ինձ վերա յուր յերկայրի լեզուն՝ պղտորել եր ջանում մեր լուսամիտ հոր միտքը, վոր և հաջողեց:

— Իրավ կըսես, տղաս, զարմացմամբ պատասխանեց կաթողիկոսը. անկեղծ կըսեմ, մի մարդուց միայն լսեր և շարունակ կլսեմ:

—Իմ ասելիքս, հոգևոր տեր, վերջացավ, ձեզ ե մնում այսուհետև դատել, դատապարտել կամ արդարացնել նվաստիս: Այս րոպեյից յես հրաժարվում եմ Ագուլյաց դպրոցական գործում մասնակցելուց, խնդրելով վեհափառությունից միակ շնորհքը, իմ պատճառով չմեղցնել ագուլեցվոց յեռանդը, չզրկել նոցա ապագա սերունդը լուսավորությունից:

— Վո՛չ տղաս, յես հավատի յեղա քո անմեղությանդ, կզգամ վոր ուժեղ թշնամիներ ունիս, վորոնք փոքր մի ևս և ահա պիտի պարծենային յուրյանց չարության հաղթանակով. բայց յես չպիտի ուրախացնեմ նորանց, պիտի տամ իրավունք դրանդ կանոնադրությամբ բանալ Ագուլյաց դպրոցները, շարունակել մինչև վոր ընդհանուր կանոնադրությունը յուր հովանույն ներքո կառնի ձեր դպրոցները, յես հասկացա, վոր դու քո թշնամիդ ճանաչեցիր:

Ինչպե՜ս չճանաչեյի, չանչխականություն և հակա-
55 չանչխականություն չդարձավ, մեզ համար մի ցավ դարձավ,



դեռ շատ պետք ե հալածե Շանչյանցի աշակերտներին այդ հարցը:

Շատ չեր անցել, յես Ագուլիսում լսեցի, վոր Վեհապետյան Գեորգ յեպիսկոպոսը նշանակվել ե Աստրախանի առաջնորդ, իսկ Սարգիս յեպիսկոպոս Ջալալյանցը՝ տեղակալ:

Չգիտեմ ուրիշ ինչ հետամտություններ յեղան, մյուս որը տեղակալ Գեորգ սրբազանը մեզ կանչեց և խորհուրդ եր տալիս թողուլ գնալ, հույս չունենալով մեր խնդրանաց կատարման վերա. յուրյան ե հանձնված յեղել մի հնարքով մեզ ճանապարհ դնել:

Իմ խորհրդով Քրիստափորը մի վերջին անգամ ևս բարձրացավ միայնակ վեհարան և հետևյալ մտածված խոսքերն ասաց.

— Դուք, վեհափառ տեր, ինչպես հրամայեցիք, մտադիր եք ազգիս չորս միլիոն զավակներից մի մի մանեթ ժողովել հայոց ապագա սերնդի կրթության գործո համար (այս խոսքերը ոծման որը ինքը կաթողիկոսը մեզ պատմեց): Ագուլիսը, թեպետ մի գյուղ, բայց յուր վորդվոց առևտրականության հմտությամբը, կարող եր ըստ յուրովանն լիովին և առատորեն ձգել յուր լուման այդ գանձանակի մեջ և փոխարեն այսոր Ձեր վեհափառությունը անտես եք առնում մեր ծախյուքը մեզ դպրոցներ տալ, կներեք ուրեմն յեթե ագուլեցիք հանդգնեն հրաժարվել մասնակցելու համազգային նվիրատվությանը: Մնաք բարև՛, տեր, ձեր խորթ զավակը ցաված սրտով, արժան չհամարելով յուրյան ձեր վերջին հայրական սուրբ համբույրին, հեռանում ե:— Ասել, դուրս գալը մեկ ե լինում:

— Գաբրիել վարդապետ[167], շտապի՛ր հետ պահիր այդ պարոնին, մենք այս ի՞նչ ըրինք, տանք հրաման, գրիր դու որհնության և հաստատության կոնդակ, ախտոս են այդ մարդիկը:

Քրիստափորը նախասենյակում լսում ե հիշյալ խոսքերը
56 և ծանրացնում քայլերը:

Անմեղ խորամանկությունները հաջողեցան, նույն որը Այվազովսկի հայր Գաբրիելը (վերջն Այվազյան հայ լուսավորչական վարդապետը) անձամբ բերեց մեզ կոնդակի նա-

խարտակը, մի յերկու փոփոխություն արեց մեր ցանկության համաձայն, արտագրել, ստորագրել տվեց և ճանապարհ դրեց:

Գերապատիվ Այվազյանը շատ ցավեցավ, վոր մեր մի ցանկությունը չիրագործվեցավ, մայիս 21-ի թվով չեղան մեր կոնդակները[168], մի քանի ուրիշները մեզանից հառաջացել եյին մինչև այդ օրը:

14

Կոնդակները ավետել եյին ագուլեցվոց յերկսեռ դպրոցի բացման համար, առաջիկա աշնանը ուսուցչական խումբը և յերկու սեռից մանուկները պատրաստ պետք է լինեյին գործին ընթացք տալու, փողը կար, զգացվում եր միայն դպրոցական սենյակների և ուսուցչաց բնակարանների պակասությունը:

Թովմա Առաքելո վանքը յուր խցերի հարմարությամբ յերեք-չորս ամսվա մեջ հինգ ձեռք չքեղ տներ տեսավ կառուցված, սուրբ Քրիստափոր յեկեղեցվո բակի սենյակները վերաշինվեցավ աղջկանց դպրոցի և վարժուհաց համար և յես վստահ լինելով հոգաբարձուաց անվհատ աշխատանաց վերա՝ ուղևորվեցա Թիֆլիզ և Յերևան[169] ուսուցչական խումբ կազմելու:

Խումբը կազմվեցավ. համալսարանական Ռուբեն Զալալյանց, Լազարյանց ճեմարանից Արտաշես Հակոբյան, ինքնակիրթ Աբգար Գյուլումյանց, Թավրիզից Սամվել Գյուլզադյան[170] յուր ամուսին վարժուհիով և Վանից Ագուլիս ծխական քահանա հրավիրված Մեսրոպ քահանա Փափազյանց ինձ հետ միասին առաջիկա սեպտեմբերին աստուծո անունը տված՝ որհնեցինք դպրոցները և ուսումն սկսեցինք[171]:

Աշխատությունը պակաս չեր, 150-ի չափ տղայք, 35 աղջկունք[172] արագ քայլեր են անում ուսման մեջ, վարժապետները կյանք չեն խնայում, ժողովրդյան վոգևորությանը սահման չկա: Ագուլեցիք յուրյանց մեջ բաժանել
57 են մեզ յուրյանց տներում հյուրասիրելու օրերը. յեթե մենք կարգի չբերեյինք, մեր տներում ճաշելու որ չեր մնալու, բայց «զայս պարտ է առնել և զայն չը թողուլ». յեթե ամեն որ խնջույքներով և յերեկույթներով պարապինք,



վոչ ուժ և վոչ միջոց կմնա: Կարգադրեցինք այդ բանի համար տոն և կյուրակի օրերը, ասել է, թե շաբաթներով հառաջ ծախված եյին մեր ազատ օրերը:

Մի յերկու դեպքեր միայն տաք ջրի վերա պաղը լցնելու վերա եյին, նոքա ևս ի ցավ հնարողների սրտին շուտ անցան:

Առաջինը. գյուղում պատերի վերա կեստագրությամբ գրած տոմսակներ գտնվեցան. վորպես թե Պռոշյանցը և Գյուլումյանցը (բայց ինչո՞ւ վոչ բոլորը, կամ վոչ միայն Պռոշյանցը) ագուլեցվոց կանանցը պարաններով Թովմա Առաքելու վանքի պարսպից ներս են քաշում, անբարոյականության օրինակ են լինում և այլն, և այլն: Թեպետ յես խնդրեցի Քրիստափորին արհամարհել այդ չնչին բամբասանքները, բայց նա հայտնեց, վոր ժողովուրդը սաստիկ գրգռված է, ժողով է խնդրում և ցանկանում է գտնել չարագործին:

Ասած՝ արած. կես ժամի մեջ դպրոցի դահլիճում տեղ չկար, աշակերտաց նստարանների վերա հանդիսականք են բազմել. Ռուբեն Զալալյանցը մեղադրական տոմսը ձեռքին վանքի վանահայր Նախիջևանցի Ստեփան վարդապետից սկսած բոլորին ցույց եր տալիս և հարց առաջարկում, այս դո՞ւք եք գրել, կամ գիտե՞ք գրողներին: Հայր սուրբը և տեր Մեսրոպ հայրը գրողին Հուդային դասակից արին և յուրյանց քահանայական կոչմանը Քրիստոսից տված իրավունքով այնպիսվույն կապեցին «յերկրի, զի եղիցին նոքա կապեալ յերկինս»[173]:

Ո՞վ կվստահանար այնուհետև ուրանալ, խոստովանությունը միայն կթեթևացներ ծանր հանցանքը, բայց ո՞վ խոստովաներ, յերբ բազմականները ամենքն անմեղ եյին և վստահ իմ ու Աբգարի բամբասանաց տակ լինելու վերա:

— Ագուլեցի՛ք, վոտքի կանգնեցավ Քրիստափորը, շատ ժամանակ չե, վոր այս ուսուցիչները մեզ մոտ են, նոքա բոլորը թեպետ յերբեմնապես հյուրասիրվում են ձեր տներում, չտեսնվելով ձեր ընտանյաց հետ, բայց միակ տունը, ուր ժամանակ անժամանակ, գիշեր ու ցերեկ մուտք ունին նոքա, մանավանդ Պռոշյանցը, մեր տունն է, և այն կինը, վորին նոքա հաջողեցրել են արդարև վանքի պարսպից քթո-

խարտակը, մի յերկու փոփոխություն արեց մեր ցանկության համաձայն, արտադրել, տարադրել տվեց և ճանապարհ դրեց:

Գերապատիվ Այվազյանը շատ ցավեցավ, վոր մեր մի ցանկությունը չիրագործվեցավ, մայիս 21-ի թվով չեղան մեր կոնդակները[168], մի քանի ուրիշները մեզանից հառաջացել եյին մինչև այդ օրը:

14

Կոնդակները ավետել եյին ագուլեցվոց յերկսեռ դպրոցի բացման համար, առաջիկա աշնանը ուսուցչական խումբը և յերկու սեռից մանուկները պատրաստ պետք է լինեյին գործին ընթացք տալու, փողը կար, զգացվում եր միայն դպրոցական սենյակների և ուսուցչաց բնակարանների պակասությունը:

Թովմա Առաքելո վանքը յուր խցերի համարությամբ յերեք-չորս ամսվա մեջ հինգ ձեռք չքեղ տներ տեսավ կառուցված, սուրբ Քրիստափոր յեկեղեցվո բակի սենյակները վորոշվեցավ աղջկանց դպրոցի և վարժուհաց համար և յես վստահ լինելով հոգաբարձուաց անվհատ աշխատանաց վերա՝ ուղևորվեցա Թիֆլիզ և Յերևան[169] ուսուցչական խումբ կազմելու:

Խումբը կազմվեցավ. համալսարանական Ռուբեն Ջալալյանց, Լազարյանց ճեմարանից Արտաշես Հակոբյան, ինքնակիրթ Աբգար Գյուլումյանց, Թավրիզից Սամվել Գյուլզադյան[170] յուր ամուսին վարժուհիով և Վանից Ագուլիս ծխական քահանա հրավիրված Մեսրոբ քահանա Փափազյանց ինձ հետ միասին առաջիկա սեպտեմբերին աստուծո անունը տված՝ որհնեցինք դպրոցները և ուսումն սկսեցինք[171]:

Աշխատությունը պակաս չեր, 150-ի չափ տղայք, 35 աղջկունք[172] արագ քայլեր են անում ուսման մեջ, վարժապետները կյանք չեն խնայում, ժողովրդյան վոգևորությանը սահման չկա: Ագուլեցիք յուրյանց մեջ բաժանել
57 են մեզ յուրյանց տներում հյուրասիրելու օրերը. յեթե մենք կարգի չբերեյինք, մեր տներում ճաշելու որ չեր մնալու, բայց «զայս պարտ է առնել և զայն չը թողուլ». յեթե ամեն որ խնջույքներով և յերեկույթներով պարապինք,



վոչ ուժ և վոչ միջոց կմնա: Կարգադրեցինք այդ բանի համար տոն և կյուրակի օրերը, ասել է, թե շաբաթներով հառաջ ծախված եյին մեր ազատ օրերը:

Մի յերկու դեպքեր միայն տաք ջրի վերա պաղը լցնելու վերա եյին, նոքա ևս ի ցավ հնարողների սրտին շուտ անցան:

Առաջինը. գյուղում պատերի վերա կեղտոտությամբ գրած տոմսակներ գտնվեցան. վորպես թե Պռոշյանցը և Գյուլումյանցը (բայց ինչո՞ւ վոչ բոլորը, կամ վոչ միայն Պռոշյանցը) ագուլեցվոց կանանցը պարաններով Թովմա Առաքելու վանքի պարսպից ներս են քաշում, անբարոյականության օրինակ են լինում և այլն, և այլն: Թեպետ յես խնդրեցի Քրիստափորին արհամարհել այդ չնչին բամբասանքները, բայց նա հայտնեց, վոր ժողովուրդը սաստիկ գրգռված է, ժողով է խնդրում և ցանկանում է գտնել չարագործին:

Ասած՝ արած. կես ժամի մեջ դպրոցի դահլիճում տեղ չկար, աշակերտաց նստարանների վերա հանդիսականք են բազմել. Ռուբեն Ջալալյանցը մեղադրական տոմսը ձեռքին վանքի վանահայր Նախիջևանցի Ստեփան վարդապետից սկսած բոլորին ցույց եր տալիս և հարց առաջարկում, այս դո՞ւք եք գրել, կամ գիտե՞ք գրողներին: Հայր սուրբը և տեր Մեսրոբ հայրը գրողին հուդային դասակից արին և յուրյանց քահանայական կոչմանը Քրիստոսից տված իրավունքով այնպիսվույն կապեցին «յերկրի, զի եղիցին նոքա կապեալ յերկինս»[173]:

Ո՞վ կվստահանար այնուհետև ուրանալ, խոստովանությունը միայն կթեթևացներ ծանր հանցանքը, բայց ո՞վ խոստովաներ, յերբ բազմականները ամենքն անմեղ եյին և վստահ իմ ու Աբգարի բամբասանաց տակ լինելու վերա:

— Ագուլեցի՛ք, վոտքի կանգնեցավ Քրիստափորը, շատ ժամանակ չէ, վոր այս ուսուցիչները մեզ մոտ են, սոքա բոլորը թեպետ յերբեմնապես հյուրասիրվում են ձեր տներում, չտեսնվելով ձեր ընտանյաց հետ, բայց միակ տունը, ուր ժամանակ անժամանակ, գիշեր ու ցերեկ մուտք ունին սոքա, մանավանդ Պռոշյանցը, մեր տունն է, և այն կինը, վորին սոքա հաջողեցրել են արդարև վանքի պարսպից քթո-

58 ցով վեր հանելու, նա իմ կյանն է անչուչտ: Ես իմ կողմից շնորհավորում եմ Պոռչյանցին և Գյուլումյանցին յուրյանց հաջողությանը և ուրախ [եմ] սոցա գիշերային հերոսության համար:

— Մենք բոլորեքյանս, կվստահանանք Պոռչյանցին և Գյուլումյանցին մեր կանանցը և աղջիկներին, ձայն ձայնի տվին հանդիսականք, թող ամոթակոր լինի ցած դեռնափորը:

Այս խոսակցության միջոցը աշակերտներից յերկուքը ինձ նշանացի լուսամուտից դուրս հրավիրեցին:

— Պ. Պոռչյանց, ասացին Սանփաննոս չուչտակ· հայ սուրբի վորդի Կարապետը և զարարացի Միրզաջանը (այսօր Գարեգին Գևորգբեգյանց), մենք ամաչում ենք ներս գալ և մութը գործին լույս տալ, մենք չենք վստահանում ձեզ պատմել եղելությունը, յեթե կարելի յե ներս գնաք և դուրս ուղարկեք Ռուբեն վարժապետին:

Հինգ րոպեյից արդարև ներս յեկավ Ռուբենը յուր հետ առած հիշյալ աշակերտներին՝ Կարապետին և Միրզաջանին:

— Պարոննե՛ր, լռություն եմ խնդրում, այս յերկու պատանիները խոսելիք ունին:

— Ներողություն եմ խնդրում հայր սրբից, ասաց յուր վորդի Կարապետը, ներողություն եմ խնդրում և տեր Մեսրոպ հորից· այս վարժապետների մեր մեջ ներշնչած ճշմարտությունը ստիպում է մեզ ուղիղն ասել:

Ամենքը քամնեցան հայ սուրբին և տերտերի յերեսներին նայելով, նոցա յերեսին գույն չեր մնացել:

— Թեպետ մենք ճշտապես չգիտենք ո՞վ է գրել, խոսեցավ Կարապետը, բայց այդ բովանդակությամբ անստորագիր թղթեր հրատարակել տալու խորհուրդը կայացել է տեր հոր տանը մեր ներկայությամբ, հայր սուրբս, տեր հոր, յուր տիրացու Մարգարի և Քալանթարյան յերկու յեղբարց[174] ներկայությամբ:

— Միրզաջան, ուղի՞ղ է թե վոչ, դարձավ Կարապետը դեպի ընկերը:

Ուղիղ և ճշմարիտ: Այդ բանը դեռ շատ առաջ եր, և միայն պ. Պոռչյանցի վերա մտածած, դեռ այն ժամանակը վո՛չ պ. Գյուլումյանցը և վո՛չ մյուս վարժապետները կային, ինքը Պոռչյանցն ել գնացել եր ուսուցիչներ հրավիրե-



լու: Թե ինչպես յեղավ, վոր պ. Գյուլումյանցն ել խառնվել է մեջ և կամ ո՞վ է գրել, մենք չգիտենք:

—Վորդի՛ Կարապետ, քո հորդ ցե՞խն ես կոխում, բարկացավ հայր սուրբը:

Վորդի՛ք Կարապետ, Միրզաջան, կմկմաց տեր Մեսրոպ հայրը, ինչո՞ւ կմեղանչեք, Դավիթ... Դավիթ մարգարեն կասա... կասա...

Ռուբենը ընդհատեց սուրբ հայրերին· բավական է, գոչեց, մեզ այսքանն եր պետք, պարոններ, ժողովը վերջացած եմ համարում:

59 Արհամարհական բացականչություններով դահլիճը լըցված է: Ագուլեցվոց բարկությունը յերկյուղալի հետևանք կարեր հառաջ բերել, պահանջում են անպատճառ ճիշտ խոստովանություն, բայց խոհեմ Ռուբենը կարողացավ Քրիստափորին համոզել ժողովը ցրվելու, մանավանդ վոր մեղադրյալներից մինը, վանեցի տերտերի վանեցի տիրացու Մարգար Հրաչյան, ժամանակ խնդրեց մինչև մյուս օրը ճշմարտությունը պարզելու:

Արդարև մյուս օրը տիրացու Մարգարը ներկայացնում է մի մեղայական Քրիստափորին, վորի մեջ խոստովանում է և հայտնում է, վոր անանուն տոմսերը գրել է ինքը՝ վերոհիշյալ համախոհների խորհրդյամբ:

Խեղճ Մարգարը մի քանի օրից ճանապարհ գրվեցավ Ագուլիսից· Ագուլիսի տատասկոտ ժողովուրդը լիուլի ճանապարհածախք եր տվել նրան: Լսվեցավ, վոր խեղճ տղան Սև ծովի վերա ալեկոծության զոհ է յեղել Պոլիս գնալիս:

Ես կամ ընկերներս ինչո՞վ եյինք մեղավոր, վոր Ագուլիսում հաստատ ժողովրդական դպրոցներ բացվելով՝ փակվեցավ Քալանթարյան յեղբարց մասնավոր դպրոցը· հանցանք չունեյին նույնպես տեր Մեսրոպ հոր նպատակի խափանման մեջ· բանից դուրս յեկավ, վոր ինձանից հառաջ անցյալ տարին տեր Մեսրոպը Վանից յեկել է Ագուլիս, պայմանավորվել ծխական քահանա լինելու Ագուլիսում և վերադարձել ընտանիքը բերելու:

Տեր Մեսրոպը միտք է ունեցել յուր տեսչությամբ և նախագահությամբ դպրոց բանալ Ագուլիսում, տիրացու Մարգարին այդ իսկ գործի համար է բերել, բայց յես փահ-

րատի փչի նման բուսել եմ յուր և ագուլեցվոց մեջ տեղն ու անգիտակցաբար արգելք յեղել նորա չահագրգռակա՞ն թե ազգասիրական մտումներին: Յեթե այդպես է, յես ներում եմ նոցա, իմ դեմ գործ դրած միջոցները հիմք են ունեցել․ գոյության կռիվ է, հացի խնդիր է:

[15]

Յերկրորդ չարաղետ վրդովեցուցիչ դեպքը պատահեցավ մի բարի առավոտ 1868 թվի գառնկին մոտ, Ղարաբաղի դպրոցներ խանգարող հերոս Արամյան Գեորգ վարդապետի
60 Թումա Առաքելու բակում յերևելով:

Մոռանալ չեմ կարող, ժամը 11-ն է, յես դաս ունիմ ուրբ. Քրիստափորի բակում աղջկանց դպրոցում: Շտապում է ինձ մոտ Ռուբեն Զալալյանցը:— Գիտե՞ս ինչ փոփոխություն կա, ասաց նա, Արամյան Գեորգ վարդապետն ահա բազմել է վանքի արևելյան դատարկ սենյակներում և ինքն յուրյան ներկայացնում է վանքին վանահայր, իսկ Սանխան վարդապետին՝ յուր միաբանը:

— Ափսո՜ս մեր դպրոցներ, ասացի, Արամյանն յեկել է քանդելու:

— Ինչպե՞ս, զարմացավ Ռուբենը, նա միայն վանահայր է յեկել, արդեն վանքի հոգաբարձուք ստացան հրամանը:

— Այո՛, Շուշի էլ առաջնորդական քողի տակ եր յեկել, բայց ուղարկված եր Շանշյանցի արմատը կտրելու այնտեղից, վոր և արեց իսկ: Բայց այստեղի յերկյուղը մեծ չի լինելու, իմ տարին լրանում է, յերկու ամսից յես գնալու յեմ[175]: Արամյանին ուղարկողը կհանգստանա այն ժամանակ և դուք խաղաղ սրտով ձեր գործը կշարունակեք:

Հայր սուրբի ծանոթը Ագուլիսում տարաբաղդաբար միայն յես եյի և ինձ եր վիճակված բոլորի հետ նորան ծանոթացնել: Յեթե Արամյանն յուր ծանրաշարժ և մունջ բնավորությամբ ու դեմքով՝ ներքուստ յեկել եր տակն փորելու, իսկ արտաքուստ ուրախ եր իմ ներկայությանս, յես էլ ընկերացս հետ խոհեմությունը ձեռքից չթողի բոլոր ժամանակ և Արամյանի զենքը յուր բռնած ճանապարհով խորտակեցի: Վոչ միայն չհիշեցի նորա յերկու-յերեք ամսաչափ կացության ժամանակ Ղարաբաղի անցքը, վոչ միայն



չտվի Շանշյանցի անունը, այլ և դեմք չցույց տվի իբրև թե յես գիտեմ յուր գալստյան նպատակը:

Խեղճ Արամյանը լքավ, հուսահատեց, յերբ գառնկից հետո մի որ հոգաբարձուք այցելեցին իրեն և հայտնեցին, թե յուրյանք, իբրև սահմանակից Ղարաբաղի, ծանոթ են յուր քաջագործություններին, գիտեն, վոր Ղարաբաղի ուսումնարանը յուր շնորհիվն է այսոր ավերակ և թե խնդրում են պարզն ասել, վոր յեթե արդարև ինքն՝ ուղարկված է միևնույն հարվածը հասցնել Ագուլյաց դպրոցին, ապա լավ եր, վոր իսկույն թողուր հեռանար: Յեվ վերջապես, ասացին, քո անխարդախությունքդ, յեթե կա, մեզ համար կոպեկ չարժե, քանի վոր Ղարաբաղն աչքների առաջին է:

61 Ծամել, ծամծմոտել է խոսքերը Արամյանը, բայց հավատացնել չէ կարողացել: Հոգաբարձուք հուսահատ դուրս յեկան և մտածում եյին յելք գտնելու:

Մեղքս չեմ թագցնիլ. հոգաբարձուներին ուղարկողը և բերանները լեզու դնողը յես եյի:

Արամյանն յուր կացությունը որ ըստ որե ծանրացած է համարում. միակ խոսակիցը, միակ հյուրասիրողը յես և իմ ընկերքն ենք. փոփոխակի դասեր լսելու յենք հրավիրում, ճաշի յենք բռնում, մեծարում ենք և նչույլ չենք ցույց տալի յուր խարդավանական առաքելության գաղտնիքը հասկանալու համար:

Զգիտեմ այս հաճոյականությունքն եյին պատճառը թե խիղճն եր իրան խայթողը, յես կարծում եմ, վոր հետևյալ դրդիչ հանգամանքն եր [պատճառ]՝ նորան մի որ խոստովանության գալու:*)

Նստած ենք բոլորս մեծ Փալան կոչված սրահումը, Արամյանը մեզ հետ է. պարոննե՛ր, ընդհատում է հանկարծ Արամյանը, դուք գիտե՞ք, վոր յես այստեղ վոչ այլ ինչ եմ, յեթե վոչ գործիք:

— Ինչպե՞ս թե գործիք, հայր սուրբ, ասում է Ալղարը:

— Գործիք, ինչ վոր գործիքի նշանակությունն է, այո՛, յես գործիք և սոսր գործիք եմ Պողչյա՛նց, հարեց նա,

*) «Խայթողը» բառից հետո ջնջած՝ «թե այլ ինչ դրդիչ հանգա...» արտահայտությունը ավելի ճիշտ ընթացք կտար Պողչյանի մտքին:

մեր կաց, առանձին յերկու խոսք ունիմ քեզ ասելու: Պռոշյանց, շարունակեց Արամյանը, դու ինձ հավատա՛, վոր յես գործիք եմ, յես յեկել եմ այս շինվածքը քանդելու (մատնացույց արեց ինձ գյուղական շենքը), չկարծես թե հող ու քարն է ասածս, այդ նորից շինելը հեշտ է, այս պետության տաճարի համար է ասածս. յես յեկել եմ Ագուլյաց յերկսեռ գյուղը Ղարաբաղի վիճակին յենթարկելու և վերադառնալու:

— Յես քեզ չեմ հասկանում, հայր սուրբ, բացատրեցեք խնդրեմ:

— Ա՛ռ և կարդա՛, Պռոշյանց, կարդա և հավատա, վոր խոսքերիս մեջ ստություն չկա:

Աչքերից կայծակներ ցայտելով, վարդապետը տվեց ինձ մի ամբողջ թերթ լիքը նամակ, ստորագրությունը Սարգիս յեպիսկոպոսինն եր:

Ահա համառոտապես բովանդակությունը: Յերկու ամիս է գնացել ես, վարդապետ, և վոչինչ տեղեկություն չես գրում, լսվում է այստեղ, վոր Ագուլյաց յերեխայքը խմոր-
62 վում են, լուտերականությունը ներս է մտնում, աղջկունքը տղայոց հետ խառը յեկեղեցում յերգում են (ուղիղ եր), վոր ընդդեմ է մեր լուսավորչական սուրբ յեկեղեցու կանոններին: Վերջապես, հիշի՛ր, վարդապետ, թե ինչո՞ւ յես ուղարկված, վոր դու գրկված ես քանդել այն ոձի բույնը, վորը դու Շուշումը հիմնիվեր տապալեցիր և վորը հիմա հիմնվել է այդտեղ, ոձի ձագերից մի մեծը այդտեղ է բնավորված. գործի՛ր վարդապետ, մեր սկսածը պատերազմ է, այդ ֆարմասոններից մեր պատիվը վոտնատակ գնալու չէ մի որ, յեթե ցայսոր չի գնացել. այս պատերազմը հոգևոր է, հաղթվես, թե հաղթես՝ փառաց պսակը դու յես տանում: Յեթե գրում ես, վոր ուրիշ հնար չկա խոստմունքդ կատարելու, դու գործ դիր ամենաճիշտ միջոցը, յերկպառակություն սերմանի ժողովրդի մեջ և ամենայն հաջողությամբ նպատակիդ հասած կլինիս:

—Տեսնո՞ւմ ես, Պռոշյանց, վոր յես գործիք եմ, հասկացա՞ր ինչու համար եմ յեկել, խղճա՛ ինձ, Պռոշյանց, Ղարաբաղի անցքը կոկորդիցս դեռ կուլ չի գնացել, Ագուլիսն էլ վերայից են ներս խցկում: Դեռ այդ վոչինչ, գրողը յե-



թե չար նպատակի տեր է, գոնե դիրք և անուն ունի, ինչ անուն կտաս ապա այս լրբուն ճիճուին, վոր գլուխը ձվից դեռ չհանած, ինձ խրատներ է գրում: Այս ասելով վարդապետը տվեց ինձ կարդալու կես թերթից մի ուրիշ նամակ: Ստորագրությունը Սարգիս յեպիսկոպոսի ազգական Ջալալ Ջալալյանցինն եր (այժմ Յեղիա վարդապետ)[176]: Վերջինս հիշեցնելով վարդապետին Պողոս Առաքելու «Ամենայն անձն որ ընդ իշխանութեամբ է ի հնազանդութեան կացցե» [177] պատվերը, հորդորում եր նրան հնազանդությամբ լսել յուր իշխանավոր սրբազանի պատվերը և սրբությամբ կատարել:

—Ա՜խ, Պռոշյանց, արտասուքը թափելով մի ձեռքս սեղմած հեծկլտում եր Արամյանը, Շանշյանցը առաքինի և անհիշաչար մարդ է, նա ինձ գուցե վաղուց ներել է ակամայից ուրիշի թելադրությամբ յուր դեմ արած չարանյութ խռովությունները, բայց Ղարաբաղի մանկությունը չի ներիլ, չեր ներելու և Ագուլյաց ապագա սերունդը, յեթե մե-
63 ռած խղճիս ձայնը հարություն չառներ, և ո՞վ գիտե, շատ կարելի յե խիղճս մեռցնողն ինքն յեղավ այս նամակներով: Ների՛ր գոնե դու Պռոշյանց, յես յեկել եմ քեզ բնահան անելու: Յես յեկել եմ վորպես թե ազատելու Ագուլյաց գյուղը ձեր նման պրոտեստանտներից, բայց յերանի թե հայոց յեկեղեցու ամեն հարազատ անդամները ձեզ պես լինեյին. յես լսեցի ձեր դասատվությունը և հաստատ կարեմ այս ասել: Բայց առ կարդա՛ և իմ կարճ պատասխանը.— այս ասելով նա ցույց տվեց Սինոդի անունով գրած մի յերեք տողից հայտարարությունը, վորով վճռապես հայտնում եր Սինոդին, վոր յեթե նա առաջին իսկ փոստով չի հրամանագրել յուրյան հանձնել վանահայրությունը նախկին վանահայր Ստեփան վարդապետին և գնալ Նուխի Յեղիշեյի առաքելո յուր նախկին վանքը, ապա ինքը կթողու իսպառ և կերթա Թիֆլիզ, կնստի յուր տանը դռները մոտ: (Արամյանը շուշտակ եր):

Շատ խնդրեցի Արամյանին այդ գրությունքն ինձ տալ, կամ բնականը և կամ պատճենը, բայց նա չարեց:

—Պռոշյանց, ասաց Արամյանը յերկու շաբաթից հետո, Սինոդից հրաման ստացա իմ վանքս գնալու, բայց ճանա-

պարհածախք չունեմ, չէյի՞ր կարող 20 մանեթ պարտ տալ ինձ, այնտեղից կվերադարձնեմ:

—Ամենայն ուրախությամբ, հայր սուրբ:

Նույն օրը յես ուղարկեցի հողաբարձուներին՝ խնդրել վարդապետից առաջիկա կյուրակեյին պատարագ մատուցանել: Նպատակս էր զորանոց վարդապետին աջահամբույր չահեցնել, բայց նա չէր ընդունել: Հարգելի հողաբարձուք էս յուրյանց կողմից 30 մանեթ նվեր եյին տվել:

—Պոռշյանց, շտապեց նույն յերեկոյին ինձ մոտ վարդապետը, յես քո փողին կարիք չունիմ, հողաբարձուները 30 մանեթ տվին:

Մյուս օրը Ագուլյաց փաձառականների կարավանը լեռնային ճանապարհով ձի հեծած գնում էր Նախիջ. նոցա ընկերացավ Արամյանը:

Հինգ վերստաչափ տեղ նորան ճանապարհ դրի մենակս յես: Ամբողջ ճանապարհը նա լալով էր գնում և ինձանից ներողություն խնդրում:

Խե՜ղճ Արամյան, լսվեցավ, վոր մի քանի ժամանակից հետո նա Ցեղիչեյի վանքումը ինքնասպանություն է գործել. պարանախեղդ է յեղել: Յես կասեմ՝ յուր խղճի խայթից:

16

64 Յես մոռացել եմ մի գլխավոր աղետալի դեպք: Այդ Արամյանի գալստից հառաջ էր, կարծեմ դեռ չուչեցի ուսուցիչներն եյին պարապում, ասել է թե յես դեռ չէյի գնացել ուսուցչական խումբ հրավիրելու [178]:

Օրդուբաթից նամակ եմ ստանում վարդապետների մեջ այն ժամանակ իմ միակ սրտակից և սիրելի բարեկամ, Նախիջևանի հաջորդ Սմբատյան Մեսրոպ վարդապետից (այժմ յեպիսկոպոս, անդամ Սինոդի և վերատեսուչ ճեմարանի)[179], թե ինքն յեկել է Օրդուբաթ և կամենում է գալ Ագուլիս:

Ուրախ ուրախ առնում եմ ինձ հետ յերկու չուչեցի ուսուցիչներին և կարծեմ Ստեփան վարդապետին ու շտապում Օրդուբաթ, սիրալիր համբույրով հրավիրում վարդապետին:

Մեսրոբ հայր սուրբին իջեցրինք Ստեփան հայր սուրբի համեստավոր սենեկումը. նա իմ, հետևաբար և ամբողջ աղուլեցվոց, թանգագին հյուրն է: Ճաշ, հրավերքներ ամեն օր: Մի քանի տեղ յես ներկա յեմ լինում, մյուսներում ձե-



ռնհաս չեմ գտնվում: Մի յերեկո Մեսրոբ վարդապետը ինձ կաց ու կամ խոսքեր է ասում... Ընչի՞ց է պետք... յուրյանց հայրն եմ որհնել... ուշք մի՛ դարձնի... և այլ այսպիսի անհասկանալի նախադասություններ:

—Պարզ խոսիր, չեմ հասկանում:

—Հոգ մի քաշիր... քեզ վոչինչ չեն կարող անել... յուրյանց հայրն եմ որհնել... շատ հարկավոր են...

— Հայր սուրբ, պարզի՛ր խոսքերդ:

Կարելի չե եղի վոչինչ չեյի դուրս քաշել, յեթե խոժոռված դեմքով չպնդեյի վարդապետին մթնախոսությունները թողնել:

—Այսոր աղուլեցիներից շատերը քեզ բամբասում եյին մի հացկերույթում, ասաց ի վերջո վարդապետը, քեզ մեղադրում եյին իբրև Ֆարմասոն, յեկեղեցի չգնացող և պասակեր:

—Ո՞վ և ո՞ւյք:

—Տեր-Ջանյանցի [180] տանը, ո՞ւյք չեմ կարող ասել, այնտեղ էր միայն մեծամորուք հողաբարձուն [181]:

Մյուս օրը շատ վաղ հողաբարձուք շտապով սենյակս մտան և զարմացմամբ հարցրին անակնկալ հրավիրանացս պատճառը:

65 —Պարոննե՛ր, ասացի յես, յեթե դուք միևնույնը պիտի անեք և յեկող ուսուցիչներին, լավն այն է այսօր իսկ հրաժարական վողջունով միմյանցից բաժանվենք. յես թքել եմ ձեր դպրոցի վերա և ձեր բոլորի վերա:

Մարդիկը քար կտրվեցան. ուսերը բարձացրին և բերանաբաց մնացին:

—Ձեզ չենք հասկանում, պ. Պոռշյանց, շտապեց պատվասեր Սրապիոնյանցը, կա՛մ բացատրեցեք, կա՛մ խոսքերդ հետ առեք և կա՛մ պատասխանատու յեք:

—Ձեք հիշում, պարոններ, յես նախազգուշացրի չբամբասել գոնե մի [առ] ժամանակ հրավիրվելիք ուսուցիչների վերա, ի թիվս վորոց և իմ. ասացեք խնդրեմ, ի՞նչ պակասություն գտաք դուք այս կարճ միջոցում իմ մեջ, բացի պահք չպահելուց, վոր գաղտնի չէ ձեզանից, ընչո՞ւ ինձ վերա խոսում և պատիվս արատավորում եք:

—Յեվ ո՞վ է այդ անողը, պ. Պառչյանց, հոնքերը ժողոված հարցրեց պ. Բաղդասար Փանյանցը:

— Դո՛ւք, հոգաբարձու պ. Փանյանց:

—Ո՞ւր տեղ:

—Յերեկ, Տեր-Զանյանցի ճաշի վերա:

—Իսկ յեթե ապացուցեմ, վոր Տեր-Զանյանցի մոտ ձեզ համար միայն խոսք է յեղել ձեզ չհրավիրելու մասին, և տանտերը գոհացրել է մեզ թե հրավիրել է և դուք չեք յեկել ու այլ վոչինչ:

—Այն ժամանակ յես եմ պատասխանատու և հետ կանչեմ խոսքս:

— Սակայն ասացե՛ք ինձ, Պառչյանց, ո՞վ է ձեզ վրդովվում այդպիսի սուտ լուրերով, ո՞վ ասաց ձեզ:

—Իմ ամենամոտ բարեկամս:

— Պառչյանց, ասաց Քրիստափորը, շատ ժամանակ չէ ձեր այստեղ լինելը, յես կարծում եյի, վոր յեթե դուք մի բարեկամ շահել եք մեր մեջ՝ այն էլ յես եյի լինելու, յերևում է, վոր դուք արդեն ծանոթություններ եք սկսել և այն ձեզ համար վտանգավոր ծանոթություններ: Այո՛, շեշտեց նա, յես այժմ իմացա, տիրացու Կարապետն է ձեր բարեկամը, նա յե ձեզ վրդովում:

—Տիրացու Կարապետին յես հարգում եմ, ասացի, բայց նորանից յերբեք այդպիսի խոսքեր չեմ լսել:

—Մնա, մնա, ասաց և վեր կացավ Քրիստափորը և նորա հետ մյուսները. յես կգտնեմ ձեր ծածկամոտ բարեկամին:

Խեղճ Կարապետ Աբգարյանց, դու քո հացը կերար, յեթե Ապուլյաց աղաները մի նշանախեցի չափ կասկած հաստատեն վերադ, տնով տեղով փախեք Ապուլխից. բայց ուրախ յեղիր, վոր ճշմարտությունը չի թաղվիլ և դու կարդարանաս:

17

66 Ժամը տասին մոտ նույն օրը յես վշտացած սրտիվ գնում եյի հիշյալ Կարապետ Աբգարյանցի մոտ. պարզ, մի ինքնակիրթ, բայց ազնիվ ձգտումներով յերիտասարդ եր. պետք է անցնեյի Ապուլյաց շուկայով:



Ապուլեցիների շուկան մի 100 սաժենաչափ տեղ է գյուղի կենտրոնումը, յերկու կողմից 500-ի չափ խանութներ. այստեղ է կատարվում ապուլեցվոց մեծ վաճառականությունը, այս շուկայի փոքր խանութները կապ ունեն Ռուսաստանի և Յեվրոպայի մեծ առևտրական տների հետ: Ամեն ապուլեցի վաճառական է, նոցա առևտուրը մետաքսի և բամբակի մեջն է, նոցա ձեռքին է, կարելի յե ասել, Անդրկովկասի այդ յերկու արդյունաբերության արտահանությունը դեպի Ռուսաստան և Յեվրոպա. և ահա այդ համաշխարհական վաճառականաց կենտրոնատեղը Ապուլխն է: Ժողովում է ապուլեցին Յերևանից, Նուխիից բամբակն և մետաքսը, ուղարկում է նույն տեղից յուրյանց գործակալներին մեծամեծ քաղաքներում, և ձմեռը վերադառնում յուր ընտանյաց գիրկը հանգիստ առնելու:

Ուրեմն պետք է լիներ մի կենտրոն, ուր Ապուլյաց վաճառականները մտքերը միմյանց հայտնեյին, ուրտեղից գրեյին և տանային յուրյանց հաշիվներն ու թղթակցությունքը. և ահա այս մի քանի խանութը իսկական նշանակությամբ այդ կենտրոնն է, ապուլեցվոց բիրժան է: Ճաշից հետո միայն մանրավաճառ խանութպաներին կհանդիպես այստեղ, իսկ առավոտը բոլոր ապուլեցիներին:

Անցնում եմ այդ առավոտ շուկայով. զարմացա, վոր ձորի պատերը բարձրացա ու ամբողջ շուկայում աչքիս վոչ մի մարդ չընկավ, կարծես շուկան փակ լինի. բայց խանութները բաց են յերևում. ձայն, շարժում, վոչինչ չկա: Պետք է նկատել ի պատիվ ապուլեցվոց և այս, վոր 100-ավոր ապուլեցիների մի տեղ ժողոված ժամանակն էլ վոչինչ աղաղակ և անկարգ գոռում-գոչյուններ չի լսվել. հայհոյանք, կռիվ, ծեծ ու թակ, անպատճառ ծաղրածություններ, վոր [հատուկ]*) է մյուս գյուղերի և առհասարակ Կովկասու անկիրթ ժողովուրդի համար, այստեղ չես լսիլ. քաղա-

*) Տեքստում՝ «անբաժան»։ Թիչ առաջ «հատուկ» բառը Պռոշյանցը նույն առնչությամբ գործ է ածում մի ջնջված արտահայտության մեջ։

67 քավարություն վերին ատյանի, համեստություն, փոխադարձ հարգանք՝ ագուլեցու հատկությունն է:

Զարմանքս վոչ այնքան խանութների բացության համար եր. յես գիտեյի, վոր յեթե բոլոր կրպակները վողջ որերով ագուլեցիք բաց ձգեն և մտնեն տները, վոչինչ չի պակասել, բայց թե ո՞ւր են այս մարդիկը:

Գտնում եմ հայացքս ուղղակի շուկայի յերկայնությամբ դարձրած: Բավական եր քայլափոխս տեղից պլոկես աջ ծուեյլի և ահա բոլոր ժողովուրդը Միքայելյանցի[182] խանութի առաջին ամբոխված կտեսնեյի. մեռյալ լռություն եր: Մի ձայն միայն ընդհատեց խաղաղությունը. ահա անցնում է պ. Պռոշյանցը:

—Խնդրեցե՛ք ներս, լսվեցավ խանութից Քրիստափորի ձայնը: Սպասել չավել, ճանապարհ բացվեցավ և յես բարեվ տալով ամենքին՝ ներս մտա:

Նստած եյին Քրիստափորը և յերկու — յերեք առաջավորները, մյուսները վոտքի վերա եյին:

Գովելի յե ագուլեցվոց այս նահապետական սովորությունը, մեծի առաջին վոքրը միշտ վոտքի վերա յե, Տեր-Մկրտչյան տան ժառանգների դիմաց ամենքը կանգնած են. մանավանդ յերբ փայտին հենված հառաջ կգար Ագուլյաց մեծ նահապետ Մկրտիչ աղեն: — Աղեն յեկավ, պատկառանոք քչփչում եյին իրարու ամենքը և վոտքի կացած սպասում:

Յեվ ահա յեկավ ծերունին, համեստ ժպիտով գլխի բարբառով ընդհանուր բարև տվեց և ծանրաքայլ հառաջ գնաց նստեց վորևե խանութի առջև դրած յերկար նստարանի վերա: Գալիս եյին ահա առաջավորներն ըստ ավագության, հերթաբար գլուխ իջեցնում և մի սաժենաչափ հեռավորության շուրջ բոլորում ծերունուն: — Իշկյահե՛ք, նստայհե՛ք (յեկեք, նստեցեք), հրամայում է մեղմաբար Մկրտիչ աղեն: Վոչ վոք չի շարժվում: Իշկյահե՛ք, տեղ է ցույց տալիս յուր նստարանի վերա և ահա ծանր ու պարկեշտությամբ մոտ է գալիս աղա Հայրապետ Արասխանյանցը և յերկու–յերեքը:

Այստեղ այնուհետև Տեր–Մկրտչյան տան անդամներն ել իրավունք չունեին նստելու. այստեղ տան գլուխն է և



նորա հրամանով յուր վորդիքը պարտավոր են առաջնությունը շնորհել ուրիշներին: Յեվ ահա յես միայն այս գյուղում նկատել եմ մեր նախնյաց ավագության բարձի մնացորդը:

Հայտնի յե, վոր մեր նախարարները ամեն ժողովներում
68 և խնճույքներում ցեղական ավագության կարգով պիտի բազմեյին, յուրաքանչյուր ցեղը գիտեր, թե ինքը քանիերորդ կարգի առանձնաշնորհություն ունի: Ագուլեցիք նախարարական ցեղից չեն, բայց սոցա մեջ ի հնուց անտի ինքն ըստ ինքյան կազմվել է մի այդպիսի ցեղական ավագություն, վորը կայանում է վոչ [թե] փառամոլ ցուցամոլության մեջ, այլ փոխադարձ հարգանաց:

Այդ անաչենների կռիվն ել չի իմացվում: Աղա Մկրտիչն է ամենքի հայրը, ուրեմն և դատավորը, յեկավ, նստեց, լսեց յերկու հակառակորդների դանգատը և յերկու խոսքով վճռեց: Ամեն բան վերջացավ, հաշտությունը և խաղաղությունը թագավորեց:

Յեվ այսպես յես ներս մտա և Քրիստափորի մոտ նստեցի:

—Պարոննե՛ր, ով ինչ գիտե մեր խոսակցության մասին, թող պատմի:— Մեսրոբ վարդապետն այսինչ տեղն ասում եր, վոր Պռոշյանցը պրոտեստանտ է, ասում է մինը: — Թե ժամ չի գնում, կրկնում է յերկրորդը:— Թե հերձվածող է, թե անբարոյական է:— Թե նորան մանուկներ չի կարելի հավատալ:— Թե նորա միտքն է հոգևորականությունը աշխարհքի յերեսից ջնջել: — Թե... Թե... Թե... վերջ չպետք է լիներ ամեն կողմից լսված «Թե»-երին, յեթե յես մեջ չմտնեյի:— Բավական է, խնդրեմ, պարոններ, յես հավատում եմ ձեր խոսքերին, յես սովորված եմ հավատ չընծայել աշխարհումս բարեկամության, ընկերության և աղնիվ գաղափարներին:

—Դեռ ինձ լսիր, խոսում է Քրիստափորը, քո մոտից հուսահատ սրտով վերադառնում եմ տուն և մտնում հորս մոտ:— Լսի՛ր, Քրիստափոր, խոժոռված ասում է հայրս, իսկույն մարդ ուղարկիր այն նոր յեկած վարդապետին, թող այսոր իսկ հեռանա Ագուլիսից: Մեր վարդապետին ել տես և սաստի՛ր մյուս անգամ բերանը մաքուր պահել, ապա թե

վոչ գորան եւ ճանապարհ ցույց տվեք, մի ուրիշը բերել կտանք:

—Ընչո՞ւ հայրիկ:

—Կես ժամ հառաջ յերկուսով ինձ մոտ եկին, աշխարհքումս կեղտոտություններ չմնաց, վոր Պոռչյանցի գլխին չթափեց, անհավատ, անաստված, փարմասոն, անառակ և յես ինչ գիտեմ ընչեր չասաց. յես, ասում եր, ուղարկված եմ տեղակալից հատուկ ձեզ մոտ, վոր խնդրեմ գորան արձակեք. մեր անմիտ վարդապետն էլ նորա գուռնեն եր փչում:

Դեռ շատ պետք է ասեյին, յեթե յես չլռեցնեյի: Հայր
69 սուրբ, ասացի յես, ներողություն մի կրիր, դու մեր սիրտը չես կարող պղտորել. տասը տարի յե ամբողջ գյուղով աշխատում եյինք մի դպրոց ունենալ և չեյինք կարողանում գլուխ բերել, այդ մարդը յերկու խոսքով յերկուսը ստեղծեց, մենք Պոռչյանից բացի լավությունից վոչինչ չենք տեսել: Կարճ ասեմ. յեթե Պոռչյանցը իրավ սատանա էլ է, նա մեզ համար հրեշտակ է յերկնքից իջած: Յեվ նա ուղիղ վոր անմեղ հրեշտակ է, դու նորա համար փոս ես փորում, իսկ նա քո յեկած որից քեզ գովում և փառաբանում է իբրև մեր հոգևորականներից ամենալավը. չկարծես վոր քո արժանավորության համար մեր տանը և ամեն տեղ հյուրասիրվում ես, այդ բոլորը Պոռչյանցին ես պարտական: (Մեսրոպ վարդապետին մի փառավոր հրավերք տվին Տեր-Մկրտչյանք իմ խնդրանոք): Ուզում եր նորից սկսել, բայց յես հիվանդություն պատճառեցի և խնդրեցի թողուլ հեռանալ:

—Յես կամենում եյի շուկայից տուն դառնամ և մարդ ուղարկեմ վարդապետին Ագուլիսը թողնելու և հանկարծ ամենքի բերանից լսում եմ ինչ վոր դու լսեցիր և ելի շատ խոսքեր, վորոնք քո պատիվդ և բարոյականությունդ են շոշափում, իսկ սոքա ամոթ համարեցին քեզ պատմելը:

Դեռ Քրիստափորը չեր վերջացրել և ահա վանքի բակում դպրոցի շինության վերա մշակող Թուրք վարպետներից մեկը ժողովրդի մեջը պատռելով ներս յեկավ և Մեսրոպ վարդապետի վերա մի անվայել անցք պատմեց կես ժամ հառաջ վանքի պարտեզում պատահած, ինքը տեսել է



պատի գլխից և ագուլեցվոց անունը չարատավորելու համար պարտք է համարել գալ աղա Քրիստափորին պատմել:

Յես գլուխս խոնարհեցրի, ամենքը միմյանց յերսի խորհրդավոր ակնարկ ձգեցին, իսկ Քրիստափորը կանչեց վանքի յերեսփոխան Հակոբ Փանյանցին և ուղարկեց վարդապետին հայտնելու, վոր յերկու ժամից Ագուլիսը թողած հեռացած լինի, յեթե վեղարի պատիվը վորքան և իցե հարգում է:

Կամեցա միջնորդել մի [առ] ժամանակ սպասելու, բայց Քրիստափորը առաջին անգամ վերաս բարկացավ. լռի՛ր, քո գործը չէ, ասաց, մեր ընտանեկան խորհուրդներին խառնվել, յեթե շատ ես սիրում վարդապետին, բարի ճանապարհ, կարող ես հետը գնալ:

Յես կոտրվեցա և ներողություն խնդրեցի:

70 — Պոռչյանց, ասաց ինձ Մեսրոպ վարդապետը պ. Կարապետի մոտից վերադարձածին պես, այն անշնորհք ագուլեցիք մարդ են ուղարկել ինձ մոտ, վոր թողնեմ և հեռանամ:

—Յես ի՞նչ անեմ, Սաղմոսն ասում է. «մարդ ի պատուի էր...»[183]:

—Ա՛յ տղա, դու է՞լ ես այդպես ասում:

—Պոռչյա՛նց, ձայն տվեց լուսամուտի տակից մի ժամից հետո վարդապետը:

—Ի՞նչ եք հրամայում:

—Ախար յես գնում եմ է՛:

—Ջհանդամը գնա՛ (վա՛յ ինձ, ասացի այս խոսքը):

—Ա՛յ, անշնորհք... ուրեմն մնաս բարև:

Արդարև անշնորհք, յես ձայն չտվի:

## 18

Առաջիկա տարին, 1868 թվի մի որ[184], հողաբարձությունը և 20-ի չափ առաջավորներ ճաշի յենք հրավիրված Տեր-Մկրտչյանց տանը: Սեղանի ուրախ և զվարթ ժամանակը ներս է գալիս նամակաբերը: Տեր-Մկրտչյանց տանը սովորաբար յես նստում եյի սեղանի ներքի կողմը, Քրիստափորի մոտ. սկզբումը ծերունին և յուր վորդիքը շատ եյին ինձ ստիպում վերև բազմել, բայց յես սիրեցի Քրիստափո-

րին և չէյի ուզում մոտից հեռանալ և այդպես այդ տեղը իմ յեղած ժամանակը վոչ վոք չեր նստել:

Ցես և Քրիստափորը իբրև դրան ամենքից մոտը առնում ենք նամակաբերից ծրարները և լրագիրը (կարծեմ միայն մեր հինավուրց ծերունի «Մեղու»-ն եր)․ մի մեծ ծրար ի անուն Ազուլյաց հոգաբարձության գրավում է իմ ուշադրությունը, մանավանդ յերբ կնիքը Սինոդինն եր․ առանց ներողություն խնդրելու հոգաբարձությունից կտրում եմ կնիքը և կարդում բարձր ձայնով ներփակյալ հրամանը: (Տես սոցա հետ կապված թղթերը)[185]:

Ուշադրությունն ընդհանուր է, ձանձ չի շարժվում: Ավարտել և լռել եմ, ամենքն էլ ինձ պես, չշկլվել, ենք․ վոչ ղանակ, վոչ պատառաքաղ, վոչ ծամել, վոչ խմել, մեռելություն, ինչպես ասած է՝ չար հրեշտակ անց կացավ:

—Եդ ի՞նչ թուղթ եր, մի պատմիր տեսնենք, հրամայեց վերևից աղա Մկրտիչը:

—Մեսրոբ վարդապետը Սինոդին դանդատ է տվել, պատմեցի յես հասկանալի լեզվով, վոր յես անբարոյականացնում եմ ձեր դպրոցները, անհավատ եմ, լուսավորչական չեմ, մոլորեցնում եմ պայծառամիտ աշակերտներին և այլն, և այլն: Հիմա Սինոդը հրամայել է հոգաբարձու-
71 թյանը արձակել ինձ թե՛ տեսչությունից*) և թե՛ ուսուցչությունից, ինձ հետ էլ յեթե կան ուրիշ մոլորեցուցիչներ․ հետո էլ սպառնում է, վոր յեթե հոգաբարձուք կընդդիմանան, Սինոդը քաղաքական իշխանության ձեռքով իրավունք ունի վարվել ինչպես ինքն է իմանում: Կարճ պատմեցի յես բովանդակությունը:

—Տալե՛ք վեր դրեք և ուրախ-ուրախ հաց կերեք, հրամայեց Մկրտիչ աղեն, դառը ժպիտ արտահայտելով յերեսին․ մենք կտեսնենք, թե ո՞վ է անաստված, անհավատ ու անբարոյականը:

Սկսեցինք շարունակել մեր ուրախությունը, կարծես վոչինչ չի յեղել:

* Ցես տեսչությունը վաղուց էյի թողել, ուսուցչական ժողովով էյինք կառավարվում: Ծ. Հ.



—Կգնաք են մյուս վարժապետներին մի լավ խնդիր կգրել տաք կաթողիկոսի անունով, հրամայեց Մկրտիչ աղեն հոգաբարձուներին, կաթողիկոսի և վոչ Սինոդի, հասկանո՞ւմ եք․ գրեցեք, վոր շուտով մի քննիչ ուղարկեն մեր ծախքով Եջմիածնից Պռոշյանցի և վարդապետի արարքները քննելու: Խնդիրը վողջ ժողովրդի անունով և ստորագրությամբ լինի, իսկ հոգաբարձուքդ էլ ձեր կողմից թե կուզեք գրեցեք:

—Ներողություն մի՛ կրեք, Մկրտիչ աղա, ասացի յես, ձեզ հայտնի յե, վոր առաջիկա մայիսին իմ տարիս լրանում է, յես պետք է հեռանամ Ազուլիսից, այնուհետև միջոցը մոտ է, յես կերթամ, դուք էլ ձեր կողմից հայտարարությամբ իմաց կտաք, վոր յես արդեն գնացել եմ․ վնաս չունի, Սինոդը վորքան և բարկացած լինի ինձ վերա, ես կարճ միջոցը թույլ կտա ինձ մինչև ամարային արձակուրդները մնալ:

—Քո գործդ չի՛․ և դու իրավունք չունիս մինչև քննության վերջը Ազուլիսից վոտք դուրս դնել, մենք քեզ չենք թողնիլ:

Ցես լռեցի, ասածն օրինավոր եր․ ծերունին օրենք էս գիտեցել է:

Ինչպես այս կարված գործերից յերևում է, խնդիրը գրվեցավ, կրկնվեցավ, յերեքկնեցավ և վոչինչ չկա:

Այդ լուրը յես շտապեցի հաղորդել Թիֆլիզ իմ բարեկամներից մի քանիսին[185]: Նոցանից մինը խորհուրդ է տալիս ինձ խնայել Ազուլյաց դպրոցներին և իմ աշխատությունս, շտապել ու հառաջ հրաժարական տալ: Ցես լսեցի բարի խորհուրդը:

72 Ազուլիսում փոքր մնաց մի ռոման էս հառաջ էյինք բերում: Ցերիտասարդական վառ յերևակայության ծնունդ եր այն: Ուսուցիչներիցս յերեքը մտադրվեցանք Ազուլիսի փեսայք դառնալ, հավիտյանս մնալ Ազուլիսում և դպրոցը բարեկարգ պահել: Մեր ռոմանն էլ աղդասիրական տեսակից եր: Ցնորքնե՛ր, ցնորքնե՛ր, վորոնք տարիների հետ մտնում են և տարիների հետ անհետանում: Ինչպես տեսնում եք, քամի յեր, մտավ և անց կացավ․․․

Ի՞նչ է նշանակում պատանեկական անփորձ հասակը․

յես մոռացել եմ մի քանի տող դեռ չնորհել իմ Թիֆլիզում թողված, վերոհիշյալ առաջին սիրույս: Բայց յես մեղավոր չեմ, յերևի յուր կողմից կեղծ ու պատիր փաղաքշանքներ եյին, վոր մի քանի տարվան բացակայությունից հետո մի որ գալիս և գտնում եմ տիկնացած: Նորա աղջանունից յես ստեղծել եմ իմ առաջին վիպասանության հերոսուհու անունը Վարդի-թեր: Աշտարակի բարբառով թեր բառը կանաչ, կամ տերև կնշանակե, ուրեմն իմ հերոսուհիս վարդի տերև եր:

Ափսո՛ս խեղճին, ծաղիկ հասակում սառը հողի բաժին յեղավ...

1868 թվի հունիսի վերջերին յես հավիտյանս թողի Ագուլիսը: Մեծ դժվարությամբ կարող յեղա դուրս կորզել ագուլեցիների ձեռքից. ոգնեց ինձ Սինոդի մի համառոտ հրամանը: Կառավարչական մասից գրված եր հողաբարձությանը ըստ հրամանի նորին վեհափառության փութով առաքել «յէջմիածին զերկու հողաբարձուս զպ. Քրիստափոր Տեր Մկրտչեանց և զպ. Բաղդասար Փանեանց վասն կարեւոր գործոյ ուսումնարանին»:

Ագուլեցիք հասկացան, վոր այլ ևս դժվար ե հույս դնել յուրյանց խնդիրների կատարման վերա: Յերկու պարոնները ինձանից մի շաբաթ հետո պիտի փութային Եջմիածին:

Յոթանասնի չափ հետևակներ և հեծյալներ ուղևորեցին ինձ բավականին տարածություն:

73 Մեծ աշակերտները գիժ մոլիների նման առաջ ընկած տխուր և ուրախ յերգեր եյին ասում. ուրախ յերգերը երված սրտի մխիթարանքն եյին:

Ռուբեն Ջալալյանցը ինձ ուղեկից եր, նա աշնանը վերադառնալու յեր. մենք գնացինք Ղարաբաղի բարձրաբերձ լեռներովը Շուշի, այնտեղից Խոթա վանքի յերեք-չորս որու տարածված անտառային և սիզավետ կալվածքի միջից անցնելով Նոր Բայազեդի վրայով մտանք Յերևանու ամարանոց Ծաղկոց ձորը, իսկ այնտեղից լեռներով Ալեքսանդրապոլ: Մենք գնում եյինք Տաճկահայաստանի մերձավոր գավառները ճանապարհորդելու. մեզ հետ ընկերանալու եյին Թիֆլիզից մի յերկու յերիտասարդներ, բայց վորովհետև



նոքա չեկան, մենք չկամեցանք ցավել փչացրած փողերիս վերա, մտածեցինք գոնե Անին տեսնել, վոր այդ ժամանակը դեռ տաճկաց ձեռքին եր[187]:

Ալեքսանդրապոլից տասնի չափ յերիտասարդների հետ յերկու որ Անիում լավ ժամանակ անցկացրինք:

Ծաղկոց ձորում մենք հանդիպեցինք մի յերիտասարդ-տաճկաստանցու՝ Հակոբ անունով, շատ աշխույժ և վառվռուն մարդ եր. նա յեկել եր տեսնել... տեսավ և գնաց... նա մեզ խնդրեց անիծել յուր ճանապարհը և յուր վոտքերին կաղություն խնդրել, վոր ել չվերադառնա... մենք ել բարի գացք և վոչ վերադարձ ցանկացանք... Նա ցանկանում եր յուր հետ 4000-ի չափ մարդկանց կաղությունը... այս ի՞նչ ոտարոտի բնության տեր մարդ ե... չմեղադրենք, աչքերը տված են տեսնելու համար, իսկ միտքը հասկանալու, նա մի քանի անգամ կրկնեց հասարակաց առածը. վնասի կիսաճանապարհից դառնալը խելոքություն ե... Նա վանեցու լեզվով եր խոսում[188]:

Ռուբենի հետ հրաժարական տվինք մենք վերադարձին Աբարանումը. նա գնաց Ծաղկոց ձոր յուրայնոց մոտ, իսկ յես իմ հայրենի Աշտարակը[189]:

## 19

74 Չհաշված այն հին ու նոր ավերակները, վոր յերբեմն յեղել են աստծո տաճարներ, Աշտարակը յերկու ծխական յեկեղեցի ուներ այդ տարին (այժմ յերեք ծխական յեկեղեցի յե)[190]:

Մոտ 500 տուն, Յերևանի նահանգի մեջ Ագուլիսից [հետո] յերկրորդ գյուղը, [Աշտարակը] չուներ մի կանոնավոր դպրոց. յերկու յեկեղեցիների բակում, յերկու տիրացուք հեղերեններով 50, 60-ական յերեխայք գլխներին ժողոված գրագիտություն եյին ուսուցանում:

Յես կամեցա մի տեսակ ծառայել իմ ծննդավայրին, այն նշանավոր գյուղին, վորը հայ պատմության մեջ թեև մի հայտնի տեղ չունի, բայց միշտ յերևելի յե հանդիսացել յուր հանճարավոր զավակներով:

Այդ տարի ամարանոց եյին յեկել Աշտարակ հաշտարար ատյանը[191]. իմ նախածանոթ պ. Մարկոս Դոլուխան-

յանը[192], ինքը հաշտարար դատավորը հավանեց միտքս և խոստացավ գործակցել ինձ: Պ. Դոլուխանյանցին խնդրելս անհիմն չէր. ընդհանրապես անզարգացած ժողովրդի վրա ոչ այնքան համոզմունքը, վորքան ույժը և հարստությունը կազդի: Հաշտարար դատավորին հեշտ էր կարճ հորդորով ներգործել իմ հայրենակիցներիս վրա: Դոլուխանյանցը յուր վրա առավ սկզբնապատճառի դերը՝ բարեկարգել մեր գյուղի դպրոցը:

Մի ժողովրդական ճաշի վրա, ուր գյուղականաց կողմից հրավիրվեցինք հաշտարար ատյանն յուր ծառայողներով և Բյուրականի ամարանոցից գավառապետն յուր խմբով, յերկար քարոզներով խուռն ամբոխին մեծ դժվարությամբ կարող յեղանք հասկացնել յերկու յեկեղեցյաց ծխականներին միաձայն ուժով գործ կատարելու օգտավետությունը:

Մեր գյուղի տունը մեր վորոշ յեկեղեցիներն են քանդել: 40 տարուց հառաջ, պատմում են մեր ծերունիները, ծխական մի յեկեղեցի յեր և գյուղը միաբան և սիրով, այն ժամանակ իմ և քո չի յեղել:

75 Վերջերը, յերբ ժողովրդի կեսը ծխական յեկեղեցի յե արել յուր համար սուրբ Մարիանե ուխտատեղին, բաժան բաժան[ություն] տիրել է Ամենափրկիչ յեկեղեցվո ժողովուրդ[ին]. յեղբայրը հակառակն է գնացել սուրբ Մարիանեյի ծխական հարազատին. քահանայք միմյանց դեմ ատելություն տածելով ժողովրդին էլ նույն տրամադրության մեջ են պահել:

Ապացույց ի միջի այլոց գյուղի ծխական դպրոցներն են և այն դժվարությունը, վոր կրեցինք մենք այդ ճաշի օրը. Դոլուխանյանց, գավառապետ Կամսարական[193], նորա ոգնական պերճախոս Խանաղյանց և այլ աստիճանավորք, զանազան խմբակների բաժանված միություն ենք քարոզում, բայց յերկար միջոց չի հաջողում. ամեն մի յեկեղեցու ժողովուրդ պահանջում է դպրոցն յուր յեկեղեցու բակումը տեսնել. կմեռնենք, ասում են, և մեր յերեխայքը մյուս յեկեղեցին չենք ուղարկիլ. 1000 կաց ու սաս կարգադրելու յե, վոր աշակերտք յերկու բաժին լինին ժամասացության ժամանակ, յերկու յեկեղեցին էլ պայծառ պահեն, վո՛չ, վո՛չ և վո՛չ:



Վերջը պ. Գեորգ Խանաղյանցն յուր ժողովրդականությամբ, համոզելով, քարոզելով, սպառնալով կարող յեղավ միությունը գլուխ բերել:

Այդ ճաշի վրա մի ստորագրություն ևս սկսեցինք. իբրև ի խրախույս իմ հայրենակցացս յես միանվագ 100 մանեթ գրվեցի և քանի դպրոցը մեր կանոնադրության վրա հաստատ գոյություն կունենա՝ տարեկան 20 մանեթ, աստիճանավորները 25-ով, 10-ով գրվեցին ըստ կարողության, յեղան և յերկու—յերեք հոգի աշտարակեցիներից յերեք—չորս մանեթներով գրվողներ, այդպիսով գոյացավ մոտ 400 մանեթ խող: Աշտարակցվոց վոգևորությանը չափ չկար:

Աշտարակում ամարային զով ոդը վայելում էր այդ ժամանակ և մեր գյուղի հարազատ զավակ պ. Նիկողայոս Տեր-Հովսեփյանց[194]. այն ժամանակ կաթողիկոսի սիրելին և թարգմանը. նա միայն ներկա [յեր] և մասնակից չեղավ հասարակաց ուրախությանը:

76 Այդ ժողովում կարդացինք գրածս կանոնադրությունը, ստորագրեցինք, ավելի քաջալերության համար Դոլուխանյանցին պատվավոր տեսուչ և ինձ տեսուչ վորոշեցինք, հոգաբարձուք ընտրեցինք գյուղականներից և վորոշեցինք դպրոցը միացնել սուրբ Մարիանե յեկեղեցու բակի նոր շինության մեջ:

Ճաշից հետո Աշտարակից Վաղարշապատ յուրյանց մըշտական պաշտոնատեղին փոխվեցան հաշտարար և գավառական ատյանները, հանձնելով ինձ և հոգաբարձվոց մյուս որն իսկ միացնել յերկու յեկեղեցու մանուկներին և վարժապետներին ու կարգի բերել:

Վոգևորված ժողովուրդը սիրով համաձայնելով մեր կարգադրությանը՝ յերեկոյին ուրախ սրտով ցրվեցավ:

Հոգաբարձուք աշխույժով խորհրդակցելով հետո՝ խոստացան ինձ վաղը շուտով ժողովել Ամենափրկչի բակը, տանել նույն տեղի աշակերտներին, տանել սուրբ Մարիանե և գործին սկիզբն տալ: Մի շաբաթ էր արդեն ուսուցիչներին յես նախապես ծրագիր և հրահանգներ էյի տվել. ուրեմն ինձ մնում էր կարգել հասկացող հոգաբարձուներից մեկին իմ ոգնական և շտապել դեպի նպատակս, դեպի Թիֆլիզ:

Մյուս օրը Հոգաբարձուք Ամենափրկչի մոտ ժողոված են Ճանճապաննենց[195] անվանյալ հրապարակում խուռն բազմության մեջ, իմ ձիս պատրաստ է սանձը բերանին, անհամբեր սպասում ենք միայն հոգաբարձու, Ամենափրկչի ծխական Սարգիս ավագ քահանա Բղնունուն[196], վորպեսզի տանենք յերեխաներին և յես ճանապարհից ուշ չմնամ:

Տերտերը չկա, «գալիս եմ»— լուր է բերում բանբերը, բայց այդ գալն ուշանում է. վերջապես շատ ուշ շնորհ է բերում և կնճռոտ դեմքով առանց վողջույն տալու ժողովրդի մեջ կանգնում:

—Ուրեմն, պարոններ, գնանք դեպի յեկեղեցին, վերցնենք յերեխաներին միացնենք, յես ուշանում եմ:

77 Հոգաբարձուք դեռ չշարժված, տեր Սարգիսն շտապով հառաջում է ու Ճանճապաննենց նեղ փողոցում հանկարծ յուր քահանայական գավազանի միջից դուրս քաշում մի սուր, ծայրը պատին տալով կտրում ճանապարհը և գոչում խրոխտաբար.— Սուրս կմտնի այստեղից անցնողի և իմ յեկեղեցու աշակերտներին տեղից շարժողի փորը:

Ամենքը ապշում են, ինքը տեր Սարգիսն էր ամենից շատ համաձայնողը և ուրախ ձևացող հոգաբարձուին, մեր հույսն էլ գլխավորապես նորա վերա յե, խոստովանում եմ՝ ունի խելք և հասկացողություն, յեթե կամեցավ, կանի: Չգիտենք ինչ նորանշան գործողություն [է] այս:

—Ամեն տեղ և ժամանակ դու պետք է մեր գյուղի տունը քանդես, բազկին խփելով և աշտարակեցուն հատուկ փառաբանություններով ճանապարհ բացեց դեպի հառաջ հոգաբարձու Խսում Շահազիզյան Կամսարականը[197]. յեկե՛ք, պարոններ, յես կտանեմ, տեսնենք, սա ինչպե՞ս է ինձ արգելում:

Տերտերը սուրը հանած վազեց յեկեղեցու բակը, մտավ դպրոցը և սպառնալյոք գոռաց. յերեխա՛յք, ով ձեզանից հանդգնի տեղից շարժել, սուրս նորա փորը կմտնի: Աշակերտները սարսափեցան և տեղերում մխված մնացին դողալով: Հոգաբարձուք և բազմությունը փոքր էր մնացել տերտերին բրդզդում էյին, յեթե յես չմիջամտեյի:



—Ավելորդ է այսուհետև բարկությունը, ասացի յես, այլևս վոչինչ չի կարելի անել, թույլ տվեք:

Յես դուրս յեկա յեկեղեցու բակից, ժողովուրդն ինձ հետ:

—Փչանաս դու, տեր Սարգիս, ասացի յես, այս ի՞նչ գործեցիր, ամենից մեծ հույսը քեզ վերա յեր և դու խռովության պատճառ յեղար:

—Մարդիկ, հասարակություն, գիտեք սա ո՞վ է, ձայն տվեց տեր Սարգիսը Ճանճապաննենց հրապարակումը. սա փարմասոն, անաստված, անհավատ Շանշյանի աշակերտն է (ելի՞ Շանշյանց): Սա մեր հոգևորականներին չի հավանում, շուն է կոչում:

—Յես այդպես խոսք վոչ ասել եմ և վոչ կասեմ, պատասխանեցի յես, բայց յեթե մեր բոլոր յեկեղեցականքը քեզ նմաններ են լինելու, ժամկոչից մինչև կաթողիկոսը ամենքն էլ շանից վատթար են այն ժամանակն իմ համար:

—Մարդիկ, Աշտարակու հասարակություն, դուք լսեցիք ձեր ականջով, վոր սա իմ կաթողիկոսին շուն կոչեց, դուք վկա՞ յեք:

78 — Վոչ վկա յենք և վոչ լսեցինք, ամո՛թ քեզ, ձայն ձայնի տվեց ամբոխը մի մի օրհնություններ հետը տեր Սարգսին շնորհելով:

—Այս րոպեյիս յես գնում եմ Եջմիածին, խնդիրը ծոցումս է, ասաց տերտերն և փութաց յուր տունը, ձին հեծավ և յեկավ ժողովրդի միջովն անցկացավ դեպի Եջմիածին:

Մի քանի մարդիկ կամեցան հետ պահել տերտերին, բայց հնար չեղավ, հայհոյեց նա միջնորդողներին և արշավեց:

—Գնա՛ քո... Յեթե հաջողեցնես՝ պարծեցիր, մենք ամբողջ գյուղով վկա յենք Պռոշյանցի արդարությանը, մենք էլ սորա հետ Սիբիր կերթանք յեթե տեղը դա, օրհնությունները ուղեկից դրեց Աշտարակա ժողովուրդը տերտերին:

—Պարոննե՛ր, խոսեցա յես, ցավում եմ, վոր մեր միաբանությունը այսպես անբաղդ յելք ունեցավ, յես ճանապարհից հետ չեմ մնալ, ձեզ է մնում ձեր օգուտն ու վնասը խորհել և վկայել ինչ վոր տեսաք. գիտեմ հավատայով,

վոր սորա հետևանքը չար է լինելու և թե ո՞ւմ թելադրությամբ կատարվեցավ այս։

—Մենք էս չատ լավ գիտենք, գոչեցին մի քանիսը. այս նորա գործն է, վոր յերեկ չկամեցավ գիջանել մեր կըրկընակի հրավիրանացը, չնորհք չբերեց մեր ճաշին, յերեկ գիշեր տեր Սարգսին քնած տեղից զարթացնել տվեց, յուր մոտ տարավ, դաս տվեց և այսոր լուսադեմին վաղ առավոտուն ձին հեծավ գնաց Եջմիածին. չլսեցի՞ր, վոր խնդիրը տերտերի ծոցին յերեկ գիշերվանից պատրաստ եր։

Ն. Տեր-Հովսեփյանցն եր գնացողը։

Չերկարացնենք. տանուտեր Սարգիս Շուխյանցին, վորին ինձ ոգնական եյի կարգել, գյուղական դատարանով յերաշխավորական տվի իմ կողմից ի դեպս հարկավորության պաշտպանել դատս տեր Սարգսի հետ և ինքս ցավածսրտով հրաժարական տվի Աշտարակին դեպի Թիֆլիզ, հրահանգներ տալով հոգաբարձությանը հաջողեցնել միությունը։

20

79 Թիֆլիզը նշանավոր փոփոխության եր յենթարկվել աչքումս, հայախոսությունը և ազգային կրթությունը պիտույք եր դարձել. գեղեցիկ սեռի մեջ հայերեն խոսելը [1 անընթեռնելի] նման բան եր դարձել. հայ թատրոնը Զմշկյանցի վարչության ներքո շարունակվում եր, բայց հայ աղջկանց դպրոցներ չկային. չգիտեմ ընչու Բեթղեհեմինը փակվել եր, շարունակվում եյին միայն բարեգործական ծխականները։ Այդ դրության մեջ գտա յես 1868 թվի աշնանը Թիֆլիզը։

Նորից արյունս շարժեց, իմ իդեալ իգական սեռի կրթության գործը պատկերացավ աչքիս առաջին։

Որիորդ. Աշխեն Դոլգյան (հանգուցյալ)[198], Մարկոս Աղաբեգյանի քենին [199], յերևեցավ պատրաստ, անձնվեր։

Չդժվարացա նորան համոզել շարունակել իմ Գայանյան դպրոցը, վոր արդեն փակված եր, բայց պաշտոնական իրավունքը տիկին Հովհաննիսյանի ձեռքին եր. իմ բացակայության միջոց[ին] տիկինը դիմած է յեղել Մակար սրբազան առաջնորդին և գրավոր իրավունք ստացել։



Տիկին Հովհաննիսյանը հանձն առավ իմ խնդրանոք հոգաբարձությունը, Զմշկյանցը, տեր Մուշեղը, Դավթյանցը և մի քանի յերիտասարդներ ձրի դասատվություն խոստացան ինձ և գործը սկսեցինք։

Աշխենն ունեցավ մինչև 20 աշակերտուհի։

Իմ սեպհական գործս ֆոտոգրաֆիան եր վոր ունեյի։ Այդ ձմեռ Աշխենի դպրոցը լավ եր հառաջ գնում և մեծ ապագա յեր խոստանում։

Այս ժամանակն եր արդեն, ինչպես վերն ասել եմ, Ստեփանեականք բացին Բ. Գայանյան դպրոցը։ Բայց մի՞թե ուրիշ անուն չկար, վոր Գայանյան պատրաստ բառը հատկացրին յուրյանց դպրոցին։ Այդ անունը և հիմնադիրների տեղի անտեղի հետամտուքներն եյին, վոր հարված տվին
80 Ա. Գայանյան անդրանիկ դպրոցին։ Նա փակվեցավ և Աշխենը փոխվեց Մարիամյան դպրոցը վարժուհի։

Յես արդեն 1869 թվին ամուսնացել եյի Աշխենի փոքրիկ քրոջ՝ Աննայի վերա և ընտանետեր ֆոտոգրաֆ եյի, ուրիշ վոչինչ։

Մի որ պոլիցիայից թուղթ եմ ստանում, վորով հայտնվում է, վոր յես վասն վատ վարուց և վասն վոչ ծառայելո յեկեղեցվո արձակված եմ հոգևորականությունից (իմ հայրս չորս աստիճանավոր դպիր եր յեղել, մինչև այդ որը յես չգիտեյի թե հոգևորական եմ) և զրկվում եմ ազգային դպրոցների դասատվության իրավունքից։ Ընդհանուր չրջաբերականը Սինոդի կողմից հրատարակվել է ամբողջ Ռուսաստանում և յես որենքի հիման վերա հրավիրվում եմ Եջմիածնի գավառապետին վճարելու 18 մանեթ քանի կոպեկ հարկը, նույնպես և պարտավորվում եմ գնալ Եջմիածին բնակիչ գրվելու։

Բարեբաղդաբար, յես մտադիր լինելով կատարելագործվել ֆոտոգրաֆիական արհեստի մեջ պոլսեցի Աբդուլլահ յեղբարց գործարանում, արտասահմանի անցաթուղթը ծոցիս պատրաստ եմ ունենում, ցույց եմ տալիս պոլիցիային և վճարելով վորոշյալ գումարը, չեմ ուղարկվում Յերևան։

— Մաքրեցե՛ք ձեր վերայից «վասն վատ վարուց» կեղտը, խորհուրդ է տալիս քաղաքապետը և յես սրտակոտոր

շտապում եմ Գեորգ կաթողիկոսի մոտ բացատրություն խնդրելու:

Այդ ժամանակը Գեորգ կաթողիկոսը Թիֆլիզումն էր[20].

Յերեք որ շարունակ մերժվում եմ շաթիրներից զանազան պատրվակներով, չորրորդ օրը, իմանալով ներս չընդունելուս բուն պատճառը, կաթողիկոսի մոտ հաճախող Մամիկոնյան Հովհաննես աղայի (վախճանված) միջնորդությամբ արժանանում եմ աուդիենցիայի:

— Ո՞վ եք դուք, աջ տալուց հետո սառն դեմքով հարցնում է ինձ կաթողիկոսը:

— Պերճ Պռոշյանը:

— Չեմ ճանաչում, պատասխանում է կաթողիկոսը:

81 — Այն յերիտասարդը, վեհափառ տեր, վորի ճակատը արժանացել է ձեր սուրբ համբույրին...

— Հիշեցի, հիշեցի, ի՞նչ կուզեք:

— Կցանկանայի իմանալ, թե վո՞ր հանցանացս համար յես Սինոդի բարկությանն եմ յենթարկվել և այսպես չարաչար պատժվել:

— Դուք մոռացե՞լ եք Ազուլյաց անցքերը, Մեսրոպ վարդապետի հայտարարությունը:

— Իսկ ի՞նչ տեղ են ազուլեցվոց յեղյակի խնդիրները, ո՞ւր մնաց քննիչը:

— Ի՞նչ մեղավոր եմ, վոր հողաբարձուները չլսեցին հրավիրանացս և չեկան:

— Վեհափառ տեր, առացի յես տաքացած, դուք ինքներդ ձեր օծման օրը վկայեցիք իմ անմեղության և իմ թշնամյաց [1 անընթեռնելի] համար, ինքյանքդ Ռուսաստանի սահմանը վոտ դրած օրից մինչև Եջմիածին լսել եյիք միմիայն մի մարդուց իմ վերա բամբասանքներ, դուք ինքյանքդ լսեցիք Ազուլյաց պատգամավորից իմ աշխատությունները, յես ձեզանից իբրև հայ ժողովրդի հորից պատվո և վոչ պատժո եյի արժանի և սպասում. յես այսոր էլ չեմ յերկբայում, թե ձեզ քաջ հայտնի յե Մեսրոպ վարդապետին հայտարարություն գրել գրդողը, բայց չգիտեմ, թե ընչո՞ւ այս անգամ իմ թշնամիքս կարողացել են ձեր վեհափառության համոզմունքը փոխել: Ընչո՞ւ ապա Սինոդը չի





Պ. Պռոշյան, Վ. Տերմազանյան և Վ. Տախտաքունյան: 60-ական թ. թ.: Փոտո:



Պ. Պռոշյան. 70-ական թ. թ. Փոտո: Սեփականություն Պետ. Գրական Թանգարանի:



Պռոշյանի կինը, Աննա Դոլգյանը՝ յերիտասարդ հասակում: Լուսանկար Պռոշյանի: Սեփականություն Պետ. Գրական Թանգարանի:

հիմնել յուր հրամանը որևէ փաստի վերա, այլ անորոշ կերպիվ «վասն վատ վարուց» գրելով դատապարտել է անմեղիս:

— Ագուլյաց անցքը միացրինք Աշտարակում արած հայհոյությանդ վերա և դատապարտեցինք:

— Յեվ դուք հավատացի՞ք, թե յես հայ հոգևորականության դեմ այնպես անարգաբար կխոսեյի:

— Միայն տերտերը չեր, կային ուրիշները, վորոնք կվկայեյին թե լսել են աշտարակեցիներից:

— Ո՞ւյք են:

— Ձեր համագյուղացիդ եր, բայց անունը չեմ ասիլ· ինքն էլ արժանավոր և ինձի սիրելի անձն է[201]:

—Յես վաղուց գիտեյի այդ: Բայց վերջապես մի՞թե Ագուլյաց յերկու հոգաբարձուք, պ. Քրիստափոր Տեր-Մկրտչյանը և Բաղդասար Փանյանցը, վորոնց Սինոդի ձեռքով կանչել եյիք, չեկան Եջմիածին:

— Այո՛, վորդյակ, չեկան, մենք ևս Աշտարակում արածդ հայհոյությունը վարդապետի հայտարարության վերա բարդելով քեզ արտաքսեցինք:

— Ինչպե՞ս թե չեկան Ագուլյաց հոգաբարձուքը:

— Չեկան:

— Յեկան:

— Չեկան:

— Յեկան-չեկանների վերջ չեր լինելու, յեթե շաթիրը ներս չգար և չհայտներ, վոր ագուլեցի աղա Քրիստափոր Տեր-Մկրտչյանը խնդրում է ներս գալ:

Ընթերցողը կկարծի, ինչպես և կաթողիկոսը կարծեց, թե Քրիստափորի հետ կանխավ մտադրած եր մեր ներկա-
82 յությունը:— Բոլորովին: Քրիստափորն այդ ժամանակ Թիֆլիզումն եր, այո՛, և մենք հաճախ տեսակցում եյինք, նորանից յես լսել եյի Եջմիածնում կաթողիկոսին տեսնելը, բայց մեր ներկա այցելության համար խոսք չեր յեղել մեր մեջ:

— Որհնյալ է աստված, գոչեցի յես, յերբ շաթիրի խոսքից վեհափառը գետնին նայեց և հրամայեց ներս խընդ-

րել. օրհնյալ է աստված, այժմ ճշմարտությունը կպարզվի:

— Գ. Քրիստափոր, թույլ չտվի յես կաթողիկոսին խոսելը, ասացեք խնդրեմ, դուք և Բաղդասար Փանյանցը չգնացի՞ք Էջմիածին Սինոդի հրամանին համաձայն:

— Յեկա՞ք, հարցրեց կաթողիկոսը:

— Ինչպե՞ս, վեհափառ տեր, մի՞թե չեք հիշում, յերբ յերկուսս ներկայացանք ձեր վեհափառությանը:

— Հապա ի՞նչ խոսեցա յես ձեզ հետ:

— Դուք հրամայեցիք արձակել Պռոշյանցին, ապա թե վոչ մեր դպրոցները կփակեք. իսկ մենք մեր կողմից հայտնելով ձեզ Պռոշյանցի ինքնակամ հրաժարվելը, խնդրեցինք քննությունը շարունակել: «Այլ ևս քննության հարկ չկա», հրամայեցիք դուք. իսկ յերբ մենք պնդեցինք, դուք ասացիք՝ «ընտրեցեք յերկուսից մեկը, կամ քննություն, կամ դպրոցաց փակումն»: Մենք, լսելով ձեր խիստ վճիռը, լավ համարեցինք լռել: Բայց, վեհափառ տեր, ծոցից մի թուղթ հանելով շարունակեց Քրիստափորը, այս նոր խնդրով ագուլեցիք կրկին քննություն են խնդրում, այդ իսկ գործով յես այժմ յեկել եմ ձեզ մոտ:

— Կուզեք նե, կքննենք:

— Ագուլեցիք կուզեն կամ վոչ, յուրյանց գործն է, մեզ մոտ յես, սակայն վորովհետև ի տարապարտուց յես եմ զոհ գնում, յես ինքս կխնդրեմ, կաղաչեմ, վոտքերդ կընկնեմ, վերջապես կպահանջեմ շարունակել քննությունը… և…

Խոսքս բերանումս սառեց, ներս մտավ պ. Ն. Տեր-Հով-
83 սեփյանցը:

— Նիկողայոս, ընդհատեց ինձ կաթողիկոսը, ահա քո համագյուղացին, տար, հարցուր, իմացի՛ր ինչ կուզե, յեկ ինձ պատմե:

— Ուղիղ վճիռ, ասացի հուսահատ և առանց համբուրելու (վա՛յ ինձ) հայրապետական ինձ պարզած սուրբ աջը, հետևեցի Տեր-Հովսեփյանցին:

Յերկու կողմից միմյանց դեմ կծողական խոսքեր արտասանելուց հետո, Նիկողայոսի հետ հաշտվեցանք. կերևի



նա ինձանից բարեսիրտ եր, հաշտության առաջարկողը Նիկողայոսն եր. յես էլ իրանից հետ չմնացի, իսկույն ընդունեցի:

Նիկողայոսը թելադրեց ինձ յուր սենեկում մի խնդիր, վորով յես ապացուցանելով իմ անմեղությունս, խնդրում եմ կաթողիկոսից վերահասու լինել ճշմարտությանը՝ կամ փոխել վճիռը և կամ ավելի խստաբար պատժել:

Նիկողայոսը խոստացավ հաջող յելք տալ գործին. յես եմ ընթացք տվել, ասաց, յես կքանդեմ:

—Ուղարկեցինք Սինոդ փոխել, ասաց Նիկողայոսը մի օր:

Յես տկարացա այդ միջոցը, բժիշկներն ինձ ուղարկեցին հայրենիք[201ա], և ո՛վ զարմանացս, Սինոդում դրա իմ խնդիրս հետևյալ մակագրությամբ. «տամ ի տնօրէնութիւն Սինօդի»:

Բնական եր, վոր վոչինչ տնօրինություն չեր հետևել Սինոդի կողմից: Յես վշտացած Նիկողայոսի խոստմունքից աշնանը շտապեցի Թիֆլիզ բացատրություն պահանջելու (ասա ի՞նչ իրավունքով), բայց իմ քաղաք մտած օրս կաթողիկոսը յերկյուղ կրելով Թիֆլիզում յերևացած խոլերայի նշաններից, յուր շքախմբով փութաց Էջմիածին[202], յես մնացի ձեռնունայն:

Իմ և կաթողիկոսի մեջ մի նույնպիսի խոսակցություն բացվեց հետևյալ 1872 թվին Ալեքսանդրապոլում մերձ Հառիճո վանքումը[203]: Կաթողիկոսը այնտեղ ամարանոց եր գնացել, իսկ յես ընտանյոք այդ ամառ Ալեքսանդրապոլումն եյի փոտոգրաֆիայով:

Վարդավառի տոնին Հառիճո մեծ ուխտավորների թվում եյի ինքս ևս Ալեքսանդրապոլի ուսուցչական խմբի[204] և վարվառուն բժիշկ Գաբրիել Հովհաննիսյանցի[205] հետ յես գնացել եյի վանքի պատկերը նկարելու:

Տեր Հեվսեփ ավագ քահանա Կոստանյանցի[206] միջնոր-
84 դությամբ յերիտասարդներս արժանացանք վեհափառի օրհնությանը:

Տղայոց դուրս գնալուց հետո յեր, վոր յես խոսք բացի կաթողիկոսի հետ իմ գործիս մասին և խնդրեցի վոչ

չնորհք, այլ արդար դատաստան․ ավելորդ է մեր տաք վիճաբանությունը նկարագրել, կաթողիկոսը սաստիկ բարկացավ, նա յերկյուղ կրեց իմ կրքերից, բայց յես հավատացրի, վոր հայրապետությունը սիրող հայերից մեկն եմ և յուր հարազատ հոգևոր զավակը:

— Յեթե այդպես է՝ խոստանում եմ փոխել վճիռը, քաղցրացավ հոգևոր տերը, մանավանդ վոր մեր նորընծա վարդապետը պատմել է քո անմեղությունը, նա վկա է և յես հավատում յեմ, վոր դու կրքերի զոհ ես: Նորընծա վարդապետը սրբազան Մանկունին[207] եր*):

Հետևյալ շաբաթ յես ուղարկեցի վեհափառին նվեր— յուր հրամանին համաձայն— Հառիճա վանքի պատկերը, վորը սիրով ընդունել եր:

— Աշնանն յեկ Եջմիածին, գրել եր ինձ Հառիճից կաթողիկոսի ձեռնասուն Մանկունի նորընծա վարդապետը, վեհափառը խոստանում է վճիռը փոխել:

Սեպտեմբերին այդ տարին ընտանյոք Աշտարակումն անց կացրինք․ այնտեղ եր և Նիկողայոս Տեր–Հովսեփյանցըն յուր դերդաստանով․ Ալեքսանդրապոլում այս ամառ Տեր-Հովսեփյանցի հետ մենք նորից հաշտվել եյինք և շատ քաղցր ուրախ ժամանակ անցկացրինք միասին այդ աշունը:

Վեհափառը Եջմիածնում ինձ նորից ընդունեց քաղցր դեմքով, նորոգեց յուր խոստումը փոխելու մասին և հուսալիր Թիֆլիզ ուղարկեց:

## 21

«Մշակ»-ի առիթով մի ակնարկ դարձնել հայ պարբերական հրատարակության վերա, վորքան ինձ է հայտնի, այստեղ կարևորություն եմ զգում յես:

Ինչպես հայտնի յե, 1872 թվին[208] լույս տեսավ «Մշակ»-ը Գր․ Արծրունու խմբագրությամբ և դեռ առաջին տարին մեծ ընդունելություն գտավ մեր մեջ**):

---

*) Այս նախադասությունն ավելացրած է հետագայում:

**) 80-րդ եջի լուսանցքում արված է հետևյալ դիտողությունը, վոր հարմար համարվեց զետեղել այստեղ.
[18] 70 թվի սկզբներին հրատարակվեց «Մշակ»-ը, յես նորա գործակից ընկերություններից մեկն եյի և կեղծ անունով եյի հոդվածներ գրում: [18] 59 թվից միշտ գործակցել եմ պարբերական հայ թերթերում, բայց և յերբեք իմ անունով: Անունս ստորագրելն իմ աչքում փառամոլություն է, վորից միշտ փախս եմ տվել[209]:



«Մշակ»-ի խմբագիրը մինչև յուր լրագիրը հայտնի
85 յեր ընթերցող հասարակությանը, վորքան հիշում եմ, «Հայկական Աշխարհ»-ում գրած մի քանի հոդվածներով, վորոնք յուրյանց խորթ և ոտարոտի լեզվովը չեյին ել կարող ուշադրություն գրավել[210]:

Յեվ ահա 1869 թվի վերջերումը հրատարակվում է Արծրունու կողմից «Մշակ»-ի հայտարարությունը[211], վորի միայն բառերը կարելի յեր կիսով չափ հայերեն համարել: Ընդհանուր ծիծաղը տալիս է յուր արհամարհական վճիռը և մեծամասնությունը գուշակում է անհաջողություն:

Գրիգոր Արծրունին կամ չլսելով հասարակաց կարծիքը, կամ արհամարհելով լույս է հանում «Մշակ»-ի առաջին համարը յուր ժամանակին և մեծ ծափահարությամբ ընդունելություն է գտնում: Ամենեքյան զարմանում են, բայց մի բուռը յերիտասարդներ ինչպես սպասում եյին, այնպես ել տեսան:

Ասածս պարոնները «Մշակ»-ի խմբագրության անդամներն եյին՝ շուրջ բոլորած Արծրունուն:

Այսպես է սկսվում գործը: Գրիգոր Արծրունին, տոկուն բնավորության տեր, չվհատված հայ լեզվի մեջ յուր խակության վերա, շրջապատում է յուրյան Թիֆլիզի այդ ժամանակի բարձր ուսում ստացած հայազգի համալսարանականներ[ով] և դորանց հետ կամենում է գործել:— Յես, կրկնում եր հաճախ Արծրունին, վեց ամսաչափ շաբաթը մի ժողով անելով տանջվեցի և այդ պարոններից վոչ մի հոդված չըտեսա: Նոցա գործն եր միայն ժողովում զանազան հեգնություններով սորա նորա պակասությունները քննադատել և մեր մտադրյալ գործի մասին լռությամբ անցնել: Կգրեմ, անպատճառ մյուս շաբաթին պատրաստ կունենամ հոդված ապագա «Մշակ»-ի համար: Այս հույսով ժողովը կցրվեր և մյուս շաբաթ ձեռնունայն նորից կհավաքվեր:

Ճարահատ Արծրունին մտածում է դիմել թերուս հա-
յագետներին: Յերկու վերջին ամիսներին այս նոր խումբը
ոչ միայն կարդում էր խմբագրական ժողովներում յուր
թվաց քանակությամբ նոր նոր հոդվածներ, խմբագրական
86 կրիտիկայով սրբագրում և առաջիկա համարի հրատարա-
կության համար պահում, այլ և կարգի բերում խմբա-
գրության մեջ ստացված զանազան հոդվածները:

Գր. Արծրունին խնդրում էր, նա յուր առաքյալները
ոչ բազմաղետ դպիրներից և փարիսեցիներից, այլ հա-
սարակ ձկնորսներից պատրաստեց և հաջողեցավ[212]:

Արդարև առաքյալներ: Նոցա գործը միայն խմբագրա-
կան հոդվածներ գրելը չէր, նոցանից ամեն մինը մի յերկ-
րից էր, հետևաբար ծանոթ տեղական կյանքի, գրությանց
և անձանց հետ:

Դեռ Արծրունու՝ բաբելոնյան խառնակությանց արգա-
սիք հայտարարության ծնունդ «Մշակ»-ը չդուրս յեկած,
խմբի անդամներն յուրյանց նամակներով և ծանոթությու-
ններով 600-ի մոտ բաժանորդների ցուցակ ստացան առավե-
լապես գավառներից, խոստումներ արին, հավատացրին
յուրյանց ծանոթներին «Մշակ»-ի հաջողության և կոկուն
լեզվի համար և ասածներն իրոք ապացուցեցին:— Ինչ-
պե՞ս:— Ա՛ռ կարդա «Մշակ»-ի առաջին համարում Գր.
Արծրունու առաջնորդող հոդվածը և լեզուն համեմատիր
հայտարարությանը: Մի քանի ամսի մեջ Արծրունին հայե-
րեն գրել է սովորել, կխոստովանիս դու՝ ընթերցող[213]:—
Այո՛, յես էլ տեսնում եմ: Գիտնական Արծրունին ամոթ չի
համարել յուր յեվրոպական հայացքով գրված հոդվածը
յենթարկել մի քանի թերուսների քննության, նա յուր
ձեռքով գրիչը հանձնել է նույն հայագետներին՝ հայացնել
յուր հոդվածը:

Խմբագրության անդամները անձնվերներ դուրս յեկան.
առանց ինչ ակնկալության, հայ գրականությանը ծառայելու
միայն մաքով, ցերեկը նոքա յուրյանց համար մի կտոր
հացի քամակից են վազում, իսկ գիշերները քունը կտրած
մինչև կես գիշեր ևս ավելի պարապում «Մշակ»-ի խմբ-
ագրատանը, շատերը մինչև տպարան են վազում, որը



մուր է քսում, որը սրբագրությամբ է պարապած և որ-
ը տառեր է ցրվում:

—Մեզ վոչինչ նյութական վարձատրություն պետք չէ,
պնդում են ամենքը Արծրունուն, յեթե կհամաձայնիս ողու-
որ մինչև անգամ քեզ, վնասը ընկերությանը: Փառք աստու-
ծո, վնաս չեղավ և ողտի կոպեկից անգամ չշահ-
վեցանք[214]:

Խոսք չկա, Արծրունու աշխատասիրությունը և նորա
87 խմբագրական ընդունակությունքն առաջին ղեկավարողն էր
լրագրի, բայց մյուս անդամաց հայրենասիրությունը, ազգա-
յին կյանքին և պիտույքներին ծանոթ լինելը «Մշակ»-ին
հայության շավղով ընթանալ տվողն յեղավ: Ինքը Գրիգոր
Արծրունին այն աստիճան հուսացած էր այդ թերուսների
վերա, որ մի ժամանակ չէր կամենում թույլ տալ լոկ
խմբագրության անդամ ստորագրվիլ նոցա, այլ ուղիղ
խմբագիր, պահելով յուր վերա պատասխանատու խմբագրի
կոչումը, բայց նոցա աչքերը չեյին շլացնում փքուն բառե-
րը: Բավական էր, որ յուրյանք գործում եյին, յուրյանց
ձայնը հավասարության իրավունք ուներ խմբագրության
գործում և այդ իրավունքի մեծ մասը վերաշնորհում եյին
Գր. Արծրունու հմտությանը և բարձր ուսումին[215]:

«Մշակ»-ի սկզբնական խմբի անդամների անունները ան-
տեղի չեմ համարում հիշել[216]: Մի մասամբ իրավունք ևս
տալիս եմ նոցա առն աչքով նայել Արծրունու ձեռնարկու-
թյանը, նոցա յեսականությանը անարգանք էր զուցե յուր-
յանց գլուխ տեսնել հավասար կրթության տեր մեկին: Իսկ
Արծրունու հետ ծառայելու պատիվ համարողներն եյին.
Պողոս Իզմայիլյանց (ոչ մի բառ հայերեն չգիտեցող)[217],
Վասիլ Շահվերդյանց (հայ լեզվով խոսող իբրև լոռեցի,
բայց գրականական լեզվին անծանոթ: Այս յերկու պարոն-
ները համալսարանական թերուսներ եյին), Ստեփաննոս
Պալասանյանց (սորան թերուս համարենք, որ Ռուսաստա-
նի համալսարաններում չի յեղել)[218], Գեորգ Զմշկյանց,
Միհրդատ Ամրիկյան. Հակոբ Մելիք-Հակոբյանց (Րաֆֆի),
Նիկողայոս Լալայանց և հիշատակագիրս— բուն թերուս-
ներս:

Բարի նախանձը, մրցումն, ըստ Արծրունու մրցությունը առաջին շարժառիթն է գործունեության ժամանակ:

Արծրունու ժողովները դրդեց[ին] յուր նախկին համալսարանական խմբին, նոքա թեև ընդհատված խմբից, բայց յերբեմնապես բարեհաճում էյին շնորհ բերել Թերուններին ժողովը. Նոքա կերևի նախադուշակեցին «Մշակ»-ի ապագա հաջողությունքը և հասարակաց կարծիքի հառաջ արդարանալու համար հավաքվեցան մեր հին ավուրց լրագրի շուրջը:

«Մեղու»-ն, Մանդինյան տեր Ստեփանի մոտ ծնունդը,
88 Սիմոնյանցի[219] ձեռքն անցնելուց հետո, Սիմոնյանցի համար մի խաղալիք, մի մարմնամարզության գործիք էր, իսկ յուր թշնամյաց դեմ սատակիչ զենք: Յեկան, գնացին 1858 թվականից զանազան պարբերական հայ հրատարակությունք Ռուսաստանի այլ և այլ քաղաքներում և միայն Պետրոս Սիմոնյանցի խաղալիքը մնաց հրապարակում: «Հյուսիսափայլ»[220], «Ճռաքաղ»[221], «Կռունկ հայոց աշխարհին»[222] (վերջը Ստեփանեյի խմբագրությամբ՝ «Հայոց աշխարհի կռունկ», «Հայկական աշխարհի կռունկ», «Հայկական աշխարհ»)[223], «Գարուն»[224], «Վաճառական»[225], «Մասյաց Աղավնի»[226], այս ամենը մի մի մոլորակներ էյին, 60-ական թվականների ընդհանուր հոսանքի ծնունդ, վորոնք կարճատև կյանքով ըստ կարողության յուրյանց ծառայությունը արին: Մնաց միմիայն «Մեղու»-ն ուժահատ, նիհարացած, անդամալույծ և վերջին շնչումը: Ստորագրողներ չկային, շունչը վաղուց փչած կլիներ նա, յեթե Սիմոնյանցին պետք չլիներ յերբեմն յերբեմն յուր խաղալիքը հակառակորդաց դեմ գործ դնելու:

Պառավական առակների և անճոռնի թարգմանությանց, սրբագրական անհամար սխալներով լի «Մեղու» արհամարհած թերթի մեջ հանկարծ մի մի ալաքներ, մի մի կծու հոդվածներ դուրս կգային ժամանակակից գործիչների կանդնածների դեմ: Անտանելի էյին լինում սխալները. «Մեղու Հայաստանի» թշվառ վերտառությունը շատ անգամ տպագրողի անփութությունից, դու ավելացրու և խմբագրի անհոգությունից, յերևում էր թերթի վերա «Ղումե Հայաստան», «Մեղ Հայաստանի» ևն, ևն: Այս դեռ վերտառությունն էր, առավել փրկե հոդվածների տառասխալներից: Զնայեցյալ այս անկյալ դրությանը, մի արժանավորություն [?] չենք կարող խլել Սիմոնյանցից, նորա զենքերի ալաքները միշտ անարժաններին և ապազգայնաներին են շեշտում: Ինչպես տարել է, չի տարել Սիմոնյանցը «Մեղու»-ն, բայց հայ յեկեղեցին ջատագովված, հայության
89 շահերը պաշտպանված և հայ ան[հարազատ?]երը հարվածված են յեղել:

Փառք և պատիվ այս մասին Պետրոս Սիմոնյանցին:

Վերջերը արդարև նա մի փոքր շեղվեցավ յուր դեհից, բայց այն վոչ հայ յեկեղեցու, այլ մասնավոր անձնավորությանց մեջ յեղավ Սիմոնյանցի կամա և ակամա մոլորությունը:

Սիմոնյանցը մի յեսական մարդ է, նա վորքան և կոմունիստ յուր նիստ ու կացում, նորա դուռը թեպետ միշտ բաց և գրպանը պատրաստ ամենքին նպաստելու, բայց համոզմունքի մեջ խիստ յեսական:

Յեկավ Արծրունու նախկին համալսարանական յուր նշանակությունը նսեմացած համարող խումբը Պետրոս Սիմոնյանցի մոտ, առաջարկեց յուր ծառայությունը «Մեղու»-ն բարեկարգելու և ընդունելություն գտավ:

Դժվար թե Սիմոնյանցը գրկաբաց ընդունած լինի յուր նոր պաշտոնյաներին, սակայն ինչ պետք է աներ, նա քաջ ճանաչում էր «Մշակ»-ի Թերուս շուրջ բոլորողներին, նոքա էյին, վոր յերբեմնապես հարություն են տալիս յուր մեռյալ թերթին, նա գիտեր, վոր նորանցով «Մշակ»-ը պիտի հառաջադիմե և յուր զենքը ձեռքից պետք է ընկնի, հետևվաբար, թշնամիքը միջոց պետք է ունենան յուր դեմը դարձնել սրերը*): Մի խորհրդավոր ժպիտով յուր խմբագրության դռները բացեց Սիմոնյանցը նորայեկների առաջին,— իսկ ի՞նչ ժպիտ էր այն:— Շատ պարզ, Պետրոսը վստահ էր, վոր նոր աշխատակիցներով վերակենդանություն

*) Այս նախադասությունը զերծ չէ հակասություններից: Թողնում ենք անփոփոխ: Ծ. Խ.

տալով «Մեղու»-ին, կպահի նույնպես յուր ազգային և անձնական նպատակները, ներկա խմբի մեծամասնությունը կընկճվի յուր հեղինակության առաջը: Թող ուրեմն գործեն, ի՞նչ վնաս կա:

Այո՛, «Մշակ»-ը յուր լույս տեսնելով մեծ ծառայություն արեց «Մեղու»-ին, նա ջլատված և կիսաշունչ եղակին գըրգռեց, ուժեղացրեց և օրինավոր լրագրաց կարգումը դասեց: Ունեցին այդ բանումը համալսարանականները, բարձր բարձր դոչյուններ հանեցին, ոտը թնդացրին, բայց թերթերի մյուս ծառայությունը չկարողացան մոռացնել. 400—500-ից ավելի չկարողացան ավելացնել բաժանորդական թիվը, իսկ մյուս տարին «Մշակ»-ն արդեն հռչակ և ժողովրդականություն էր ստացել, 1000-ից ավել բաժանորդներ ուներ:

90 Ափսո՜ս, խեղճ թերթերը չվայելեցին յուրյանց աշխատության բարոյական վարձատրության պտուղը, փոքր առ փոքր յուրյանց հավասար իրավանց ձայնը խեղդված տեսան Արծրունու ինքնասիրության մեջ, յուրյանց ընկերության կապը վոլորուն ճանապարհով կտրվեցավ, Արծրունին հայերեն սովորեց և յուր համար մի վորոշ հասկանալի, բայց նոր լեզու ստեղծեց, հետաքրքիր հոդվածներ յուրյան անձնավորության գովասանքներով լի կիտվեցան խմբագրության մեջ և թերթերի կարիքը սակավ զգալի յեղավ, մանավանդ, վոր այդ թերթերը շատ եյին խափան լինում խմբագրի կոսմոպոլիտիկական կամ ըստ յուր՝ յեվրոպական ուղղությանը, ըստ Արծրունու և յուր յերկու կոսմոպոլիտ հետևողների (Իզմայիլյան, Շահվերդյան) թերթերը միակողմանի կծու հայամոլներ են, ուրիշ խոսքով «Մեղու»-ից ընդհատված մեղվականներ են «Մշակ»-ի խմբագրատան մեջ:

Ի՞նչ էր մնում անել, ընչո՞ւ կապվել կաշկանդվել, Արծրունին ինքն է օրինավոր տերը, ինքը խմբագիրը, գրավոր էլ վոչ մի պայման չկա մեջը, ամեն հաջողություն նորա կողմն է: Բավական էր միայն ծայրահեղ կոսմոպոլիտական մի հոդված, մի առանց կրոնի խորության [?] հայ բառ, հայ յեկեղեցին ազանդ կոչող խոսք և ահա թերթերի



արյունը կպղտորեր, անհամբեր Զմշկյանին գլխավաղալար կաներ, ավելացրու սորա վերա և ընկերության միջից վոմանց ստորաքարշ և խարդախ բնավորությունքը և շահամոլ հաճոյականությունը և ահա անձնազոհ խումբը ցրիվ-ցրիվ կընկնի և «Մշակ»-ի խմբագրությունը բաց կմնի մասնավոր այցելուների և պարտավորյալ աշխատակիցների համար, բայց էլ վո՛չ բազմության ձայն, վո՛չ խմբագրության անդամ հանդուգն բառեր և մարդիկ[227]:

Հին թերթերից միայն Ռաֆֆին գլուխը կախ ծանր նստեց յուր տեղը իբրև վարձկան աշխատակից, վոր և վայելեց և անուն ստացավ: Խենթի յերազները, զանազան Սալմաններ և տեր Թոդիկները վարատեցին «Մշակ»-ի խմբագրի կասկածը Ռաֆֆու թերթերի շրջանում ունեցած համոզման դեմ: Հապա կշիռն ընչո՞ւ համար է, վոր ծանր կողմը չհակվի մարդ[228]:

## 22

91 1872 թվականն է, գերդաստանս փոքրաթիվ է, կինս և անդրանիկ դուստրս Պերճանույշ:

Մի կարճատև ակարությունից հետո, յերբ կինս սովորյալ էր այր բժշկի ողնության դիմելու, ասում է ինձ. մի՞թե ավելի լավ չէր, կանանց բժշկողը կին լիներ:

Այդ միջոցումն էր, վոր լրագրներում ձայն տվին յերկու կին բժիշկներ:

—Արդյոք չէ՞յի կարող յես բժիշկ դառնալ, շարունակեց կինս: Այս միտքը յերկար ժամանակ նորան հանգիստ չէր տալիս: Ցյուրիխից պրոֆեսոր Աբելյանի[229] նամակը բորբոքեց կնոջս յեռանդը[230] և մի գերմանացի ուսուցիչ մի քանի ամիս ինձ և կնոջս հետ ամեն օր պարապում էր:

Աբելյանը հույս էր տալիս ինձ նամակով[231] յուր և ուրիշ ուսանողների ողնությամբ, նորա գրելով, յես կարող եյի ֆոտոգրաֆիով և կովկասյան տեսարաններ ու տիպեր ծախելով կնոջս պատրաստել, ապրել և փող հետ դնել: Էլ ի՞նչ կուզեյի. ծախեցի ֆոտոգրաֆիական գործարանս և ճանապարհ ընկա:

Կնոջս քույրը, հիշյալ օր. Աշխենը, մի տարի յե Ղզլարում վարժուհի յե: Մենք գնում ենք Ղզլար[232], ուր հույս

ունեմ ֆոտոգրաֆիով ճանապարհածախք ձեռք բերել ու անցնել Ռուսաստանի վերայով արտասահման: Վճռում ենք մի տարի էլ Ղզլարում մնալ, շրջակա քաղաքներում ֆոտոգրաֆիով փող ժողովել և այնպես գնալ. բայց «Պետական համբավաբեր» թերթի մի հոդվածը մեր շինվածքը խախտում է, այն հոդվածով հետ են կանչվում Ցյուրիխից բոլոր ռուս ուսանողուհիները և մենք խղճալի թողնում ենք ցաված սրտով դիտավորությունները[233]:

Պետրովսկում, ուր լողում էր հիվանդ քենիս և մենք նրա հետ, մեզ հանդիպում է ամարանոց յեկած Հաշտարխանի առաջնորդ աշտարակեցի Վեհապետյան Գևորգ արքեպիսկոպոսը. Նա ինձ ստիպում է ֆոտոգրաֆիան թողնել և գնալ Հաշտարխան յուր նոր բանալիք հոգևոր դպրանոցին վարժապետ և տեսուչ: Մեծ դժվարությամբ համաձայնելով գնում եմ[234] և, ավա՛ղ խարուսիկ հույսիս, Վեհապետյանը վոչ միայն թեմական դպրանոց չունի, այլ մի հաստատ ծխականից էլ ձեռք լվա:

92 Նորից ստիպվում եմ ֆոտոգրաֆիա բանալ, բայց անհաջող է գնում:

Մի քանի հայասեր հաշտարխանցիք լսած լինելով անունս, խորհուրդ են [տալիս] ինձ մի մասնավոր դպրոց բանալ: Յերկար ժամանակ դիմադրում եմ, բայց ուտելիք չկա, խեղճ Աշխենը Ղզլարում բարակացավ ստացած՝ զոքանչիս հետ ինձ մոտ է գալիս և գերդաստանս մեծանում է[235]:

Այդ միջոցում յեթե սղնախեցի Մելիք-Կարախանյանցը [?] չլիներ, վորը ինքնակամ առաջարկում է ինձ յուր օգնությունը, յես չգիտեմ ի՞նչ պետք է անեյի. բայց Մելիքի բարությունը ի չարն գործ դնելու չեմ. յես բարվոք դատեցի ընդունել հիշյալ հաշտարխանցիների խորհուրդը, և Վեհապետյանի առաջարկությամբ ու Գևորգ կաթողիկոսի հաստատությամբ բացի Հաշտարխանի հայ ծխական դպրոցի նախակրթական բաժին անունով մի յերկսեռ դպրոց ամսական յերեքական մանեթով[236]: Յերկու շաբաթի մեջ 30-ի չափ աշակերտներ ունեցա. ինձ օգնեցին և մի քանի յերիտասարդներ՝ Աղամջանյանց, Բուրժալյանց. սոքա դասեր են հանձն առան ձրիապես:



Աշխատությունը և հառաջադիմությունը պակաս չեր, բայց տարին լրացավ, 36 յերեխայից ավելի չկարողացա ժողովել: Այդ ինձ համար հանելուկ եր, յեթե չպարզվեր վերջը:

Քենիս մեռավ[237], մի նոր $1\frac{1}{2}$ տարեկան տղաս մեռավ[238], բոլորս տկարացանք, Հաշտարխանի օդն ու ջուրը մեզ վերա չեկավ. բժշկի խորհրդով յես պատրաստվել եմ փախչելու Կովկաս:

Փութացրեց փախուստս պ. Աբգար Հովհաննիսյանի նամակը. պարոնը սկիզբն անելով հրատարակել «Փորձ»-ը[239], հանդիմանում է իմ ծուլությունս, ի՞նչ ես մեռել, գրում է, յեթե դու «Սոս և Վարդիթեր»-ի հեղինակն ես, «Փորձ»-ը սկսվում է, աշխատող ույժեր են պետք, նյութական վարձատրություն նշանակված է 10—20 մանեթ, այսօրվանից դու առաջիններից համարի քեզ և գրիր[240]:

Ամոթից յերեսս կարմրում է, անկողնում պառկած քենիս ինձ ստիպում է գրել և «Կովածաղիկը»-ը, ահա, կես է յեղել[241]: Պ. Աբգարն էլ կարդալով ուղարկածս առաջին թերթերը, հավանություն է տվել. ինձ հեշտացել է ուրեմն Թիֆլիզ աճապարելս:

93 Միակ արգելքը, վոր կարող եր մեր գ[ն]ալը խափանել, լրագրերի տարածած սուտ լուրն եր. լսվում եր վոր Թավրիզից ժանտախտը (չուման) մտել է Թիֆլիզ, այդ տարակուսանքն այսօր փարատեց Արծրունին. նա իմ հեռագրիս պատասխանեց:

Հենց այդ որն է, վոր յես հարցաքննություն եմ նշանակել: Բացի ծնողքը շատ ուրիշներն ես հրավիրված են: Հուսացածից ավելի մեծ հառաջադիմություն, յերեխայք գիտակցաբար պատասխանում են վստահությամբ կրոնի, հայ և ռուս լեզուների և թվաբանության մեջ, ամենքի յերեսին բավականություն է տեսնվում:

Քննությունների վերջին ամենքի շնորհակալությունը լսելուց հետո, մի քանի խոսքով բացատրելով Հաշտարխանում մայրենի լեզվի ուսման կարևորությունը, խրախու-

սում եմ հայերին մեջը գտնել, ցավում եմ իմ ականա ընդհատելուս վերա և հայտնում եմ իմ հեռանալս:

— Վո՛չ, վո՛չ և վո՛չ, միաձայն գոչում է ժողովուրդը, քեզ մենք թողնելու չենք:

—Դու առաջիկա սեպտեմբերից նշանակված ես մեր յերկսեռ դպրոցներում տարեկան 800 մանեթով և շաբաթական 12 դասով ուսուցիչ,— հայտնում է նորահաստատ հոգաբարձությունը:

—Մենք պետք է հաջողացնենք արական և իգական գիմնազիաներում ծնողաց ծախքով հայերեն դասեր հասկացնել քեզ և արդեն, ինչպես քեզ հայտնի յե, բանակցությունները շարունակում են[242],— խոստանում է աղքատաց դպրոցի հոգաբարձությունը. ուրեմն առաջիկա տարին 2000—3000 մանեթի նյութական ապահովություն է քեզ հասնում, գնալդ ավելորդ է:

—Բայց իմ գնալս առողջության կազդուրելու նպատակով է:

—Իմ քաղաքից դուրս գտնված այգին յուր մի ձեռք տներով պատրաստ է քո առողջությունդ կազդուրելու, մեջ է մտնում պ. Ռոստոմյանցը:

—Հայրենի օդը միայն կօգնե ինձ:

—Մենք քո յերեք-չորս ամսյա ծախքդ կհոգանք, գնա՛ օդափոխվիր և վերադարձիր,— ձայն է տալիս նորից ժողովուրդը:

—Արդեն վճռված է, պետի գնամ, մնացեք բարյա՛վ:

—Պարոննե՛ր, խնդրում եմ լռություն, կանգնում է մի ծերունի չորս աչքանի՝ ակնոցը դրած:

94 Ընդհանուր լռություն:

— Պ. Պռոշյանց, դառնում է դեպի ինձ անծանոթը. յերեք տարի յե դուք մեր քաղաքումն եք, յես այս քաղաքի յեթե վոչ բարձր, գոնե միջակ դասակարգի հայ վաճառականներից և հայախոսության մեջ փոքր ի շատե հայտնի հայերիցն եմ, իսկ մենք դեռ միմյանց չենք ճանաչում, այնպես չե՞:

—Ճիշտ այդպես:

— Նախ խնդրեմ ծանոթանաք, Հակոբ Գրանիլչիկյանց և յերկրորդ խնդրեմ տեղեկանաք, թող այս բազմությունն



ես լսի, թե ինչի՞ հետևանք է մեր հեռավորությունը: Ամենից հառաջ ձեզ պետք է ասեմ, վոր յեթե պ. Աթանասյանի հրավերքն էլ չլիներ, յես անկոչ հյուր եյի լինելու այս հանդեսումը: Ըստ վորում յեթե դուք հաջողեցրիք սկզբներում այս փոքրաթիվ յերեխաներին ժողովել, այնուհետև իմ շնորհքս եր, վոր այլևս չկարողացաք ավելացնել. ամեն տեղ յես անքուն պահապանի նման հսկում եյի, վորը ձեզ յերեխայք չտան: Գիտե՞ք ինչու:— Վորովհետև, յես չեյի ցանկանալ իմ ազգի մանուկները խմորվեյին ձեր նման պրոտեստանտից, Ծանչյանցի հետևողներից (խեղճ Նահատակ), անաստվածից, անբարոյականից, հայերեն վոչ մի բառ չիմացողից և այլն շատ պակասությունների տերերից: Այո՛, Պռոշյանց, ձեզ այդպես են ինձ ծանոթացրել: Յես այսօր գալիս եյի բանել ձեր պակասությունները և խայտառակությամբ մեր քաղաքից փախցնել: Ուրախ եմ, վոր սրտիս փափագը չկատարվեցավ, քո թշնամիներիդ և իմ կարծեցյալ բարեկամների շնորհիվ յես ամոթով եմ մըտնում քո առաջին. շնորհակալություն իմ բարեկամներին: (Գրանիլչիկյանցը աչքերը դարձրեց բազմականներից դեպի մի քանիսը. յուր ակնարկները հասկացվեցան): Իսկ իմ հանցանքս մինչև չխարտեմ, հանգստանալու չեմ: Պռոշյանց, յես խոստանում եմ առաջիկա տարին ձեզ մինչև 100 մանուկներ, յես իմ ազնիվ խոսքով ապահովացնում եմ ձեր նյութական բարեկեցությունը. մինչև յես իմ հանցանքս չքավեմ, ձեզ Հաշտարխանից գնալ չկա, դուք կոչված եք յեղել ի վերուստ մեր մանուկներին մայրենի լեզվի մեջ ոգնելու և մենք աչքներս փակել, չենք տեսել, ինչպես վոր մի տարվա մեջ մենք այսքան մեծ հառաջադիմություն և հայ յեկեղեցու կրոնին համեմատ կրթություն չենք տեսել մեր
95 ծխական 9 տարվա գոյություն ունեցող դպրոցներից: Յեթե յես իմ ասածներս չկարողացա կատարել, հուսամ, վոր իմ համաքաղաքացիք կգործակցեն ինձ, դարձավ Գրանիլչիկյանցը դեպի հասարակությունը:

—Մենք քեզ համամիտ ենք, թնդաց դահլիճը:

Չերկարացնենք. հանձնաժողով կազմվեցավ ինձ համոզելու հետ թողուլ գնացքս և ժողովը բուռն վոգևորությամբ ցրվեցավ:

Ութ օրից հետո յես խլացնելով իմ ականջներս հանձնաժողովի բազմատեսակ առաջարկությանց դեմ, հրաժարական տվի Հաշտարխանից[243]:

Այս խոսքերով ինձ հրաժարական վողջույն տվեց հանձնաժողովի անդամներից մինը, իմ ամենամոտ բարեկամ պ. Կարապետ Աթանասյանցը. «ցանկամ քեզ լիակատար անհաջողություն, մի կտոր հացի կարոտ մնաս, ամեն դուռ քո առաջին փակվի, ամեն կարեկից սիրտ քարանա քո դեմ, Հաշտարխանի յերեխայոց արտասուքը ծով դառնա, փոքր մնա խեղդվիս, հույսդ ամենքից կտրվի, ստիպյալ ձեռք մեկնես մեզ, քեզ ոգնենք հետ բերենք այստեղ և ծառայեցնենք մեր յերեխաների ոգտին»:

Այս ասելով նա առանց ձեռք տալու ինձ հեռացավ և այն օրից ցայսօր, ինչպես լսում եմ, անունս չի ցանկանում լսել:

23

Արզար Հովհաննիսյանցը փակ լեզուս բացեց, նա ընդունելով ինձ Թիֆլիսում «Փորձ»-ի խմբագրության անդամ և յուր հասարակաց մատենադարանին կառավարիչ, միջոց տվեց շարունակել գրելու, իմ մեկենաս Հովհաննես Բաբայանցն[244] եվ յուր քաղցր խրախուսական նամակով «Հացի խնդիր»-ս հառաջ բերեց[245]: Քանի կա «Հացի խնդիր»-ը փայլելու յե նորա ճակատին Հովհաննես Բաբայանցի ուսումնասեր անունը*):

96 1879 թվին եր, վոր մի յերկարատև հիվանդությունից՝ շնորհիվ բժշկապետ Գասպարյանցի[246] և իմ բարեկամ Բաբայանցի՝ մահից պրծա և ինձ լեզու տվող Արզար Հովհաննիսյանցի ջերմ մասնակցական միջնորդությամբ հրավիրվեցա Եջմիածին Յերեվանի Թեմական ուսուցչի կոչումով: Ապրիլին եր այդ[247]:

Տեսչական թափառական պաշտոնը խլում եր ինձանից

*) Ջնջված է.

Յեթե մենք անընթերցասեր ժողովուրդ չլինեյինք, «Փորձ»-ի գոյությունը կպահպանեյինք և դեռ շատ ավելի բարձր տաղանդներ կունենայինք:





Սվերդլովի № 7 տունը (Յերևանում), վորտեղ 80-ական թ.թ. ապրել է Պռոշյանը:

գրականությամբ պարապելու միջոցները, բայց պ. Աբգարի վճռական խոսքը դրդեց ինձ «Շահեն»-ը գրելու։— Դու «Փորձ»-ի մշտական գործակիցն ես, ասաց նա, մի՛ մոռանար, վոր ուր և լինիս, «Փորձ»-ը քեզանից նյութ է պահանջում, տարեկան մի աշխատություն ուզում եմ քեզանից։ «Շահեն»-ս «Փորձ»-ի վերջին պտուղներից մինն յեղավ[248]։

Ամոթ մեր անընթերցասիրությանը, «Փորձ»-ի նման հանդեսին չոժանդակեցինք, Աբգար Հովհաննիսյանի նման անձնվեր հրատարակչի ի խորո սրտե մեր գրականությունը ծաղկեցնելու և ընթերցասիրությունը տարածելու ունեցած մեծ փույթը չգնահատեցինք. և նա ստիպվեցավ «Փորձ»-ի դեֆիցիտները մի մի դերանների նման ցցելու մեր տեսության առաջին։ Բայց պատի՛վ քեզ, Աբգար, հայոց անտարբերությունը չկարողացավ իսպառ քեզ վհատեցնել, «Արձագանք»-ը[249] յուր բովանդակությամբ այսօր մեզ ամաչեցնելով հանդերձ՝ մի խոշոր դիրք է բռնել հայ պարբերական թերթերի շարքում։

Ա՜խ, ինչ կլիներ քեզ նման շատերն ունենայինք։

## [ՈՐԱԳԻՐ]

[6 մայիսի, 1890 թ.]

97 1890 թվի մայիսի վեցն է, այսօր պետք է կատարվի Գրիգոր Արծրունու գրականական գործունեության 25-ամյակը։ Այս «Մշակ»-ի հոբելյանը չէ, «Մշակ»-ի գոյության 18-րդ տարին է դեռ, Գրիգոր Արծրունին մտադիր է յեղել «Աղբյուր»-ի խմբագրության ձեռքով անժամանակ փառավորվիլ և ողովիլ. Ղազար Աղայանի հաշտությունը Արծրունու հետ հարթեց դժվարությունները, Ղ. Աղայանը իբրև «Աղբյուր»-ի եյական խմբագիր (Տիգրան Նազարյանցը միայն պատասխանատու և անվանական խմբագիր է), հլու արբանյակ դարձավ Արծրունու հետամուտ նպատակներին և գլուխ բերեց հոբելյանը[250]։

Սրանից մի տարի հառաջ նույն Աղայանը «Աղբյուր»-ի մեջ իմ հոբելյանի խնդիրն եր զարթեցրել[251], բայց վորովհետև «Նոր դար»-ի խմբագիր Սպանդարյանցն էլ յուր կողմից

ձայնակցել էր, այն էլ «Աղբյուր»-ից հառաջ[252], Աղայանցը նախանձելով, վոր նախաձեռնությունը Սպանդարյանին պետք է պատկանի, հետ քաշվեց իրագործելուց. այս բանին ավելի ույժ տվեց Արծրունին, համոզելով ծածուկ Աղայանցին ձեռնամուխ լինել: Արծրունու նպատակն է յեղել արգելք լինել իմ Հոբելյանին, վորպեսզի մի տարուց իրենը կատարել տա. Նա սկսեց «Մշակ»-ի մեջ թշնամաբար վերաբերվել գործին. վոչ միայն այդքան, նրա հլու հպատակները Մալումյանցի ստորագրությամբ անստորագիր թղթերով արգելք յեղան գործին. այդպիսով հետ մնաց իմ Հոբելյանը, մանավանդ վոր մյուս կողմից Աբգար Հովհաննիսյանը յուր անձնական հաշիվների համար նույնպես սպանեց գործը յուր սկզբնավորության մեջ[253]:

Այսպես թե այնպես իմ Հոբելյանը հետ մնաց և Արծրունունն հառաջ անցավ, բայց Աբգար Հովհաննիսյանին մեծ ցավ յեղավ: Աբգարն յուր բնավորոչ նախանձոտ բնավորությամբը ամենայն հնարք գործ դրեց արգելել Արծրունու Հոբելյանը:
98 Նա սկսեց յուր «Արձագանք»-ի մեջ ապրիլի սկզբներից սկսած, տպագրել Արծրունուն աննպաստ հոդվածներ: Գեորգ Ջմշկյանին դրել տվեց «Մշակ»-ի սկզբնավորության պատմությունը իբրև հիշողություններ, վորոնք ստվեր են ձգում Արծրունու մթին և յերկդիմի գործունեյության վերա[254]: Արծրունին անամոթ կերպով հայհոյեց Ջմշկյանին[255]... Այդ ձեռնտու յեր Աբգարին. կա մի ուրիշ մարդ, վորին կգրգռի, իբրև վկա, Ջմշկյանի գրվածի ճշմարտությունը և դրանով Արծրունին միանգամայն կխայտառակվի. վորով նրա Հոբելյանն էլ դուցե անհաջող ընթանա: Աբգարի գտած վկան յես էյի, յես էյի իբրև «Մշակ»-ի անցյալ գործունեյության աշխատակիցներից մեկը, վոր կարող էյի ճշմարտությունը լուսաբանել:

Սրանից մի շաբաթ հառաջ ինձ հանդիպում են ժամը յերկուսին դպրոցից գալուս Յերիցյանն ու Ջմշկյանը. ասելով վոր Աբգարն ինձ նամակ է գրել ճշմարտությունը վերականգնելու՝ ստիպեցին մտնել «Արձագանք»-ի խմբագրությունը. յես տհաճությամբ և անհետաքրքրությամբ մտա. այնտեղ նստած էյին Աբգարին շրջապատած յուր խմբագրության աշխատակիցները թվով մինչև 8—9 հոգի:



Աբգարն ինձ դուրս տարավ առանձին սենյակ և խնդրեց վերականգնել Ջմշկյանի պատիվը. յես լավ չկարդացած լինելով Ջմշկյանի հիշողությունները և միայն սկզբի կեսը միտքս ունենալով, հայտնեցի Աբգարին, վոր իմ վկայությունը կվնասի գործին, յես անաչառապես գրելով՝ Արծրունու ձեռքը զենք տված կլինեմ հարձակվել թե՛ յուր, թե՛ Ջմշկյանի և թե՛ իմ դեմ, բայց Աբգարը պնդեց և խնդրեց: Յես ասացի, վոր անվայել և անժամանակ եմ համարում Արծրունու հետ բանակռիվ մտնել յուր Հոբելյանին մի քանի օր միայն մնացած, խոստացա մայիսի վեցն անցնելուց հետո մանրամասնորեն գրել և ճշմարտությու-
99 նը պարզել: Այդ բանին ինքն Արծրունին էր առիթ տվել անցյալ 1889 թվի «Մշակ»-ի վերջին համարում, սև ապերախտությամբ լցված և անամոթ ստախոսությամբ խճողված մի հոդվածում, ուր անխիղճ կերպով հայհոյում է յուր նախկին ջերմեռանդ աշխատակիցներին[256]:

Աբգարը բավական չլինելով իմ պատասխաններից, պնդեց յուր պահանջի վերա: Յես ձեռքիցն ազատվելու համար ստիպվեցա պատիվս մեջ բերել, ասելով՝ վոր Արծրունին յուր սովորության համաձայն կսկսի և ինձ անվանարկել՝ թողած բուն խնդիրը:

—Ուրեմն դու վախո՞ւմ ես Արծրունուց, հարցրեց Աբգարը:

—Յեթե դու խոստանաս ինձ պաշտպանել, պատիվս անարատ կացուցանել քո թերթի մեջ, պատասխանեցի նրան, չեմ վախենալ:

Աբգարը պարզ ի պարզո հայտնեց յուր անկարողությունը և տկարությունը Արծրունու հարձակման դեմ ինձ պաշտպանելու գործում: Այդպիսով և յես վճռաբար մերժեցի կատարել առայժմ Աբգարի անտեղի պահանջը:

Աբգարն ինձ խնդրեց խմբագրատուն և յուր արբանյակների ներկայությամբ պատմեց մեր առանձին տեսակցության հետևանքը, թե յես վախելով Արծրունու հարձակումներից չեմ վստահանում պաշտպանել իմ ընկեր Ջմշկյանի պատիվը: Առանձին խոսեցածներս կրկնելով՝ յես կրկին խնդրեցի Աբգարին ժամանակ տալ ինձ, մի քանի ժա-

մանակից հետո լիուլի տեղեկություններով լույս աշխարհ հանել «Մշակ»-ի սկզբնավորության ճիշտ յեղելությունը, բայց վերջը Զմշկյանի թախանձանքներին և ներկայից համոզմունքներին զիջանելով՝ խոստացա կարճ գրել, թե Զմշկյանի այս և այն կետերից հետո, որ սխալ են և մոռացմամբ խեղաթյուրած՝ մնացածը ճշմարտություն է:

Այդպիսով ազատվեցա «Արձագանք»-ի խմբագրությունից:

Բանից դուրս յեկավ, որ յես սխալված եմ յեղել, Աբգարի պահանջը շատ մեծ է յեղել. նա կամեցել է որ ինձ ևս գործիք շինի Զմշկյանի նման և Արծրունու հոբելյանին վնասիչ կծու հոդված գրել տա:

100 Գալիս եմ տուն, կրկին կնոջս ներկայությամբ կարդում եմ ուշադրությամբ Զմշկյանի հիշողությունները և գտնում եմ շատ անճշտություններ, վորոնց յերկու կետը միանգամայն անուղիղ եյին: Վնաս համարելով Զմշկյանի համար իմ վկայությունը, միանգամայն հետ եմ թողնում գրելու նպատակը: Բայց ահա ինչ է դուրս գալիս. Հետևյալ առավոտը լսում եմ Փարամյանից, որ իրենք (ինքն էլ «Արձագանք»-ի աշխատակից է և ներկա յէր) արձանագրություն են կազմել, իմ բոլոր խոսակցությունները ստորագրությամբ վավերացրել են, որ յեթե յես չգրեմ ինչ վոր իրանց ցանկացածն է, տպեն «Արձագանք»-ի առաջիկա համարում և ինձ խայտառակեն:

Նույնը կրկնեց «Արձագանք»-ի մյուս աշխատակից Իսահակ Հարությունյանցը[257], Ներսիսյան դպրոցի ուսուցիչներից մեկը: Յես վիրավորվեցա և արհամարհանոք վերաբերվեցի դեպի իրանց գործ դրած անազնիվ միջոցը, կոչելով իրանց արածը վոչ լուսամիտ խմբագրության գործ, այլ գաղտնի վոստիկանության և ժանդարմիայի պաշտոնեյից արարք. ավելացնելով, թե դրան յես մի քանի խոսքով և հայտնի առածով կպատասխանեմ. «աղվեսի վկան յուր պոչն է»:

Դասս վերջացնում եմ և հենց դասարանից դուրս գալուս հանդիպում եմ «Արձագանք»-ի խմբագրության մյուս գործակից Յաղուբյանցին, որ յեկել է Աբգարի կողմից պատգամավոր:



Այդ մարդը յերկու ժամից ավելի գայլի ավետարան էր
կարդում գլխիս, ուզում էր համոզել, որ գրեմ, բայց յես
հազար ու մի խոսքերով կամեցա դիմադրել յուրյանց ան-
տեղի պահանջներին և խնդրեցի ժամանակ տալ ինձ մի
շաբաթ ևս մտածելու: Յաղուբյանը այնուամենայնիվ զա-
նազան սպառնալիքներով Աբգարի կողմից, խնդրում էր մի
քանի կարճ խոսքերով ասել թե Զմշկյանի գրվածքի ինչ
101 կետն է ուղիղ, ի՞նչն է սխալ: Յեվ վոր գլխավորն է,
նա պահանջում էր, վոր մինչև մյուս օրը հինգշաբթի 12
ժամը գրածս ուղարկեմ խմբագրատուն:

Այդ օրը ճաշից հետո ինձ մոտ է գալիս «Արձագանք»-ի աշխատակից Գարեգին Յենգիբարյանցը և իբրև բարեկամ խորհուրդ է տալիս մի քանի տողով կատարել Աբգարի ցանկությունը, հայտնելով, վոր Աբգարն սպառնալիք տալով իրան ուղարկել է ինձ մոտ ասելու, վոր յեթե յես կհանդգնեմ չկատարել յուր ցանկությունը, ինձ դպրոցից կարտաքսե իբրև հոգաբարձու. մի յերկու հայհոյական խոսքերով էլ համեմել էր յուր սպառնալիքը:

Մնացի մոլորված, վողջ գիշերը դրա մասին եյի մտածում, մյուս օրն առանց վոչինչ գրելու գնացի դպրոց: Կրկին հառաջս յեկան Փարամյանցն ու Հարությունյանցը. վերջինս իբրև ինձ մտերիմ բարեկամ խորհուրդ տվեց անպատճառ կատարել Աբգարի հրամանը:

Ի՞նչ արած, մեծ դասամիջոցին մտա առանձին սենյակ և գրեցի սևագրությունը, վորպեսզի դասը վերջացնեմ, արտագրեմ և ուղարկեմ:

Սկսել եմ դասախոսել. հանկարծ [դասարան] *) է մտնում վերակացուն մի փոքրիկ տոմսակով: Յենգիբարյանցն է գրում «Արձագանք»-ի խմբագրատնից. նա ասում է, վոր շտապիր մի քանի տողով գրաբերիս հետ ինչ և իցե պատասխան տալ և լցնել Աբգարի իղձը, կես ժամից ուշ կլինի և հետևանքը խիստ վատ:

Սրտաբեկ դադարեցրել եմ դասախոսությունը, մանավանդ վոր վերակացուն հայտնում է, վոր գրաբերն անհամբեր սպասում է պատասխանի. պատվիրում եմ աշակերտնե-

*) Բնագրում՝ տուն:

րին գրավոր շարադրություն գրել իրենց մի անցյալ դասը և յես արտագրելով գրածս կնքում եմ նույնիսկ դասատանը և հանձնում խմբագրատան գրաբեր ծառային:

Ճաշից հետո կրկին գալիս է ինձ մոտ տուն Յենգիբարյանցը. նա հայտնում է, որ Արզարը փրփրեց, կատաղեց և սաստիկ հայհոյելով ինձ յուր կազմած արձանագրությունն իմ գրածի հետ միասին ուղարկեց տպարան շարվելու և իրան էլ պատվիրել է գալ ինձ պատմել[258]:

102 Տերն յուր հետ, ի՞նչ կարող եյի անել. շատ վշտացած գիշեր անցրի:

Մյուս օրը մինչև յես դպրոցումը բոլորը պատմում եյի մեծ դասամիջոցին ուսուցչական ամբողջ խմբին և Հարությունյանցն արդարացնում եր յուրյանց փծնի արարքը, հանկարծ ներս մտավ նույն խմբագրատան ծառան և հանձնեց ինձ Արզարի գրած հետևյալ նամակը, որ բառացի արտագրում եմ.

Մեծապատիվ պ. Պռոշյանց.

Հույս ունիմ, որ այժմ գոնյա ինձ իրավունք կտաք վերջացնել ձեզ հետ իմ ծանոթությունը, կտրել բոլոր հարաբերությունները:

Թյուրիմացությունների առաջն ա[ռ]նելու[259] համար հարկ եմ համարում ի գիտություն Ձեր հաղորդելու, որ

ա. յես համոզված եմ, որ պատվի մասին ձեր հայացքներն ունեցող մարդը անկարող է դաստիարակի պաշտոն վարել վորևե ուսումնարանական հաստատության մեջ:

բ. յես համոզված եմ, որ պատվի մասին ձեր գաղափարներն ունեցող մարդը յերբեք մեր յեկեղեցու պաշտո[օ]նյա դառնալ չի կարող, թեև նա կրեր «աստվածաբանության մագիստրոսի» տիտղոսը:

գ. յես համոզված եմ, որ պատվի մասին ձեր գաղափարներն ունեցող վիպասանը, իր ժամանակակիցների կողմից չպետք է մեծարանաց արժանանա, վորքան և տաղանդավոր մատենագիր լիներ նա:

դ. ինչպես ամբողջ կյանքիս մեջ, նույնպես



և ներկայումս իմ համոզմունքների համեմատ կվարվիմ և Ձեր նկատմամբ, ինչ ծառայություն և յերբեմն մատուցած լինիմ Ձեզ:

Ձեր խոնարհ ծառա Արզար Հովհաննիսյան.

Ապրիլի 27-ին, 1890 թ.

103 Առանձին կարդալուց հետո խնդրեցի ուսուցչական խմբի ուշադրությունը և վերոգրյալ նամակը կարդացի ի լուր ուսուցչական խմբի. բոլորեքյան, բացի յերկու-յերեք Արզարյան ստոր գործիքների, վրդովվեցան և տրտնջացին իրանց փչալից և անկայուն վիճակի վերա: Ի՞նչ անեն, իրավունք ունին. մեր ազգային գործիչները իրանց կրքերն հառաջ տանելու համար միայն ազգային ձրի և փայլուն պաշտոններ են հանձն առնում: Ահա քեզ Արզարը. հոգաբարձու յե Ներսիսյան դպրոցում, Մակարի խնկարկուներից մինն է (թեև մի ժամանակ հայհոյում եր), այսօր յուր հրամանը չկատարող ուսուցչին արտաքսել և հացից զրկել է սպառնում: Յես խոստովանվում եմ. անհեռատեսություն եր իմ կողմից, պետք է յերեխաներիս բերանի պատառը չկտրելու համար ազնվությունը վոտնատակ տայի և աշխարհքի աղտը թափեյի Արծրունու գլխին, բայց ախար ինչպե՞ս անեյի: Ե՛հ, անտեր մնաս Հացի խնդիր, ստիպված եմ հրատարակության չտալ Արզարի արարքը, հարկադրված եմ արտասուքս կուլ տալով բավականանալ հիշատակարանիս թերթերը մրոտելով, մի գուցե առավել դրդեմ Արզարին և նրա շնորհիվ ապրուստի միջոցից զրկվիմ. ո՛... ո՛... ո՛... կատաղության, ընտանեկան նեղ վիճակն է ինձ խեղդել, ապա թե վոչ յես գիտեյի:

Այնուամենայնիվ անհանգիստ և շփոթված եմ. ի՞նչ պետք է անեմ, յեթե Արզարն յուր սպառնալիքն հաջողեցնի իրագործել, որ ծերության խմորակեր փոքրիկներիս համար ի՞նչ ճանապարհով պետք է հաց աշխատեմ:

Ահա քեզ Արծրունու և Արզարի տված հարվածը. յեթե նոքա հոբելյանս չխափանեյին, այսօր գուցե ազգը մի քանի կոպեկով ապահովացրած կլիներ ինձ, յերեխայքս քաղցից և ինձ գերեզմանի դռնից հետ կպահեր, այժմ յես վո՛չ քահանա դառնալու կձգտեյի[260] և վոչ վարժապետ

կմնայի, կմտնեյի տունս և գրականությամբ միայն կպարապեյի: Գուցե այն ժամանակը իմ գրած վեպերն ավելի լավ կլինեյին. այսօր յես գրում եմ օրական հինգ դաս տա-
104 լուց և շաբաթական 150—170 շարադրություններ տանը ուղղելուց հետո. էլ ի՞նչ ույժ և հոգեկան զորություն է մնում իմ մեջ գրականությանը նվիր[վ]ելու գործում ըստ պատշաճին փայլելու:

Վերջապես, թո՛ղ այսօր անցնի Արծրունու հոբելյանը, թո՛ղ մեծ մեծ և թանգագին պարգևներով պսակվի, թո՛ղ մի բոլորակ դրամագլուխ ստանա ու հետ նստի, ապա կտեսնենք:

Ամոթ Արծրունուն և Արզարին, ամոթ մեր հրապարակախոսներին. իրանց բոլոր գործողությանց առաջին եյական կետը անձնական շահն ու յեսն են արել:

Ե՛հ, հերիք է, սիրտս տրաքում է:

կրկին 6-ն մայիսի, նույն օրը.

Առավոտ է, տանից դուրս եմ գալիս, մեր դրանն ինձ հանդիպում է «Նոր Դար»-ի խմբագիր Սպանդար Սպանդարյանցը, ուզեցել է ինձ մոտ գալ. նա շատ վշտացած է մարդկանց մի տեսակ հիմարությունից. նա ներկա յե յեղել փողոցի շարժումներին, ամեն կողմ Արծրունուն մեծարողներն են վազ վազ անում, փող, վոսկի զարդեր, պսակներ, ուղերձներ կառքերով շտապեցնում են դեպի կլուբի այգին, ուր կատարվելու յե Արծրունու տոնախմբությունը: Սպանդարը լսել է, վոր Հոնանյանցը, կամելով վրեժ հանել Արզարից միմյանց հետ անձնական հաշիվներ ունե[նա]լու համար, Թիֆլիզու հարուստների տներն ընկած և խանութները մտած փող է ժողովում, վոր Բաքվից, Մոսկվայից և զանազան քաղաքներից դրամական նվերներ են յեկել հայոց յեկեղեցին աղանդ ու հերձվածող [անվանող]*) «Մշակ»-ի խմբագրի համար, վոր հայոց ազգը իր սրբու-
105 թյուններն ու իր արժանավորությունները հայհոյող անարգողին այսօր փառաց պսակն է տալիս, իսկ ինքը տա-որ դուռն է ընկել և մի քանի մանեթ չի ճարել, վոր գրաշարներին գոհացնի: Խեղճ Սպանդարյանցի սրտից ար-

*) Բնագրում՝ քարոզող:



յուն էր կաթում. այսքան էլ անարգարություն և կուրություն մի ազգի կողմից ինչպես մերն է:

Ինքը Սպանդարը յուր լրաթերթը հիմնել է հայ ազգի ամբողջությունը և յեկեղեցին պաշտպանելու նպատակով, թերթից շատ հառաջ էլ միշտ նույն ձգտումովն է ղեկավարվել ու «Մշակ»-ի և «Մեղու»-ի մեջ գրել, իսկ այսօր ինքը արհամարհված է և [«Նոր Դար»-ը] ազգի շահերի վնասակար թերթը փառաբանված:

Սպանդարի դրությունը հոգիս վշտացրեց, խեղճը միանգամայն իրավունք ուներ. յես մտքումս դրի բոլոր որը նրանից անբաժան լինել և մխիթարել, թեև ինքս էլ նրանից վոչ պակաս սրտաբեկ եյի:

Փողոցումը մենք հանդիպեցանք այլ և այլ կուսակցությունների ներկայացուցիչների, վոմանք ովսաննա եյին կարդում «Մշակ»-ին, մյուսները «Նոր Դար»-ն եյին պաշտպանում, այլք Արզարին եյին գովում կամ պարսավում:

Ամեն մի ինձ հանդիպող նեղացած եր ցույց տալի Արզարի իմ դեմ բռնած անվայել գործի դեմ, շատերը վշտացել եյին մանավանդ այդ որվա «Արձագանք»-ի Գրիգոր Արծրունուն ուղղած հոդվածի մեջ իմ վերաբերությամբ ասված նախադասության դեմ: Արզարը, ժխտելով Արծրունու գրական գործունեյության հոբելյանը, ճանաչելով այսորվան տոնը արհեստական, խոստովանում է Արծրունու բուն հոբելյանը «Մշակ»-ի 25-ամյակը լրանալուս, այն է՝ 1897 թվին:

Այդտեղ մեջ է բերում մի քանի գրողների անուններ, ասելով, թե նրանց համար հոբելյան տալն արժեր. դոցանից մեկն ինձ է թվում, այսպես. «Գրականական [է] Պռոշյանցի հոբելյանը, վոր յերբեք չի տոնվիլ»: Ուզում է ասել, թե յես արգելք կլինեմ: Արզարը բավական չի համարել մասնավոր նամակով ինձ սպառնալու, յուր թերթերումն էլ ուզում է ինձ վնասել[261]:

Վոչինչ, ներելի յե, խեղճ տղան կծիկը կորցրել է, ծո-
106 վաչափ հարստությունը ջուր է արել, այսօր քաղցած է, չի հասկանում հուսահատությունից անելիքը, ցամաք ընկած ձկան նման վերջին շնչումը ագին շարժում է, բայց ջրից հեռի յե: Վո՛չ, աստված մ'ի արասցե, ափսոս է մարդը. յեթե յուր նախանձոտ բնավորությունը չունենար, յեթե անձնական

հաշիվները չգերազանցեր հասարակականից, լավ գործիչ եր և կմնար:

Նոյեմբեր, 1892 թ.

107 Հանգամանքները խճողվում են, Ներսիսյանն դպրոցում իմ պաշտոնավարությունս հետզհետե անհնարին է դառնում[262]. Արզարն սկսել է յուր խաղերը. «Արձագանք»-ի մեջ իմ դասատվություններս ծաղրել և ձգտում[263], վոր մի որ ինչպես հոգաբարձու կարողանա առաջարկել իմ արձակման հարցը. ինչպես արեց յերկու տարի հառաջ:

(Ես չեղավ, իզուր յես հիշատակարանս չեմ գրում, պետք է մի որ նորից վերադառնալ և սկսել թեմական տեսչական պաշտոն առած որից և կարգապահությամբ գրել):

Մտատանջությունն ինձ խեղդում է, ի՞նչ անել արդյոք անիծյալ հացի խնդրի մասին. ինչպես հրավիրել իմ վերա ազգի ուշադրությունը. այն ինչ, պարզ հակառակությունը Արծրունյան և Արձագանքյան կուսակցությունների կողմից իմ դեմ ակնհայտնի յե:

Յես չեմ հարում և վոչ մի կուսակցության, իսկ չեզոք մարդը ճխլվում է. «ձին ու ջորին կռվեցին, մեջ տեղն եշը սատկեց»:

Վճռում եմ և մի առավոտ նոյեմբերին բաղխում Ալեքսանդր Հոնանյանցի դուռը և ընդունվում մեծ քաղաքավարությամբ:

Հոնանյանցը հաճություն է ցույց տալիս լսել իմ բացատրությունը և յես սկսում եմ մի ժամաչափ իմ անցյալը պարզել նրա առաջին ու վերջը հայտնում, վոր յերբ և իցե այս կուսակցությունների շնորհիվ մի որ յես առանց կտոր հացի կարող եմ մնալ. խնդրում եմ իրան, իբրև Թիֆլիզի ազգայինների մեջ ամենից չեզոք և անկողմնապահը, յուր վերա առնի ինձ ապահովեցնելու նախաձեռնությունը:

108 Իմ խնդրածս մեծ չեր. մի հատ արտադատիվ մամուլ եյի խնդրում յես յուր պարագայուք հայ ազգից ինձ ընծայված լիներ, վորով և իմ 35 տարվան գործունեյությանը մի տրիտուր կլիներ ազգի կողմից:

Հոնանյանցը մեծ հաճությամբ լսելուց հետո խոստացավ խորհել մի քանի յուր ընկերների հետ. թե ինչ հետե-



վանք կունենա, չեմ կարող դուշակել. ահա դեկտեմբերի վերջն է և վոչինչ հոտ չկա[264]:

19 դեկտեմբերի

Կայծակի արագությամբ տարածվեց Թիֆլիզում Գրիգոր Արծրունու մահվան բոթը[265]. մեռել է թոքերի բորբոքումից. մշակականների վողնաշարը կոտրվեց:

Նույն որը խմբագրությունները տեղացին արևելքից արևմուտք հայաբնակ տեղեր հեռագրեր:

Իսկույն ժողովվեցին «Մշակ»-ի խմբագրատանը անթիվ մշակականներ, խոսեցին, խորհեցին, վորոշեցին թաղումը փառավոր անելու համար հոդին ամփոփելը հետ ձգել մինչև հետևյալ կյուրակին, այն է՝ մինչև 27 դեկտեմբերի:

Ընտրվեցին կարգադրիչ հանձնաժողովի անդամներ. Գաբրիել Միրզոյանց[266] «Աղբյուր»-ի նոր խմբագիրը, Աղեքս. Քալանթար[267], Տ. Նազարյանց և մի վոմն ինձ անծանոթ Ա. Տեր-Գրիգորյանց:

Ի՞նչ խլրտումներ և իրարանցումներ են տիրում քաղաքումս. բանն այս է, վոր վոչ միայն Թիֆլիզում, ամբողջ հայությունն է շարժման մեջ:

Դիլորցոլի փողոցից անցնել չի լինում, ամեն խանութի լուսամուտների առաջ արդելքի յես հանդիպում հետաքրքիր նայողների կողմից: Նայում են Արծրունու անունին նվիրած
109 և հանդես գրված բազմատեսակ պսակները: Թանգագին արծաթի պսակները տասնավոր են, իսկ կեղծ ծաղկից շինվածները անչափ. ասացին, վոր մինչև այսոր թիվը 130-ի յե հասել և մինչև 200-ի կհասնի. միջին թվով կարելի յե ամեն մի պսակը 50 մանեթ հաշվել, ուրեմն 10,000 մանեթ փչանում է լոկ պսակների համար, թողած մյուս ծախքերը, վոր պիտի անեն հայերը զանազան քաղաքներից ուղարկած պատգամավորների վերա:

Ի՞նչ ցուցամոլություն, բոլորը կուսակցական պայքարի արդյունք՝ առաջացած ամեն տեղ Արծրունու կույր արբանյակների յեռանդուն գործունեյությունից. վոչ միայն պսակ դնում են ունևորները, հացի կարոտ մշակների վերջին կոպեկն անգամ դուրս են կորզում և պսակների վրա վատնում:

Տեսնենք ծայրն ո՞ւր կհասնի:

24 դեկտեմբերի, հինգշաբթի

Այսօր լույս տեսավ «Մշակ»-ի համարը[268]: Ստորագրված են. ժամանակավոր խմբագիր Հ. Տեր-Մարկոսյանց և հրատարակիչ Մ. Մելիք-Ադամալյանց:

Այս Մ. Մելիք-Ադամալյանցը վոչ այլ վոք է, յեթե վոչ Գրիգոր Արծրունու հոմանին (սիրուհին): Սա յեր տիկին Բուչարյանց. բժշկապետ Գրիգոր Բուչարյանցի կինը, վորին Արծրունին հափշտակել եր:

Ամոթ Արծրունու հիշատակին. այս վերջին արարքը մեծ ցավ և թքանք յեղավ հայ մամուլին և հայությանը:

Արծրունին զանցառության տալով յուր պրոֆեսոր յեղբայր պատվական և խելացի Անդրեասին[269], յուր բոլոր կարողության հետ «Մշակ»-ի խմբագրությունն ևս կտակել է յուր սիրուհուն, մի անբարոյական և ատելի ու զզվելի կնոջ[270]:

Հայոց հառաջադեմ մամուլն ուրեմն այսուհետև զրկավելու յե Արծրունի սեղանը:

110 Այս մի փաստը բավական է ապացուցանելու, վոր Արծրունին անխիղճ կերպով և անձնական հաշվով և վոչ թե ազգասիրական ձգտումով եր վերաբերվում դեպի հայության շահերը:

Ի՞նչ եմ ասում: «Մշակ»-ի հրատարակությունից մինչև օրս յե՞րբ է Արծրունին հայության շահն աչքի առաջ ունեցել: Նա իբրև հոտառու խմբագիր, իբրև ճարպիկ հրապարակախոս միշտ առօրյա խնդիրներով է զբաղվել. չհարցրած, թե այս խնդիրը վնա՞ս թե օգուտ է հայությանը: Ի՞նչ փույթ յեթե այսօր հակասում է յուր յերեկվան գրածին. յերեկ անաստվածություն եր քարոզում, յերրորդ օրը բողոքականություն, չորրորդ օրը մի ուրիշ ճանապարհով եր ղեկավարվում, այսօր ջերմ լուսավորչական է: Այս յերևույթները Արծրունու համար դատապարտելի չեն:

Ի դեպ. խոստովանենք, մեր բոլոր խմբագիրները ազգային հրապարակախոսությունը իրանց համար խանութ են շինել, իրանց շահերը ազգինից ավելի գերադաս համարելով. յերեկվա անարգված[ի]ն այսօր գովաբանում են: Մի օր կար, վոր Աբգարը հայհոյում եր Մակարին և



չեր ցանկանում նրա կաթողիկոսությունը, ըստ վորում հույս չուներ, թե կիրագործվի, բայց յերբ Մակարն հափշտակեց սուրբ գահը և ազգընտիր Մելքիսեդեկին չպրտեց[271], մեր Աբգարը դառավ Մակարի հլու գործիքը և սկսեց ափեղցփեղ լուտանքներ աչկարա թափել Մելքիսեդեկի հասցեյին, մի քանի նսեմացուցիչ ակնարկներ ել յուր «Արձագանք»-ի եջերումն է վարագույրի տակ թացրել:

Այս մասին յուր տեղը և յուր ժամանակին կգրեմ, յերբ կսկսեմ վերադառնալ իմ կենսագրությանը:

111 Համենայն դեպս պարզ խոստովանելու յենք, որ մինչև օրս Արծրունու նման հրապարակախոսության մեջ ընդունակ լրագրապետ մենք չենք ունեցել և նա յուր տված վնասների հետ յուր մեծ օգուտն է բերել:

«Մշակ»-ի քսան տարվան գոյության մեջ յուր կազմակերպած լեզուն վոչինչ առընչություն չի ունեցել հայ լեզվի հոգու հետ. Գրիգոր Արծրունու լեզուն նորաստեղծ մի նոր հայերեն է. նա ինքն եր, վոր յուր լեզվաբանական չենքը հաստատեց յեվրոպական լեզուների հիմքի վերա, վոչ միայն օտարազգի բառերի անհամար կույտեր խճողված են «Մշակ»-ի լեզվի մեջ, նրա վոճերի մեջ ևս քիչ կա հայություն:

Այսուամենայնիվ նա յուր դյուրըմբռնելի խորթ հայկաբանությամբը կարողացավ բազմաթիվ ընթերցողներ պատրաստել հայ տարրի մեջ: Մինչև «Մշակ»-ի դուրս գալը շատ քչերն եյին հետաքրքրվում հայ լրագրությամբ և նույնիսկ հայերեն ընթերցանությամբ, յեղած լրագրության տված մտավոր սնունդը շատ աննշան եր, իսկ Արծրունին յեվրոպական թերթերի ուղղությամբ կարողացավ վերջապես հայ լրագրական գործողությանը մի հառաջադիմական զարկ տալ, վորով և հայ մամուլն յուր արժանավոր տեղն ունեցավ օտարազգիների գնահատության շարքում:

Այսուամենայնիվ Արծրունու տված վնասը շատ սակավ է, նայելով նրա տված ուղղությանը. մշակականները, չի կարելի ասել, թե սրտով հայ չեն, բայց յուրյանց հայության վերա ունեցած սխալ գաղափարովը, նրանց բռնած վաղաժամ թյուր ընթացքովը մեծ վտանգ կարող է հանդիպել հայությանը:

Ակներև է, վոր մեր ինքնուրույն յեկեղեցին յուր ծեսերով յեղել է մինչև օրս մեր ազգության պաշտպանը. շատ ազգեր, այն էլ մանր ազգեր, կրոնով խառնված ընկնելով օտար մեծ պետությունների հետ, մի կաթիլ ջրի պես անհետացել են մեծ ազգությունների մեջ. նրանցից շա-
112 տերն իսպառ կորցրել են իրանց հետքը, այլք միայն պատմության էջերումն են անուն պահել, իսկ հայերս մեր քրիստոնեյական դավանաբանական ծեսերի մի քանի տարբերությունների շնորհիվ ապրում ենք իբրև առանձին ազգ և կազմում ենք մի վորոշ ազգություն մեր վորոշ ազգային յեկեղեցու մեջ:

Հայտնի յե նույնպես, վոր մեր ազգի փոքրամասնությունն, ընդունելով կաթոլիկ, հույն և բողոքական դավանությունները, կորած է մեզ համար. Թողունք Լեհաստանի 60,000 հայերը, Թողունք հունական Հայաստանի բազմամարդ հայ տարրից մի աննշան փոքրամասնության առկայծյալ մնալու տխուր փաստը, այսօրվան օրս նույնիսկ հայ հողի վերա յեղած կաթոլիկության և բողոքականության դարձած հայերից շատ քչերն են իրանց հայությունը խոստովանում, բազմությունը վոխերիմ թշնամի յե հայության:

Իսկ Գրիգոր Արծրունին ընդունում էր առանց կրոնի խտրության հայությունը, նրա ուղղությամբ հայը կարող է թեկուզ մահմեդականության մեջ մտնել, բայց նա չի կորչում հայությունից:

Ըստ եյականին այս վորքան և ճշմարտություն լինի, բայց մեր ազգի լրության համար սպանիչ հետևանք ունի. ապացույցները հազարավորներ են, վոր՝ տեղ ժողովուրդը յուր ազգության հետ կապված է յեկեղեցու ձեռքով, իսկ այսօր մեր ազգության հազարերորդականը միայն քիչ ու շատ գաղափար կարող է կազմել ազգության մասին. մեր ստվար մեծամասնությունը ռամիկներից է բաղկացած, վորոնք, յեթե յենթարկվեն ուժեղ ազգերի կրոնական ազդեցության տակ, կջնջվեն հայության միջից:

Յեվ ահա «Մշակ»-ի տարածած ուղղությունն է՝ քարուքանդ անել ազգային դարավոր յեկեղեցին: Այսօր բոլոր



մշակականների համար հայ յեկեղեցին մի ավելորդ մարմին է:

Միակ մխիթարությունն այս է, վոր վերոհիշյալներից շատերը քիչ ու շատ հասկացողներ են, հայ ժողովրդի մեծագույն մասը դեռ չի թափանցել «Մշակ»-ի ներքին ձըգտումների և նպատակների մեջ:

113 Այսպես թե այնպես Արծրունին յուր մահովն էլ անմահացավ:

Էջմիածինը նրան թաղելու համար հատկապես յեպիսկոպոս ուղարկեց: Յեկավ Գառնակերյան Գրիգոր յեպիսկոպոսը[272]:

Գուցե ուրիշ ժամանակ, նույն իսկ Էջմիածնական նախկին վարչության օրով քահանա էլ չեյին տալ Արծրունուն թաղելու համար, իսկ այսօր Էջմիածինն յուր տեղակալով և սինոդականաց ուժեղ մեծամասնությամբ Արծրունու կուսակցությանն է պատկանում:

Ի՛նչ աղմուկ է, ասված իմ, վոր դեկտեմբերի 19-ից ցայսօր անընդհատ տևում է «Մշակ»-ի խմբագրատան առաջին. լուսացավ, ժողովուրդը խռնված է Բազարային կոչված փողոցում, և մինչև մութը չի հեռանում. ամեն վոք ցանկանում է մեծ մարդի դիակը համբուրել. շատերը չգիտեն էլ ո՞վ է այդ մեծ մեռյալը, հոսանքը նրանց ձգել է այստեղ:

Կարգադրիչ մասնախումբը վոչ ցորեկը հանգիստ ունի, վոչ գիշերը քուն. այլ և այլ տեղերից յեկած հեռագրների կարգադրությունը և պսակների համար անելիք տնօրենությունը բավական է նրանց ամենքին պարապեցնել, ուր մնաց, վոր ամեն յեկողին պատասխան պիտի տան և Արծրունու հոմանու կապրիզները պիտի կատարեն. անտանելի կինը միանգամայն ձանձրացուցիչ է դարձել. Միրզոյանցը քանիցս մտադրվել է թողնել ու հեռանալ, բայց կրկին համբերել է:

26 դեկտեմբերի:

Այսօր Աբգար Հովհաննիսյանը պսակ է ուղարկել:

Աբգարն «Արձագանք»-ի խմբագիրն է և Արծրունու վոխերիմ հակառակորդը: Նրա պսակի վերա գրված է՝ Աբգար

Հովհաննիսյանից Գրիգոր Արծրունուն, ժապավենի մյուս կեսի վերա կա լատիներեն մի հայտնի առած, վորի նշանակությունն է. «մարդս հետ մահվանն է յերջանիկ»[273]:

Այս վերանագիրը վիրավորանք է համարել Արծրունու հիշատակի համար և մշակականների մի մեծ խումբ պահանջել է կարգադրիչ մասնաժողովից վերադարձնել Աբգարին յուր ղրկած պսակը[274]:

Ամենայն իրավամբ. ո՞վ էր ասում Աբգարին հակառակ
114 ուղղության պարագլխի համար պսակ ուղարկել, վոր յերե-
սովը զարկվի:

Առավել խելացի յե վարվել Արծրունու սարսափելի մյուս հակառակորդը, «Նոր Դար» լրագրի խմբագիր Սպանդար Սպանդարյանը:

Նա յուր լրագրի մեջ ցավակցական մի հոդված գրելով բավականացավ[275], վոչ պսակ ուղարկեց և վոչ թաղմանը մասնակցեց, թե՛ ինքը և թե՛ յուր բանակի պարագլուխները. այն ինչ Աբգարը պսակի վերադարձնելովը խայտառակվելուց հետո էլ թաղման որը յեկավ յեկեղեցի:

27 դեկտեմբերի, կյուրակի:

Ինն ժամին առավոտյան Արծրունու դիակը դուրս բերին տանից դեպի վանքի մայր յեկեղեցին. սարսափելի ցուրտ և բուք որ է, ձյունը շարունակ գալիս է. բայց դժվար թե քաղաքի կես բնակիչները իրանց տներում մնացած լինեն, տունը մեկը կա՝ ներկա յե թաղման հանդեսին, հինգը կա՝ այնտեղ է: Ամբողջ համքարությունն իրանց դրոշակներով և գլխավորներով, քաղաքագլուխն յուր իրավասուներով յեկել են պատվել հանգուցյալին:

Պսակների թիվը 308-ի հասավ[276]:

Նախ սովորություն էր յուրաքանչյուր պսակ բերողներին կրել ձեռքով իրանց նվիրած պսակը, իսկ այժմ, վորովհետև որենքով արգելված է ձեռքով պսակ կրելը, վարձված են ութն հատ քառաձի լծված դիակառք, վորոնք զարդարված են չորս կողմից պսակներով:

Ափսո՛ս վոր արգելվեցավ պսակների վերնագրերը տպելըն, ապա թե վոչ պատմության համար մեծ հարցասիրական նյութ էր Արծրունու արժեքը և յուր պատրաստած սերունդի հասկացողությունը քննելու համար. վոչ մի մաս-



նավոր մարդի այդպիսի դրվատումներ պատմությունը մեզ չի ներկայացնում: Աստծուն անգամ ծանր է տալ այն ածականները և գովքերը, ինչ վոր տված էյին պսակների վերա
Արծրունուն: Ծիծաղելին այս է, վոր շատերն այն հատկու-
115 թյուններն էյին տվել Արծրունուն, վորոնք միայն սեփա-
կան են նրա ուղղության հակառակ բանակին: Օրինակի
համար՝ յեկեղեցու պաշտպանին, սեր յեվ միություն քարո-
զողին ևն, ևն:

Արծրունին յուր վոչ մի հոդվածում հայ յեկեղեցին չի պաշտպանել, սեր և միություն չի քարոզել. նա ասում էր՝ կյանքը կռվի և կուսակցության մեջն է, հայ յեկեղեցին աղանդ է ևն:

Այժմ իհարկե տեղը չէ մանրամասնությունների մեջ մտնել. մենք հետևենք հանդեսին. ժողովրդի մի ծայրը դեռ Արծրունու կացարանումն է, մյուսը վանքն է հասել. տաքա բոլորեքյան հուղարկավորողներ պիտի հաշվել, ըստ վորում վանքի լայն բակումն ասեղ ձգելու տեղ չկար հանդիսատեսների ձեռքից. յերբեք Թիֆլիզն այսչափ բազմություն միասին խմբված ինչ և իցե հանդեսի համար տեսած չունի: փողոց, կտուր, լուսամուտ չկա, ուր հանդիսատեսներ չլինի[ն]. կանայք, յերեխայք ցուրտն ու բուքն արհամարհած յեկել են Մշակին թաղելու, ինչպես շատերն էյին ասում:

Պատարագիչը Գառնակերյանց յեպիսկոպոսն էր, վորը վերջին մի ներբողական քարոզ խոսեց Արծրունու արժանավորությունների և յեկեղեցուն ու ազգին արած ծառայությունները թվելով. նա շեշտում էր նույնպես հոգևորականության մատուցած ոգուտները:

Ի՞նչ է նշանակում ժամանակի և հանգամանքի բերմունք. «Մշակի»-ի սկսած որից Արծրունին մտրակում էր հայ հոգևորականությանը, Գեորգ Դ. Կաթողիկոսի մահվան բոթը մանր լուրերի մեջ յերկու տողով սառնությամբ հաղորդեց[277], իսկ այսոր հայ յեպիսկոպոսը սեղանի բեմից Արծրունու բարեպաշտությունները և կրոնական ուղղությունն է դրվատում:

Գառնակերյանի սեպհական համոզմունքը չէր այս. ինչպես աշկարա յե, նրան պատվիր[վ]ած է յեղել Արիստակես յեպիսկոպոս Սեդրակյանից[278] և տեղակալ Յերեմիա յեպիս-

կոպոսից․ Արծրունին այս յերկու սինոդականներին յուր ձեռքումն ունէր բռնած։

116 Գառնակերյանից հետո խոսեցավ յեկեղեցու մեջ Բեգնազարյան տեր Սարգիսը[279], վորը Արծրունու ճշմարիտ բարեկամներիցն է և Արիստակես յեպիսկոպոս Սեդրակյանի սիրելին։

Սա Արծրունուն համեմատեց Քրիստոսի հետ՝ մեջ բերելով Հիսուսի խոսքերը և գործքերը, յերբ նա խարազանով տաճարից վռնդեց հատավաճառներին ասելով․ «տուն իմ տուն աղօթից կոչեսցի և դուք արարիք զնա այրս աւազակաց»[280]։

Հայր Բեգնազարյանցի ասությամբ Արծրունին մորակելով դուրս շպրտեց յեկեղեցու յուր հակառակորդներին, կեղծավոր փարիսեցիներին։

Համաձայն եմ, Արծրունու հակառակորդներն, յեթե խորը թափանցենք, իսկապես կեղծ յեկեղեցասեր են․ նրանցից շատերն իրանց շահերի համար են յեկեղեցուն հարած, բայց ասել, թե Արծրունին ինքը յեկեղեցին սիրելով դուրս է անում ուրիշներին, առավել քան անհեթեթություն է, յեթե չասենք չափազանցություն։

Մարդիկը խոսքի մեջ չափ ու սահման չունեն։

Բեգնազարյանի քարոզը մեծ հուզումն հառաջացրեց յեկեղեցումը․ նա ինքն էլ հուզվեց և ուրիշներին էլ շարժեց․ ամբողջ յեկեղեցին հինգ րոպեյաչափ վողբ ու կոծ եր, կանանց հառաչանքն ու աղաղակը խեղդեցին բեմբասացի խոսքերը։

Բեգնազարյանից հետո մի վոտանավոր կարդաց սարկավագ Հովհ․ Նազարյանցը[281]․ այնուհետև կես ժամաչափ հազիվ յեկեղեցին դատարկվեց։

Տխուր հանդեսը գնաց դեպի Ալեքսանդրյան կոչված այգին։

Կարգադրիչ մասնաժողովը տնօրինած է յեղել, վոր հան–
դեսը այգու արևմտյան կողքովը Բարյատինսկայա կոչված
117 փողոցով բարձրանա և գլխավոր կառավարչապետի տան
առաջով պտույտ անի ու Թամամշևի քարվանսարայի
մոտով մտնի Միջի կոչված փողոցը և հառաջե դեպի Խոջիվանքի գերեզմանատունը։

Կառավարությունը նախապես տեղեկանալով, արգելել եր կառավարչապետի առաջովն անցնելը․ վոստիկանությանը տնօրինած է յեղել, վոր հուղարկավորությունը Բարյատինսկայա փողոցի կեսից մտնի փոստայի փողոցը և դուրս գա Թամամշևի քարվանսարայի առաջը։

Կառավարության տնօրինության հակառակ հանդեսը թողեց փոստայի փողոցը և վեր բարձրացավ։ Այստեղ մեծ ընդհարումներ պատահեցան վոստիկանության կարգապահ կոզակների և ժողովրդի մեջ, ծեծ ու ջարդ, տուր ու թմփոց, քիթ ու ռնգունք փշրել շատ տեղի ունեցան․ վոստիկանական պաշտոնյայք խաչ ու խաչվառը խլում եյին, տերտեր ու տիրացուք պաշտոնյաներին ապտակում եյին։ Այնպես իրար եյին խառնվել, վոր վոչ վոք չեր հասկանում թե ի՞նչ է անում, աղմուկների ու աղաղակների ձեռքից յերգեցողությունն ու յերաժշտությունը ընդհատվեցին․ ինքը վոստիկանապետը փախուստ տվեց դրդված ամբոխի զայրույթից։

Այնուհետև հոգևորականությունը, դիակառքերը և դագաղը հառաջեցին դեպի վերև, իսկ համքարի դրոշակակիրներն իրանց գլխավորների հետ առանձնացած գնացին փոստայի փողոցով և յեկան Թամամշևի քարվանսարայի մոտ միացան հուղարկավորությանը։

Հոգևորականության միջից Գառնակերյանը իրարանցումի ժամանակ քաշվեց մտավ «Աղբյուր» ամսագրի խմբագրատունը և զգեստը հանեց ու յերբ հանդեսն անց կացավ, ինքը կառք նստեց և գնաց Խոջիվանքի գերեզմանատունը։

Ի դեպ․ Արծրունու հայրենի գերեզմանատունը «Վերա»
կոչված մասումն է, այնտեղ է թաղված նորա հայրը՝ հազա–
118 րապետ (գեներալ) Յերեմիա Արծրունին[282]․ բայց վորովհե–
տև Գրիգոր Արծրունին յուր հոր հետ մինչև յուր մահը
խռով եր, այդ խռովությունը հասցրեց մինչև յուր մահը
և մահից հետո։ Ձայն դուրս յեկավ, վոր «Մշակ»-ի խմբա–
գիրը ցանկություն է հայտնած յեղել հոր մոտ չթաղվելու
Վերայումը, այլ Խոջիվանքումը յուր սիրուհու յեղբոր[283]
կողքին։

Բաց ճանաչելով Գրիգոր Արծրունու վոխակալ բնավորու–

թյունը, ցես չեմ ժխտել, թե այդ կարող էր յուր անորենությունը լինել, բայց միևնույն ժամանակը հավատ չեմ ընծայում այս խրողությանը: Ըստ իս, սիրուհին ինքն է ցանկացել Արծրունուն յուր հայրենի գերեզմանատանը թաղելու և այդ սուտը հնարել ու հաջողեցրել է:

Բոլորեքյան այսօր խելքները կորցրել են. մի խումբ տաճկաստանցի մշակ[ներ] վերցրել են գլխների վերա դագաղը և ուրիշներին թույլ չեն տալիս տանելու:

Օրը սարսափելի ցուրտ էր, բայց վողորմելի մշակներից բարձրացած շոգին նմանում է քլքլթան կաթսայի միջից բարձրացած յեռացած ջրի գոլորշուն, շոգու միջին դագաղը ամպերով պատած առարկայի նման է յերևում:

Գնացքը հասավ մինչև Հավլաբարի պոլովերը. յերկու փողոցները միացրած եյին թիթեղյա զարնեզարդ կամարով և մեջ տեղումն էլ խոշոր տառերով գրված էր հետևյալ վոտանավորը, վորը շարադրել էր նոր բանաստեղծների շարքն ընկնող Ներսիսյան դպրոցի յերկրորդ դասարանից թերի դուրս յեկած Հովհաննես Թումանյանցը[284]:

119 Վերջապես դագաղը մտցրին Խոջիվանքի գերեզմանատան 30 քառակուսի սաժենաչափ տեղ տախտակներով շրջապատված ցանկապատի մեջ:

Այս նախապատրաստությունը արած էր հոգևորականությանը և ճառախոսներին ներս ընդունելու համար: Թեպետ խելացի կարգադրություն էր, վորպեսզի ազատ շարժվելու տեղ մնա, բայց ելք տեղ չկար:

Ցանկապատի մեջ յերկու ամբիոն էր շինած. մեկը դագաղը դնելու համար և մյուսը ճառախոսների համար:

Դեռ թաղման կարգը չսկսած, առաջին անգամը ամբիոն բարձրացավ Ավետիք Ցեղեկյանը[285] իբրև Գեորգյան ճեմարանի և Եջմիածնի պատգամավոր և սկսեց գովատել Արծրունուն ու նրան հետևողներին և քսսանք ու պարսավանք թափել Արծրունուն չհամակրողների հասցեյին. Արծրունու կուսակիցներին նա անվանում էր՝ ո՛վ լավեր, իսկ հակաարծրունականներին՝ ո՛վ վատեր: Այս յերկու խոսքը հաճախ կրկնելով ձանձրություն էր պատճառում:

Ցեղեկյանից հետո բեմ բարձրացավ տիկին Մարիամ Զոբանյանը, վոր իր ամուսնուց ստացած Զոբանյան ազգանու-



նին միացրել է յուր հայրենի Մամիկոնյան ազգանունը և ստորագրում է Մամիկոնյան-Զոբանյան:

Այս տիկինը ներկայացուցիչ էր Թիֆլիսի մի խումբ կանանց և նրանց կողմից էր փառաբանում Արծրունուն հաճախ անվանելով նրան. ո՛վ հերոս:

Յերրորդ բեմբասացն էր «Մուրճ» ամսագրի խմբագիր Արասխանյանց Ավետիքը[286]:

Սա սկսեց «Մշակ»-ի սկզբնավորության օրից, 1872
120 թվականից. մինչև այն օրը իբր թե հայերի մեջ չի յեղել ինքնուրույնություն և համայնական գիտակցություն, չի յեղել յերախտագիտություն, այլ յեղել է մի տեսակ աղայական դաս, մի տեսակ կամայականություն:

Յեկել է Արծրունին, «Մշակ»-ի թերթերով կրթել է հայությունը և ինքնաճանաչ է արել:

Յեվ ահա այսօր Արծրունին շրջապատել է յուր դագաղի շուրջը 50,000-ի չափ հայ, իսկ դուրսն էլ պատրաստել է 3,000,000 հայ, վորոնց ղեկավարել է քանի կենդանի յեր և ղեկավարելու յե մահից հետո:

Այս ճառախոսը նա յե, վոր հինգ տարի հառաջ «Մուրճ» ամսագրի առաջին համարում Արծրունուն տալիս էր գործելու ընդունակություն մինչև տասը տարի «Մշակ»-ի սկզբնավորության օրից, իսկ այնուհետև սկսած [18]82 թվականից, իբրև թե Արծրունին կորցրել է ղեկավարելու կամ նոր մտքեր արտադրելու ընդունակությունը, դարձել է կանգնած ու լճացած ջուր: Ամբողջ գրվածքից այս միտքն էր դուրս գալիս, վոր Արծրունու ուղեղը բթացել է և անպետքացել[287]: Իսկ այսօր նրա թաղման օրը նրա դագաղին է դառնում և ասում. «դու եյիր, վոր քսան տարի ղեկավարում եյիր հայությունը»: Ապա ժողովրդին դարձած, այս է գոչում. «հայե՛ր, ժողովո՛ւրդ, Արծրունին կար, դուք էլ կայիք, Արծրունին ձեզ համար էր, դուք էլ յուր համար եյիք, նա մեռավ, չկաք և դուք, յեթե չասեմ մեռաք, գոնե առանց ղեկավարի, առանց գլխի մնացիք»:

Ինչ յերկարացնեմ, հարկավոր էր վերցնել «Մուրճ»-ի առաջին համարը և կոխել Արասխանյանցի աչքը, իր հրեշային հակասությունների համար:

121 Այս մասին արդարև Արծրունին արժեր փառաբանու-

[redacted]

թյան․ «Մուրճ»-ը դուրս յեկած օրից մինչև մահը պարբերաբար հեղինակություններ, յերգիծաբանություններ, արհամարհանքներ չհնաց, վոր չթափեր Արասխանյանցի գլխին, առաջնորդողներում ու ֆելիետոններում չարունակ ոճով, խելացնոր ու խեղկատակ էր անվանում Արասխանյանցին[288]:

Արդարև խեղկատակ․ Արծրունու հանդիմանություններին վերջում այնքան վարժվեց Արասխանյանցը, վոր լռությամբ տանում էր ամենը և վոչ այնչափ միայն․ Արծրունու հոբելյանին յուր խմբագրության կողմից մի ուղերձ նվիրեց:

Ահա այսպիսի յերիտասարդություն է պատրաստել «Մշակ»-ը․ Արասխանյանցը «Մշակ»-ի արտադրություններից մեկն է:

Տեսնել արժեր, թե ի՛նչ հիմարական շարժվածքներ էր անում Արասխանյանցը ճառախոսելու ժամանակ, ինչպես մեր-մեր էր թռչում, ինչպես գլխով, ոտքով, ձեռքերով, ուսերով, մազերով, պոչի տակ կծոծ փուշ մտած յեզան նման վոստոստումներ էր անում: Զանազանությունն այն էր, վոր յեզը աջ ու ձախ փախուստ կտար, իսկ Արասխանյանցը յուր կանգնած տեղումն է Թիֆլիսեցոնց ասածի նման պուխկ-պուխկ գալիս:

Թե՛ ճառախոսը և թե՛ ունկնդիրների մեծամասնությունը միմյանց լավ ճանաչել են․ ամեն մի նախադասության վերջին ամբոխը կեցցեներ է գոչում և ծափահարում:

Այս էլ մի նորություն էր․ սիրեկան մեռելը առաջներին, մի քանի րոպեյից դերեզման պիտի իջեցնեն և այդ ժամանակ կեցցեներ են գոչում, վորոնց պատասխանում է Արասխանյանցը․ «դու էլ կեցցե՛ս, Արծրունու պատրաստած ժողովուրդ»:

122 Արասխանյանցից հետո ամբիոն բարձրացավ Բաքվի հայ կանանց կողմից յեկած պատգամավոր տիկին Թամար Կաճկաճյանցը և անվանեց Արծրունուն կանանց իրավունքի պաշտպան:

Մի քանի ճառից հետո այս հանդիսության վերա գերմանական համալսարան ավարտած դոկտոր փիլիսոփայության որիորդ Վարդուհի Հակոբյանը ավելացրեց և կանանց ազատության պարագլուխ ու պաշտպան բառերը:

Այդտեղ մի քանիսը իրար հետ քչփչացին, յես լսեցի



մի պարոնի հետևյալ տրտունջը․ «այո, ուղիղ եք ասում, պաշտպանեց Արծրունին կանանց իրավունքն և ազատությունը, յերբ յուր ընկերից խլեց նորա ամուսնուն և խայտառակեց հայի պարկեշտ անունը»:

Բարձրացավ Շիրվանզադեն և Նովոյե ոբոզրենիե ռուս լրագրի կողմից ճառախոսեց:

Սա էլ անվանեց Արծրունուն յուր ուսուցիչը և ղեկավարը: (Միջանկյալ ասենք, վոր Շիրվանզադեն հափշտակել է Արտաղյանի կնոջը և ապրում է նրա հետ, վորից ունի յերեք վորդի):

Սրա ասությամբ հայության հոտավետ ծաղիկն էր Արծրունին: Այս արժեքը այսօր Շիրվանզադեն ընծայում է այն մարդին, վորի սենյակի մթնոլորտը «Արձագանք»-ի էջերում մի որ Շիրվանզադեն նեխած ու վարակված էր հռչակում[289]: Այսօր սենյակի մթնոլորտը հոտացնող Արծրունին վողջ հայության հոտավետ ծաղիկն է:

Ամոթ այսպիսի բամբասացներին, հազար ամոթ մեզ, վոր տանում ենք այսպիսիների հանդգնությունը, յեթե չասեմ լրբությունը:

123 Կարդացվել են այնուհետև 25 պատրաստ ճառերից 20-ը, վորոնց յես ներկա չեղա, ցուրտը սաստիկ էր, թողի և հեռացա[290]:

Բավական համարեցի վերջինը լսել վրացի Նիկո Ծերեթելի[291] կոչված պարոնի դամբանականը:

Սա այն նախկին յերիտասարդներիցն է, վոր «Մշակ»-ի սկզբնավորության տարիներում յերկու շաբաթը մի անգամ ժողովվում էին «Մշակ»-ի խմբագրատուն:

Արծրունու նախաձեռնությամբ մի խումբ վրացի յերիտասարդներ և մի Թուրք զարգացած յերիտասարդ[292], ինչպես ասացի, յերկու շաբաթը մի անգամ մեզ հետ «Մշակ»-ի խմբագրատան մեջ խորհում էին Կովկասի բնիկ ազգերի համերաշխության մասին:

Ծերեթելին յուր ճառի մեջ այդ յերջանիկ որերն էր հիշում․ նա բարեմաղթում էր, վոր յեթե մինչև որս յուրյանց ցանկությունը չի կատարվել, գոնե այսուհետև հայերն ու վրացիները ճանաչեն իրանց ոգուտն ու վնասը և համերաշխ լինեն:

# [ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ]

(Հուշիկներ. յերկրորդ շրջան. 1860-ական թվականներ)

1 Հիսնական թվականների վերջերքը ռուսահայերիս համար կարելի յե նմանացնել գարնան սկզբներին, յերբ յերկիրը, թեպետ դեռ չի ազատվել ձյունից, բայց արևկող տեղերում արդեն հողն յերևում է ու ձնծաղիկն իր բոլորակի դեղին ու փայլուն ծաղկի տերևներով, վոսկի դրամների նման, բաց հողի մակերևութին այս ու այնտեղ առավոտյան արևի ճառագայթներից չավաղ չավաղ պեծկին է տալիս և հաճոյալից խոստանք է պատճառում ձմեռվան ամուլությունից ձանձրացածներին: Տաճկահայերի մասին այն ժամանակ անձամբ ինքս գաղափար չունեյի և հարկ չեմ համարում. շոշափել նրանց կացությունը. իմ խոսքս այստեղ բացառապես ռուսահայերիս վերաբերությամբ է:

«Հուշիկներ»-իս առաջին շրջանի վերջերքում համառոտակի շեշտել եմ ազգիս գրականության հորիզոնի վերա հետզհետե, ավելի ճիշտը՝ միաժամանակ, յերևան յեկող պարբերական թերթերի մասին: Հայության կենտրոն Թիֆլիսում, Ռուսիո հին մայրաքաղաքում և Սև ծովի ափերքին գլուխ են բարձրացնում «Մեղու Հայաստանի»ն[293], «Հյուսիսափայլ»-ը, «Ճռաքաղ»-ը, «Մասյաց աղավնի»-ն ու «Ծիածան Հայաստանի»-ն[294]:

Դեռ վոչինչ արդյունք ցույց չտված, ձեռաց ստեղծվում են յերկու միմյանց հակառակ բանակներ, ներկայիս խոսքով ազատամիտ և պահպանողական, այն ժամանակվան բառերով ոբսկուրանտ (խավարամիտ) և լուսավորյալ:

Առաջինների ներկայացուցիչ է հանդիսանում Մոսկվայում
«Լազարյանց ճեմարանի ուսուցչապետ Ստեփանոս (վարդա-
պետ) Նազարյանցը», ունենալով Նալբանդյանցի նման կրա-
2 կոտ ու պերճախոս աշխատակից: Իսկ յերկրորդներինը յե-
րեք հոգի. առաջինը Թիֆլիսում Ստեփաննոս ավագ քա-
հանա Մանդինյանցը յուր «Մեղու Հայաստանի» լրագրով,
յերկրորդը—Առաքել Արարատյան ճապաղ աշխատակից ընկե-
րով—Մոսկվայում նույն «Լազարյանց ճեմարանի Հայկաբա-
նության և կրոնագիտության ուսուցիչ, մագիստրոս և
ասպետ Մսեր Գրիգորյան Մսերյանցը» յուր «Ճռաքաղ» հան-
դիսով, իսկ յերրորդը՝ Թեոդոսիայում «Հիսուսի Քրիստոսի
ծառա Գաբրիել վարդապետ Այվազյանը (Այվազովսկի), Տե-
ղակալ առաջնորդության վիճակիս Հայոց Նախիջևանի և
Պեսարաբիո», յուր խմբագրությամբ լույս տեսնող «Մա-
սյաց աղավնի» հանդիսով և «Ծիածան Հայաստանի» հավել-
վածով*):

Առանց հաշվի չեր, վոր մենք չեշտեցինք և չակերտնե-
րի մեջ առանք չորս խմբագրապետների յուրացրած տիտղոս-
ները**). մինչև իսկ ծիծաղելի յե մի քանի չնչին բառերի
մեջ տեսնել կուսակցության բուն շարժառիթը, բայց ստիպ-
ված ենք յուր ժամանակի հայացքով դոնե արտաքուստ կանգ-
առնել այդ խոսքերից մի քանիսի վերա: Առավելապես վար-
դապետ բառի վերա, վոր Նազարյանցը հատկացրել եր յուր
անձին:

Վարդապետ կոչումը մանուկների համար ել պարզ է. ա-
մեն մի վեղարավոր վարդապետ է, իսկ ահա դուրս է յեկել
անմորուք, անվեղար մի աշխարհական ու հանդգնել է կարգ-
չառած ինքն իրեն վարդապետ հրատարակել: Թող հազար
անգամ բերանը հաղացնեն[?] Նազարյանն և յուրայինքն և
ստուգաբանեն վարդապետ բառի եյական նշանակությունը.
Թող պնդեն, վոր Նազարյանցը՝ լինելով ուսուցչապետ, դոկ-

*) Ջնջված է՝

Կուսակցության շարժառիթը յուր ներքին աստառով ինձ այն ժամա-
նակը, մի անփորձ պատանու, դժվար եր հասկանալ, բայց ընդհանրապես
այսօր համարձակ կարելի յե պնդել, վոր նույնն եր, ինչ ներկայինս է...

**) Փաստորեն Պռոշյանը չակերտների մեջ եր առել միայն Այվազով-
սկուն (լրիվ) և Մսերյանին (Թերի՝ չակերտների յերկրորդ մասը):



տոր արևելալեզվության՝ վարդապետ է, բայց ով կընդունի,
3 մեջ տեղը սրբապղծություն է կատարվել...[Դա] հերետի-
կոսություն է, իսկ հերետիկոսին մեր նախնիքը նզովքով
յեկեղեցուց արտաքսել են. ուրեմն ինքնակոչ Ստեփանոս
Նազարյանց վարդապետն ել նզովվածների շարքումն է:

Այս նզովվածների շարքումն է*) Հռոմի նզովքներին
մանկությունից վարժ, հայ վեղարի պատիվը այրության
հասակում ճանաչող, Հռոմի արբանյակների հոգևորական
տարազը յերկու տարի առաջ շպրտող Այվազովսկին և նրան
ձայնակցեցին բոլոր հայ վեղարավորները, վեղարի ստորաչ-
րյալ թերթերը և ընդհանրապես մեր հոգևորական սքեմին
ջերմ նախանձախնդիր հայությունը՝ շատ փոքրաթիվ բացա-
ռությամբ: [Մի կողմից] յերեք թերթ՝ «Մեղու», «Ճռաքաղ»,
«Համբավաբեր» [մյուս կողմից] կենտ ու կենտ համալսարա-
նականներ, հայ գրից ու գրականությունից բոբիկ, ազգա-
սեր կոչվելու հավակնություն ունեցող մատներով համար-
վող փողատերներ և հայ գրի սիրահար յերիտասարդներ
ու պատանիներ— սրանք եյին Նազարյանցի վարդապետու-
թյունը ընդունողները և «Հյուսիսափայլ»-ի պաշտպաններն
ու ընթերցողները:

Կռիվն սկսված եր, աշխարհական վարդապետը, ռեֆոր-
մատորի դրոշակը ձեռքին, վորից դուրս ռեֆորմա յե առա-
ջարկում հայոց յեկեղեցու դարերով սրբագործված կարգե-
րին:

Նոր ռեֆորմատորի մեջ յերկու կիրք իրար հետ պայքար
են մղել: Հայոց հին լեզուն, խրթին գրաբարը, մանկությու-
նից սովորած լինելով, նա իբրև վարդապետ ձեռնարկում է
գրաբար լեզվով հայ յեկեղեցու կրոնագիտությունը, շատ չի
անցնում բարվոք է դատում սկիզբը դնել նոր աշխարհաբարի
և յերկու հատորից գրքեր իրար յետևից լույս է ընծա-
յում «Հանդես Նոր հայախոսության» անունով[295]:

Իբրև Դերպտի համալսարանի ուսանող, շատ հավանա-
կան է, վոր աշխարհաբարը հառաջացնելու խնդրում Նա-
զարյանցի վերա ազդեցություն է գործել նույն համալսա-

*) Հանեցինք՝ ձայն տվեց Թեոդոսիայից բառերը

րանի ուսանող, Նալբանդյանցի ընկերակից, Խաչատուր Աբովյանցը։

Իսկ յեթե յերկու համանպատակ յերիտասարդների ուղղությունը միմյանցից հեռու յեն մնում, Աբովյանցը, սնած ու ծնած լինելով բուն հայ աշխարհում, սիրելով յուր մայրենի գյուղը և անխարդախ խոսքերը, վոճ ու դարձվածքները, ապագայումը միայն, յուր անհայտ կտակից հետո,
4 մեզ ավանդում է արարատյան աղու և քաղցր բարբառը, վորը և դառնում է կորիզը ներկա գրական Թերահաս լեզվի։ Իսկ Նալբանդյանցը, տանելով հետը Հավլաբարի խառնաչփոթ՝ Յերևանի, Թիֆլիսի, Գանձակի, վրացահայոց և այլ տարրական բարբառների պաշարը, չեր կարող մի կատարյալ լեզվի հիմք դնել, քան ինչ վոր արտադրեց նա յուր յերկու հատորավոր հատորների մեջ, անվանելով «Հանդես հայախոսության», մենք կասենք՝ հայ աղճատաբանություն։ Մանավանդ առաջին հատորը, վորի ձախ ու ծուռ բառերի դասավորությունները, դրաբառի և աշխարհաբառի չփոթն ու խառնուրդը, խեցբեկ բառերի յերկար շարանի համարությունները և օտար լեզուների ազդեցությունը միահամայն մի նոր անհասկանալի լեզվի նմուշն են տալիս մեզ։ Ո՞վ է հարցնում, հասկանում ես թե վոչ, ում ցավն է, մտավորապես մոլորվել ես թե վոչ. ուզես չուզես ահա քեզ նոր հայախոսության մի նախատոնկ, վորով հեղինակը, սքանչացած, կարմիր կովի պես իրանից առատորեն կթված կաթը, յուր սիրած ու փայփայած գրաբառ կանոնավոր լեզուն, աքացիի հարվածով հետ է շպրտում ամպարեղից։

Շնորհ ունենք Նալբանդյանցի նոր աշխատակից, ճարտարախոս և ճարտարարվեստ Թարմ յերիտասարդից, վորը Թեպետ միանգամից չի կարողացել կոկել ու հարթել նոր խմբագրի հրատարակությամբ լույս ընծայվող «Հյուսիսափայլ»-ի եջերում համառ ուղղարարետի դրաբառա-աշխարհաբառ գերմանահոտի Թարգմանական հոդվածների խոչ ու խութերը, բայց պարզ նկատվում է, վոր «Նոր Հայախոսության» հանդեսի բ. հատորը լավ կարի Նալբանդյանցի գրչի ներքո սրբագրվել է. յերկու հանդեսները միմյանցից արեվելքից արևմուտք հեռավորություն ունեին. համենայն դեպս մենք մեզ Թույլ ենք տալիս պնդել, վոր Նալբանդյանցի գլխում



մեխի նման ցցված եր յուր անհասկանալի նոր աշխարհաբառի գերազանցությունը։ Ով եր հակառակողը, չկար Աբովյանցը, չկար և նրա [1 անընթեռնելի] քաղցրահնչյուն «Վերք Հայաստանի»[296], վորից գոնե Նալբանդյանցը բուն հայերեն վոճեր ու բառեր սովորեր։ Աբովյանցից միայն մնացել եր Թիֆլիսում Աբղանյան տպարանում 35—40 Թվականներին (չեմ հիշում տարին) տպված մայրենի լեզուն[297], Նալբանդյանցը ձեռքը Թափ եր տվել ողումը և «Հյուսիսափայլ»-ում, իբրև յուր պատրոնին հակադիր օրինակ, տպագրում եր պերճաբան լեզվով և քաղցր բարբառով յուր ժամանակի հրատապ խնդիրներին վերաբերյալ հոդվածները՝ տե՛ղ իսկական ստորագրությամբ, տե՛ղ ֆելետոններով և որագրերով Կոմս Եմմանուել և ուրիշ կեղծ անուններով։ Գոհ եր Նալբանդյանցը, նա գիտեր, վոր հինգ Թերթանոց ամսաթերթի միայն այն յերեսներն են բացվում և կարդացվում, ինչ վոր կրում է յուր սեպհական ստորագրությունը, իսկ Նալբանդյանցը նույնպես գոհ եր՝ մտածելով, Թե ինքը նոր հայախոսության հիմնադիր է։

Իսկ ինչո՞ւ, ի՞նչ նյութերով կարող եր Նալբանդյանցը հա-
5 ռաջ տանել յուր միտքը. մի զարկ եր հարկավոր հաջող Թե անհաջող և նա այդ զարկը տվեց։

Թշվառ հայ ազգը՝ քաղաքական խնդիրներից դարեր հառաջ զրկված, գյուղացական գործին դեռևս անծանոթ, միակ մի եյական հրատապ խնդիր ուներ. հոգևորականություն և յեկեղեցի, Եջմիածին և լուսավորչադավան հայություն։

Ցավ ահա Նալբանդյանցը առավ յուր [1 անընթեռնելի] մուրճը և տուր վոր կտաս վորքան ույժ ուներ հայության հիմնաքարին։

«Հյուսիսափայլ»-ի եջերում Եջմիածինը համարված է միայն ոսկուրանա կղերի բուն, լուսավորչադավանությունը փտած կղերի դրած մի Թակարդ՝ իրենց գրպանը տոգած պահելու և յեկեղեցին մի կխավեր խախտված հաստատություն, վորին յեթե հիմքից չվերափոխես, ռեֆորմի չենԹարկես, մոտիկ ապագայում խպառ կկործանվի։

Մենք չենք դատապարտում Նալբանդյանցին. նա հայությունը և յեկեղեցին յերկու իրարից. տարբեր ֆակտորներ

եր ընդունում, նա հայության հիմնաքարը ճանաչում եր
միայն հայ լեզուն, վորի հառաջ տանելովը և զարգացնելո-
վը կպաշտպանվի հայ ազգության ամբողջությունը:

Այս կռիվը սկսել է Նազարյանցը, այս կռիվն է, վոր
շարունակվում է մինչև ներկայս:

Բայց Նազարյանցի ընդգծած ռեֆորմը մի նորություն
եր ամբողջ հայության համար. փաստերը լուսաբանելու կա-
րիք չկա, դիմացներիս լայն բացված եյին հայության միու-
թյունը պառակտող, հայությունը կլանող յերկու անելանելի
անդունդ... Մինը հայ կաթոլիկությունը, մի յերկու դար
հառաջ հայության արմատը մայր հողից կտրելու արևի ջեր-
մության յենթարկելով չորացնող[?] պապի առաքյալ ունի-
թոռների ձեռքով, մյուսը վերջին [2 անընթեռնելի] հանուն
Քրիստոսի քրիստոնեյության հարստահարող բողոքականու-
թյունը. մանավանդ հայ կաթոլիկությունը, վորը պապով ու
յեզվիտական մոլեռանդությամբ մոլորեցրել եր Եջմիածնից
հեռացած մեր կաթոլիկ հայ յեղբայրներին: Թող մանավո-
րապես հետ բռնանք թանձր վարագույրը. կաթոլիկ հայի
համար այն ժամանակ ամենից առելի ազգը պապի գերիշ-
խանությունը չճանաչող հայն եր. պապականությունից դուրս
հայը հերետիկոս եր, հերձվածող եր, այս աշխարհում մարդ
կոչվելու անարժան, իսկ հանդերձյալ կյանքում դժոխքի բաժին,
սատանայի ճանկերում տապլտկվող: Հայ լեզուն պապական
քարոզիչների ձեռքում միայն մոլերի հաղորդակցության
գործոն եր և այլ վոչինչ. հայերեն խոսողը միթե՞ պարտա-
կան եր հայ ազգի անդամ համարվել. հերիք է վոր կրոնով
կաթոլիկ ես և ի՞նչ ազգից, ի՞նչ աշխարհից, ի՞նչ նախնիքներից
սերված ես, կաթոլիկության համար վոչ մի նշանակություն
չունի. կաթոլիկությունը հոգվո փրկության ճանապարհն է,
պապին յերկրպագու լինելով դու յեղբայրացար յերկրագնդիս
յերեսին գտնված ավելի խելոք, ավելի լուսավորյալ կաթո-
լիկների հետ: Կաթոլիկ է Ֆրանսիան, Ֆրանսիայում բնակ-
6 վողներն իրանց Ֆրանցուզ են անվանում. դու էլ, Հայաս-
տանի բնակիչ, քեզ Ֆրանգ և վոչ հայ անվանիր:

Դառն յերգիծաբանական [խոսքեր չեն ասածս, այլ]
վշտալից սրտի փղձկանքներ*). վերցրու հայ լեզուն, հայ

*) Տեքստում՝ դառն յերգիծաբանական վշտալից սրտի փղձկանքներ չեն
խոսքերս:



դրաբառ ու աշխարհաբառ դրկանությունը իրանց մասնագի-
տություն դարձրած Մխիթարյան 200 տարվան միաբանու-
թյունը, հայ հին ու նոր մատենագրությունն իրանց ար-
դյունքի անսպառ աղբյուր արած, անխոնջ, ջանասեր ու բա-
նասեր, Յեվրոպայի սրտում բնակված, բուն հայի զավակ,
հայերեն խոսող, հայ կրոնական արարողությունները, հայ
ժամագիրքը կաթոլիկության դավանաբանական հոգվով
սրբագրած, իրանց հայ կոչող Մխիթարյան վերապատվելի
հայրերին, սկսած միաբանության հիմնադիր Մխիթարից,
յուր քաջ հայկարան հաջորդներից մինչև այսոր կամ ճիշտը,
մինչև յերեկ ամենից ավելի բեղմնավոր ու վաստակավոր
մեծ հոգևորականը, աշխարհահռչակ Ալիշանը, Մասյաց սա-
րում քնանալու ըղձով իբր թե տոգորված Նահապետը և
մանրազնին քննադատությամբ, հոգերանորեն ուսումնասի-
րենք և տեսնենք, թե վո՞րը հայ դրականությունը ծաղկեց-
նող այդ բազմավաստակ դրական հերոսներից գործեցին իր-
րև բուն հայ, իբրև հարազատ հայի զավակ՝ միակ ազգի
ամբողջությունը ազգության մեջ կենդրոնացած պահելու
մտքով: Ցավ է սիրտ պետք ասենք, 200 տարվա մեր դրա-
կանության ժրաջան մեղուները իրանց պատրաստած քաղցր
մեղրը մատուցել են պեծակների, բոսերի, կրետների զառն
հյութով: Կաթոլիկության խմորով [շաղախված] հայ ազգու-
թյունը, քրիստոսավանդ հայ կրոնը, սուրբ Գրիգորի արյամբ,
Լուսավորչի մեռոնով հայության ճակատին դրոշմած մայրե-
նի յեկեղեցին կաթոլիկության սուր մագիլների մեջ ճմլելու
ջանքն է ազոտ վարագույրի տակ հեռվից-հեռու տեսնվում:
Ի՞նչ մնաս իրանց քսակին, հայությունը դեռ ողեռ եր, հա-
յի մեջ նոր-նոր զարթնել եր ազգային պատիվ և ինքնու-
րույնության զգացմունքը, ամե՛ն մի հայ, դրագետ թե ան-
դրագետ, հերիք եր վոր յուր ընտանիքը կերակրելու չափ ապ-
րուստ հայթայթելու միջոց ուներ և նա պատիվ եր համա-
րում վերջին լուման չխնայել՝ վենետիկյան վոսկեկազմ հայ
գրքերից յուր տան զարդը վերա բազմացնել. ո՞վ եր յերե-
վակայում և մտածում, թե յերեք անգամ ավելի յե գնա-
հատված, յեվրոպական գիրք ու մատյանների համեմատու-
թյամբ, հայ հրատարակությունը: [2 անընթեռնելի] Խորե-
նացու հայոց պատմությունը, վոր այժմ 70—80 կոպեկ ար-

ժե, 3½ րուբլի չէր գնահատած, Ցեղիշեն 40 կոպեկից՝
7 1—80 կոպեկ: Գալով Մխիթարյան հայրերի սեպհական հասատավոր խարդախած հայ պատմական աշխատություններին, Չամչյանի, Ինճիճյանի և այլնի անպետք հատորները և այլ այսպիսի տափար փթանոց գրքերը, Մխիթար Աբբայի հատուկ ու հասարակ բառգրքերը, Հայկազյան ու Սուճեան բառարաններն իրանց կշռքի քաշով արծաթների արժողություն էյին նշանակված, և այդ բոլորը գեղարքունի ձկան նման իրար ձեռքից խլվում ու սպառվում էր հայերի մեջ: Անհիշաչար էր հայը. ազգի պառակտված մի գլխի հատվածի փաստը իրականություն էր՝ և հայը ներողամտությամբ տանում էր, հաշտվել էր մահացուցիչ հանգամանքի հետ և ուրախ էր, վոր մայրական գրկից հեռացած խորթ յեղբայրները հանուն հայության գործում են հայ ֆրանկության ասպարիզում: Վնաս չուներ, ուրախալի, բնորոշ ներողամտության գին էր այդ հայ ազգի անհիշաչարության, միայն թե ազգից չահին հավատարիմ կաց— [և] սեպհական կրոնական ներքին համոզմունքը հայ ազգի ամբողջության կողմից ակնածելի չէ:*)

Ամա՜ն, իրականությունն այլապես էր արևի լույսի պես աչք ծակում, վոչ կաթոլիկությունը և վոչ բողոքականությունը հավատարիմ չեյին հայությանը. առաջինի ջանք ու ճիգն այն էր, վոր հայ ազգին պապականության ցանցի մեջ խճճի, իսկ հեռավոր արևմուտքից ու Ամերիկայից արևելք քրիստոնեյություն և լույս տարածելու համար ուղարկված անխիղճ առաքյալները իրանց գրպանը տոգցնելու հույսումն էյին, նոքա յեկել էյին իբր թե անքրիստոնյաներին քրիստոնյա դարձնելու, իսկ իրանք թողած մահմեդականներին, բուդդայականներին, սատանապաշտներին և ամենատեսակ հեթանոսներին, անտեր անտիրական հայերին էյին զանազան խարդախ խոստումներով**) և չնչին արծաթով իրանց մատյանների մեջ ցուցակագրում և ամեն մի նոր քրիստոնյա դարձրածի համար վորոշ վարձատրություն ստանում: Հերիք չէր, վոր Տաճկահայքի կեսը բողոքականության խմորով էր շաղախված, Ռուսիայում Շամախու հայերը լուտերականության արբանյակների ձեռքով էյին յերկպառակված. հայրը վորդուց էր բաժանված, կինը մարդից և այլն:

*) Ջնջված է՝ նույնը և հայ բողոքականների վերաբերությամբ....

*) Ջնջված է՝ իրենց ուռկանի մեջ խճճում....



Տարաբաղդաբար այս ամենը լավ գիտեր Նազարյանցը, բայց և այնպես հայոց յեկեղեցին ռեֆորմի յենթարկելու ջատագով էր, հայ հոգևորականությանը հայհոյող էր,
8 իսկ մարդախույս բողոքական քարոզիչների հայ ամբողջության պառակտումը ազգության հենարանն էր համարում:

Պիտի ասած, վոր ինքը Նազարյանցը սաստիկ հակառակորդ էր կաթոլիկության. «Հյուսիսափայլ»-ի եջերում Նալբանդյանցի գրչով կաթոլիկության հիմն արեղակ չըրջվեց, Մխիթար և Մխիթարյանք ամենայն անաչառությամբ և արդարադատությամբ, ուսումնասիրությամբ լուսաբանվեցին ու մեղադրվեցին[298], բայց ըստ վորում դիմացը դըրված էր Նազարյանցի սիրած բողոքականությունը, ուստի մեր «անվեհեր վարդապետի» կողմից հայ յեկեղեցու «վոտից գլուխ ռեֆորմը» անհրաժեշտ էր համարված, հայ հոգևորականությանը խավարապաշտ ոսկուրանտներ և հայ յեկեղեցին մոլեռանդների բույն էր ճանաչված:*)

Բնական էր ուրեմն «Մեղու Հայաստանի», «Ճռաքաղ»-ի և հայ հոգևորականության հայ ազգին մատուցած ծառայությունները գնահատող սակավաթիվ գրագետների կռիվը յեկեղեցին ռեֆորմի յենթարկողի, յեկեղեցու հայրերին հայհոյողի դեմ: Մսեր Վարժապետ, Հովսեփ Ջերքեզյանց[299], կաթոլիկությունը նոր թողած Այվազովսկին իր խմբով ու թերթերով, Տեր Ստեփան Մանդինյանց ու Առաքել Արարատյանց իրանց Մեղվական խմբով՝ հայ պարբերական մամուլի սկզբնավորության հետ— հայության վերաբերյալ ամենակարևոր խնդիրները անուշադիր թողնելով— իրանց գրիչն ու մտավոր ույժը գործ դրին կրոնական կռիվներով խեղճ հայ ազգի մեջ յերկպառակության բոցը սաստիկ վառելուն: Հերիք չէր, վոր Տաճկաստանի մայրաքաղաք Պոլսում

*) Ջնջված է՝

Շատ չէյին Նազարյանցի համակրողները, նույն իսկ ինքը Նազարյանցը թեև...

Ցավ այդ էր կորիզը այն մեծ կռվի, վոր «Հյուսիսափայլ»-ի հետ միասին բեղմնավորվեց...

Մխիթարյանների ներքին ձգտումները նոր-նոր ըմբռնելուպես, հառաջ յեկավ հայ յեկեղեցու պաշտպանության համար մի ամբար գրականություն,— հայհոյանք ու նզովքներ եյին, վոր ազատ մինյանց գլխի թափում եյին հայերից հրաժարված Մխիթարյան և պոլսական հայ մատյանները. հերիք չեր, ասում ենք, այդ ամենը, և ահա Ռուսաստանումն ել այն ճանապարհը բռնեցին, ծաղր ու ծանակ, նզովք ու անարգական անպատշաճություններ լցվեցին մինյանց դեմ վերոգրյալ պարբերական թերթերի ծալքերում:

9 Այդպիսով կազմվեց կուսակիցների յերկու բանակ, մի կողմը, ինչպես ասացինք, հին գրաբառները, հնությունը, ծերությունը և աղայությունը, մյուս կողմը՝ նոր-նոր ռուսական համալսարանների նստարանները թողած յերիտասարդությունը, իրանց լուսավորյալների շարքին պատկանողների հավակնություն ունեցողները:*) Պիտի խոստովանած, վոր յերկու կուսակցության հրատարակությունները ընթերցողների կողմից շատ աննախանձելի թիվ եյին կազմում. «Հյուսիսափայլ»-ի միայն վերջին յերկու-յերեք եջերի թերթերն եյին բացվում և Նալբանդյանցի՝ «Կոմս Եմմանուել», «Աբրահամ Դիոսկորոսյան Բարկենյանց»[300] և այլ կեղծանուն կրող գողտրիկ հիշատակարաններն եյին մինյանցից խլելով կարդացվում, իսկ ամսագրի մնացած բոլոր թերթերը, իրանց մեջ պարունակված Նազարյանցի անմարս թարգմանություններով և մի քանի մասնավոր անհասկանալի հոդվածներով, բնավ չեյին կտրատվում և աչքի անցրվում: Ցավ ի սիրտ պիտի ասել, ժամանակի համալսարանավարտ յերիտասարդությունը Նալբանդյանցի հոդվածներից ել տեղեկություն չուներ. ի՞նչ պիտի լիներ նրանց կարծիքով հայ գրականության մեջ ուշադրության արժանի հոդվածներ. իրանք ամեն բան կարդացել են ռուսերեն գրականության մեջ, հայերեն տառերի վրա՞ պիտի աչքեր փչացնեն (մի՞թե ներկայումս ել նույնը չէ): Շատ չեյին կարդացվում և հակառակ բանակի հրատարակությունները. մեր հին գրաբառները գրաբառի եյին սիրահար, գրաբառն եր մեր գործածական լեզուն, աշխարհաբառը միայն փոքրաթիվ տգետ դեղջուկների համար իրանց մտքերը իրանց նմաններին հաղորդելու խղճուկ միջոց եր, ուստի և նոր աշխարհաբառը, վորը նոր-նոր մուտ եր ուզում գործել մեր գրականության մեջ, ատելի յեր բոլոր հնությանը: Ջուր ջանք ծերունիների կողմից, իրանք տարված եյին, աշխարհաբառը արդեն գլուխ եր բարձրացրել. ժամանակն իրանը պահանջում եր, յեղած պարբերական թերթերը...

*) Ջնջած է՝

Շատ չեր վերջիններիս թիվը, քիչ եյին և «Հյուսիսափայլ»-ի ընթերցողները....

# ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 *Թաղիադյան Մեսրոպ* (1803—1858)— XIX դարի առաջին կեսի նշանավոր գրող, լուսավորական գաղափարների ջատագով, կղերականության կատաղի թշնամի:

Ծնվել է Յերևանում, վարել աստանդական կյանք: Յեղել է սարկավագ, մանկավարժ, վերբեդակ, խմբագիր, գիտնական: Թաղիադյանցի գործունեության հիմնական վայրը Հնդկաստանն է, գերազանցորեն Կալկաթա քաղաքը, ուր լույս են տեսել նրա պատմական («Պատմութիւն հին Հնդկաստանի»— 1841, «Պատմութիւն Պարսից»— 1846), ճանապարհորդական («Ճանապարհորդութիւն ի Հայս», հատոր առաջին— 1847), բանաստեղծական («Վէպ Վարդգիսի»— 1846, «Վէպ Վարսենիկան»— 1847, «Սոս և Սոնդիպի» — 1847) յերկերը և ուր նա հրատարակել է «Ազգասէր» (1845—1848) և «Ազգասէր Արարատեան» (1848—1852) թերթերը: Թաղիադյանը հիմնականում գրում եր գրաբարով, բայց ունի աշխարհիկ լեզվով գրած մի քանի յերկեր: Մեռավ Շիրազում:

2 *Մկրյան Հովհաննես, ք.* ( — 1909) — Արևմտահայ բանասեր, աշխատակցել է «Լումա»-յին և բազմաթիվ այլ պարբերականների: Խրիմյանի պատրիարք ժամանակը Պոլսում՝ վարում եր տեղապահի պաշտոնը:

3 «Կենսագրութիւն Մեսրովբա Դավթյանի Թաղիադյանց Յերևանցվո». հավաքեց և խմբագրեց Տ. Հովհաննես Կ. Մկրյան. Թիֆլիզ, 1886, հավելված «Արձագանք»-ի:

4 Հ. Մկրյանի աշխատասիրությունը բաղկացած է յերկու մասից. 1) Մ. Թաղիադյանի կենսագրությունը, կազմված անծանոթ հեղինակի կողմից 1870 թ. Կալկաթայում և 2) իր, Մկրյանի քննական դիտողությունները: Այդ անծանոթ հեղինակի, «Վոմնի» դեմ է բողոքում Պռոշյանը: Անհայտ կենսագիրը, ինչպես, չժխտելով Թաղիադյանի ընդունակությունները, նրա բանաստեղծական տաղանդն ու մանկավարժական ձիրքը, անվանելով



«Սոս և Սոնդիպի»-ն «վսեմ» գրվածք, միաժամանակ դուրս է բերում նրան իբրև ծայրահեղորեն բացասական մարդ և անկատար հեղինակ: Ըստ «Վոմնի», Թաղիադյանը գինեմոլ եր, փող շորթող, կովարար, անպարտաճանաչ, դաժան:

«Վոմնը» ասում է:

«Ասացին վոմանք և իրավամբ, թե նորա իմաստութեան մտավոր տաղանդը՝ կնմաներ խողի քիթը վոսկի օղ դրվածին, մանավանդ յերբ կմտներ Բաքոսի տաճարը և յուր ախորժակի անհագ ծարավը կզովացուցաներ» (եջ 48):

«Յեկեղեցականների հետ հաղորդակցիլ չեր սիրեր, մանավանդ կուսակրոնների հետ սակավ բացառութեամբ... տոքա յերբ առաջնորդ կարգվին, կասեր, հետերնին ուրիշ բան չեն տանիր, բայց յեթե ապականյալ բարք, դատարկ քսակ, անճոռնի խիղախանք, անկուշտ փորովայն, և իղձ՝ գանձ դիզելու վորով և իցե յեղանակավ. վա՛յ վորոց հանդիպին... Ինչի՞ համար յես աշխարհական դարձա, կկրկներ — հոգիս և մարմինս փրկելու համար» (եջ 47—48) և այլն:

Անհայտ հեղինակի այս խիստ տենդենցիոզ կենսագրության դեմ բողոքեց Թաղիադյանի աշակերտներից մեկը (տես՝ «Դիտողակք Հովհ. Շահնազար Սարգսեանի ի Բաղդադիա ի վերայ կենսագրութեան Մեսրովբ Դ. Թաղիադեանի», Կ. Պոլիս, 1888): Հովհաննես Շահնազար Սարգսյանը, հերքելով անհայտ հեղինակի ասածները, այն կարծիքն է հայտնում, վոր այդ անանուն կենսագիրը Կալկաթայի ավագ քահանա Հովհաննես Խաչկյանն է: Թաղիադյանից վերև բերած պարբերությունները, առանձնապես վերջինը, հավանական են դարձնում անանուն գրողի կղեր լինելը: Հ. Մկրյանը չի համաձայնում Հ. Շ. Սարգսյանի հետ (տես՝ վերև հիշած գիրքը, եջ դ — ե): Լեոն Սարգսյանի կարծիքը հավանական է համարում (տես՝ «Գործ», 1917 թ., № 4, եջ 12, ծանոթագրություն):

5 1893 թ. գրած իր մի նամակ խմբագրության մեջ, ուղղած «Տարազ»-ին, Պռոշյանը, ճշտելով իր ծննդյան տարեթիվը, ասում է, վոր, համաձայն Յերևանի կոնսիստորիայի 1849 թ. մարտի 11-ից տված մետրիքականի, նա ծնվել է 1837 թ. հունիսի 3-ին: «Հուշիկներ»-ում նա գրում է. «Թեպետ ծննդական վկայականիս ցուցմամբ՝ յես ծնունդ եմ 1837 թվականի հունիս ամսի, սակայն մետրիքականից ավելի հավատ ընծայելու յե մորս պատմածներին: Հանգուցյալի ասությամբ՝ ռուսաց Նիկողայոս կայսեր Եջմիածին այցելած տարին յես նոր վոտն եյի ուզում լինել, չոչ է չոչ եյի քայլում. ուրեմն դարձյալ 1837 թվին, կամ մի տարի հառաջ կամ հետ» (եջ 1): Այդպիսով՝ Պռոշյանն իր ծնվելուց 12 տարի հետո տված և, հավանորեն, հիշողության հիման վրա թելադրած մետրիքականին առանձին հավատ չընծայելով, այնուամենայնիվ 1837 թ. համարում է իր ծննդյան հավանական տարին: Ճշգրիտ համարելով նաև ամիսը, այն է՝ հու-

նիսը, կասկածի տակ կարելի յե առնել միայն որը, այն ե՝ հունիսի 3-ը։

6 Պռոշյան Ստեփան (— 1849 ?) — Պռոշյանի հայրը, դերձակ։ Յերիտասարդ հասակում գնացել ե Հաշտարխան ու վորոշ կուլտուրա ձեռք բերել։ Նրա դրդմամբ Շապուհ Շահնազարյանը 1845 թ. յեկավ Աշտարակ ու հիմնեց իր դպրոցը։ Իբրև արհեստավոր վոչ թե տրեխ եր հագնում, այլ կոշիկ։ Դերձակ Ստեփանը «... ճաղատ գլխով, հաստավոր, կարճահասակ, ուրախերես, գեղեցկադեմ և զվարճախոս գյուղացի» յեր — այսպես ե նկարագրում նրան իր վորդին («Գյուղական վարժապետներ», «Արձագանք», 1899, № 1, եջ 14)։ Իր հոր մասին Պռոշյանը խոսում ե նաև «Հուշիկներ»-ում։

7 Մելումյան Մարգար — Պռոշյանի պապը մոր կողմից։ Նշանավոր եր նրանով, վոր Ներսես V-ի սպասավորն եր ու հետագայում նշանակվեց կաթողիկոսի յեղբոր, Կարապետ աղայի, կալվածների կառավարիչ։

8 Պռոշյան Խուբով — այդպես եր անվանել Պռոշյանի հայրը իր ավագ վորդուն ի պատիվ իրենց տոհմական ազգանունի ռուսերեն ձևի (պռոշ — губа, վորից՝ Խուբով)։ Քահանայանալուց Խուբովը ընդունեց իր պապի անունը ու դարձավ տեր Առաքել։

9 1844 թ. Զմյուռնիայում, Կույի-Ելմոս Կրիֆիթիի տպարանում հրատարակվել ե մի այբբենարան, 60 եջից բաղկացած։ Գուցե այս ինկատի ունի Պռոշյանը։

10 Շահնազարյան Շապուհ — Վաղարշապատցի, սովորել ե Սահակ ք. Սահակունու մոտ՝ ժառանգավորաց դպրոցում։ Պռոշյանի հոր դրդումով թողնում ե կուսակրոն դառնալու միտքը, դեն ձգում տիրացուի հանդերձանքը ու գալիս Աշտարակ ուսուցչություն անելու։ Աշտարակում նա մնաց յերեք տարի (1845—1848) և ուներ մոտ 70 աշակերտ, վորոնցից — Պռոշյանի վկայությամբ —յերկու յերրորդին գրագիտություն սովորեցրեց։ Նրա խալֆայական մեթոդին մահացու հարված հասցրեց Աբովյանի յերեք որ մնալը Աշտարակում։ «Գյուղական վարժապետներ» հուշերում («Արձագանք», 1888 և 1889) Պռոշյանը մեծ սիրով և աշխույժով նկարագրել ե Շապուհ Շահնազարյանի դպրոցը։ Աշտարակից հետո Շահնազարյանը տեղափոխվել ե Յերևան (1848), ուր կրոնի և հայոց լեզվի ուսուցիչ եր արքունական դպրոցում։ Ավանդում եր նաև Թեմական դպրոցում։ 1851 թ. իր մոտ տարավ Պռոշյանին, վորպեսզի վերջինս շարունակի իր ուսումը։ Վախճանվեց յերիտասարդ հասակում։

11 Մժեժյան Մարտիրոս, վ. — Երզրումցի, աշակերտ Ղազար վարդապետի։ Վերջինս, Տաճկաստանից գալով Եջմիածին՝ դարձավ Սինոդի անդամ, բայց զեղծումներ կատարելով՝ փախավ Ռուսաստանից ու իրա հետ վերցրեց նաև իր աշակերտին, վոր, հետևելով ուսուցչին, նույնպես յեկել եր Կովկաս ու Մողնու վանքում դպրոց եր պահում։ Փախուստից հետո Մժեժյանը յերկար ժամանակ ապրում եր Յերուսաղեմում, վորտեղից նվերներ եր ուղարկում Պռոշյանին («Հուշիկներ», եջ 245)։ Իր կյանքի վերջին շրջանը անցկացրեց Հառիճո վանքում, ուր դասատու յեր և ուր նա մեռավ, ըստ յերևույթին, 80-ական թ. թ. վերջին։



12 Պետական Գրական Թանգարանում պահպանվում ե ճարտասանության մի տետրակ (№ 549), վորի արտագրությունը պատկանում ե Պռոշյանին ու վերաբերում Մարտիրոս վարդապետ Մժեժյանին աշակերտելու ժամանակաշրջանին։ Տետրակի առաջին եջում գրված ե հետևյալը. «Ճարտասանութիւն գաղափարեալ յընտիր օրինակէ, Յովհաննիսի Պռոշեանց աշակերտ Մարտիրոս վարդապետի Պետրոսեան Սարգիս Վարդապետեան Կարնեցւոյ. 1851 ամի սկսեալ ի 10-ն յունուարի և աւարտեալ 7-ն փետրուարի ի վանս Մուղնւոյ. Հովհաննէս Պռոշեանց»։

13 Տատյան Պողոս Բեյ (— 1863) — Պոլսահայ ազդեցիկ ամիրա, պետական վառոդապետ, Սուլթան Մահմուդի և Աբդուլ Մեջիդի մոտ անձնավորություն։

14 Պռոշյանը փախչելու փորձ ե կատարել 1851 թ. աշնանը («Հուշիկներ», եջ 28)։ Փախուստի մանրամասն պատմությունը տես նույն «Հուշիկներ»-ում, եջ 28—40։

15 Ներսես V Աշտարակեցի (1771—1857)— 1843—1857 թ. թ. կաթողիկոս։ Յեղել ե Վրաստանի և Աստրախանի, ապա նաև Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի թեմերի առաջնորդ։

16 Մանրամասնությունները տես «Հուշիկներ»-ում, եջ 41—47 (Թ. գլուխ)։

17 Շանշյան Պետրոս (1819—1889) — Նշանավոր հայ մանկավարժ, վրաստանաբնակ ազնվական ընտանիքի զավակ։ Սովորել ե Ներսիսյան դպրոցում, Թիֆլիսի գիմնազիայում ու Լազարյան ճեմարանում, վորն ավարտել ե 1837 թվին։ Մի քանի անգամ փոխելով ֆակուլտետները Մոսկվայի և Պետերբուրգի համալսարաններում, Շանշյանը 1843 թվին ավարտում ե վերջինիս իրավաբանական բաժինը։ Այնուհետև ուղևորվում ե Յեվրոպա, լինում ե Վիեննայում և Վենետիկում, լսում ե Սորբոնում աստվածաբանություն, 1848 թ. մասնակցում հեղափոխական ակումբներին, ապա հետևյալ 1849 թվի սկզբին վերադառնում Պետերբուրգ։ Նույն տարվա հոկտեմբերին նա Թիֆլիս եր՝ հրավիրված լինելով Ներսիսյան դպրոցի տեսչի պաշտոնով։ Շանշյանի այս տեսչությունը տևում ե ընդամենը յերկու ամիս։

Շանշյանի յերկրորդ տեսչությունը Ներսիսյան դպրոցում սկսվում ե 1851 թվին ու տևում մինչև 1857 թվի վերջը։ Այս ժամանակահատվածում նա կարողացավ արմատապես վերանորոգել դպրոցը։

1863—64 թվերին Շանշյանը տեսչություն արավ Ղարաբաղի թեմական դպրոցում, վորտեղ նրա ողնականն եր և հայոց լեզվի

ուսուցիչ Պերճ Պռոշյանը։ Թե՛ Ղարաբաղի և թե՛ Ներսիսյան դպրոցի տեսչական պաշտոնից հեռացման պատճառն այն էր, որ երբ Շանշյանը լյութերականություն էր քարոզում— «...ղուղ-ղութինս վարդապետութեանց եկեղեցւոյ մերոյ ընդլայնէ պատիր և չար խորհրդովք մտաց հերձուածողութեան»...։ Իր հասարակական հայացքներով Շանշյանը պատկանում էր ազգային-պահպանողական խմբակցությանը։ Իբրև մարդ՝ նա մեծ հմայք ուներ շնորհիվ իր ծայրահեղ ազնվության ու անշահախնդրության։ Մեծ համակրանք էր տածում դեպի համքարները և հատուկ գիրք ունի գրած նրանց մասին։

18 Մուրատյան Գարեգին (1836—1903)— Հետագայում՝ Մելքիսեդեկ արքեպիսկոպոս։ Ծնվել է Թիֆլիսի գյուղում (Ծամշադինի շրջան), սովորել Ներսիսյան դպրոցում։ Պ. Շանշյանի աշակերտն էր ու նրա ջերմ յերկրպագուն։ Վարել է տեսչի օգնականի պաշտոն Ներսիսյան ու— Շանշյանի որոք— Տուշվա թեմական դպրոցներում։ 1865 թվին տեղափոխվել է Թյուրքիա, 1869 թվին ձեռնադրվել վարդապետ։ Գեորգ Դ-ի մահվանից հետո 1884—1885 թվերին ընտրվել է կաթողիկոսության առաջին թեկնածու, բայց չի հաստատվել ցարի կողմից։ Աշխատակցել է Մ. Աղաբեկյանի «Կռունկ»-ին, «Մեղու Հայաստանի»-ին՝ գերազանցորեն կղերաբարոյական բովանդակություն ունեցող հոդվածներով։

19 Իր կյանքի մասին՝ Ներսիսյան դպրոցի աշակերտ լինելու ժամանակը, այլև Ներսես Աշտարակեցու, Պետրոս Շանշյանի, Գարեգին Մուրատյանի և ուրիշների մասին Պռոշյանը մանրամասնորեն պատմում է «Հուշիկներ»-ում, եջ 50—141 (ԺԱ—Լ գլուխներ)։ Ներսիսյան դպրոցի աշակերտ Պռոշյանի մասին Ղազարոս Աղայանը շատ հետաքրքիր տողեր ունի իր հուշերում (տես՝ Ղ. Աղայանց— «Իմ կյանքի գլխավոր դեպքերը», Թիֆլիս, 1894 եջ 23)։

20 Համաձայն 1853 թ. «Ակտ»-ի՝ Պռոշյանը նույն թվի մարտ ամսին փոխադրվել է յերկրորդ դասարանից յերրորդ, վերջին դասարանը («Ակտ կամ տարեկան հանդէս Ներսիսեան հոգևոր դպրոցի հայոց Թիֆլիզոյ», Թիֆլիզ, 1853, եջ 37)։ Հետևապես, Պռոշյանը պետի ավարտեր 1854 թ. գարնանը, մինչդեռ այստեղ նա 1855 թիվն է նշում։ Առհասարակ Պռոշյանի կյանքի այս տարիների ժամանակագրության մեջ (գիմնազիա մտնելը, Աշտարակ գնալը և այլն) անորոշություններ կան։ Տարակուսանք է առաջացնում նաև Պռոշյանի հայտարարությունը «Ինքնակենսագրության» մեջ, թե նա ավարտել է Գարեգին Մուրատյանի և մյուս ընկերների հետ միասին։ «Հուշիկներ»-ում նա այլ բան է ասում. «Այս մեր վերջնական հարցաքննությունն էր, բայց միայն յես ատեստատ ստացա ու դպրոցը թողի, ընկերներս բոլորն յերկու տարի էլ նստեցին» (եջ 141)։ «Ինքնակենսագրության» մեջ ասածը մեզ ավելի հավանական է թվում։

21 Առաջին աստիճանի մրցանակը փառակազմ գիրք էր, վրան ոսկե տառերով գրած՝ «Վասն գերազանց ջանասիրութեան, յառաջադիմութեան և պարկեշտ վարուց»։ Թե ինչ գիրք է ստացել Պռոշյանն ավարտելուց— հայտնի չէ։ Մենք գիտենք միայն, որ յերկրորդ դասարանից յերրորդը փոխադրվելիս՝ նա ստացել է միևնույն մակագրությամբ «Կիկերոնի յաղագս պատշաճից» հատորը («Ակտ», եջ 37)։

22 Իշխան Հովհաննես Արղությինսկին կանչեց Պռոշյանին իր տունը և նվիրեց նրան Նարեկացու հատորը (տես՝ «Հուշիկներ», եջ 141)։ Թե ինչով արտահայտվեց կաթողիկոսի «քաղցր ուշադրությունը» —մեզ անհայտ է։

23 Այս «վերափոխման» դժվարությունների մասին, հարուցած Ներսես Աշտարակեցու կողմից, տես՝ «Հուշիկներ», եջ 143—146։

24 Պռոշյանի կյանքի գիմնազիական շրջանի մասին տես՝ «Հուշիկներ», եջ 146—154 (ԼԲ գլուխ)։ Գլուխը սկսվում է հետևյալ բառերով, որ սրբագրում է «Ինքնակենսագրության» հայտարարությունը «5-րդ դասատուն» ընդունվելու մասին. «Յերեք ամիս շարունակ գիմնազիա յեմ հաճախում, չորրորդ դասարանում ընդունված եմ ոչ իբրև իսկական աշակերտ, այլ ինչպես կամավոր ունկնդիր՝ առաջիկա տարին աշակերտ համարվելու պայմանով» (եջ 146)։

25 Այսինքն՝ գիմնազիայում սովորելը։ Գիմնազիան թողնելու մասին տես «Հուշիկներ», եջ 153—154։

Պռոշյանը գիմնազիան թողնում է, ըստ յերևույթին, 1856 թ. գարնանը։

26 «Հուշիկներ»-ում Պռոշյանը պատմում է, որ գիմնազիան թողնելուց հետո, ամառը (ըստ յերևույթին 1856 թվին) նա գնում է Սոմխեթ գավառի Թոնեթ կոչված գյուղը Ներսիսյան դպրոցի աշակերտ վրացախոս Սարգիս Սարդարյանցին պատրաստելու տերտերության, ապա «աշնան բերանին» վերադառնում Թիֆլիս, մոտ յերեք ամիս ապրում իր ուսուցչի, Հակոբ Կարենյանի մոտ ու տարվա վերջում, Պետրոս Շանշյանի դրդմամբ, ուղևորվում Աշտարակ (եջ 154—167)։ Այդպիսով, ըստ «Հուշիկներ»-ի, հայրենիք գնալու հիմնական դրդապատճառը բնավ հիվանդությունը չի յեղել։

27 Պետրոս Շանշյանի կարգադրությամբ, 1852 թ. յերկու նախակրթարանները միացան և կազմեցին մի դասարան։

28 Մոտավորապես նման հայտարարություն է անում Պռոշյանը նաև «Հուշիկներ»-ում (եջ 67)։ Թվում է, Պռոշյանը չափազանցնում է. յեթե, համաձայն իր իսկ հայտարարության, Ներսիսյան դպրոց նա մտել է 1852 թ. ու այն ավարտել 1855 թ., ապա ուրեմն դպրոցում նա մնացել է յերեք տարի, իսկ նրա որոք Ներսիսյան դպրոցը չորս տարվա դասընթաց ուներ (մեկ նախապատրաստական, յերեք դասարան)։ Այլ խնդիր է, յեթե նրա ավարտման տարեթիվը մենք ընդունեյինք 1854 թ.։

29 «Հուշիկներ»-ում Պռոշյանը նշում է պարտքի քանակը, այն է՝ 300 ռ. (էջ 185)։

30 Աշտարակի ծխական դպրոցում ուսուցիչ յեղած ժամանակաշրջանի, այլև այդ դպրոցում Պռոշյանի մտցրած ռեֆորմների մասին (հոգաբարձություն, պարապմունքների ժամերի կարգավորում և այլն) տես՝ «Հուշիկներ», էջ 185—192 (Ժ. գլուխ)։

31 Քյանդարյան Հակոբ, վ.— Նախկին անդրադեշտ վաճառական, վոր, այրիանալով, Ղուկաս տեղակալի դրդումով և հրամանով վարդապետացավ ու վոչ միայն Մողնու վանքի վանահայր նշանակվեց, այլև Ապարանի, Կարբիի ու Թալինի կողմերի մոտ 70 գյուղի գործակալ։ Սա այն ժամանակն էր, յերբ Ներսես V-ի մահվանից հետո աշխարհական գործակալները փոխարինվում եյին հոգևորականներով։ Քյանդարյանը ուտող-խմող մարդ էր, ճոխ սեղան ուներ, կաշառք էր տալիս, կաշառք էր վերցնում։ Գեղարվեստական մեծ հաջողությամբ Պռոշյանը պատկերում է նրան «Հուշիկներ»-ում (էջ 203—210)։

32 Ջալալյան Սարգիս, յեպ. (1810—1879)— Յեկեղեցական ռեակցիայի ցայտուն ներկայացուցիչ։ Շանչյանի թշնամին, մեղադրում էր նրան բողոքականության ու անաստվածության մեջ, նրա պահպանողական-դեմոկրատական հայացքների կատաղի հակառակորդն էր։ Այս առնչությամբ, թեև սկզբնական շրջանում հովանավորում էր պատանի Պռոշյանին, հետագայում, ինչպես պատմում է ինքը Պռոշյանը, միշտ և ամենուրեք հալածում էր նրան, անվանում պրոտեստանտ, ֆարմասոն, անբարոյական և այլն։ Ջալալյանը վարել է պատասխանատու յեկեղեցական պաշտոններ։

33 Խոսքը Մատթեոս Ա. Կոստանդնուպոլսեցու ընտրության մասին է, վոր տեղի յե ունեցել 1858 թ. մայիսի 18-ին։ Ուրեմն, հանդիպման տարեթիվը Ջալալյան Սարգիս յեպիսկոպոսի հետ Պռոշյանը ջնջած տողում ճիշտ է նշում։

34 Շանչյանը հրաժարական է տվել 1857 թ. հոկտեմբերին։

35 Մինաս յեպիսկոպոս (— 1857 ?) —Սրա մասին տես՝ «Հուշիկներ» (էջ 224—225)։ Մինաս յեպիսկոպոսը վախճանվել է Ներսես V-ի որոք, Պռոշյանի Աշտարակ գնալու (1856 թ.) և Թիֆլիզ վերադառնալու արանքում (1858 թ.), հետևապես 1857 թ. սկզբին, կամ 1856 թ. վերջին։

36 Տեր-Մկրտիչ — մոտ էր Ներսես կաթողիկոսին, «Սատանի չաքուչ» մականունն ուներ։

37 Ամրիկյան Հովհաննես— հայտնի դերասան Միհրդատ Ամրիկյանի հայրը։ Մշեցի, կրթությունն ստացել է իր ծննդավայրում, գյուղական քահանայի մոտ։ 1820 թվից ծառայության մեջ էր գտնվում Ներսես կաթողիկոսի մոտ։ Յեղել է Թիֆլիզի առաջնորդարանի ծախսարար, Վրաստանի վիճակային հոգևոր գործերի և հոգևորականների քննիչ, Ներսիսյան դպրոցի վերակացու, ապա ծախսարար։ Պռոշյանը նկարագրում է նրան, իբրև մի շատ բարի ու լրջմիտ մարդու և յերկու անգամ սիրով գրում նրա մասին— «Հուշիկներ»-ում (էջ 218—19) և «Թատրոն»-ում (1895, № 3, Միհրդատ Ամրիկյանին նվիրած հոդվածում)։ Ներսիսյան դպրոցի աշակերտների և Ամրիկյանի միջև «հայր ու վորդիական կապ» կար, ասում է Պռոշյանը («Թատրոն», 1895, № 3)։ Ամրիկյանը գրել է վոտանավորներ, վոր զետեղված են «Մեղու»-ի և «Կռունկ»-ի մեջ։ Իր հայացքներով ազգային-պահպանողական էր։ Պռոշյանի ասելով՝ շատ հարուստ կյանք է ունեցել, վոր, դժբախտաբար, գրի չի առնվել։ Մեռել է 70-ական թվերին։

38 Հովհաննիսյան Հարություն, բժ. (— 1886)— Հին Ջուղայեցի։ Ութ տարեկան հասակում, յեղբայրը, Հակոբը, վոր ծառայում էր Շերմազանյան յեղբայրների մոտ, բերում է նրան Հին Նախիջևան, ապա Մոսկվա, ուր նա մտնում է Լազարյան ճեմարանը։ 1843 թ. ավարտում է համալսարանի բժշկական ֆակուլտետը, գալիս Թիֆլիս ու նշանակվում քաղաքային հիվանդանոցի կրտսեր որդինատոր։ 1857 թ. ստանում է բժշկապետի կոչումն, վորից հետո գերազանցորեն պետական պաշտոններ էր գրավում— Կովկասի բժշկական վարչության գլխավոր պաշտոնակատար, փոխարքայի անձնական բժիշկ։ 60-ական թվերի վերջին թողնում է պետական ծառայությունը և պարապում մասնավոր բժշկությամբ։ Կրթված մարդ էր, տիրում էր հին և յեվրոպական նոր լեզուներին։ Ակտիվ մասնակցում էր հասարակական կյանքին։ Ներսիսյան դպրոցի բժիշկն էր, հոգաբարձու, մի ժամանակ նաև տեսուչ։ 60-ական թվերի սկզբին թատրոնական կոմիտեյի անդամ էր։ Պռոշյանի հետ լավագույն հարաբերությունների մեջ էր։

39 Տեր-Հովսեփյան Հովհաննես— Նիկողայոս Տեր-Հովսեփյանի (տես՝ 194-րդ ծանոթագրությունը) ավագ յեղբայրը։ Սովորել է Թիֆլիսի ռուսաց գիմնազիայում։ Ուսուցիչ է յեղել իր ամբողջ կյանքի ընթացքում։ Մեռել է 70-ական թվերին։

40 «Վերք Հայաստանի»-ն Պռոշյանի ձեռքն է ընկնում լույս տեսնելուց մոտավորապես մեկ ամիս հետո։ «Մեղու Հայաստանի»-ի 1858 թ. ոգոստոսի 2-ի համարում արդեն լուր կար Աբովյանի վեպի մասին։

41 Փոնդոյան Հովսեփ (— 1885)— «Վերք Հայաստանի»-ի հրատարակիչը։ Սովորել է Լազարյան ճեմարանում, ավարտել Մոսկվայի համալսարանը, իրավաբան։ Հայաստանի Պետ. Գրական Թանգարանում Թիֆլիսի բարբառին վերաբերող ձեռագրեր ունի։

42 Այս հատվածին «Հուշիկներ»-ում համապատասխանում են 225—229 էջերը (գլուխ ԽԵ)։ «Հուշիկներ»-ի լույս տեսնելուց մի տարի հետո, 1895 թվին, «Հանդես գրականական և պատմական»-ի վեցերորդ գրքում Պռոշյանը— ինչպես մեզ արդեն հայտնի յե— զետեղեց «Խաչատուր Աբովյանցի «Վերք Հայաստանին» և իմ «Սոս և Վարդիթերը» վերնագրով մի հոդված, վորտեղ

նա՝ մի քիչ այլ ձևով և ընդարձակ՝ միևնույն պատմությունն ե անում: Հոդվածի վերջից, ի միջի այլոց, այն յեզրակացությունը կարելի յե հանել, իբր Պռոշյանը «Սոս և Վարդիթեր»-ը սկսել ե գրել «Վերք Հայաստանի»-ի հետ ծանոթանալու հետևյալ օրը, այսինքն՝ 1858 թ. սեպտեմբերի սկզբին: Մինչդեռ թե «Ինքնակենսագրության» (եջ 18) և թե «Հուշիկներ»-ի (եջ 247) Պռոշյանի առաջին տպագիր յերկի նկատմամբ արած ակնարկի անճշտությամբ՝ այն ճիշտ հետևությունը պիտի անել, վոր «Սոս և Վարդիթեր»-ը Պռոշյանն սկսել ե գրել 1859 թ. աշնանը: Աբովյանից և տասներկու տարի անց՝ 1858 թ. «Վերք Հայաստանի»-ից ստացած տպավորությունները անջնջելի մնացին Պռոշյանի համար: Իր ամբողջ կյանքի ընթացքում Պռոշյանը համարում եր իրեն Աբովյանի համեստ աշակերտը: Տես այս ժողովածուի մեջ զետեղած Պռոշյանի նամակը Յու. Վեսելովսկուն:

43 Տեր-Հակոբյան Նիկողայոս (— 1888)— Սարգիս յեպ. Ջալալյանի հոգեզավակը: Ավարտել ե Լազարյան ճեմարանի լիկեոնը: Ջալալյանի օգնությամբ մասնավոր դպրոց բաց արեց, վորտեղ աշակերտները Թիֆլիսի հարուստների վորդիքն եյին: Հետագայում ուներ մասնավոր գիմնազիա Մոնաստիրցևի հետ միասին: Ինքնասպանությամբ վերջ տվեց իր կյանքին:

44 Պարտք վճարելու փոխարեն Պռոշյանի յեղբայրը այդ գումարով քահանա յե ձեռնադրվում («Հուշիկներ», եջ 244):

45 «Համարնակիչ ավագ վերակացուն» Նիկողայոս Տեր-Հովսեփյանցն եր (տես՝ «Հուշիկներ», եջ 245 — շատ բնորոշ դեպք Սինոդի ապագա պրոկուրորի և Բալասան աղայի նախատիպի համար):

46 «Հուշիկներ»-ում Պռոշյանը քիչ այլ կերպ ե պատմում. «...Ինչն ե արգելում ինձ առավոտները ժամը չորսին վեր կենալ, գրիչը ձեռքս առնել և նվիրվել յերազական ցնորքներս գլուխ տանելու գործին» (եջ 245—246):

47 Բենքլյանց Պողոս — Պռոշյանի մոտ ընկերը, Ներսիսյան դպրոցի պատրաստական դասարանի հայոց լեզվի ուսուցիչ: Հետագայում՝ Թիֆլիսի Մողնու յեկեղեցու ավագ քահանա (Տեր-Արիստակես):

48 Կարենյան Հակոբ (—1872)— ծնվել ե Երզրումում: Հայտնի մանկավարժ, գրականագետ, բանաստեղծ և վողբերգագիր: Յերկար տարիների ընթացքում յեղել ե հայոց լեզվի և գրականության ուսուցիչ Ներսիսյան դպրոցում: Աշխարհաբարի կողմնակից եր, հայացքներով պատկանում եր ազգային — պահպանողական բանակին: 1846 թ. Մ. Պատկանյանի հետ միասին խմբագրել ե «Կովկաս» լրագիրը: Կարենյանի գրական հռչակը հիմնվում ե գլխավորապես նրա ազգային-ռոմանտիկական վողբերգությունների, «Շուշանիկ»-ի և «Վարդանանց պատերազմ»-ի վրա:

Պռոշյանի կյանքում խաղացել ե վորոշ դեր: Յեղել ե «Սոս և Վարդիթեր»-ի առաջին գնահատողներից մեկը՝ դեռ մինչև վերջինիս տպագրվելը, նույնպես աջակցել ե իր աշակերտին, առհասարակ սիրել ու հովանավորել նրան: 1850 թ. «շանշյանական — հակաշանշյանական» կուսակցությունների առնչությամբ հեռացել են իրարից: «Հուշիկներ»-ի մի շարք եջերում (47—148, 115—116) Պռոշյանը տալիս ե իր ուսուցչի գեղարվեստական պատկերը: Կարենյանը մեռավ (սպանվեց) իբրև հանքային բաղանիքների կապալառու:



49 Մսերյան Մսեր (1808—1873) — Կղերա-պահպանողական հայտնի հրապարակախոս, «Հյուսիսափայլ»-ի կատաղի թշնամի: Ծնվել ե Զմյուռնիայում, սովորել Հովհաննես Վանանդեցու մոտ: 1825 թ. տեղափոխվել ե Կովկաս ու զանազան պաշտոններ վարել Եջմիածնում: Յեղել ե ուսուցիչ Ներսիսյան դպրոցում: 1848 թ. մեկնել ե Մոսկվա, ուր հրատարակել ե «Ճռաքաղ» (1858—1862) հայտնի պարբերականը և Լազարյան ճեմարանում մինչև մահը վարել կրոնի և հայոց լեզվի դասատուի պաշտոնը: Կրոնի դասագրքերի համար Ներսես կաթողիկոսից ստացավ «մագիստրոս» տիտղոսը:

50 Արարատյան Առաքել (1808—1887) — Մանկավարժ և հրապարակախոս: Ծնողները Արարատյան դաշտից են, ինքը ծնվել ե Թիֆլիսի Հավլաբար թաղում: Սովորել ու դաստիարակվել ե Հովհան ք. Վոսկերչյանի մոտ: Յերկար տարիների ընթացքում հայոց լեզվի ուսուցիչ ե յեղել Թիֆլիսի գիմնազիայում, վորտեղ նրան աշակերտել ե նաև Պռոշյանը (տես՝ «Հուշիկներ»-ի հետաքրքիր տողերը Արարատյանի մասին, եջ 150—153): Աշխատակցել ե «Կռունկ»-ին և «Ճռաքաղ»-ին: Հայտնի յե նրա «Դիմադրաւ ընդդէմ սատան յարուցանելոյ ամենապատուական ընդուխս Հայոց» բրոշյուրը, վոր ուղղված ե Ստ. Նազարյանի «Հանդես նոր հայախոսության» և աշխարհաբարի դեմ:

51 Պռոշյանի առաջին տպագիր գործը, վորի լրիվ անունն ե՝ «Առ անձկալին Շուշան դուստր Վարդանայ» և վորը լույս տեսավ «Մեղու Հայաստանի» լրագրում— 1859, № 16, 18 ապրիլի: Պռոշյանը սխալվում ե, հայտարարելով, իբր իր առաջին վոտանավորը գրված ե «անցյալ տարի». Նկարագրված գրույցը տեղի յե ունենում «Սոս և Վարդիթեր»-ի տպագրվելուց առաջ, այսինքն՝ 1859 թվին, ու հենց նույն թվին ել գրվել ե «Շուշան»-ը: Պռոշյանն իր այս սխալը սրբագրում ե «Հուշիկներ»-ում (եջ 247):

52 «Մեղու Հայաստանի» (1858—1886)— ազգային-պահպանողական թերթ: Մինչև 1863 թ. խմբագրում եր Ստ. ք. Մանդինյանը, 1863 թ. հետո՝ Պ. Սիմոնյանը:

53 Հակոբ Կարենյանը ի նկատի ունի իր վոտանավորը, վոր անստորագիր լույս ե տեսել Պռոշյանի վոտանավորից մի ամիս չորս օր առաջ՝ միևնույն բովանդակությամբ և միևնույն «Մեղու Հայաստանի» լրագրում— 1859, № 11, 14 մարտի: Կարենյանի «Շուշանիկ» վողբերգության թեման նույնն ե:

54 «Կռունկ Հայոց Աշխարհին» (1860—63)— ազգային-պահպանողական ամսագիր: Լույս էր տեսնում Մ. Աղաբեկյանի խմբագրությամբ: Հրատարակիչն էր Հ. Ենֆիաճյանը:

55 Պռոշյանը չի սխալվում. «Կռունկ» ամսագրի մարտ ամսի համարում, իսկապես, լույս էր տեսել «Սոս և Վարդիթեր»-ի յերրորդ հատվածը (Զ—Ժ գլուխներ): «Սոս և Վարդիթեր»-ը տպագրվել է «Կռունկ»-ի 1860 թ. հետևյալ համարներում. 1, 3, 5, 6, 8—10:

56 Ցերիցյան Ալեքսանդր (1841—1902)— Նշանավոր պատմաբան: Ծնվել է չինովնիկի ընտանիքում, սովորել նախ՝ Ներսիսյան դպրոցում, ապա գիմնազիայում, վոր, հիվանդության պատճառով, չի ավարտում: Մինչև 1886 թ. վարել է պետական այլ և այլ պաշտոններ: Պաշտոնավարել է հնագիտական հանձնաժողովում, ռուս-տաճկական պատերազմի ժամանակ յեղել է առանձին հանձնարարությունների պաշտոնյա Լորիս-Մելիքովի և Շելկովնիկովի մոտ, աշխատել է պետական կալվածների մինիստրության գծով և այլն: Նրա գլխավոր գործերն են. «Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք XIX դարում», «Ներսիսյան դպրոցի պատմությունը» (անավարտ) և այլն: Հայացքներով պահպանողական էր:

57 Ա. Ցերիցյանի մահվան առթիվ գրած իր «Սիրադումար ժողով» հոդվածում («Տարազ», 1902, № 8) Պռոշյանը տալիս է հայերենով պարապող այս աշակերտական ընկերության թե՛ հիմնադրման տարեթիվը, այն է՝ 1855 թ., թե՛ նրա անունը («Սիրադումար ժողով») և թե պատմությունը: «Սիրադումար ժողովը» զբաղվում էր հայոց լեզվի ուսումնասիրությամբ, կազմակերպում էր հանրամատչելի դասախոսություններ, թատրոնական ներկայացումներ էր տալիս, թարգմանություններ էր անում, ձեռագիր լրագիր էր հրատարակում, անգամ գրքեր էր տպագրում: Բացի Պռոշյանից՝ «Սիրադումար ժողով»-ի մասին գրել են Ջ. Գրիգորյանը («Տարազ», 1902, № 2) և Ղ. Աղայանը («Հանդես գրականական և պատմական», IV գիրք, 1890, էջ 260):

- «Սիրադումար ժողով»-ի ընդարձակ անունն է. «Սիրադումար ժողով հարազատ յեղբարց հայրենասիրաց Հայկազյան տոհմիս»: Մեզ հայտնի յեն «Ժողով»-ի հետևյալ անդամները. Ա. Ցերիցյան, Գ. Տեր-Ալեքսանդրյան, Ջ. Գրիգորյան, Մ. Քոչարյան (հայկական առակներ հավաքող, տպագրվել է «Կռունկ»-ում)— բոլորն էլ գիմնազիայից, Պ. Պռոշյան, Ղ. Աղայան— Ներսիսյան դպրոցից: «Ժողով»-ը սրանցով, իհարկե, չէր սպառվում: Հենց միայն հիմնադրվելիս նա ուներ 7—8 անդամ, իսկ հետագայում այդ թիվը ընդարձակվեցավ: «Ժողով»-ի նախագահն էր Գ. Տեր-Ալեքսանդրյանը, ամենաակտիվ անդամը, փաստական ղեկավարը և քարտուղարը— Ա. Ցերիցյանը: Գոյություն ունեցավ մինչև 1863 թ., յերբ նրա անդամների հիմնական մասը ավարտեց գիմնազիան ու ցրվեց: «Ժողով»-ի հրատարակած գրքի անունը. «Բա-



րոյական պատմությունք յերեխայոց համար», աշխատասիրություն հայ աշակերտաց գիմնազիային Թիֆլիզո, տետրակ ա. 1860. Թիֆլիզ:

58 Ենֆիաճյան Համբարձում (1824—1896)— Ծնվել է Երզրումում: 1830 թ. գաղթին ծնողների հետ յեկել է Թիֆլիզ: Սովորել է Ներսիսյան դպրոցում և վորոշ ժամանակ ուսուցչություն արել այնտեղ: Ներսիսյան դպրոցից հետո նա միանում է իր յեղբոր, գրավաճառ Ավետիքի հետ, ու ընդարձակում գրախանութը, վորտեղ ծախվում եյին Պոլսի, Զմյուռնիայի, Վենետիկի հրատարակությունները: Հ. և Ա. Ենֆիաճյանները հավաքում են նաև հին ձեռագրերի ընտիր մի ժողովածու: Բացի գրավաճառանոցից Հ. Ենֆիաճյանն ուներ նաև ծխախոտի խանութ, վոր այն ժամանակ մի տեսակ ակումբ էր գրականագետների և հասարակական գործիչների համար: Գ. Մելքումյանի հետ միասին Հ. Ենֆիաճյանը բաց արեց իր հայտնի տպարանը: 1860 թ. Մ. Աղաբեկյանի խմբագրությամբ սկսեց լույս ընծայել «Կռունկ» ամսագիրը: 1862 թ. վերջերքին Ստ. ք. Մանդինյանից գնեց «Մեղու՝ Հայաստանի»-ն, վորի խմբագրությունը հանձնեց Պ. Սիմոնյանին: Այդ թվերին մտադրվեց հիմնել նաև մի մատենադարան՝ «Ազգային Թանգարան վերածնության» անունով, բայց անհաջող: 1865 թ. ընտրվեց Թիֆլիզի քաղաքային վարչության անդամ: Համքարների շարժման ժամանակ մեղադրվեց ու բանտարկվեց, բայց շուտով արդարացվեց:

59 Աղաբեկյան Մարկոս (1830—1908)— Ծնվել է Իզմիրում, սկզբում սովորել տեղական դպրոցում, ապա 1843 թվից Փարիզի Մուրատյան վարժարանում, վոր ավարտել է 1849 թ.: Դառնալով ծննդավայրը, զբաղվել է ուսուցչությամբ: 1858 թ. տեղափոխվել է Պոլիս, ապա անցել Կովկաս: Յեղել է դասատու Ներսիսյան դպրոցում: 1860—63 թ. թ. խմբագրել է «Կռունկ»-ը: 1865 թ. վերադարձել է Պոլիս: 1866—67 թ. թ. հրատարակել է «Ծիլ Ավարայրի» ամսաթերթը: Աղաբեկյանը ազգային-պահպանողական կուսակցությանն էր պատկանում: Ռուսական օրիենտացիայի հակառակորդ էր: Աշխատակցել է «Փորձ», «Լումա», «Հայրենիք», «Բյուզանդիոն», «Մասիս» պարբերականներին: Թողել է «Հայոց պատմություն» անտիպ աշխատությունը, չորս հատոր:

60 «Կռունկ»-ի առաջին համարն 80 էջանոց մի գիրք է, վորտեղ զետեղված եյին Մ. Աղաբեկյանի և Գ. Մուրատյանի առաջնորդող հոդվածները, Պռոշյանի «Սոս և Վարդիթեր»-ի առաջին յերեք գլուխները, Հովհաննես Ամիրկյանի մի վոտանավորը, Յերևանի նահանգի աշխարհագրությանը վերաբերող թարգմանական մի ակնարկ և Սարգսի (Բաստամյան) յերգիծական հոդվածը:

61 «Սոս և Վարդիթեր»-ը առանձին գրքով լույս տեսավ 1860 թվի վերջին: Բաժանորդների ցանկում 120 անուն կա, վորոնք բաժանորդագրված են 238 գրքի:

62 Պատկանյան Միքայել— նշանավոր թատրոնական գործիչ և մանկավարժ: Ավարտել է Լազարյան ճեմարանը, ուր սովորել սկսել է 1825 թ.: Եղել է ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչ Ներսիսյան դպրոցում և Գեորգյան ճեմարանում: 1844 թ. հրատարակել է «Պարզև մանկանց» վերնագրով ընթերցանության գիրքը: 1846 թ. Հ. Կարենյանի հետ միասին խմբագրել է «Կովկաս» թերթը: Ունի մամուլում սփռված բազմաթիվ հոդվածներ: 1861 թ. լույս է տեսել նրա հետաքրքիր քննադատությունը Կարենյանի «Շուշանիկ» վողբերգության մասին: Մեռել է 90-ական թ. թ. առաջին կեսին խոր ծերության մեջ: (Պատկանյանի թատերական գործունեության և նրա հեղինակությունների մասին տես հաջորդ ծանոթագրությունը):

63 Խոսքը Տերմաղանյանի գարբասում տված ներկայացումների մասին է: Իր թատերական հիշողություններում Պռոշյանը գրում է. Պատկանյանը «...յուր գլխին հավաքեց գիմնազիայի աշակերտները և նրանցով մի քանի կատակերգություններ ներկայացրեց: Տերմաղանյանց տան հին մեծ գարբասը մի ամբողջ ձմեռ պետք եկավ հայ ներկայացումների համար. թեև կաղ ի կաղ, բայց թատրոնական խաղը շարունակվում էր: Մեկը մյուսի յետևից յոթը պիես կարճ միջոցում, վորը հեղինակեց, վորը թարգմանեց ընդունակ Միք. Պատկանյանը և ներկայացրեց Տերմաղանյանց գարբասում: Այդ պիեսներն էյին. 1) Մոցիքուլ, վոր ցայսօր կարծեմ խաղացվում է վրաց բեմի վրա. 2) Սատանի փայ. 3) Փարիզի կոշկակար (թարգմանություն). 4) Երեք հարված (թարգմանություն). 5) Սուտ բարեկամ. 6) Թուղթ խաղացողի կյանքը (թարգմանություն). 7) Մեկը նշանած՝ մյուսը կին: Բացի վերջինից, վոր... խաղացվել էր Ներսիսյան հին դպրոցում, մնացածները ներկայացվեցին Տերմաղանյանց գարբասում» («Հայ թատրոնի սկզբնավորությունը Թիֆլիսում», «Թատրոն», 1893, № 1, եջ 35—36):

64 Աբամելիքյան Սողոմոն— Ներսիսյան դպրոցի թվաբանության ուսուցիչ: Թատրոնական ներկայացումների տաղանդավոր ձևավորող (դեկորացիա և հագուստ): Հայ թատրոնի սկզբնավորության գլխավոր գործիչներից մեկը: 1870 թ. մենք նրան հանդիպում ենք Երևանում, ուր նա, ըստ յերևույթին, բնավ թողնելով ուսուցչությունը, նահանգական դատարանի պրիստավ էր և թատերական ընկերության վերատեսուչ (տես՝ «Արարատ», 1870, № 3, Ս. Մարությանի հոդվածը՝ «Մեր ազգին թատրոններու համառոտ տեսությունը»):

65 Այդ մասին տես՝ Պռոշյանի վերև հիշած հիշողությունները, եջ 34—35:

66 Եթե մինչև անգամ «Հաստատ հայ թատրոնական խմբի ստեղծագործության» միտքը հղացել է 1862 թ. սկզբներին, ապա, համենայն դեպս, գործնական քայլերն այդ ուղղությամբ,—



վորոնց մասին սկսում է պատմել Պռոշյանը,— արվել են նույն թվի վերջերին միայն:

67 Իզմիրյան Գրիգոր (— 1894)— Հայ թատրոնի սկզբնավորության խոշոր գործիչ: Կրթությամբ՝ իրավաբան: Եղել է Թիֆլիզի քաղաքային խորհրդարանի անդամ, վարել է քաղաքագլխի պաշտոն, հոգաբարձու յեր Ներսիսյան, Մարիամյան և այլ դպրոցների: Նրա կինը, Սոֆիան, առաջին հայ դերասանուհիներից եր: 1865 թ. համքարների խռովության առնչությամբ, 1½ տարի նստել է բանտում: Իր թատրոնական հուշերում («Թատրոն», 1893, № 1) Պռոշյանը մեծ սիրով խոսում է նրա դեմոկրատիզմի և այլ արժանավորությունների մասին: Իսկ «Հուշիկներ»-ում նկարագրում է նրա ցասումը Ներսիսյան դըպրոցը վոստիկաններ մտցնելու և աշակերտներին ձերբակալելու առթիվ, վորը— դպրոցի ուսուցիչ Քաթանյանի և տեսուչ Արղանյանի ինցիդենտի առնչությամբ— արվեց վերջինիս և Թեմի առաջնորդ Ջալալյան Սարգիս յեպիսկոպոսի թելադրանքով (եջ 233—36):

68 Անտիպ:

69 Ադիբեկյան Գեորգ (—1865)— Պռոշյանի հասակակիցը և մոտ ընկերը: Հայրը Երևանի Կոնդ թաղամասից էր, մայրը՝ հնդկուհի: Հաջողությամբ սովորել է Ներսիսյան դպրոցում, սիրված և հարգված էր թե՛ վարչության և թե՛ ընկերների կողմից: Հիմնադիր և ջերմ մասնակից էր աշակերտական թերթի, վորտեղ, ըստ յերևույթին, դպրոցական արմատական ռեֆորմների խնդիրներ էր արծարծում: Պռոշյանի և յերկու այլ ընկերների հետ Թիֆլիզում հիմնել է թաղային արական նախակրթարան, վորը փակվել է իր մահից մի տարի առաջ: Ամենաջերմ մասնակցություն է ցուցաբերել Թիֆլիսի քաղաքային թատրոնում կազմակերպած հայկական ներկայացումներին, վորոնց մասին այս և հետագա գլուխներում պատմում է Պռոշյանը: Ադիբեկյանի և իր ընկերների նախակրթարանումն էյին կատարվում փորձերն ու կրկնությունները, այնտեղ էյին տեղի ունենում թատրոնական ժողովները: «Թատրոն» հանդեսի 1899 թ. դեկտեմբեր ամսի համարում Պռոշյանը ջերմ հոդված է նվիրել իր սիրելի ընկերոջը՝ «Մի անհայտ թատրոնական գործիչ» վերնագրով, վորտեղ վիպասանը անվանում է նրան «Հայ թատրոնական հաստատության գլխավոր սյուներից մեկը»: Պռոշյանի հետ Ադիբեկյանն էր Հեքիմյանի խրթին գրաբարով գրած պիեսները վերածում աշխարհաբարի: Ադիբեկյանը հուշարար էր և թատրոնական կոմիտեյի անդամ: Ադիբեկյանը մեռավ յերիտասարդ հասակում՝ ծայրահեղ գինեմոլության հետևանքով: Ուներ գրական յերկեր, վոր յերբեք լույս չտեսան ու անդարձ կորան:

70 «Մեկը նշանած, մյուսը կին» կատակերգության մեջ:

71 Ազգային-ռոմանտիկական վողբերգություն, վորի թե-

ման և Վարդան Մամիկոնյանի դուստր Շուշանիկի չարչարանքն ու մահը (տես՝ 51-րդ և 53-րդ ծանոթագրությունները)։ Լույս տեսավ Թիֆլիսում 1860 թ.։

72 Տպված էր։ Տես նախորդ ծանոթագրությունը։

73 «Միքայելի Պատկանյանց կրիտիք Հակոբա Կարենյանց հեղինակության վրա», Թիֆլիզ— 1861։ Պատկանյանը մանրամասն, հետաքրքիր և խիստ քննության է յենթարկում Կարենյանի վողբերգությունը լեզվի, իմաստի և այլ տեսակետներից ու վերջացնում իր գիրքը հետևյալ խոսքերով. «Ախո՛ս Շուշանիկ, վոր ընկար պ. Կարենյանցի գրչի տակ» (էջ՝ 84)։

74 Անտիպ։

75 Գալֆայան Խորեն, յեպ. (1831—1893)— Ավելի հայտնի էր Նարպեյ ազգանունով։ Յեղբայրն էր Ամբրոսիոս Գալֆայանի, վոր Գաբրիել Այվազովսկու և Սարգիս Թեոդորյանի հետ 1855 թ. կաթոլիկությունից անցավ լուսավորչականության։ Հետևելով այս յերեքին, 1857 թ. նույն քայլը կատարեց նաև ինքը Խորեն Գալֆայանը։ Գալֆայանը դասատու յե յեղել Խալիպյան դպրոցում, աշխատակցել «Մասյաց աղավնուն»։ Հայտնի յե վորպես ազգային–ռոմանտիկ ուղղության դրամատուրգ և բանաստեղծ։

76 Խորեն Գալֆայանի «Արշակ յերկրորդ» վողբերգությունը լույս է տեսել Թեոդոսիայում, 1861 թվին։ «Արշակ յերկրորդ»-ը հայ ազգային–ռոմանտիկական տրագեդիայի ամենատիպիկ նմուշներից մեկն է, վոր յերկար ժամանակ խաղացվել է բեմի վրա։ Նյութը՝ Փավստոս Բյուզանդացու պատմածն է Արշակ յերկրորդի բանտարկության Անհուշ բերդում և մահվան մասին։ Գրված է չափածո, արևմտահայ լեզվով։

77 Թումանյանց Յատոն, իշխ. (1820—1883)— Հասարակական գործիչ։ 60-ական թվերի սկզբին ակտիվ մասնակցել է հայ թատրոնական գործերին, հետագայում յեղել է Թիֆլիսի արքունական ոպերային թատրոնի դիրեկտոր։ 1870—75 թ. թ. յեղել է Թիֆլիսի քաղաքագլուխը։ Նրա քաղաքագլխության օրոք է մտցվել քաղաքային ինքնավարությունը և բացվել արհեստների Միքայելյան դպրոցը։ Սենեկապետ (կամերգեր)։

78 Շահխաթունյան Վաղարշակ— ավարտել է Լազարյան ճեմարանը։ Ուներ դերասանական խոշոր ձիրք։ 60-ական թ. թ. սկզբի տարիներում մեծ հաջողությամբ խաղում էր Թիֆլիսում։ 1865 թ. անցավ գավառ. պետական ծառայության, վորից հետո տակավ էր բեմ յելնում։ 1870 թ. հաշտարար դատարանի ատենադպրի օգնականն էր և նույն դատարանի թարգմանը Վաղարշապատում (տես՝ «Արարատ», 1870, № 3, Ս. Մարության՝ «Մեր ազգին թատրոններու համառոտ տեսությունը»)։

79 Տես՝ Պռոշյանի թատրոնական հիշողությունները (էջ 46)։



80 Ներկայացումը տեղի յե ունեցել 1863 թվի հունվարի 3-ին։ Տես՝ «Մեղու Հայաստանի» նույն թվի յերկրորդ համարի բարենպաստ և շատ հետաքրքիր, Թիֆլիսի բարբառով գրած ռեցենզիան։ Տես՝ նաև «Կռունկ»-ի ռեցենզիան (1863, № 1)։

81 Թատրոնական հիշողություններում Պռոշյանը գրում է Շահխաթունյանցի մասին. «Նրա շարժմունքները, նրա յուրաքանչյուր խոսքը, նրա հառաչանքները վերին աստիճանի բնական, զգայուն և սրտաշարժ են. բազմամյա քաջահմուտ դերասանից էլ ավելի պահանջելն հանցանք է» (էջ 48)։

82 Ժողովողներն էյին՝ Գ. Սունդուկյանը և Մ. Տեր-Գրիգորյանցը։ 100 ռուբլի Շահխաթունյանցն անմիջապես հանձնեց գանձապահին՝ միացնելու ընդհանուր ընկերական գումարին— այսպես է պատմում Պռոշյանն իր հիշողություններում (էջ 48)։

83 Պռոշյանի «Աղասի»-ն լույս է տեսել «Կռունկ»-ում 1863 թ., №№ 3—6։ Միևնույն թվին լույս է տեսել նաև առանձին։

84 Ըստ թատրոնական հիշողությունների՝ 800 ռ.։

85 «Արշակ Բ»-ի այս յերկրորդ ներկայացմանն են վերաբերում Գ. Ջմշկյանի հիշողությունները («Փորձ», 1876, № 1, էջ 332—33)։

86 Թատրոնական հիշողություններում Պռոշյանը գրում է. «Արշակ Բ»-ի յերկրորդ ներկայացման կես յեկամուտը Իզմիրյանցի խորհրդով մենք բաժանեցինք համքարների չքավոր, վորբ և անտեր աղջիկներին ամուսնացնելու համար խնայած գանձարանի հետ...։ 400 մանեթ փող մեզանից մտավ համքարության դրամարկղը։ Փոխարենը՝ համքարությունը սերտ կապվեց հայ թատրոնի հետ» (էջ 50—51)։

87 Տես՝ Պռոշյանի թատրոնական հիշողությունները (էջ 51)։ Համքարների ջերմ վերաբերմունքն այնքան էր վոգևորել Պռոշյանին, վոր նա հատուկ վոտանավոր նվիրեց նրանց «Յերգ հայկական թատերականաց» վերնագրով («Կռունկ», 1863, № 3)։

88 Միխայիլ Նիկոլայեվիչ, մեծ իշխ. 1831—1909)— Փոխարքա յե յեղել Կովկասում 1863—81 թ. թ.։

89 Թատրոնական հիշողություններում Պռոշյանը գրում է. «Բայց և այնպես, համենայն դեպս, պետք է խոստովանել, վոր յեթե Գրիգոր Իզմիրյանցի քաջալերով յեռանդը և անխոնջ աշխատությունը չլիներ, հայ թատրոնը չէր կարող հարատևել» (էջ 50)։

90 Տեր-Գրիգորյան Միքայել, բժ. (—1869)— Գ. Սունդուկյանի նախորդներից։ Գրել է «Պիպոյի ակճոր», «Պառավներին խրատ», «Ժլատ», «Եշը կղատե, ձին կուտե» և այլ վոդեվիլներ։ Թատրոնական կոմիտեյի անդամ, Ներսիսյան դպրոցի հոգաբարձու։ Պռոշյանի լավ բարեկամը։

91 Փուղինյան Նիկողայոս, բժ.— Գ. Սունդուկյանի նախորդներից։ Սովորել է Մոսկվայում։ Նրա գրչին է պատկանում «Դալալ Ղազո» կոմեդիան։ Կոմիտեյի անդամ։

92 Պռոշյանը մոռացությամբ չի տալիս թ. Հարություն Հովհաննիսյանի և Գևորգ Ֆրիդոնյանի անունները, վորոնք նույնպես թատրոնական կոմիտեյի անդամներ եյին:

93 Յերկրորդ ներկայացումը տեղի ունեցավ առաջինից ուղիղ յերկու շաբաթ հետո, այն է՝ հունվարի 17-ին:

94 Չմշկյան Գևորգ (—1915)— Հայ խոշոր դերասան: Յերիտասարդ հասակում գրավվելով հայ բեմով, մի կողմ է նետում զինվորականի փայլուն հանդերձներն ու վորդեգրվում դերասանի անապահով կյանքին: 1864 թ., Պռոշյանի խմբին զուգահեռ, ստեղծում է մի նոր դերասանական խումբ: 1865 թ. Չմշկյանի խումբը, հարստացած Պռոշյանի արդեն քայքայված խմբի լավագույն անդամներով, գնում է Յերևան, Գանձակ, Շուշի: Սա մի տուրնե յե, վոր խոշոր նշանակություն ունի հայ թատրոնի և կուլտուրայի պատմության մեջ: Հետագա տարիներում Չմշկյանը կրկնապատկված յեռանդով շարունակում է իր կազմակերպչական աշխատանքները: Նրա գործունեյության շնորհիվ է, վոր Կովկաս յեկան պոլսահայ դերասանական լավագույն ուժերը— Պ. Ադամյան, Սիրանուշ, Աստղիկ: Չմշկյանը վոչ միայն շնորհալի դերասան եր, այլ և ուսուցիչ-ռեժիսոր: Նրա ձեռքի տակովն են անցել բազմաթիվ հայ դերասաններ: Գ. Սունդուկյանի մոտ բարեկամն եր, «Պեպո»-ն նրա ձեռքով է գրվել: Նրա կինը, Սաթենիկ Չմշկյանը, ծառայել է հայ բեմին նույնպիսի անձնվիրությամբ, ինչ և իր ամուսինը:

95 Այդ մասին տես թե՛ Պռոշյանի թատրոնական հիշողությունները և թե Գևորգ Չմշկյանի. վերջինս լույս է տեսել «Փորձ» ամսագրում— 1876, №№ 1—2, 1877, № 3 և «Մշակ»-ում— 1872, №№ 33 և 50:

96 1863 թ. դեկտեմբերի 7-ին (տես՝ «Մեղու Հայաստանի», № 45, 21 դեկտեմբերի):

97 1863 թ. հունվարի 28-ին: Տես «Մեղու Հայաստանի»-ի (1863, № 4, 10 փետրվարի) և «Կռունկ Հայոց աշխարհին»-ի (1863, գիրք Ա, եջ 79) աննպաստ ռեցենզիաները:

98 «Եր հեռանաս» յերգը՝ զորքն է յերգում Հ. Կարենյանի «Շուշանիկ» վողբերգության առաջին գործողության վերջում (1860, Թիֆլիս, եջ 26—27), յերբ Շուշանիկը Հայաստանից ուղևորվում է Վրաստան՝ ամուսնանալու Վազգենի հետ:

Յերաժշտությունը պատկանում է Գ. Արովյանին:

99 Հ. Կարենյանի «Շուշանիկ» վողբերգության մասին գրած իր հայտնի քննադատության մեջ (տես՝ 73-րդ ծանոթագրություն) Մ. Պատկանյանցն ասում է, վոր «Եր հեռանաս» յերգը նման է սգավոր պառավ կանանց մեռելի վրա յերգած բայաթիներին և առաջարկում է նրա փոխարեն «Պարկեշտասուն» կամ «Լյառն Կովկաս» յերգերը (տես՝ «Կրիտիք», եջ 44—46):

100 Թատրոնական հիշողություններում Պռոշյանը գրում է. «Ել ի՞նչ հոգս ունինք, հաջողությունը մեզ հետ եր, խմբի մեջ



ունեյինք Շահխաթունյանցի նման անզուգական վողբերգակ, ունեյինք Մարտինյանցի պես հազվագյուտ կատակաբան, ունեյինք Սուքիասյանց, վոր տեղական կինտոյի և հաստատվոր վաճառականի խոսակցությունը, շարժվածքն ու դեմքի դծագրությունը ֆոտոգրաֆիական ճշտությամբ կերպավորում եր, ունեյինք բեմի համար մի անգնահատելի անհրաժեշտ անձնավորություն, վոր յերկու հակասական տիպերի— առաջնակարգ վողբերգակի և զվարճախոս-կատակաբանի կենդանի արտացոլումն եր: Ամրիկյանն եր նա» (եջ 52): Բացի այս չորս շնորհալի դերասաններից, խմբի մեջ մտնում եյին նաև հետևյալ դերասանները. Հովսեփ Արովյանց, Պետրոս Վարշամյանց, Սահակ Ադիբեկ-Մելիքյանց, Գրիգոր Բեժանյանց, Հովհաննես Կուսիկյանց, Թովմաս Զարդեդյանց, Պողոս Բենքլյանց, Ստեփաննոս Տեր-Հովհաննիսյանց: Շահխաթունյանցը հաշվվում եր առաջին կարգի դերասան ու ստանում ամենաբարձր վարձատրությունը. Ամրիկյանցը, Սուքիասյանցը, Ադիբեկյանցը, Մարտինյանցը, Կուսիկյանցը, Զարդեդյանցը և Ադիբեկ-Մելիքյանցը հաշվվում եյին յերկրորդ կարգի դերասաններ. մնացածները— յերգեցիկ խմբի հետ միասին— յերրորդ կարգի:— Ինչ վերաբերում է դերասանուհիներին, ապա, բացի՝ քիչ հետո հիշատակվող՝ Յեղիսաբեթ Տեր-Աբրահամյանից (հետագայում՝ Սաթենիկ Չմշկյան) և Սոփիա Մելիք-Նազարյանից (հետագայում՝ տիկին Իզմիրյան), կարելի յե միայն Սոփիա Շահինյանցի անունը տալ, վոր մի տարու չափ ծառայեց հայ բեմին («Դալալ Ղաղո»-ում խաղում եր Ղաղոյի կնոջ դերը):

101. Չմշկյան Սաթենիկ— նախկին՝ Յեղիսաբեթ Տեր-Աբրահամյան: Գևորգ Չմշկյանի կինը, առաջին հայ դերասանուհիներից: 14 տարեկան հասակում սովորել է Պռոշյանի բաց արած առաջին Գայանյան դպրոցում: Առաջին անգամ բեմ է բարձրացել 1862 թ.: 1865 թ. մեծ հաջողությամբ կատարել է Դոն Սեզար դը Բազան կոմեդիայում մանկլավիկ Լազարիլլոյի դերը: Սունդուկյանի և Տեր-Գրիգորյանի պիեսների Թիֆլիսի կանանց տիպերի անփոխարինելի կերտող:

102 Իզմիրյան Սոփիա— Նախկին՝ Սոփիա Մելիք-Նազարյան: Գրիգոր Իզմիրյանի կինը: Ծնվել է Թիֆլիսում 1846 թ., վախճանվել 90-ական թվերին: Առաջին հայ դերասանուհիներից, ներկայացումներին մասնակցել է Նվարդ անունով: Հայտնի յե նաև իր նկարներով ու առանձնապես ձեռագործներով: Նկարչություն սովորել է Ներսիսյանի մոտ:

103 Ամրիկյան Միհրդատ (1843—1879)— Հայտնի հայ դերասան, Հովհաննես Ամրիկյանի վորդին: Սովորել է Ներսիսյան դպրոցում, վորտեղ հաջողությամբ հրատարակել է աշակերտական թերթ: Առաջին անգամ բեմ է բարձրացել աշակերտ ժամանակ «Միհրդատ» վողբերգության մեջ ու այնպիսի հաջողությամբ խաղացել Միհրդատի դերը, վոր նրան իր իսկական անվան, Հովհաննեսի փոխարեն սկսել են Միհրդատ կոչել: Հետա-

դայում «...Ամրիկյանցը ընդհանրապես յուր սեփականությունը չինեց բացառական դերերը, ասում է Պռոշյանը: Ժողովրդից արհամարհված վաշխառու, ժլատ, մոցիքուլ, մատնիչ, խարդախ, խաբեբա, անխղճմտանք, պատիվը կորցրած և այլ նրանց նման անձնավորությունները բեմի վրա կենդանանում եին Ամրիկյանցի մեջ» («Միհրդատ Ամրիկյանց», Թատրոն, 1905, № 3): «Մշակ»-ի սկզբնավորության տարիներին ակտիվ մասնակցել է այդ լրագրին ու գրել բազմաթիվ սրամիտ ֆելիետոններ «Զաքուչ» ստորագրությամբ: 70-ական թ. թ. շատ անհաջող այց է կատարում Պոլիս ու հիվանդացած և հյուծված վերադառնում Թիֆլիս: Նրա ողնության կանչը՝ ուղղված Արծրունուն՝ մնում է անարձագանք: Քաղցած ու հիասթափված՝ վերջ է տալիս իր կյանքին ատրճանակի հարվածով: Մահվան նախընթաց օրն իր մտերիմ ընկերոջը, Պռոշյանին, նա ասում է. «Ինձ տեսեք, ձեզ լացեք»— ակնարկելով հայ դերասանի ու գրողի անապահով ու դժվարին կյանքը:

104 Տես՝ 95-րդ ծանոթագրությունը:

105 Պռոշյանի և Սունդուկյանի կապը յեղել է մինչև սերտ բարեկամական: Իր «Ցեցեր»-ը Պռոշյանը նվիրել է Սունդուկյանին՝ վերջինիս 25-ամյա հոբելյանի առթիվ (1889):

105 ա. Հայ թատրոնի սկզբնավորության պատմության մեջ Պռոշյանի դերն այնքան մեծ եր, վոր հետագա սերունդն անվանեց 62—63 թվերի հայ թատրոնական խումբը «պերճական խումբ»:

106 Աղջկանց դպրոցի հիմնադրումը, այդպիսով, տեղի յե ունենում 1861 թ. մայիս—հունիս ամիսներին, թատրոնական խմբի կազմակերպումից առաջ, մինչդեռ Պռոշյանի շարադրանքից այն սխալ տպավորությունն է ստացվում, իբր աղջկանց դպրոցով նա սկսել է զբաղվել թատրոնական խմբի քայքայումից հետո միայն:

107 Հովհաննիսյան Յեղիսաբեթ (1830—1874)— Բժ. Հարություն Հովհաննիսյանի կինը, Պռոշյանի մոտ բարեկամուհին, առաջին Գայանյան (Պռոշյանի հիմնած, 1861 թ.) և յերկրորդ Գայանյան (1869 թ. հիմնած) դպրոցների ակտիվ հոգաբարձուհի: Անդամ եր կայսրուհու հովանավորության տակ գտնվող բարեգործական ընկերության, վորի թաղային դպրոցներից մեկի, այն է՝ Սոլոլակի, վարիչն եր: Ս. Նունեյի ուսումնարանի (заведение св. Нины) խորհրդի անդամ եր:

108 Հայտնի չե մեզ այդ վարժուհու ով լինելը:

109 Պռոշյանի այս դպրոցի հետագա ճակատագրի մասին տես՝ «Տասնամյա Գայանյան հայ օրիորդաց միջնակարգ ուսումնարանը», Թիֆլիս (1879), եջ 123—124: Ավելացնենք, վոր 1868—69 թ. թ., Պռոշյանը, վերադառնալով Ագուլիսից Թիֆլիս, վերաբացում է իր դպրոցը, վորը յերկու-յերեք տարի եւս շարունակում է գոյություն ունենալ:



110 Գրիգոր ք. Տեր-Բարսեղյանի հետ միասին (այդ մասին տես՝ «Հայկական աշխարհ», 1866, № 1, եջ 81—82 և «Կռունկ Հայոց աշխարհին», 1861, ոգոստոս, Գ. Տ.— Բարսեղյանի «Ազգային հառաջադիմության նշաններ» հոդվածը, եջ 643—650):

111 Տես՝ Յեղ. Հովհաննիսյանի կենսագրությունը (107-րդ ծանոթագրություն):

112 Ստեփանե Խորեն, յեպ. (1840—1900)— Մանկավարժ, հրապարակախոս և քարոզիչ: Գորեցի: 1862 թ. ավարտել է Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Տպագրել է «Հյուսիսափայլ»-ում վոտանավորներ՝ «Իշխան Բագրատունի» ստորագրությամբ: 1864 թ. սկսել է հրատարակել «Հայկական աշխարհ»-ը, վոր ընդհատումներով տևել է մինչև 1879 թ.: 1868 թ. հիմնել է Մողնու Մարիամյան, իսկ մի տարի անց, 1869 թ., Հավլաբարի նույնանուն աղջկանց դպրոցները: 1884—1886 թ. թ. հրատարակում է «Մանկավարժանոց» պարբերականը: Թարգմանել է Մովսես Խորենացուն աշխարհաբար:

113 Գրիգորյան Զաքարիա (1841—1910)— Սովորել է Թիֆլիսի գիմնազիայում, ավարտել Պետերբուրգի համալսարանի բնագիտական ֆակուլտետը 1867 թ.: Յեղել է «Միրագումար ժողով»-ի անդամ: Համալսարանն ավարտելուց հետո զբաղվում է ուսուցչությամբ, բաց է անում գրավաճառանոց, հորինում ու հրատարակում է բնագիտության դասագրքեր: Յերկար ժամանակ տեսուչ է յեղել Գայանյան (յերկրորդ) դպրոցում, վորի հիմնադիրներից մեկն է յեղել ինքը:

114 Գայանյան դպրոցը բացվեց 1869 թ. հունիսի 17-ին՝ Գայանյանց տոնի որը: Աղջկանց հատուկ դպրոց հիմնելու խնդիրը հարուցել եին հետևյալ անձինք. Նիկողայոս Ալադաթյան, Մարտիրոս Սիմոնյան, Ստեփաննոս Պալասանյան, Զաքարիա Գրիգորյան, Հովհաննես Բաթանյան, Միքայել Սալամբեկյան, Միքայել Գուլուլյան, Գեորգ Յեվանդուլյան, Գրիգոր Տեր-Հարությունյան: Սրանցից Ն. Ալադաթյանը, Ս. Պալասանյանը, Գ. Յեվանդուլյանը, Հ. Բաթանյանը, և Զ. Գրիգորյանը նշանակվում են դպրոցի խնամակալներ: Զ. Գրիգորյանը ընտրվում է տեսուչ: Խ. Ստեփանեն, վորքան մեզ հայտնի յե, Գայանյան դպրոցի հիմնադիրներից չեր:

115 Հավլաբարի Մարիամյան դպրոցը Խ. Ստեփանեն հիմնել է 1869 թ. հունիսի 1-ին («Հայկական աշխարհ», 1869, № 4—5, եջ 190): Այս դպրոցը յերկրորդ բաժանմունքն եր Մողնու Մարիամյան դպրոցի, վոր հիմնել է նույն Խ. Ստեփանեն 1868 թ. մայիսին («Հայկական աշխարհ», 1868, № 4—5, եջ 174—77): Գայանյան դպրոցի ուսուցչական հիմնական կազմը (տես նախորդ ծանոթագրությունը) սկզբում աշխատում եր Մարիամյան դպրոցում, իսկ հետագայում, 1869 թ. հունվար-փետրվար ամիսներին, նա, ըստ յերևույթին, գժտվեց Խ. Ստեփանեյի հետ, հեռացավ Մարիամյան դպրոցից ու նույն թվի հունիսին հիմնեց

Գայանյան դպրոցը: Պռոշյանը սխալվում է կապելով Գայանյան դպրոցի հիմնադրումը Խ. Ստեփանեի հետ:

116 Այդ վարժոցի մասին տես Գեորգ Աղլբեգյանի կենսագրությունը:

117 Պետերբուրգից. Ներսիսյան դպրոցը թողնելուց հետո Ծանչյանն ապրում էր այնտեղ (1861 թվից):

118 Ծանչյանի, տեսուչ նշանակվելը Շուշվա թեմական դպրոցի հոգաբարձությանը հայտնի յե դարձել 1863 թ. հոկտեմբերի 1-ին:

119. Ըստ յերևույթին՝ հոկտեմբերի վերջերին կամ նոյեմբերի սկզբներին:

120 Հախումյան Մարիամ— 60-ական թ. թ. հասարակական գործիչ Շուշում, սերում էր Մելիք-Շահնազարյաններից, ամուսինն էր Համբարձում աղա Հախումյանի: Սերտ բարեկամական կապերի մեջ էր Ծանչյանի, Պռոշյանի, Գ. Մուրադյանի, նկարիչ Ներսիսյանի և այլոց հետ: Աղջկանց առաջին դպրոցի հիմնադիրը Շուշում: Վախճանվել է 90-ական թվերին:

121. Գրքի ճիշտ տիտղոսաթերթը. «Ղարաբաղու տերամայր սուրբ Մարիամու օրիորդաց ուսումնարանի բացվիլը», 1864, Շուշի:

122 Այս նախադասությունը ավելացրած է հետագայում ու գրված տողամիջում:

123 Ի վիճակի չենք վորևե բացատրություն տալու:

124 Շուշվա Մարիամյան դպրոցի սկզբնավորության մասին տես նաև՝ Լեո— «Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի», 1913, եջ 291—92: Դպրոցի բացման հրամանը տրված է յեղել 1864 թ. փետրվարի 27-ին, իսկ այն բացվել է ապրիլի 7-ին: Հոգաբարձուհիների թիվը քառասունից անց էր. Նրանցից յուրաքանչյուրը վճարում էր դպրոցի օգտին տարեկան վեց ռուբլի: Տեսչուհի ընտրվեց Մարիամ Հախումյանը, վոր տրամադրեց դպրոցին իր տան մեջ հինգ սենյակ: Ուսումնական մասի վարիչն էր Պ. Ծանչյանը: Ուսման վարձը հավասար էր տարեկան 15 ռուբլու: Դպրոցի գոյությանը ծանր հարված հասցրեց Ծանչյանի հեռացումը Շուշուց:

125 Յեզյան Կարապետ (1835—1905)— Ազգային-պահպանողական կուսակցության պարագլուխներից մեկը, արևելագիտության մագիստրոս, ժողովրդական լուսավորության մինիստրության խոշոր պաշտոնյա: Ապրելով Պետերբուրգում, աշխույժ կապ էր պահպանում Անդրկովկասի հայ տիրող շրջանների ներկայացուցիչների հետ ու մեծ ազդեցություն ուներ նրանց վրա: Ունի մի շարք հայագիտական աշխատանքներ:

126. Կ. Յեզյանի հիշատակվող գրքի ռուսերեն հրատարակության տիտղոսաթերթը՝ Внутренний быт древней Армении, Историческое исследование. Сочинение Г. А. Эзова на степень магистра Восточной словесности. Санкт Петербург. В типографии Морского Министерства, 1859".



Հայերեն թարգմանության տիտղոսաթերթը. «Ներքին կյանք հին Հայաստանի, պատմական քննություն, շարադրություն Գ. Յեզյանց, մագիստրոսի Արևելյան գրականությանց: Թարգմանություն Պերճի Պռոշյանց: Շուշի, 1864»: Թարգմանությունը նվիրված է Ստեփանոս արքեպիսկոպոսին:

127 Անհայտ են մեզ այդ խարդավանքները:

128 Խանի բաղը Շուշի—Յեվլախ խճուղու վրա կայարան է ու գտնվում է Շուշուց 10—15 կմ. հեռավորության վրա:

129 Նախորդ նշումների պես՝ այդ նշումները ևս արված են հետագայում: Մենք ի վիճակի յենք տալու փաստական անհրաժեշտ լրացումներ միայն:—Իվան-բեգը, ըստ յերևույթին, հոգաբարձու Իվան-բեգ Ավան-Յուզբաշյանցն է: Տիկյանք՝ անվանի ընտանիք Շուշում: Համբարձում-բեգը, հավանորեն, հոգաբարձու Համբարձում-բեգ Սարուխանբեգյանցն է: Թիֆլիսյան Շուշի քաղաքի հայկական մասի կենտրոնական հրապարակն է. Ծանչյանի առաջարկությամբ «Բաղդասար մետրոպոլիտի կառուցած ընդարձակ և պարտիզաչատ առաջնորդարանն՝ դպրանոցի վերածվեցավ, իսկ Թիֆլիսեցի իբր վարժարան վարձված չենքն՝ առաջնորդարանի» (Մ. յեպ. Մուրադյան— «Պետրոս Ծանչյան», Թիֆլիզ, 1898, եջ 75): Համբարձում աղան— Մարիամ Հախումյանի ամուսինն Համբարձում աղա Հախումյանն է, մեծ կարողության տեր վաճառական, ազդեցիկ հասարակական գործիչ 60-ական թ. թ.: Վախճանվել է 1898 թվին:— Մնացյալը մնում է մեզ անհայտ:

130 Մատթեոս Ա. Ջուխաճյան— Կաթողիկոս 1859—1865 թ. թ.: Յեղել է նաև Կ. Պոլսի պատրիարք: Հայտնի յե իր հալածանքներով բողոքականների դեմ ու իր աստվածաբանական բազմաթիվ գործերով, վորոնք հաշվի չեյին առնվում ժամանակակիցների կողմից անգամ:

131 Շուշվա անցքերի մասին տես՝ Լեո— «Պատմ. Ղարաբաղի Հայոց թեմ. հոգևոր դպրոցի», ինչպես նաև՝ Մ. Մուրադյան— «Պետրոս Ծանչյան» (եջ 71—87):

«Շուշվա դեպքերը» արտացոլվել են Մուրացանի «Խորհրդավոր միանձնուհի» վիպակի մեջ, գրված 1889 թ.: Գործողությունը տեղի յե ունենում Շուշում (Շ. քաղաքում), 1864 թ.: Պայքարում են միևնույն կուսակցությունները, հիմնվում է միևնույն առաջին աղջկանց դպրոցը, վորի անունը մնում է նույնը— Մարիամյան: Հոգաբարձուհիների քանակը և վորդեգրման մանրամասնությունները կրկնվում են: Տեսչի (Ծանչյանի) ազգանունը չի տրվում, բայց նշվում են այն պարբերականները, վորտեղ դետեղվել է նրա ճառը («Մեղու» և «Սիոն»): Վիպակի հերոսն է հայոց լեզվի և պատմության ուսուցիչը, Գարեգինը, նույն ինքը Գարեգին Մուրադյանը և այլն, և այլն:

Պռոշյանին Մուրացանը հիշատակում է «Առաքյալ»-ում՝

նրա տեսչական գործունեության առընչությամբ (տես՝ Ընտիր երկեր, 1936, հատ. I, էջ 118):

132 1863 թ. վերջերքին (Շանշյանը Շուշի էր) և 1864 թ. սկզբներին Գարեգին Մուրադյանը Ներսիսյան դպրոցում տեսչի պաշտոնակատար էր: Իր փոխադրվելու մասին Շուշի ինքը Մուրադյանը գրում է հետևյալը. «Սակայն, չնայելով իմ պաշտոնական և նյութական նախանձելի կացությանս, մեծ փափագս էր Շանշյանցի մոտ լինել և սպասում էի պատեհ ժամուն: 1864 թվականի արձակուրդին էր, որ կանխավ լուր տալով Պ. Շանշյանին, համոզելով նաև հոգաբարձուներին, որ մեծ մասամբ Շանշյանցի բարեկամներն էին, հրաժարեցա պաշտոններս և մեկնեցա Թիֆլիսեն Շուշի երթալու համար» (Մելք. բեկ. Մուրադյան— «Պետրոս Շանշյան», էջ 74): Մեզ հայտնի չէ, թե ի՛նչ անբավականությունների մասին է խոսում Պռոշյանը:

133 Բժ. Հ. Հովհաննիսյանը Ներսիսյան դպրոցի տեսուչ էր 1864 թ. մարտի 24-ից մինչև նույն տարվա հուլիսի 30-ը, իսկ Պռոշյանը, իր իսկ ասելով, Շուշուց Թիֆլիս է մեկնում օգոստոսի 8-ին: Հետևապես, կամ բժ. Հովհաննիսյանը Ներսիսյան դպրոց է հրավիրել Պռոշյանին վերջինիս Շուշի եղած ժամանակը, կամ էլ Պռոշյանը օգոստոսի 8-ից առաջ է մեկնել Շուշուց (Լեոյի ասելով՝ Ստեփաննոս յեպիսկոպոսը Շուշին թողել է 1864 թ. հուլիս ամսին, տես՝ Լեո— «Պատմ. Ղարաբ. թեմ. դպր.», էջ 309):

134 Ադիբեկյանցին, գուցե, հարբեցողության պատճառով:

135 Պռոշյանի տկարության մասին տես նաև Արայանի Հուշերը, էջ 23:

136 Տեր-Հովհաննիսյան Ստեփաննոս (1841—1869) — Ղազախեցի, բժ. Գաբրիել Տեր-Հովհաննիսյանի (Քաջբերունու) կրտսեր եղբայրը: «Շուշանիկ» մականունն ստացել է 60-ական թ. թ. սկզբներին Հ. Կարենյանի համանուն վողբերգության մեջ կատարելով Շուշանիկի դերը: Հետագայում նա չի կտրել կապերը թատրոնի հետ: 1867 թ., ընտանիքով տեղափոխվելով Ղզլար, այնտեղի երիտասարդության համար, հիվանդ լինելով հանդերձ, գրում է «Վարդան» վողբերգությունը, որը և խաղացվում է Մոսկվայի և Պետերբուրգի չքավոր ուսանողների օգտին: «Վահունի» ստորագրությամբ բանաստեղծություններ է զետեղել «Հյուսիսափայլ»-ում:

136 ա. Շերմազանյան Վասիլ (1843—1917)— Հայ թատրոնի սկզբնավորության շրջանում՝ առաջին հուշարար: Սովորել է Թիֆլիսի գիմնազիայում, ծառայել նախ՝ դատարանում, ապա՝ 40 տարի՝ երկաթուղում: Պռոշյանի մոտ ընկերն էր:

137 Պ. Սիմոնյանը այսպես է պատմում Պռոշյանի հիվանդության մասին. «Եթե հիշողությունս ինձ չէ դավաճանում, կարծեմ վաթսունական թվականների սկզբումն էր, որ Թիֆլիս քաղաքի Բեհբությանց փողոցի մի հին տուն ուխտատեղի յեր



դարձել այն ժամանակվա կրթված կամ ինչպես սովորություն է այժմ կոչել ինտելիգենտ երիտասարդների համար: ...Այդ ուխտատեղին մի խարխուլ միահարկ տուն էր, պատուհանների ապակիների շատերը թղթած, հատակի տախտակները կիսախախուտ ու մաշված, տեղ-տեղ երևում էին ներքի մնացորդներ, առաստաղը տախտակամած, որ բավական յենթարկված էր անձրևների ազդեցության: Տան կահկարասիքն էլ բոլորովին համապատասխանում էր բնակարանին. մի քանի հին աթոռներ՝ մաշված չթե երեսով, հասարակ սեղան, բազմոց և մի պարզ, անպաճույճ մահճակալ, իրեն համար անկողնով ու վերմակով: Այս անկողնում ձգված էր մի երիտասարդ եյակ՝ ոչ մեռած և ոչ կենդանի, կատարյալ կմախք դարձած, բայց արդեն իր հասակակիցների սերն ու համակրությունը գրաված իր աշխուժությամբ: Ահա այդ հիվանդ ընկերոջ խնամելու համար էյին ուխտ գնում վերոհիշյալ տունն այն ժամանակվա հիվանդի նման աղքատիկ, բայց ջերմ սրտով երիտասարդները առավոտից մինչև գիշեր: Այն ժամանակվա նախապաշարյալ կարծիքով արյուն թքելն անբուժելի ախտ էր համարվում, իսկ մեր հիվանդն ամբողջ ամսով էր ժայթքում այդ կենսունակ հեղուկից: Հիվանդի շրջապատողների երեսներից միայն վհատություն և հուսահատություն էր արտափայլում. նրանցից պակաս չէր և ինքը հիվանդը, որի աչքերի փայլն անգամ աղոտացել էր. նրանք կապարյա գույն էյին բռնել: Միշտ ուրախ և հուսով լի յեր միայն հիվանդին խնամող բժշկապետը, որ ծիծաղելով ու կատակներով էր մերձենում հիվանդին: Դա յեր հայ թատրոնի ընտիր մշակներից մեկը, բարեխիղճ, գթոտ, արամիտ ու մարդասեր, հանգուցյալ Միքայել Մովսիսյան Տեր-Գրիգորյանցը, որ ամեն խրան դիմողին ասում էր. «Յեղբայր, մի՛ հուսահատիր, չեմ թողնի, որ հիվանդը մեզանից հեռանա, նա մեր թատրոնին էլ, ինչպես էլ ձեր շատ հարկավոր է...» («Տարազ», 1899, № 17):

138 1863 թիվը «Կռունկ»-ի գոյության վերջին տարին էր:

139 «Շահեն»-ը Պռոշյանի երրորդ մեծ վեպն է: Լույս է տեսել «Փորձ»-ում, 1880 թ.— №№ 6—12 և 1881 թ.— №№ 1—3: Առանձին լույս է տեսել 1883 թ., Թիֆլիսում: Լուսանկարչությամբ զբաղվելու հետ է կապված նաև Պռոշյանի «Լուսանկարչի հիշատակարանից» աշխույժ ակնարկը («Տարազ», 1893, № 24):

140 Հիսնական թվերի վերջերին Ստեփաննոս արքեպիսկոպոս (այն ժամանակ վարդապետ) Բաղալյանը Յերևանի փոխթեմակալն էր: Յերևանի թեմական դպրոցը, ուղիղ ութը տարի (1849—1857) փակ մնալուց հետո, հենց այդ ժամանակ վերաբացվեց:

141 Ի վիճակի չենք փաստական լրացումներ անելու:

142 Երկրորդ անգամ Ստեփաննոս արքեպիսկոպոսը Երևան է գալիս 1864 թ. հոկտեմբերին— Շուշին թողնելուց յերկու ամիս հետո:

143 Զարալյան Ռուբեն (1840—1902)— Երևանցի: Հասարակական գործիչ, ուսուցիչ Ագուլիսում և Երևանում: Սովորել է Լազարյան ճեմարանում, ավարտել Պետերբուրգում համալսարանի արևելյան ֆակուլտետը: Ապրել է գերազանցապես Երևանում:

144 Աթանասյան Նահապետ (1840—1918)— Հետագայում Ղևոնդ քահանա: Երևանցի, աշակերտել է Խաչատուր Աբովյանին: 1858 թ. գնում է Վան ու այնտեղ թե՛ շարունակում իր ուսումը և թե՛ աշխատակցում «Արծիվ Վասպուրականի» հանդեսին, «Ասանձար» և «Խիկար» կեղծանուններով: Հետագայում, ապրելով գերազանցապես Երևանում ու մասամբ Թիֆլիսում, զբաղվում էր ուսուցչությամբ, թատրոնով: Մինչև իր կյանքի վերջը Պռոշյանը պահպանել է նրա հետ իր բարեկամական կապերը:

145 Մակար Թեղուտցի (1813—1891)— 1864—76 թ. թ. Թիֆլիսի թեմական առաջնորդ էր: Ցարի հովանավորությամբ կաթողիկոս ընտրվեց 1885 թ:

146 Տես՝ «Պոլոժենիյե», գլուխ IV, հոդվ. 66:

147 Ցեղխազարյան Վասիլ— Ավարտել է Խալիբյան դպրոցը, մանկավարժ փաստաբան: 1883—84 թ. թ. աքսորվել է Երևանից Ռ. Զարալյանի, բժ. Լևոն Տիգրանյանի, Մատակյանի և ուրիշների հետ միասին: Վախճանվել է Հայաստանում խորհրդային իշխանության հաստատվելուց հետո:

148 1866 թվին:

149 Հովրյան Գրիգոր, արքեպ. (1820—1885)— Սովորել է Ժառանգավորաց դպրոցում, ուր 1849—1852 թ. թ. վարել է ուսուցչի պաշտոն, ապա 1858—60 և 1861—62 թ. թ. յեղել է տեսուչ:

150 Պռոշյանն ի նկատի ունի Մատթեոս Ա-ի, Գևորգ Դ-ի և Մակար Ա-ի ընտրությունները, վորոնցից առաջինը տեղի յե ունեցել 1858 թ. մայիսի 18-ին, յերկրորդը՝ 1866 թ. սեպտեմբերի 17-ին, իսկ յերրորդը՝ 1885 թ. ապրիլի 21-ին:

151 Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի (1813—1882)— 1866—82 թ. թ. կաթողիկոս, 1858—60 թ. թ. յեղել է Կ. Պոլսի պատրիարք: Սրա որոք էր, վոր Եջմիածինը մեծ հալածանք հարուցեց Պռոշյանի դեմ, վորի հերոսներն էյին Զարալյան Սարգիս յեպիսկոպոսը, ապա Սմբատյան Մեսրոբ և Արամյան վարդապետները: «Վատ վարքի» և յեկեղեցուն «վատ ծառայելու» համար Պռոշյանը 1870 թ. արձակվեց հոգևոր դասից և զրկվեց ազգային դպրոցներում դասատվության իրավունքից: Հետագայում մեծ դժվարություններով Պռոշյանը կարողացավ վերականգնել իր իրավունքները:



152 Խոսքը հիմա և հետագայում Վերին Ագուլիսի մասին է:

153 «Անցաթուղթս պատրաստ դեպի Պարսկաստան և ճանապարհի հոգսերը քաշած, յես հույս ունեյի շուտով սահմանն անցնիլ...»— ասում է Պռոշյանը Ագուլիսի դպրոցների հիմնադրմանը նվիրած իր գրքույկում (էջ 6—7, այդ գրքի մասին տես՝ 165-րդ ծանոթագրությունը):

154 Մարտի վերջին կամ ապրիլի սկզբին:

155 Տեր-Մկրտչյան Մկրտիչ—Ագայական Ագուլիսի ներկայացուցիչը 60-ական թ. թ.: «Ագուլիսում այս անունը և ազգանունը գործածական չէր: Ժողովուրդը գիտեր միայն Տերյան Մկրտիչ աղային: Մկրտիչ աղան իր ժամանակին համարվում էր ամբողջ Նախիջևանի շրջանում, գուցե և ամբողջ Երևանի նահանգում, ամենահարուստ մարդը»:

156 Տեր-Մկրտչյան Քրիստափոր— Մկրտիչ աղայի վորդին, Մոսկվայում սովորել էր բնագիտություն: Հայտնի յեր իր դպրոցական-հասարակական աշխատանքով:

157 Մատթեոս, Դ, 18—19. «Մինչ դեռ գնայր Յիսուս ընդ եզր ծովուն գալիլեացւոց, ետես երկուս եղբարս զՍիմովն զկոչեցեալն Պետրոս, և զԱնդրէաս եղբայր նորա՝ արկեալ ուռկան ի ծով քանզի ձկնորսք էին: Եւ ասէ ցնոսա. եկայք զկնի իմ, և արարից զձեզ որսորդս մարդկան»:

158 Տեր-Մկրտչյան Գրիգոր (1842—1865)— Վերին Ագուլիսի խոշոր վաճառական Մկրտիչ Տեր-Մկրտչյանի զավակը: Սովորել է Ագուլիսում, Թիֆլիսում, ապա 1855 թ. գնացել Մոսկվա, ուր 1860 թ. մտել է համալսարան: Հաճախել է Մոսկվայի հայ ուսանողության հայտնի ժողովները, վոր տեղի էյին ունենում յուրաքանչյուր շաբաթ յերեկոյան ու նվիրված էյին հայ լեզու և պատմություն ուսումնասիրելուն: 1863 թ. նա հիվանդանում է թոքախտով, գալիս Ագուլիս ու մոտ մի տարի մնում այնտեղ: Այդ մի տարվա ընթացքում նրան հաջողվում է Ագուլիսում բաց անել ընթերցարան ու մտածել Ագուլիսի դպրոցի կարգավորման մասին: (Ագուլիսի դպրոցը, ըստ յերեվույթին, բացվել էր 1851 թ., համաձայն Ներսես Աշտարակեցու 1850 թ. ոգոստոսին տված թույլտվության): Գրիգոր Տեր-Մկրտչյանը մշակում է կանոնադրություն, վոր հետագայում հիմք է դառնում Պռոշյանի համար նոր կանոնադրություն մշակելու, ապա հավաքում նաև վորոշ գումար: Մեռնում է Մոնպելյե քաղաքում: Նրան է նվիրում Խորեն Ստեփանեն Պուշկինի «Брожу ли я вдоль улиц шумных...» բանաստեղծության իր թարգմանությունը՝ Memento mori վերնագրով: («Հայկական աշխարհի կռունկ», 1865, № 5—6): Պռոշյանի՝ նախորդ ծանոթագրության մեջ հիշատակած գիրքը՝ Ագուլիսի հոգաբարձուները նորից նվիրում են Գրիգոր Տեր-Մկրտչյանին:

159 Փանյան Բաղդասար— Պարապել է վաճառականու-

թյամբ, բայց առանձին հաջողություն չի ունեցել: Ընտրվել է հոգաբարձու յերկսեռ դպրոցների համար և այնտեղ վարում եր տնտեսի և գրադարանապետի պաշտոն: Ծախեց Ագուլիսում իր ունեցած սեփական տունը և մեռավ այնտեղ աղքատ վիճակի մեջ:

160 Մատթեոս, ԻԳ, 4—5. «Կապեն բեռինս ծանունս և դժուարակիրս, և դնեն ի վերայ ուսոց մարդկան. և մատամբ իւրեանց ոչ կամին շարժել զնոսա: Եւ զամենայն գործս իւրեանց առնեն ի ցոյցս մարդկան»:

161 Ագուլիսի դպրոցների հիմնադրմանը նվիրված իր գրքույկում Պռոշյանն այս ամենը քիչ այլ կերպ է պատմում (եջ 8—9): Ինչ վերաբերում է Պռոշյանի վերջնական վորոշմանը Ագուլիս մնալու մասին, ապա այդ, համաձայն գրքույկի, թվում է, տեղի յե ունեցել կամ մայիսի կեսերին Եջմիածին գնալուց առաջ (եջ 34), կամ հուլիսին, յերբ Պռոշյանը ուղևորվեց Յերևան և Թիֆլիս՝ ուսուցչական խումբ կազմելու նպատակով (եջ 38, ծանոթագրություն):

162 Արասխանյան Հայրապետ— Ավետիք Արասխանյանի հորեղբայրը: Պարապում եր վաճառականությամբ, իր կյանքի վերջին տարիներում՝ շարունակ անհաջողությամբ: Ռուսաց կառավարության կողմից իշխանական տիտղոս ստանալու տենչանքով նա շինեց ռուսական մի յեկեղեցի Օրդուբադում: Սա նրան տոհմական պատվավոր քաղաքացու կոչում տվեց միայն:

163 Զաքեոսն այն մաքսավորն է, վոր Քրիստոսին տեսնելու համար— կարճահասակ լինելու պատճառով— ծառն եր բարձրացել:

164 Կոստանդինյան Հովհաննես (Սիրվյանց Մուխսի)— Տերյանների տան նախկին ծառայողներից, վորը հետագայում դարձավ առևտրական գործակատար և մի ժամանակ ապրում եր արտասահմանում իբրև Տերյանների ներկայացուցիչ: Պարապեց ինքնուրույն վաճառականությամբ, բայց հաջողություն չունեցավ: Ագուլիսում ընտրվեց իբրև գյուղական դատավոր (մեկիք) և մի քանի տարի շարունակ կատարում եր այս պաշտոնը: Պռոշյանը Կոստանդինյանին տանուտեր է կոչում:

165 Այս գիրքը սույն ծանոթագրությունների մեջ մի քանի անգամ արդեն վկայակոչվել է: Նրա լրիվ տիտղոսաթերթը. «Վերին Ագուլյաց յերկու սեռից ուսումնարանների բացվիլը և կանոնադրությունքը, գրյաց Պերճ Պռոշյանց. Մոսկվա, 1868»: Տետրակը բաղկացած է 76 եջից և պարունակում է յերկու դպրոցների կանոնադրությունները, բացման հանդեսի նկարագրությունը, արտասանած ճառերը, նվիրատուների լրիվ ցուցակը, կոնդակների տեքստը և այլն:

166 Վեհապետյան Գեորգ, արքեպ. (1807—1882)— Ծնվել է Աշտարակում, սովորել ժառանգավորաց դպրոցում: 1834 թ. ձեռնադրվել է կուսակրոն: Վարել է մի շարք յեկեղեցական



պատասխանատու պաշտոններ: 1867 թ. նշանակվել է Հաշտարխանի թեմի առաջնորդ: Այդ պաշտոնում մնաց մինչև իր մահը:

167 Այվազովսկի Գաբրիել, յեպ. (1812—1880)— Կղերական-միապետական կուսակցության պարագլուխներից մեկը, ցարական կառավարության գործակալ, վոր հայտնի յեր իր մատնություններով, վոչ միայն դեմոկրատական, այլև ազգային-պահպանողական հոսանքների ներկայացուցիչների նկատմամբ: Կատաղի պայքար է մղել Միքայել Նալբանդյանի դեմ: (Տես՝ Ղ. Աղայանի հետաքրքիր հիշողությունները— «Իմ կյանքի գլխավոր դեպքերը», եջ 31—32): Այվազովսկին ծնվել է Թեոդոսիայում, սովորել Մխիթարյան վանքում, վորտեղ հետագայում վեց տարվա ընթացքում յեղել է «Բազմավեպ»-ի խմբագիր: 1848 թ. տեղափոխվում է Փարիզ ու ստանձնում Մուրադյան վարժարանի տեսչի և դաստիարակի պաշտոնները: 1855 թ. իր յերկու վարդապետ ընկերների հետ միասին— Սարգիս Թեոդորյան և Ամբրոսիոս Գալֆայան— անցնում է լուսավորչական յեկեղեցականների շարքերը: Հիմնում է «Մասյաց աղավնի» թերթը (Փարիզ) և Հայկազյան վարժարանը: Ռուսական կառավարության հետ վարած բանակցությունների հետևանքով 1857 թ. վերադառնում է Ռուսաստան, Թեոդոսիայում հիմնում Խալիպյան դպրոցը ու վերսկսում «Մասյաց աղավնի»-ի հրատարակությունը: Կայսեր կարգադրությամբ նշանակվում է— Մատթեոս Վեհապետյանի փոխարեն— Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի կառավարիչ: 1874 թ. ստանձնում է Գեորգյան ճեմարանի տեսչի պաշտոնը: 1879 թվից՝ Վրաստանի և Իմերեթի թեմի առաջնորդն եր: Պռոշյանի հակակրանքը դեպի Այվազովսկին արտահայտվում է վոչ միայն «Ներածության» մեջ, այլ և «Հուշիկներ»-ի (եջ 253):

168 Կոնդակները տրված են մայիսի 25-ին:

169 1867 թ. հուլիս ամսի սկզբին: Ուղևորությունը տևեց մեկ ամիս:

170 Գյուլզադյան Սամվել ( —1912)— Մանկավարժ և թարգմանիչ: Ծնվել է Նոր-Ջուղայում անցյալ դարի 30-ական թվերին: Սովորել է Կ. Պոլսում: Միևնույն քաղաքում յեղել է պարսից դեսպանատան թարգմանը, ապա անցել է Պարսկաստան, ուր նշանակվել է թագաժառանգի դաստիարակ: Տիրապետում եր արևելյան մի շարք լեզուների: «Շահնամե»-ից պրոզայով հայերեն թարգմանել է վեց հատոր: Յեղել է ուսուցիչ Թավրիզում, Ագուլիսում, ապա Շուշում, ուր և վախճանվել է:

Նրա ամուսինը, Մարիամ Գյուլզադյանը, նույնպես զբաղվում եր ուսուցչությամբ:

171 Տղայոց դպրոցում ուսումն սկսվել եր սեպտեմբերի սկզբին, աղջկանց դպրոցում այն սկսվեց հոկտեմբերի 27-ին, յերկու դպրոցների հանդիսավոր բացման (հոկտեմբերի 26-ին)

հետևյալ որը: Տղայոց դպրոցն ուներ մեկ նախակրթարան և յերեք դասատուն, աղջկանց դպրոցը՝ մեկ նախակրթարան և մեկ դասատուն: Տղայոց դպրոցում անցնելիք առարկաների մեջ կային նաև կենդանաբանություն, տնկաբանություն, հանքաբանություն, տոմարագիտություն ու կարևոր տեղեկություններ վաճառականության մասին: Դպրոցների տնտեսական հիմքը կազմում էին ագուլեցի վաճառականների նվիրատվությունները: Այդ մասին հետաքրքիր դիտողություններ ունի հոգաբարձու Գասպար Ասլանյանցը. «Լավ նայեցեք մեր ազգային ուսումնարաններին, ասում է նա, չենք գտանելու բոլոր Կովկասում և ոչ մինը, ի բաց առյալ Տփխիսու Ներսիսյան ուսումնարանը, որ ժողովրդի սեփականությունը լինի՝ խոսքերս խոսելով: Ներսիսյան դպրոցը ևս բոլորովին հիմնված է ուխտատեղիների և վանքերի արդյանց վերա. ինչպէս վանքերն և ուխտատեղերն ևս ժողովրդյան սեփականություն են, սակայն այնքան հաստատուն չէ նոցանից հառաջացած արդյունքը, որքան մեր սեփական արծաթով հաստատվածները. այդ պատճառով ևս միայն ազգային ուսումնարանները զանազան առաջնորդների իշխանության ներքո զանազան փոփոխությանց են յենթարկվում, նկատելով առաջնորդի լավ կամ վատ ուղղությունը, իսկ մեր ուսումնարանը միշտ կարող է լավ ընթանալ, կարող է հաստատ լինել, յեթե մենք, ագուլեցիքս միաբան և սիրով մնանք միմյանց հետ և չդադարենք առ ի սրտե մասնակից լինել հանրական գործին» (տես՝ Պռոշյանի բրոշյուրը, էջ 68—69): «Սեփհական արծաթի» ուժի գլացումը պարզ դրսևորվում է այս տողերի մեջ:

172 Բրոշյուրում Պռոշյանն ասում է, որ տղայոց դպրոցն ուներ 110 աշակերտ, իսկ աղջկանց դպրոցը՝ 46 աշակերտուհի (էջ 73):

173 Մատթեոս, ԺԸ, 18. «Ամեն ասեմ ձեզ. զի զոր կապեցէք յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս, և զոր արձակիցէք յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս»:

174 Քալանթարյան Հայրապետ (1826—1911)— Ագուլեցի: Սկզբնական կրթությունն ստացել է Տաթևում, մի կույսի մոտ: Քահանա դառնալու ցանկությունն արդելքի հանդիպելով հոր կողմից՝ փախչում է տնից Նախիջևան, ապա Էջմիածին, ուր սովորում է Ղազար վարդապետի մոտ: Վերադառնալով ծննդավայրը քահանայության միտքը մի կողմ նետած՝ բաց է անում տղաների դպրոց (1848), նախապես համոզելով իր համագյուղացիներին գրել-կարդալ ու «չոր գցել» իմանալու անհրաժեշտությունը: «...Հասկանալով, որ գյուղացիները չեն համաձայնվի իրենց աղջիկներին տղամարդու մոտ ուսման ուղարկելու, Հայրապետը նախ սովորեցնում է յուր կնոջ Նունեյին և ապա վերջինիս անունով բացում է առաջին օրիորդաց դպրոցը, փաստորեն մնալով յերկու բաժանմունքների ղեկավար: Օրիորդաց ուսում առանց ձեռագործի անհնարին էր. հասկանալով այդ հանգամանքը և գյուղացի կանանց հոգեբանությունը, Հայրապետն սկսում է ինքը սովորել և կնոջը սովորեցնել զանազան կանացի ձեռագործներ» (Հայրապետ Քալանթարյանի վորդի, պրոֆ. Ավետիս Քալանթարի մեզ հանձնած տեղեկանքից իր հոր մասին): 1870 թ. Մարդասիրական ընկերության հրավերով Քալանթար ամուսիններն ստանձնում են Բաքվում այդ ընկերության դպրոցում ուսուցչի և ուսուցչուհու պաշտոններ: Հետագայում բաց են անում սեփական մասնավոր դպրոց, որ պահպանում է իր գոյությունը մինչև 1890 թ.: Բացասաբար բնութագրելով Քալանթարյանին «Ինքնակենսագրության» մեջ, Պռոշյանն այլ տեղերում ավելի դրական է արտահայտվում նրա մասին (տես՝ Պռոշյանի բրոշյուրը, էջ 8, ծանոթություն, և «Տարազ», 1892, № 47):

175 Զրույցը տեղի յե ունենում մարտ ամսին, գուցե ապրիլի սկզբին:

176 Հասան-Ջալալյան Եղիա, վ. (1835—1910)— Սարգիս յեպ.-ի խնամքի տակ սովորել է Սանահնի և Ներսիսյան դպրոցներում, ապա գնացել Պոլիս «բարձրագույն կրթություն» ստանալու հայոց կղերամոլ Զամուռճյան Հովհաննես պատվելու մոտ: Հրատարակել է Մանվել վ. Գյումուշխանեցու «Պատմություն անցից Սևանայ» գիրքը: Նկատել է «Մնացորդաց» գրքի թարգմանության նոր օրինակը, վորը հանձնել է պրոֆ. Գ. Խալաթյանին ի հրատարակություն:

177 Առ հռովմայեցիս, ԺԳ, 1:

178 Պռոշյանը գնացել է ուսուցչական խումբ հրավիրելու 1867 թ. հուլիսին: Կարելի յե յենթադրել, որ այն դեպքը, որի մասին նա սկսում է պատմել, տեղի յե ունեցել նույն թվի հունիս ամսին: Ինչ վերաբերում է Արամյանին, ապա նա շատ ուշ յեկավ Ագուլիս, այն է՝ 1868 թ. մարտին կամ ապրիլին:

179 Սմբատյան Մեսրոպ, արքեպ. (1833—1911)— Ջալալյան Սարգիս յեպ.-ի կուսակից: Ծնվել է Հին Նախիջևանի գավառի Փորադաշտ գյուղում: Բացի յեկեղեցական պաշտոններից՝ զբաղվել է նաև բևեռագիտությամբ, տեղագրությամբ և ժամանակագրությամբ:

180 Տեր-Ջանյան Հովհաննես— Վաճառական էր, բայց անընդունակ իր գործում: Ընկերական կապ ուներ Տերյանների հետ և այդպես էր շահեցնում իր կապիտալը:

181 Բաղդասար Փանյանը:

182 Տեր-Միքայելյան Բաղդասար (և յեղբայրը)— վաճառականներ: Ագուլիսում պահում էին մանրավաճառի խանութ: 1876 թ. պետական ներքին փոխառության խաղարկության ժամանակ նրանք տարան յերկու հարյուր հազար ռուբլի: Փակեցին Ագուլիսի խանութը և սկսեցին ապրանքների մեծաքանակ առևտրով պարապել, միաժամանակ մասն ունենալով Ղափանի

պղնձահանքերում: Հազիվ 6 տարի այդ ահագին գումարը մնաց նրանց ձեռքին: Բաղդասարը վախճանվեց թողնելով իրենից հետո ահագին գումարի պարտք:

183 Սաղմոս, ԽԸ, 13. «Մարդ ի պատուի էր և ոչ իմացաւ, հաւասարեցաւ անասնոց անբանից և նմանեցաւ նոցա»:

184 1868 թ. սկզբին:

185 Նման թղթեր չկան «կապված» Պռոշյանի ձեռագրերի հետ, նրանք գոյություն չունեին նաև նրա արխիվում:

186 Անհայտ են մեզ Պռոշյանի այդ բարեկամները:

187 Անին ռուսների ձեռքն անցավ 1877 թ. ռուս-տաճկական պատերազմից հետո:

188 Մեզ անհայտ է «տաճկաստանցի յերիտասարդ» Հակոբի ով լինելը:

189 Աշտարակի դպրոցի հիմնադրմանը— ինչպես մեզ հայտնի յե— Պռոշյանը հուշերի ջերմ տողեր ունի նվիրված «Տարազ»-ում, «Քսան և հինգ տարի առաջ ու այսօր» վերտառությամբ— 1892, № 47: Դպրոցի վիճակի մասին տեղեկություններ է տալիս «Հայկական աշխարհ»-ը (1869, № 4): Բացի ուսուցչությունից Պռոշյանը Աշտարակում զբաղվել է նաև թատրոնով: Այդ է վկայում նրա «Նամակ դեպի խմբագրող Աշտարակից» հոդվածը («Հայկական աշխարհ», 1868, № 4—5):

190 Ամենափրկիչ, Մարիանե և Կարմրավոր:

191 Միապետության օրոք պետական այլ և այլ ատյաններ ամառվա տաք ամիսներին փոխադրվում էին Աշտարակ, Բյուրական և Ծաղկաձոր:

192 Դոլուխանյան Մարկոս (1838—1921)— Ծնվել է Շուշում, սովորել տեղական քաղաքային դպրոցում: Թեև չուներ հատուկ իրավաբանական կրթություն, բայց դատական հիմնարկներ մտցնելու առնչությամբ Անդրկովկասում՝ դարձավ հաշտարար դատավոր Թիֆլիսում և գավառում: Հետագայում զբաղվել է մի կողմից Թիֆլիսի քաղաքային ինքնավարության գործերով, մյուս կողմից՝ արդյունաբերական գործերով: Պռոշյանը դեռ մինչև 1868 թ. ծանոթ էր Դոլուխանյանի հետ: Հետագայում լավ հարաբերությունները շարունակվել են: Մ. Դոլուխանյանը Պռոշյանի գրական-հասարակական գործունեության 40-ամյա հոբելյանը տոնող հանձնաժողովի նախագահն էր (1899): «Հունոն» նվիրված է Մ. Դոլուխանյանին:

193 Կամսարական Բարսեղ Ցեղնակի (— 1881) — Սուրմալուի Բլուր գյուղից: Ավարտել է Պետերբուրգում զինվորական դպրոց: Ուներ գնդապետի աստիճան: Էջմիածնի գավառապետն էր, հետագայում դարձավ Յերևանի գավառապետ: Կարսը վերցնելուց հետո նրան դարձրին այդ մարզի նահանգապետի օգնական: Իր պաշտոնավայրն ուղևորվելիս՝ հիվանդացավ Թիֆլիսում ու մեռավ:



194 Տեր-Հովսեփյան Նիկողայոս (1837—1888) — Աշտարակեցի, ավարտել է Լազարյան ճեմարանը, ուսուցչություն է արել Ներսիսյան և Ժառանգավորաց (Էջմիածին) դպրոցներում: Վարել է Սինոդի թարգմանի պաշտոն, գնացել է Պոլիս՝ իբրև հրավիրակ Գևորգ Դ կաթողիկոսի: 1878 թվից մինչև մահը սինոդի պրոկուրոր էր: Հայրը, Ստեփան աղան, Ներսես Ե-ի սպասավոր-գործակալներից էր: Մելումյան Մարգարից (Պռոշյանի պապը մոր կողմից) հետո Ստեփան աղան է կառավարել Ներսես Ե-ի յեղբոր, Կարապետ աղայի վորդիների կալվածները: Տեր-Հովսեփյանները Աշտարակում ունեյին շատ բնորոշ մականուն՝ Տզենք (տիզ բառից): Ընկ. Յե. Շահազիզի վկայության համաձայն՝ «Յեցեր»-ի Բալասան աղան նույն ինքը Նիկողայոս Տեր-Հովսեփյանն է:

195 Ճանճապաններ— Նշանավոր տուն Աշտարակում: Զբաղվում էին գերազանցորեն մեղվաբուծությամբ:

196 Բզնունի Սարգիս, ք. (— 1891)— Աշտարակի Ամենափրկիչ յեկեղեցու ավագ քահանա: Ընդունակ, ճարպիկ, միջոցների մեջ խտրություն չդնող մի անձնավորություն: «Գյուղական վարժապետներ»-ում Պռոշյանը պատմում է, վոր նա իր մեծ յեղբոր դասընկերն էր Վահան խալֆայի մոտ ու դեռ այն ժամանակ վայելում էր «սատանա Սաքո» անունը («Արձագանք», 1888, № 43): Մինչ քահանայանալը, ըստ յերևույթին, «միկիտան» է յեղել ու հենց այդ պատվավոր զբաղմունքի ժամանակ կատարել այն անհաշիվ խարդախությունները ու վաշխառուական քաջագործությունները, վորոնք ռեալ հիմք են ծառայել Պռոշյանի համար կերտելու միկիտան Սաքոյի կենդանի տիպը: 80-ական թվերին գավառապետ Ծանաղյանի հետ միասին ռուսիֆիկատորական քաղաքականություն է տարել Աշտարակում ու ամեն կերպ աշխատել համոզելու գյուղացիներին բաց անելու արքունական դպրոց: Այս առնչությամբ ամենախիստ բախումներ է ունեցել Պռոշյանի հետ, վոր այդ ժամանակ Յերևանի թեմական տեսուչն էր: Իր պրոպագանդայի ապարդյուն լինելը տեսնելով, Սարգիս քահանան ասում էր. «օրհնվածներ, Լազարյան ճեմարանը գալիս է ձեզ մոտ ու դուք չեք ուզո՞ւմ»: Անհաշտ թշնամի յեր Պռոշյանի հետ՝ վերջինիս մերկացումների համար թե՛ գեղարվեստական ուժեղ խոսքով և թե՛ դպրոցական կոնկրետ աշխատանքի ընթացքում Աշտարակում: Ցարական կաշառակեր գործակալի այս գազանային ատելությունը դեպի դեմոկրատ գրողը դառել է իր ցայտուն արտահայտությունը այն զզվելի պասկվիլում, վոր '80-ական թվերին գրել է Սարգիս քահանան Պռոշյանի մասին (պահվում է ՀԽՍՀ-ի Պետ. Գրական թանգարանում—Նոր ձեռագրեր, № 25): Միկիտան Սաքոն, գազազած անզոր չարությունից, հորինում է մի ամբողջ պատմություն, տալիս իրեն վոչնչացնողի, այսինքն՝ Պռոշյանի տոհմագրությունն ու կենսագրությունը, վոր լի յե

նրա նկարագրին այնքան հարազատ հատկություններով՝ ամենալկտի սեռով և զրպարտություններով:

197 Շահազիզյան — Կամսարական Իսում — 60-ական թ. թ. հոգաբարձու Աշտարակում: Յեղել ե տանուտեր, դատավոր: «Հացի խնդրի» մեդալի պատմությունը դրա հետ ե կապված:

198 Դոլգյան Աշխեն (1850—1876)— Պռոշյանի քենին, ղզլարեցի բժիշկ Մարտիրոս Դոլգյանի աղջիկը: Մայրը, Շուշանը, սերում եր Սայաթ-Նովայի տոհմից: 1869 թվից աշխատում եր Պռոշյանի բաց արած առաջին Գայանյան դպրոցում, հետագայում՝ Թանդոյան և Մարիամյան դպրոցներում, ուր հայոց լեզվի ու ձեռագործի ուսուցչուհի յեր, այլև վերակացուհի: 1872 թ. հրավիրվում ե Ղզլար, վորտեղ նա աշխատում ե մինչև 1875 թ.: Այդ ժամանակ նա արդեն հիվանդ եր թոքախտով ու դադարում ե զբաղվել մանկավարժությամբ: Մի ինչ վոր անախորժ դեպք ստիպում ե նրան թողնել Ղզլարը ու մոր ուղեկցությամբ Պռոշյանի ընտանիքի հետ գնալ Հաշտարխան, վորտեղ նա մեռնում ե: Պռոշյանը մեծ սիրով ու հարգանքով ե խոսում Աշխենի մասին. ու խորը կսկիծով արձանագրում նրա մահը: «Կալածաղիկ»-ը գրելու դրդապատճառներից մեկը հենց Աշխենն ե յեղել. վեպի անունն յել նրան ե պատկանում: Իր այդ գործը Պռոշյանը նվիրում ե Աշխենին՝ ընդարձակ ձոնով ու կենսագրականով հանդերձ: «Կալածաղիկ»-ի առնչությամբ Պռոշյանը հիշատակում ե Աշխենին նաև «Ինքնակենսագրության» հետագա եջերում և Ղ. Աղայանին գրած նամակներում:

199 Մարիամը, վոր նույնպես շատ յերիտասարդ հասակում վախճանվեց:

200 Գևորգ կաթողիկոսը Թիֆլիս ե գալիս 1870 թ. մայիսի 1-ին: Կարելի յե յենթադրել, վոր վոստիկանությունից Պռոշյանն ստանում ե թուղթ կամ միևնույն մայիս ամսին, կամ ապրիլի վերջերին:

201 Խոսքը Նիկողայոս Տեր-Հովսեփյանի մասին ե:

201ա. 1870 թ. ամառը:

202 Գևորգ կաթողիկոսը Թիֆլիսից Եջմիածին ե ուղևորվում 1870 թ. սեպտեմբերի 19-ին, մնալով, այդպիսով, Թիֆլիսում չորս և կես ամսից ավելի: Խոլերան Թբիլիսում յերևացել ե ոգոստոսի վերջերին ու առանձնապես սաստկացել սեպտեմբերի առաջին կեսին:

203 Հառիճա վանքը կաթողիկոսը յեկավ 1872 թ. հունիսի սկզբներին և մնաց այնտեղ մինչև սեպտեմբերի 16-ը: Պռոշյանը սխալվում ե, ասելով՝ «հետևյալ 1872 թվին». «հետևյալը» վոչ թե 1872 թ. ե, այլ 1871 թ.:

204 Ալեքսանդրոպոլի ուսուցչական խմբի մեջ եյին այդ ժամանակ Ղ. Աղայանը, բժ. Գ. Հովհաննիսյանը (Քաջբերունի), Ս. Բեգնազարյանը, Ավ. Յեղեկյանը, Մատակյանը և ուրիշները:

205 Տեր-Հովհաննիսյան Գաբրիել, բժ. (1837—1920)— Հայտնի յե գերազանցորեն Քաջբերունի մականունով: Ծնվել ե Ղազախում, սովորել Ներսիսյան դպրոցում: Հեղինակն ե «Տեր-Սարգիս» անավարտ յերկի, վոր տպվել ե «Հյուսիսափայլ»-ում և արժանացել Մ. Նալբանդյանի բարձր գնահատականին «Սոս և Վարդիթեր»-ի քննադատության մեջ: Պրոֆեսիայով բժիշկ եր, աշխատել ե գերազանցորեն գավառում, վոր և հնարավորություն ե տվել նրան ճանապարհորդական, շատ տեսակետից հետաքրքիր, նկատողություններ գրել: Աշխատակցել ե «Փորձ»-ին, «Արձագանք»-ին, «Արարատ»-ին, «Նոր-Դար»-ին և այլ պարբերականներին:

206 Կոստանյան Հովսեփ, ք. (1826—1890) — Ապրեցիկ կլեր Ալեքսանդրոպոլում: Ուսուցիչ, հոգաբարձու և տեսուչ տեղական դպրոցներում: Մեծ համարում ուներ նաև Եջմիածնում: Ղ. Աղայանը պատմում ե իր հուշերում, վոր Կոստանյանը, լինելով ուժեղ անձնավորություն, իր բռի մեջ եր առել Ալեքսանդրոպոլի ամբողջ աղայությունը: Հայագետ Կարապետ Կոստանյանի հայրը:

207 Մանկունի Վահրամ, արքեպ.— Գեորգի սիրելին: Հայտնի ինտրիգան: Իր հուշերում Աղայանը շատ հետաքրքիր եջեր ե նվիրում սրան:

208 Հունվարի 1-ին:

209 «Մշակ»-ին, 1872 թ. Պռոշյանը աշխատակցել ե Պահլավունի կեղծանունով: Նրան ե պատկանում «Նամակներ Յերևանից» շարքը (№ № 1, 8, 10, 14, 17, 26,44): Թե ինչպես եյին կազմվում այդ նամակները՝ տես 255-րդ ծանոթագրությունը:

210 «Հայկական աշխարհ»-ում Գ. Արծրունին, սկսած 1867 թ. մինչև 1871 թ. գրել ե վոչ թե մի քանի, այլ բազմաթիվ հոդվածներ: Իբրև հրապարակախոս Արծրունին կոփվել ե հենց այս ամսագրի եջերում: Ինչ վերաբերում ե նրա առաջին հոդվածին, ապա այն լույս ե տեսել 1865 թ. «Մեղու Հայաստանի» լրագրում (№ № 13 և 14) և ունի «Բնական գիտությունների նշանակությունը դաստիարակության մեջ» վերնագիրը: «Մեղու»-ին Արծրունին հետագայում ել աշխատակցել ե, ու առանձնապես յեռանդուն՝ «Մշակ»-ի հրապարակվելու նախորդ տարվա ընթացքում, այն ե՝ 1871 թ., յերբ նրա և «Հայկական աշխարհ»-ի խմբագիր Ս. Ստեփանեյի հարաբերությունները սառնացել եյին:

211 «Մշակ»-ի հայտարարությունը լույս ե տեսել վոչ թե 1869 թ., այլ 1871 թ. վերջերին:

212 Այս արտահայտությունը պատկանում ե Գ. Արծրունուն (տես՝ «Մշակ», 1879, № 205, Րաֆֆու «Հայ յերիտասարդությունը» հոդվածը):

213 «Մշակ»-ի հայտարարության լեզուն, իրոք, շատ անհարթ եր («Գալու 1872 թվի, հունվար ամսից կսկսվի հրատարակվիլ գրականական և քաղաքական «Մշակ» շաբաթաթերթը հետագա պրոգրամմայով» և այլն): Հայերեն չիմանալու իր թե-

րին Արծրունին կարողացավ լրացնել միայն ժամանակի ընթացքում։

214 «Թերուսների» մեծ վտանգավորության մասին պատմում են նաև Րաֆֆին («Մշակ», 1879, № 205, «Հայ յերիտասարդությունը» հոդվածում) և Գ. Ջմշկյանը («Արձագանք», 1890, № 9, «Թռուցիկ հիշողություն» հոդվածում)։

215 Համեմատիր Գ. Արծրունու և Գ. Ջմշկյանի բանակռիվը «Մշակ»-ի սկզբնավորության մասին (տես՝ 254 և 255-րդ ծանոթագրությունները), վորտեղ խոսվում է նաև «խմբագիրների» խնդրի շուրջը։ Պռոշյանն ու Ջմշկյանը, ըստ յերևույթին, իրավացի յեն։

216 Սրանց մեջ ամենանշանավորը Սեննեքերիմ Արծրունին էր, վոր դարձավ «Մեղու Հայաստանի»-ի հրապարակախոսը և Արծրունու հակառակորդը։

217 Իզմայիլյան Պողոս (1852—1895) — Ծնվել է Յերևանում, ավարտել է Թիֆլիսի գիմնազիան, սովորել Պետերբուրգի համալսարանում։ Հիմնել է Թիֆլիսում Իվանովի գրադարանը։ «Մշակ»-ի առաջին աշխատակիցներից, վարում էր «արտաքին տեսության» բաժինը։ 1873 թ. գնալով Փարիզ՝ այնտեղից էր աշխատակցում նույն լրագրին։ Փարիզից հրավիրվեց Թիֆլիսի քաղաքային վարչության քարտուղար։ Կորելով իր կապը հայ մամուլի հետ՝ աշխատակցում էր «Тифл. Вестник» և «Новое Обозрение» լրագրերին։ 1894 թ. ընտրվեց Թիֆլիսի քաղաքագլուխ։

218 Պալասանյան Ստեփաննոս (— 1889)— Ռումինահայ. սովորել է Փարիզի Մուրատյան դպրոցում։ Ուսուցիչ է յեղել Թեոդոսիայում, Նոր-Նախիջևանում (վորտեղից նրան հեռացրել են, նահանգապետի աջակցությամբ, Խալիպյանները), Ներսիսյան դպրոցում, ապա 1881 թվից՝ Գևորգյան ճեմարանում։ Ավանդել է ֆրանսերեն, հայոց գրականություն և պատմություն։ Հայտնի յեն նրա «Գրականության պատմությունը» (անավարտ), աշխարհաբարի «Քերականությունը» և «Հայոց պատմությունը»։ Աշխատակցել է «Մասյաց աղավնուն», «Մշակ»-ին՝ նրա սկզբնավորության ժամանակ, ապա՝ «Փորձ»-ին։

219 Սիմոնյան Պետրոս (1830—1911)— 60-ական թվերի ազգային- պահպանողական հրապարակախոս։ Սովորել է Լազարյան ճեմարանում, ավարտել է Դորպատի համալսարանը։ Յեղել է ուսուցիչ և տեսուչ Ներսիսյան դպրոցում։ 1863—1886 թ. թ. խմբագրել է «Մեղու Հայաստանի»-ն։

220 «Հյուսիսափայլ» (1858—64) ամսագիր, հիմնադրեցին Ստ. Նազարյանը և Մ. Նալբանդյանը։

221 «Ճռաքաղ» (1858—62)— Կղերական ռեակցիոն օրգան։ Խմբագիր՝ Մսեր Մսերյան։

222 «Կռունկ Հայոց աշխարհին» — տես՝ 54-րդ ծանոթագրությունը։

223 «Հայկական աշխարհ» (1864—71, 1874—79) — Խմբագիր՝



Խ. Ստեփանե։ Իր գոյության վերջին շրջանում դարձավ հատկապես կղերական օրգան։ Այս ամսագիրը «Հայկական աշխարհի կռունկ» անունը կրել է, բայց սխալվում է Պռոշյանը նրան «Հայոց աշխարհի կռունկ» անունը ևս տալով։

224 «Գարուն» (1866)— Ամսագիր, խմբագիր՝ Ստ. Ք. Մանդինյան։

225 «Վաճառական» (1866—67)— Շաբաթաթերթ, խմբագիր՝ Գ. Տեր-Ալեքսանդրյան։

226 «Մասյաց աղավնի» (1855—65) — Կղերական օրգան, խմբագիր՝ Գ. վ. Այվազովսկի։

227 «Որագրի» առաջին յերկու հատվածներում ու նրանց ծանոթագրություններում, «Մշակ»-ի սկզբնավորությանը վերաբերող բոլոր խնդիրներն ստանում են ավելի ընդարձակ լուսաբանություն։ Ինչ վերաբերում է «թերուսների» անջատվելուն «Մշակ»-ից, ապա այն, հավանորեն, տեղի չի ունեցել լրագրի գոյության հենց առաջին տարվա ընթացքում, այն է՝ 1872 թ. վերջին։ Ավելորդ չենք համարում մեջ բերել այստեղ Գ. Արծրունու խոսքերը Պռոշյանի աշխատակցության մասին «Մշակ»-ին. «Պռոշյանց «Մշակ»-ի առաջին տարիները, իրավ, աշխատակցում էր «Մշակ»-ին, բայց յերբեք «Մշակ»-ի մի վորևէ բաժնի խմբագիր յեղած չէ, յերբեք չէր էլ համակրում «Մշակ»-ի ուղղության, յերբեք մեր գաղափարակից չէ յեղած ,և մինչ թշնամական կերպով էր վերաբերվում դեպի «Մշակ»-ի հայտնած գաղափարները»։ «Մշակ», 1889, Գ. Արծրունու հոդվածը «Մուրճ»-ի առաջին համարի մասին, № 5)։

228 Պռոշյանի բացասական վերաբերմունքի մասին դեպի Րաֆֆու ստեղծագործությունը տես՝ Ա. Աթանասյանի հոդվածը «Խորհրդային գրականության» մեջ, 1937, № 3։

229 Աբելյան Հարություն, պրոֆ.— Յերևանի համալսարանի քիմիայի պրոֆեսոր։ Ծնվել է Լոռու Վարդաբլուր գյուղում, սկզբնական ուսումն ստացել է Ներսիսյան դպրոցում։

230 Կարող է պատահել, վոր այդ «նամակը» պրոֆ. Աբելյանի Յերևանից ուղարկած «Կանանց ազատություն» հոդվածն էր, վոր լույս տեսավ այդ ժամանակները «Մշակ»-ի էջերում — 1872, № 29։

231 Այդ նամակը մեզ չի հասել։

232 Աշխեն Դոլգյանը Ղզլար է տեղափոխվել 1872 թ.։ Պռոշյանը, ընտանիքով հանդերձ, Ղզլար գնում է հավանորեն 1873 թ.։

233 Պռոշյանի այս հայտարարությունն այնքան էլ չի համապատասխանում իրականության։ 1875 թ. վերջին, այն է՝ դեկտեմբերի 27-ին, Հաշտարխանից գրած իր մի նամակից Ռ. Պատկանյանին, հայտնի յե դառնում, վոր նա շարունակում է փափագել արտասահման գնալու միտքը նաև այդ ժամանակ։ Միայն 1876 թ. մարտի 22-ից գրած նամակից միևնույն Ռ. Պատկանյանին, ակնհայտ է դառնում, վոր Պռոշյանն այս ուղղությամբ այլևս

վորեւէ հույսեր չի տածում (տես՝ այս ժողովածվի Պռոշյանի նամակների բաժինը):

234 Պռոշյանը Ղզլարից Հաշտարխան է ուղևորվել հավանորեն 1874 թ. աշնանը:

235 Աշխեն Դոլգյանը իր մոր հետ միասին Ղզլարից Հաշտարխան է տեղափոխվում 1875 թ.:

236 1876 թվին:

237 1876 թ. սեպտեմբերի 18-ին:

238 Նորայր անունով: Մեռավ Աշխենի մահվանից յերկու ամիս հետո— 1876 թ. նոյեմբերին:

239 «Փորձ» (1876—81)— Ամսագիր: Խմբագիր՝ Արզար Հովհաննիսյան:

240 Արզար Հովհաննիսյանի նամակը մեզ չի հասել: Պռոշյանը հավանորեն ստացել է այն կամ 1876 թ. սկզբին կամ 1875 թ. վերջին:

241 «Կովածաղիկ»-ը Պռոշյանի առաջին մեծ վեպն է «Սոս և Վարդիթեր»-ից հետո: Կարելի յե յենթադրել, վոր իր այդ գործը Պռոշյանը սկսել է գրել Արզար Հովհաննիսյանի նամակի ազդեցությամբ, հետևապես 1876 թ. սկզբին կամ 1875 թ. վերջին: 1876 թ. օգոստոսի 23-ից Պռոշյանի գրած նամակից Ղ. Աղայանին, հայտնի յե դառնում, վոր այդ ժամանակ հեղինակն արդեն արտագրում եր իր գործը:

Քենու՝ Աշխեն Դոլգյանի ու նամանավանդ իր 15 ամսական Նորայրի մահվանից հետո (առաջինը մեռավ 1876 թ. սեպտեմբերին, յերկրորդը՝ նոյեմբերին) Պռոշյանը մի առժամանակ դադարեց աշխատել «Կովածաղկի» վրա (տես՝ «Կովածաղկի» առանձին ա. հրատարակությունը— Թիֆլիզ, 1878, եջ Բ—Գ): Սակայն, 1877 թ. մարտի 7-ից Պռոշյանի գրած չափազանց հետաքրքիր նամակից միենույն Ղ. Աղայանին, յերևում է, վոր Պռոշյանը վերսկսել է իր աշխատանքները «Կովածաղկի» շուրջը: (Տես՝ այս ժողովածվի Պռոշյանի նամակների բաժինը):

«Կովածաղիկ»-ը «Փորձ»-ում սկսել է լույս տեսնել Պռոշյանի այս նամակից կես տարուց ավելի հետո, այն է՝ 1877 թ. վերջին ու ավարտվել 1878 թ. (տես՝ «Փորձ», 1877—78, № № 2—4): Չի պահպանվել «Կովածաղկի» վոչ սևագիրը և վոչ ել մաքրագիրը: Առանձին հրատարակվել է առաջին անգամ 1878 թ. (արտատպություն «Փորձ»-ից), յերկրորդ անգամ՝ 1897 թ.:

242 Այս խնդիրն արծարծվել է 1875 թ.: Այդ թվի սեպտեմբեր— հոկտեմբեր ամիսներին Պռոշյանը գնում է Թիֆլիս և Եջմիածին՝ գիմնազիաներում հայոց լեզվի ուսուցչի դիպլոմ ձեռք բերելու համար, բայց, ըստ յերևույթին, անհաջող: Հետագայում Պռոշյանը վորոշում է այդ դիպլոմը ձեռք բերել Ք. Պատկանյանից՝ Ռ. Պատկանյանի միջոցով (տես՝ այս ժողովածվի Պռոշյանի նամակների բաժնի 1876 թ. մարտի 22-ից գրած նամակը Ռ. Պատկանյանին):



«Ինքնակենսագրություն»-ը մեզ վկայում է, վոր գիմնազիաներում Պռոշյանը դաս չունեցավ, իսկ ստացա՞վ արդյոք նա Ք. Պատկանյանից վկայական թե վոչ— այդ մեզ հայտնի չէ: Հաշտարխանը Պռոշյանի շարքաշ կյանքի ամենատխուր եջերից մեկն է:

243 Կարելի յե յենթադրել, վոր Հաշտարխանը Պռոշյանը թողնում է 1877 թ. ամառը:

Մեր մի նամակին Հաշտարխան Պռոշյանի և նրան շրջապատողների մասին՝ ստացանք հետևյալ պատասխանը. «Պռոշյանը յեղել է Աստրախանում 70-ական թվականներին և ... մասնավոր դպրոց է ունեցել այստեղ. ծերունիները պարծենալով ասում են, վոր իրանք Պռոշյանի աշակերտներն են, իսկ գլխավոր նրա պարապմունքը յեղել է Աստրախանում լուսանկարչությունը. յես շատ եմ աշխատել գտնել Աստրախանում գոնե մեկ հատ նկար նրա լուսանկարածներից, բայց մինչև օրս դեռ չեմ կարողացել գտնել...: Աղամջանյանը հայտնի հարուստ եր, ռուսախոս և զբաղվող թատրոնական գործով: Աստրախանի ռուսաց դրամատիկական խումբը նա յե գլխավորել (տնտեսական մասը): Յերկրորդ՝ Բուրջալյան յեղբայրները, հարուստ դասակարգից, բայց բարձր կրթությամբ, հայտնի յեն յեղել Աստրախանում իբրև լավ սիրողներ և մինչ արձագանք են տվել մեր թատրոնական գործին... Յերրորդ՝ Գրանիլչիկյան և Ռոստովանյան— վաճառականներ են յեղել. միայն Աթանասյանը շատ թե քիչ կարդացող և իր ժամանակի հետաքրքրվողներից է յեղել:

244 Բարայան Հովհաննես (— 1889)— Ալեքսանդրոպոլցի: Իր կյանքի մեծ մասը անց է կացրել Ալեքսանդրոպոլում, վորտեղ տարիների ընթացքում մասնակցել է տեղի հասարակական-դպրոցական, քաղաքային և այլ գործերին: Մի քանի անգամ տարել է դեպուտատի պաշտոն: Յերխասարդ հասակում Դարալագյազի շրջանում նկարագրել ու հավաքել է հնություններ և արձանագրություններ, վորոնք մտել են Սարգիս Ջալալյանի «Ճանապարհորդություն» Բ. հատորի մեջ: Սիրել է ու հովանավորել գրականությունը: 1879 թ. սկզբին Բարայանը ոգնել է Պռոշյանին՝ վերջինիս հիվանդ յեղած ժամանակը, իսկ 1880 թ. առանձին գրքով հրատարակել «Հացի խնդիր»-ը: Բարայանի հետ Պռոշյանը ծանոթացել է Աշտարակում, 1856—58 թ. թ.: Այդ տարիներին Աշտարակի գավառապետը Պետրոս Մաղաքյանն եր (Սեյադ), իսկ Բարայանը նրա վորդեգիրն եր: «Մեր բարեկամությունն սկսվեց Աշտարակից և շարունակվեց մինչև Հովհաննեսի մահը» — ասում է Պռոշյանը «Հուշիկներ»-ում (եջ 193):

245 «Հացի խնդիր»-ը լույս է տեսել «Փորձ»-ում — 1879, № № 3—8, ապա առանձին՝ 1880 թ.: Հովհաննես Բարայանի նամակի մասին տես վեպի առանձին հրատարակությունը, եջ Ե:

246 Գասպարյան Հովհաննես, բժ. (1837—1918) — Ծնվել է

Շուշում, սովորել Թիֆլիսի գիմնազիայում, ավարտել Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետը 1859 թ.: Կատարելագործվել է Գերմանիայում, պաշտպանել բժշկապետության աստիճան Մոսկվայում: 1871 թ. հաստատվել է Թիֆլիսում և զբաղվել գերազանցապես պրակտիկայով: Կապված է յեղել շատ հասարակական գործիչների հետ: Մշակական: Ըստ յերևույթին մոտ է յեղել Պռոշյանի հետ: ՀԽՍՀ Գրական թանգարանում պահվում է «Հունչիկներ»-ի փառակազմ մի օրինակ, վորի վրա վոսկե տառերով տպագրած է «Գերարգո բժշկապետ Հ. Գասպարյանցին յերախտագիտական խորին զգացմամբ՝ հեղինակից»:

247 Պռոշյանը նշանակվեց թեմական վերատեսչի «ոգնական և գործակից»: Կոնդակը տրված է 1879 թ. ապրիլի 28-ին, № 179 («Արարատ», 1879, № 6, եջ 277):

248 «Փորձ»-ում տպագրվել են Պռոշյանի յերեք խոշոր գործերը. «Կռվածաղիկ»— 1877—78 թ. թ., «Հացի խնդիր» — 1879 թ. և «Շահեն» — 1880—81 թ. թ.:

249 «Արձագանք» (1882—98) — Սկզբում շաբաթաթերթ, հետագայում՝ յերկօրյա թերթ: Խմբագիր՝ Աբգար Հովհաննիսյան:

## ՈՐԱԳԻՐ

250 Տես Ղ. Աղայանի «Գրիգոր Արծրունու գրական գործունեության վողբը» հոդվածը, «Աղբյուր», 1890, № 3: Ինչպես այստեղ, այնպես և հետագա տողերում Պռոշյանն իրավացի չէ Աղայանի նկատմամբ:

251 Պռոշյանի հոբելյանի խնդիրը Աղայանը զարթեցրել է վոչ թե մի տարի, այլ յերկու տարի առաջ, 1888 թ. «Աղբյուր»-ի ոգոստոս-սեպտեմբերյան գրքում (№ 8—9), «Սոս և Վարդիթեր»-ի քննարկությանը նվիրած իր հոդվածի վերջում:

252 «Նոր-Դար»-ի 1888 թ. սեպտեմբերի 1-ի համարում (№ 144) Սպանդարյանը հատուկ առաջնորդող է նվիրել Պռոշյանի հոբելյանին:

253 Մինչ «Մշակ»-ի սկզբնավորության մասին տեղի ունեցած, Պռոշյանի համար անախորժ, բանակռիվը (այդ մասին տես հետևյալ ծանոթագրությունները), Պռոշյանի մասին «Արձագանք»-ում 1889 թ. գրել են յերկու անձնավորություններ — Գ. Յենգիբարյանը և Շիրվանզադեն (Շ), վորոնցից առաջինը դրական է արտահայտվել (տես Գ. Յենգիբարյանի հոդվածները Պռոշյանի հոբելյանի մասին— № 8, ապա նաև «Ցեցեր»-ի մասին — №№ 26, 27 և 28), յերկրորդը՝ խիստ բացասաբար (տես՝ Շիրվանզադեյի գրախոսությունը «Ցեցեր»-ի մասին— №№ 24 և 25, և «Մի կտոր հանած իմ տպելու պատրաստ աշխատասիրությունից» հատվածի մասին— № 47): Պռոշյանը գուցե ի նկատի ունի Շիրվանզադեյի հոդվածները:



254 Գ. Ջմշկյան «Թռուցիկ հիշողություն» — «Արձագանք», 1890, № 9, 22 ապրիլի:

255 «Բաց նամակ Գեորգ Ջմշկյանին» հոդվածում— «Մշակ», 1890, № 45, 24 ապրիլի (Ջմշկյանի հիշողությունները լույս տեսնելուց հետո):

256 Հոդվածի վերնագիրն է. «Մշակի գոյության կարճառոտ պատմությունը» — «Մշակ», 1889, № 149:

257 Հարությունյան, Իսահակ— Մանկավարժ և գրականագետ: Ծնվել է Թիֆլիսում, սովորել Ներսիսյան դպրոցում, մանկավարժական բարձրագույն կրթություն ստացել Գերմանիայում: Յերկար տարիների ընթացքում ուսուցիչ է յեղել Ներսիսյան դպրոցում, ավանդելով հայոց լեզու, պատմություն, հոգեբանություն, գերմաներեն և այլ առարկաներ: Բացի «Արձագանք»-ին ակտիվ մասնակցելուց, աշխատակցել է «Լումա»-ին, «Նոր դպրոց»-ին, «Տարազ»-ին, «Ազգագրական հանդես»-ին և այլ պարբերականների՝ զետեղելով այդ թերթերի մեջ մանկավարժական և բանասիրական հոդվածներ: Ունի մի շարք առանձին հրատարակված գրքեր: Ծնվել է 1863 թ., վախճանվել 1928 թ. (?):

258 Արձանագրությունը և Պռոշյանի գրածը լույս տեսան մի ընդհանուր վերնագրի տակ— «Նյութեր Պ. Պռոշյանի կենսագրության համար»— ու բաժանված յերկու մասի («Արձագանք», 1890, № 10, 29 ապրիլի):

259 Ինչպես այս՝ նույնպես և հետագա «պաշտոնյա» բառում, Պռոշյանը ընդգծում է Աբգար Հովհաննիսյանի ուղղագրական սխալները:

260 Քահանա դառնալու խնդիրը, դժբախտաբար, նոր չէր Պռոշյանի համար: Այդ մասին խոսում է Ռ. Պատկանյանը (Սյուլյուկ) իր «Ուխտավորի նամակներ»-ում — «Արձագանք», 1887, № 29:

Քահանա ձեռնադրվելուն է ակնարկում նաև Աբգար Հովհաննիսյանը՝ «Ինքնակենսագրության» մեջ քիչ առաջ բերած նամակում: Պարզ է, վոր նյութական ահեղ կացությունն էր ստիպում այն մարդուն, վոր իր ժամանակ չի ցանկացել ուրար ընդունել Ներսես Աշտարակեցու ձեռքից («Հունչիկներ», եջ 134), վոր յերկար ժամանակի ընթացքում հալածվել է յեկեղեցուց ու մերկացրել նրան իր գրվածքներում — այժմ ձգտել քահանայության:

261 Ա. Հովհաննիսյանի՝ Գ. Արծրունուն (վերջինիս հոբելյանի օրը, մայիս 6-ին) ուղղած նամակից բերում ենք մեզ համար կարևոր հատվածը — «Արձագանք», 1890, № 11:

«Րաֆֆիի գործունեությունը, վորի հոբելյանը տոնեցին, գրականական էր, Գամառ-Քաթիպայի, Սունդուկյանցի, Բարխուդարյանցի և քանի մի այլոց գործունեությունը, վորոնց հոբելյանները չտոնեցին, գրականական է, Հ. Ալիշանի 50-ամյակը,

վոր մայիսի 13-ին պետք է տոնվի, դրականական է, Պռոշյանցի հոբելյանը, վոր յերբեք չի տոնվել, դրականական է, իսկ դուք գրականության վոչ մի ճյուղ չեք մշակել, բուն գրականական ասպարեզում վոչինչ չեք արտադրել: Ձեր գործունեությունը կարող է բացառապես հրապարակախոսական անունը կրել»:

262 Ներսիսյան դպրոցում Պռոշյանը դասավանդել է սկսած 1887 թվից մինչև 1898 թ.:

263 Պռոշյանը գուցե նկատի ունի «Արձագանք»-ի «Մի կարևոր խնդիր» առաջնորդողը— 1892, № 146:

264 Մեզ համար պարզ չէ, թե ինչ նպատակով է Պռոշյանը «արդարատիպ մամուլ» խնդրել Հովնանյանից: Մյուս կողմից, վորքան մեզ հայտնի յե, նրա խնդիրը հետևանք չի ունեցել:

265 1892 թ. դեկտեմբերի 19-ին:

266 Միրզոյան Գաբրիել (— 1902) — Մանկավարժ և գրականագետ: Ավարտել է Թիֆլիսի առաջին գիմնազիան, սովորել Կազանի և Կիևի համալսարանի բժշկական ֆակուլտետում, բայց յերրորդ կուրսից դուրս յեկել: Ուսուցիչ եր Ներսիսյան դպրոցում: Իր կնոջ, Նատալիա Տեր-Մարկոսյանի հետ միասին հիմք է դրել մանկական հրատարակչությանը: Աշխատակցել է «Աղբյուր»-ին (ընդհատումներով):

267 Քալանթար Ալեքսանդր (1855—1913) — «Մշակ»-ի խմբագիր 1893 թ. մինչև իր կյանքի վերջը: Վերին աղուլեցի, «Ինքնակենսագրության» մեջ հիշատակվող Հայրապետ Քալանթարյանի վորդին: Սկզբնական ուսումն առացել է իր հոր դպրոցում: Կրթությամբ՝ գյուղատնտես:

268 № 147, դեկտեմբերի 24: Նախորդ համարը լույս է տեսել դեկտեմբերի 19-ին:

269 Արծրունի Անդրեաս (1847—1898)— Գրիգոր Արծրունու կրտսեր յեղբայրը: Յերկրաբան, Ախենի բարձրագույն տեխնիկական դպրոցի պրոֆեսոր: Աշխատակցել է «Մշակ»-ին:

270 Մարիամ Մելիք-Ազամալյանը, իր հերթին, «Մշակը» կտակեց Անդրեաս Արծրունուն: Վերջինս, չտեղափոխվելով Գերմանիայից Թիֆլիս, մինչև իր կյանքի վերջը անունով միայն յեղավ հրատարակիչ:

271 Մելքիսեդեկ արքեպ. Մուրադյանը (Գարեգին Մուրադյան) 1885 թ. ապրիլի 21-ին ընտրվեց կաթողիկոս՝ առաջին թեկնածու, յերկրորդ թեկնածուն եր Մակար արքեպ.—ը: Նույն թվի հուլիսի 18-ին Ալեքսանդր III-ը հաստատեց Մակարին:

272 Գառնակերյան Գրիգոր, արքեպ. (1832—1910)— Վաղարշապատցի, սովորել է ժառանգավորաց դպրոցում, յեկեղեցական յերաժշտության մասնագետ եր: Վարել է մի շարք պատասխանատու յեկեղեցական պաշտոններ:

273 Nemo ante mortem beatus— վոչ վոք մահից առաջ յերջանիկ չէ:

274 Այս փաստը Արզար Հովհաննիսյանը անվանել է «դու-



լուսների վարմունք» (տես՝ նույնանուն հոդվածն «Արձագանք»-ում, 1892, № 152):

275 Տես՝ «Նոր-Դար», 1892, № 206:

276 Ըստ «Մշակ»-ի (1892, № 148) պսակների թիվը հավասար եր 275-ի:

277 «Մշակ», 1882, № 227:

278 Սեդրակյան Արիստակես, յեպ. (1844—1906)— Սովորել է Եջմիածնի ժառանգավորաց դպրոցում: 1863—65 թ. թ. կատարելագործել է իր ուսումը Մոսկվայում: 1874—76 թ. թ. Գևորգյան ճեմարանում յեղել է պատմության ուսուցիչ: 1876—81 թ. թ. յեղել է Ղարաբաղի թեմի կառավարիչ, իսկ 1883—89 թ. թ. Վրաստանի և Իմերեթիայի թեմի առաջնորդ:

Խրիմյանի որոք 1895 թվից մինչև իր կյանքի վերջը Հաշտարխանի առաջնորդ եր: Ունի տպագրած ուսումնասիրություններ: Մշակական:

279 Բեգնազարյան Սարգիս, ք. (— 1894) — Մանկավարժ: Յեղել է ուսուցիչ և տեսուչ Ալեքսանդրապոլի, Յերևանի թեմական և Ներսիսյան դպրոցներում: Քահանայանալուց հետո՝ Քամոյան յեկեղեցու միաբան: Սովորել է Ներսիսյան դպրոցում, ավարտել Շվեյցարիայում բարձրագույն մանկավարժական դպրոց (1870): Մշակական: Ունի մի շարք հոդվածներ բարոյախոսական բովանդակությամբ:

280 Մատթեոս, ԻԱ, 13:

281 Նազարյան Հովհաննես, սարկ. (— 1912)— Հետագայում Եմանվել ք. Նազարյան, «Ընտիր հատվածներ»-ի հեղինակը: Ծնվել է Թիֆլիսում, ավարտել Ներսիսյան դպրոցը: 1901 թվից՝ Մոսկվայի հայոց յեկեղեցու քահանա:

282 Արծրունի Յերեմիա (1804—1877) — Գ. Արծրունու հայրը. գեներալ: Մասնակցել է 1826—28 թ. թ. պատերազմներին: Յեղել է Թիֆլիսի քաղաքագլուխ:

283 Մարիամ Մ.— Ազամալյանի յեղբայրը, Ալեքսանդրը, մեծ դժվարությամբ կարողացավ վերհիշել, վոր իր յեղբայրներից մեկը, Իրոք, թաղված է յեղել Խոջիվանքի գերեզմանատանը:

284 Հ. Թումանյանի այդ փաստավորն անհայտ է: Պռոշյանը, կարծես, մտադիր է յեղել մեջբերելու այն, բայց մոռացել է: Բացի այդ, Հ. Թումանյանը դուրս է յեկել Ներսիսյան դպրոցի վոչ թե յերկրորդ, այլ չորրորդ դասարանից: Կարելի յե յենթադրել, վոր այս տողերում յեղած հեղինակը Հ. Թումանյանի նկատմամբ վոչ թե անձնական վատ վերաբերմունքի հետևանք է դեպի բանաստեղծը, այլ բացատրվում է Պռոշյանի հոռի տրամադրությամբ ընդհանրապես: Հանրահայտ են Պռոշյանի և Թումանյանի լավագույն հարաբերությունները 90-ական և 900-ական թվերին:

Բացի բանաստեղծություն գրելուց, Հ. Թումանյանը Արծրունու թաղման ժամանակ զբաղվել է պատգամավորների և պսակ-

ների քանակի ցուցակագրությամբ: Արծրունու հոբելյանին նվիրված ներկայացմանը յեղել է հուշարար և այլն:

285 Ցեղենկյան Ավետիք (1849—1916)— Մանկավարժ, գրող, թարգմանիչ: Մշակական: Ծնվել է Ալեքսանդրապոլում, սովորել նախ՝ Մուրատ-Ռափայելյան դպրոցում, ապա Վենետիկում: Դասավանդել է Ալեքսանդրապոլի Արղության, ապա Ներսիսյան և այլ դպրոցներում: Յերկար ժամանակ յեղել է Բարեգործական Ընկերության քարտուղար: Ծառայել է նաև սինոդում: Գրել է բանաստեղծություններ, թարգմանել է «Համլետ»-ը:

286 Արասխանյան Ավետիք (1857—1911)— Վերին ագուլեցի, «Ինքնակենսագրության» մեջ հիշատակած Հայրապետ Արասխանյանի յեղբոր որդին: Սովորել է նախ Հայրապետ Քալանթարյանի դպրոցում, ապա Պռոշյանի և Ռ. Զալալյանի մոտ, որոնք, իր իսկ ասելով, «անջնջելի լավ տպավորություն են թողել»: 1876 թ. ավարտել է Թիֆլիսում ռեալական դպրոցը, 1882 թ. Ստրասբուրգի համալսարանի պետական գիտությունների ֆակուլտետը: Ներսիսյան դպրոցում յեղել է ընդհանուր պատմության ուսուցիչ: Ունի մի շարք տնտեսագիտական աշխատանքներ—Անդրկովկասի պետական գյուղացիների տնտեսական վիճակին վերաբերող և այլն: Ձեռնարկել է թարգմանելու «Կապիտալ»-ը: Նրա կյանքի ամենամեծ գործը «Մուրճ»-ի հիմնադրումն է և խմբագրումը 12 տարվա ընթացքում: Չնայած այն բացասական բնութագրմանը, որ հետագա տողերում տալիս է Պռոշյանը իր աշակերտին, այնուամենայնիվ «Մուրճ»-ի հետ նա կապված է յեղել ամենասերտ կապերով: «Մուրճ»-ումն են տպագրվել «Ցեցերը»-ը, «Բղդե»-ն, «Հունոն» և մի շարք այլ գործեր: Ինչ վերաբերում է Արասխանյանին, ապա 1899 թվին, Պռոշյանի հոբելյանի օրը, նա տվեց իր ուսուցչի ստեղծագործության շատ հետաքրքիր և ուշագրավ գնահատականը, որը կապում էր Պռոշյանին հայ հասարակական կյանքի և ժուռնալիստիկայի կենդանի շարժման հետ ու դրանով ակնարկում նրա ստեղծագործության հրատապ և ռեալիստական լինելուն:

287 «Մշակի մաքի... անբովանդակությունը սկսեց յերևալ այն ժամանակ, յերբ արդեն հակառակ կուսակցության, այն է՝ «Մեղու» լրագրի գաղափարների վատությունը բավականաչափ պարզված էր և յերբ այդ ավելի ապացուցելը և անգամ այդ խնդրի մասին խոսելը դարձավ ձանձրալի: Մինչև այդ րոպեն՝ «Մշակ» լրագիրը իսկական օրգան էր հայ առաջադեմ կուսակցության և մինչև այդ րոպեն «Մշակ»-ի նշանակությունը պատմական էր:... «Մշակ»-ի անկման նշանները սկսեցին յերևան գալ յուր հրատարակության սկզբից արդեն 4—5 տարի հետո:... Պատերազմի ժամանակից դես արդեն «Մշակ»-ի հետաքրքրությունը պահպանվեց շնորհիվ Րաֆֆիի:... Այդ ժամանակից արդեն «առաջնորդողը» սկսեց ծառայել միմիայն լրագրի անկման իբր ապացույց, մերկացնելով խելացի և իմաստասեր հասարակության առջև



նախկին անվեհեր մարտնչողի դրական մտքերից զուրկ լինելը, նորա բոլոր մտավոր սնանկությունը» (Ավ. Արասխանյան—«Մուրճ ամսագիրը վորպես հասարակական օրգան», «Մուրճ», 1889, № 1):

288 Տես՝ «Մշակ», 1889, № № 4—5, վորտեղ Գ. Արծրունին քննադատում է «Մուրճ»-ի նախորդ ծանոթագրության մեջ նշած առաջնորդողը, անվանում Արասխանյանին ստախոս և այլն, ինչպես նաև՝ № 23, Ասխացու (Գ. Արծրունի) ֆելիետոնը, ուր պատմվում է, թե ինչպես Արասխանյանը ամուսնացավ «Մուրճ»-ի հետ և այլն:

289 «Արձագանք», 1889, № 5, «Վերջին խոսք պարոն Գ. Արծրունուն» հոդվածում. «Արդարև իմ թոքերը չեն կարող շնչել այն ապականված օդը, վորի մեջ այնքան յերջանիկ եք զգում դուք ձեզ»: Բանակռիվը Արծրունու և Շիրվանզադեի միջև, վոր շատ սուր ու կրքոտ բնույթ էր կրում, ծագել էր Րաֆֆու «Վիպագրությունը ռուսահայերի մեջ» հոդվածի տպագրության շուրջը «Մշակ»-ում (1889, № 9), վորը ըստ «Արձագանք»-ի, արված էր աղավաղումներով: Տես՝ «Մշակ», № № 12 և 15, «Արձագանք», № № 3, 4 և 5: Շիրվանզադեն Արծրունու հետ հաշտվեց վերջինիս մահվանից քիչ առաջ, նրա հոբելյանի օրերին (1890, մայիս):

290 «Մշակ»-ի տված տեղեկությունների համաձայն (1892, № 148), արտասանվել է ընդամենը 15 ճառ:

291 Ծերեթելի Գիորգի (1842—1900)— Վրաց գրականագետ, հրապարակախոս և գիտնական: Պռոշյանը սխալվում է անվանելով նրան Նիկո: Ծնվել է Վերին Իմերեթիայում, Գորիսա գյուղում: Հասակակից էր և գործակից Իլյա Ճավճավաձեյին: Սովորել է Պետերբուրգում, հետագայում ճանապարհորդել է արտասահմանում՝ ուսումն ընդլայնելու նպատակով: Պատկանում էր առաջադիմական ազնվական հոսանքին: Աշխատակցել է «Ցիսկարի» (1862) և «Սաքարթվելոս Մոամբե» ամսագրերին: 1866 թ. խմբագրել է «Դրոեբա» լրագիրը, 1869 թ.՝ «Կրեբուլի» ամսագիրը, ապա՝ «Սոսփլո գազեթի» լրագիրը: 1891 թ. իր կնոջ՝ Անաստասիա Թումանիշվիլի—Ծերեթելու հետ ղեկավարել է «Ջեջիլի» պատանեկական ամսագիրը, ապա «Կվալի» շաբաթաթերթը (1893 թ.): Աշխատակցել է և «Обзор» և «Новое Обозрение» թերթերին:

292 Անհայտ է մեզ այդ յերիտասարդ թուրքի ով լինելը:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

293 Տես՝ 52-րդ ծանոթագրությունը:

294 «Հյուսիսափայլ»-ի, «Ճռաքաղ»-ի և «Մասյաց աղավնու» մասին տես՝ 220, 221 և 226-րդ ծանոթագրությունները:

295 1857—58 թ. թ.:

296 Լույս է տեսել 1858 թ.:

297 Լույս է տեսել 1842 թ.:

298 «Հյուսիսափայլ», 1858, № № 5, 6 և 11 —«Մխիթար և Մխիթարյանք» հոդվածում:

299 Չերքեզյան Հովսեփ (1812—1863) — Կղերական ռեակցիոն հրապարակախոս: Հայտնի է իր մոլեգին պայքարով «Հյուսիսափայլ»-ի դեմ:

300 Այսպես է ստորագրում Մ. Նալբանդյանը Խուդաբաշևի «Обозрение Армении» գիրքը քննարկելիս — «Հյուսիսափայլ», 1860, № 6:



# ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ ՊՌՈՇՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ

1837

3 հունիսի. Աշտարակում դերձակ Ստեփան Տեր-Առաքելյան Պռոշյանի և նրա կնոջ՝ Ցալաք Մարգարյան Մելումյանի ընտանիքում ծնվում է Հովհաննես (հետագայում Պերճ) որդին (անդրանիկը— Խուրով, հետագայում՝ տեր Առաքել):

1842

Հինգ տարեկան հասակում հորից բերանացի այբուբեն է սովորում:

1843

Ավագ յեղբայրը վարժեցնում է տառաճանաչության մեջ:

1845

Ընդունվում է վաղարշապատցի Շապուհ Շահնազարյանի դպրոցը, վոր նոր բացվել էր Աշտարակում:

1846

Ամառ. Աշտարակի դպրոցին այցելություն է կատարում «Երևանի Թաղավորական ուսումնարանի տեսուչ» Խաչատուր Աբովյանը և մնում այնտեղ յերեք օր: Այս այցելությունն անջնջելի տպավորություն է թողնում Պռոշյանի վրա:

1848

Շապուհ Շահնազարյանը հեռանում է Աշտարակից, դպրոցը փակվում է, Պռոշյանը մնում է դուրս: Չի ընդունվում Էջմիածնի դպրոցը, վորովհետև Ղուկաս արքեպիսկոպոսին վարդապետանալու խոսք չի տալիս:

1849

Ընդունվում է Մողնու վանքի միաբան Մարտիրոս Մժեժյանի նորաբաց դպրոցը: Մեռնում է հայրը, դերձակ Ստեփանը:

1851

Հոկտեմբեր. Մժեժյանի առաջնորդությամբ վորոշում է ճամփել արտասահման՝ Պոլսում կամ Փարիզում ուսումը շարունակելու, բայց բռնվում է և յետ բերվում:

Նոյեմբեր. *Շապուհ Շահնազարյանը Պռոշյանին տանում է Երևան, ուր նա մնում է մի ամսաչափ ու հաճախում արքունական դպրոցը:*

Դեկտեմբեր. *Ներսես Ե կաթողիկոսը վորոշում է ուղարկել Պռոշյանին Թիֆլիս՝ սովորելու:*

### 1852

Հունվարի կեսին. *Ընդունվում է Ներսիսյան դպրոց, վորպես վորդեգիր: Ռուսերեն չիմանալու պատճառով՝ հաճախում է առաջին պատրաստականը:*

### 1853

6—12 մարտի. *Տալիս է տարեկան քննությունները:*

17 մարտի. *Փոխադրվում է յերկրորդ դասարանից յերրորդ, վերին դասարանը՝ առաջին աստիճանի պարգևով:*

### 1855

Գարուն. *Գերազանց գնահատականով ավարտում է Ներսիսյան դպրոցը:*

Դեկտեմբեր (*գուցե 1856-ի հունվար*). *Մտնում է գիմնազիայի չորրորդ դասարանը իբրև ազատ ունկնդիր:*

*Մասնակցում է «Միրազումար ժողով» ընկերության նիստերին:*

### 1856

Ապրիլ. *Միջոցներ չունենալու հետևանքով թողնում է գիմնազիան՝ յերեք ամիս մնալով այնտեղ:*

Ամառ. *Անց է կացնում Սոմխեթ գավառի Թոնեթ գյուղում:*

Աշուն. *Աշնան սկզբին վերադառնում է Թիֆլիս ու մոտ յերեք ամիս ապրում իր ուսուցիչ Հակոբ Կարենյանի մոտ: Գործ գտնել չի հաջողվում:*

Նոյեմբեր. *Պետրոս Շանշյանի դրդումով— գուցե մասամբ նաև հիվանդության հետևանքով— ուղևորվում է Աշտարակ: Նշանակվում է Աշտարակի ծխական դպրոցի ուսուցիչ:*

### 1857

*Շարունակում է ուսուցչությունն անել Աշտարակում: Նյութական ոժանդակ միջոց հայթայթում է քարտուղարություն անելով Մողնու վանքի վանահայր և շրջակա մոտ 70 գյուղերի գործակալ Հակոբ Քյանդարյանի մոտ: Վերջին հանգամանքը հնարավորություն է տալիս մոտիկից ծանոթանալու Արարատյան դաշտի հայ գյուղացիության կյանքին, վոր հետագայում իր յերկասիրությունների հիմքն է դառնում:*

### 1858

Հունվար—հունիս. *Շարունակում է նախորդ տարվա զբաղմունքները:*



Հունիս. *Մողնում հանդիպում է Սարգիս յեպ. Ջալալյանին, վոր հորդորում է նրան գնալ Թիֆլիս և խոստանում աջակցություն:*

Հուլիսի վերջերին, *8 ռ. գրպանում ճանապարհվում է Թիֆլիս:*

Օգոստոսի *սկզբներին հասնում է Թիֆլիս և մի կերպ տեղավորվում վանքում: Վարում է կիսասով կյանք:*

Օգոստոսի *վերջին հիվանդանում է:*

Սեպտեմբերի *սկզբներին իր համագյուղացի, ուսուցիչ Հովհաննես Տեր-Հովսեփյանի մոտ պատահմամբ ծանոթանում է Խ. Աբովյանի նոր լույս տեսած «Վերք Հայաստանի»-ի հետ, վոր թողնում է նրա վրա ցնցող տպավորություն:*

15 սեպտեմբերի. *Սարգիս Ջալալյանը ժամանում է Թիֆլիս: Պռոշյանի կյանքն սկսվում է բարեկարգվել:*

Աշուն. *Նիկողայոս Տեր-Հակոբյանի պանսիոնում դաս է տալիս, ստանում է ռոճիկ, ուտելիք և բնակարան. Ներսիսյան դպրոցում պատրաստական դասարանում ավանդում է ռուսաց լեզու. ունի նաև մասնավոր դաս: Վաստակում է ընդամենը 18 ռ.:*

### 1859

18 ապրիլի. *«Մեղու Հայաստանի» լրագրի № 16-ում լույս է տեսնում Պռոշյանի առաջին տպագիր գործը— «Առ անձկալին Շուշան դուստր Վարդանայ»:*

Աշուն. *Սկսում է գրել «Սոս և Վարդիթեր»-ը: Հրավիրվում է «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագրում աշխատելու իբրև խմբագրի ոգնական և սրբագրիչ: Ուսուցչությունը թողնում է:*

### 1860

*Շարունակում է պաշտոնավարել «Կռունկ»-ում:*

Հունվար. *«Կռունկ»-ի Ա. գրքում (հունվար) սկսվում է «Սոս և Վարդիթեր»-ի տպագրությունը, վորը վերջանում է Ժ գրքում (հոկտեմբեր):*

Նոյեմբեր—դեկտեմբեր. *«Սոս և Վարդիթեր»-ը լույս է տեսնում առանձին գրքով:*

### 1861

*Պռոշյանի նախաձեռնությամբ բացվում է ամբողջ Կովկասում առաջին Հայոց աղջկանց դպրոցը «Գայանյան» անունով:*

*Աղջկանց դպրոցից հետո բաց է անում թաղական արական դպրոց:*

*Տարվա յերկրորդ կեսում թողնում է «Կռունկ»-ի խմբագրությունը:*

### 1862

*Շարունակում է իր մանկավարժական գործունեյությունը:*

Նոյեմբեր—դեկտեմբեր. Պռոշյանի նախաձեռնությամբ կազմակերպվում է հայ թատրոնական խումբ:

1863

Շարունակում է իր մանկավարժական գործունեությունը:

Հ. Ենֆիաճյանի հաշվով սովորում է լուսանկարչություն:

3 հունվարի. Թատրոնական խումբը մեծ հաջողությամբ տալիս է իր անդրանիկ ներկայացումը: Խաղացվում է Խորեն Գալֆայանի «Արշակ երկրորդ»-ը:

Մարտ. «Կռունկ»-ի Գ—Զ համարներում լույս է տեսնում Պռոշյանի «Աղասի» վիպերգությունը: Տարվա վերջին «Աղասին» լույս է տեսնում առանձին գրքով:

Ամառ. Առողջությունը կազդուրելու նպատակով՝ լուսանկարչական ապարատը ձեռքին շրջում է Կախեթիայի կողմերը: «Շահեն» վեպն այս ճանապարհորդության տպավորություններից է առնում:

Հոկտեմբեր—նոյեմբեր. Պ. Շանշյանի առաջարկությամբ թողնում է Թիֆլիսը և տեղափոխվում Շուշի, ուր տեղի թեմական դպրոցում աշխատում է որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ և տեսչի (Շանշյանի) օգնական:

1864

Շարունակում է իր մանկավարժական գործունեությունը Շուշում:

Ապրիլ—մայիս. Լույս է տեսնում (Շուշում) Պռոշյանի բրոշյուրը. «Ղարաբաղու տիրամայր սուրբ Մարիամու օրիորդաց ուսումնարանի բացվիլը»:

8 օգոստոսի. Բժիշկների խորհրդով թողնում է Շուշին և վերադառնում Թիֆլիս:

Աշուն. 1859 թվից ունեցած հիվանդությունը (կրծքի թուլություն) հասնում է իր գագաթնակետին: Աշնան վերջին, մի խիստ արյունհոսությունից հետո, առողջանում է:

1865

Ամառ. Անց է կացնում Թիֆլիսամերձ Ծավկիս գյուղում (մասնավոր դասեր է տալիս):

Ականատես է Թիֆլիսի համքարական շարժմանը, որը հետագայում համակրանքով նկարագրել է:

Աշուն. Լուսանկարչական ապարատը ձեռքին՝ սկսում է շրջել Յերևանի նահանգը:

Մի քանի ամիս անց է կացնում Յերևանում: Փորձ է անում բաց անելու աղջկանց դպրոց:

1866

Շարունակում է իր շրջագայությունը Յերևանի նահանգում:



17 սեպտեմբերի. Էջմիածնում, կաթողիկոսական ընտրությունների ժամանակ, Թավրիզեցի Ծատուր-խանի հետ պայմանավորվում է հաջորդ տարին գնալ Թավրիզ և աշխատել նրա մոտ իբրև լուսանկարիչ: Թավրիզից Պռոշյանը մտադիր էր անցնել Հնդկաստան:

Ձմեռ. Հին Նախիջևանում զբաղվում է լուսանկարչությամբ:

1867

Ձմեռ. Նախիջևանում և Օրդուբաթում զբաղվում է լուսանկարչությամբ: Պռոշյանը դրամ է կուտակում՝ Պարսկաստան անցնելու համար:

Ապրիլ. Գալիս է Ագուլիս: Ագուլիսի հասարակության առաջարկով նախաձեռնում է բաց անել տղայոց և աղջկանց դպրոց: Պարսկաստան գնալու ծրագիրը փլվում է:

Մայիսի կեսերին գնում է Էջմիածին՝ դպրոցների հաստատման կոնդակներ ստանալու նպատակով: Բախվում է կաթողիկոսի հետ, որը անվանում է նրան հանդուգն ու անհարազատ:

Հուլիս. Ուղևորվում է Թիֆլիս և Յերևան՝ Ագուլիսի նորաբաց դպրոցների համար ուսուցչական խումբ կազմելու:

Աշուն. Սկսում է դասավանդել իր բացած դպրոցներում:

1868

Հունվար—հունիս. Շարունակում է դասավանդումը:

Հունվար—փետրվար. Մոսկվայում լույս է տեսնում Պռոշյանի՝ «Վերին Ագուլյաց յերկու սեռից ուսումնարանների բացվելը և կանոնադրությունքը» բրոշյուրը:

Մայիս. «Հայկական աշխարհ»-ում (№ 4—5) լույս է տեսնում Պռոշյանի թղթակցությունը Ագուլիսի աղջիկների մասնակցության մասին թատրոնական ներկայացմանը:

Հունիսի վերջերին թողնում է Ագուլիսը Էջմիածնի հետապնդության հետևանքով: Մեղադրվում է չանչխականության մեջ, հայտարարվում հերձվածող, ֆարմասոն, պասակեր և անբարոյական:

Գնում է Ալեքսանդրոպոլ՝ Տաճկահայաստանում ճանապարհորդելու դիտավորությամբ, որ չի հաջողվում: Անցնում է Աշտարակ:

Հուլիս—օգոստոս. Նրա օգնությամբ բարեկարգվում են Աշտարակի դպրոցական գործերը: Այս առնչությամբ ընդհարվում է Էջմիածնի ներկայացուցիչների, Սարգիս ք. Բզնունու և Նիկողայոս Տեր-Հովսեփյանի հետ ու նորից մեղադրվում չանչխականության մեջ:

Աշնան սկզբներին Թիֆլիսումն է: Նրա ճիգերով վերաբացվում է Գայանյան առաջին դպրոցը: Զբաղվում է լուսանկարչությամբ:

1869

Շարունակում է զբաղվել լուսանկարչությամբ:
Ամուսնանում է Աննա Դոլգյանի հետ:

1870

Շարունակում է զբաղվել լուսանկարչությամբ:
Հունվար—ապրիլ. Արտասահմանյան անցագիր է վերցնում՝ Պոլսում կատարելագործվելու լուսանկարչության մեջ:
Ապրիլ—մայիս. «Վատ վարքի» և յեկեղեցուն «վատ ծառայելու» համար արձակվում է հոգևոր դասից ու զրկվում ազգային դպրոցներում դասատվության իրավունքից:
Մայիս. Այդ առթիվ բուռն տեսակցություն է ունենում կաթողիկոսի հետ Թիֆլիսում:
Ամառ. Տկարության հետևանքով անց է կացնում Աշտարակում:
19 սեպտեմբերի. Ուղևորվելով Աշտարակից՝ հասնում է Թիֆլիս՝ պաշտպանելու իր դատը կաթողիկոսի առջև:

1871

Շարունակում է զբաղվել լուսանկարչությամբ:
Նոյեմբեր—դեկտեմբեր. Հրավիրվում է մասնակցելու «Մշակ»-ի խմբագրությանը:

1872

Աշխատակցելով «Մշակ»-ին՝ թղթակցություններ է ուղարկում Յերևանից «Պահլավունի» ստորագրությամբ:
Ամառային ամիսներ և սեպտեմբեր. Ընտանիքով գնում է Աշտարակ:
Աշուն. Ինքը և կինը սկսում են պարապել գերմաներենով՝ Շվեյցարիա անցնելու դիտավորությամբ, ուր կինը բժշկություն պիտի սովորեր:

1873

Կնոջը բժշկական կրթություն տալու ցանկությունը իրագործելու նպատակով՝ ընտանիքով գնում է Ղզլար՝ լուսանկարչությամբ դրամ ժողովելու: Այդ ցանկությունը չի իրագործվում:

1874

Շարունակում է լինել Ղզլարում:
Ամառ. Պետրովսկում հանդիպում է ամարանոց յեկած Հաշտարխանի թեմական առաջնորդ Գ. յեպ. Վեհապետյանի հետ, վորը նրան համոզում է գալ Հաշտարխան ուսուցչությամբ պարապելու:
Ընտանիքով տեղափոխվում է Հաշտարխան:

1875

Հաշտարխանում զբաղվում է լուսանկարչությամբ:
Սեպտեմբեր—հոկտեմբեր. Հաշտարխանից գնում է Թիֆլիս և Եջմիածին՝ գիմնազիաներում հայոց լեզվի ուսուցչի դիպլոմ ձեռք բերելու համար:
Նոյեմբեր—դեկտեմբեր. Հիվանդանում է:

1876

Հաշտարխանում բաց է անում յերկսեռ դպրոց: Նորից մեղադրվում է «չանչխականության» մեջ:
Տարվա սկզբին նամակ է ստանում Աբգար Հովհաննիսյանից, վորը խթանում է նրան սկսել գրել «Կռվածաղիկ»-ը:
Օգոստոս. «Փորձ»-ում տպագրելու համար ուղարկում է Ղ. Աղայանին իր «Ախմախ Ղամբեռս» վոդևիլը: Չի տպագրվում: Ձեռագրի վիճակն անհայտ է:
«Կռվածաղիկ»-ը ավարտվել է: Սկսվում է արտագրությունը, վորի ընթացքում վեպը խիստ փոփոխության է յենթարկվում:

1877

Փետրվար—մարտ. Շարունակում է իր աշխատանքները «Կռվածաղկի» վրա:
Ամառ. Գնում է Թիֆլիս, վորտեղ դառնում է «Փորձ»-ի խմբագրության անդամ և հասարակաց մատենադարանի կառավարիչ:
Տարվա վերջում «Փորձ»-ի 1877—78 թ. յերկրորդ համարում սկսում է լույս տեսնել «Կռվածաղիկ»-ը:

1878

«Կռվածաղիկ»-ը լույս է տեսնում առանձին հրատարակությամբ:

1879

Տարվա սկզբին տառապում է յերկարատև հիվանդությամբ:
«Փորձ»-ում տպագրվում է «Հացի խնդիր»-ը (№ № 3—9):
29 ապրիլի. Հրավիրվում է Յերևանի թեմական տեսչության պաշտոնի:

1880

«Հացի խնդիր»-ը լույս է տեսնում առանձին հրատարակությամբ:
«Փորձ»-ում տպագրվում է «Շահեն»-ը (№ № 6—12 և 1881 թ.— № № 1—3):

1883

«Շահեն»-ը լույս է տեսնում առանձին հրատարակությամբ:

1885

Դպրոցների փակման հետևանքով՝ արձակվում է Յերևանի թեմական տեսչի պաշտոնից:

1886

15 փետրվարի․ Սկսում է գրել «Ինքնակենսագրությունը»։

Նյութական ծանր վիճակից դրդված՝ զբաղվում է ածխավաճառությամբ։

Ուսուցիչ է Յերևանի թեմական դպրոցում։

1887

Հրավիրվում է Ներսիսյան դպրոց ուսուցչական պաշտոնի։

«Սոս և Վարդիթեր»-ը լույս է տեսնում յերկրորդ հրատարակությամբ։

Ամառվա սկզբին Յերևանի հասարակությունը ճաշկերույթ է սարքում ի պատիվ Պռոշյանի։

Ամառ․ Ընտանիքի հետ միասին անց է կացնում Դիլիջանում։ Հուլիսին հանդիպում է Ռ․ Պատկանյանի հետ ու միասին գնում են Հաղարծին։

1889

«Մուրճ»-ի առաջին համարներում լույս է տեսնում «Ցեցեր»-ը (№ № 1—6)։

«Ցեցեր»-ը լույս է տեսնում առանձին հրատարակությամբ։

«Մուրճ»-ում սկսում է լույս տեսնել «Բղդե»-ն (№ 12 և 1890 թ․— № № 1—4, 6, 8)։

1890

«Բղդե»-ն լույս է տեսնում առանձին հրատարակությամբ։

6 մայիսի․ Սկսում է պահել «Որագիր», ուր ընդհատումներով գրում է մինչև 1892 թ․ դեկտեմբերի 27-ը։

1892

«Տարազ»-ում տպագրվում է «Սկիզբն յերկանց»-ը (№ № 1, 2, 4—22, 25, 31, 34, 35, 37—41, 43, 45, 46)։

«Սկիզբն յերկանց»-ը լույս է տեսնում առանձին հրատարակությամբ։

1894

Լույս է տեսնում «Հուշիկներ»-ի ա․ շրջանը։

1897

«Կալածաղիկ»-ը լույս է տեսնում յերկրորդ հրատարակությամբ։

1898

Սեպտեմբեր․ Թողնում է Ներսիսյան դպրոցը։



1899

16 մայիսի․ Թիֆլիսում կատարվում է Պռոշյանի գրական, հասարակական և մանկավարժական գործունեության 40-ամյակը։ Ներսիսյան դպրոցից մշտական թոշակ է ստանում ամսական 50 ռուբլի։

1900

«Մուրճ»-ում տպագրվում է «Հունոն» վեպը (№ № 1—6)։

1901

«Հունոն» լույս է տեսնում առանձին հրատարակությամբ։

1904

«Հացի խնդիր»-ը լույս է տեսնում յերկրորդ հրատարակությամբ։

Ներսիսյան դպրոցից զրկվում է թոշակից։

1905

Տարվա սկզբին տեղափոխվում է Բաքու։

Մեռնում է կինը։

«Սոս և Վարդիթեր»-ը լույս է տեսնում յերրորդ հրատարակությամբ։

«Շահեն»-ը լույս է տեսնում յերկրորդ հրատարակությամբ։

1907

10 հոկտեմբերի․ Վերջին անգամ գնում է Աշտարակ։

22 հոկտեմբերի․ Վերադառնում է Թիֆլիս և նույն որը մեկնում Բաքու։

23 նոյեմբերի․ Առավոտյան ժ․ 8 և կեսին Բաքվա քաղաքային հիվանդանոցում մեռնում է Պերճ Պռոշյանը։

25 նոյեմբերի․ Մարմինը փոխադրվում է Թիֆլիս։

2 դեկտեմբերի․ Թաղվում է Խոջիվանքում։

---

# ՑԱՆԿ
## ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ

ԱԲԱՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՂՈՄՈՆ— 22, 23, 24, 27։

ԱԲԳԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ— Տիրացու Ագուլիսում, Պռոշյանի լավ բարեկամը։ 65, 66։

ԱԲԴՈՒԼԼԱՀ ՅԵՂԲԱՅՐՔ— Պոլսեցի լուսանկարիչներ, որոնց գործարանում Պռոշյանն ուզում էր կատարելագործվել։ 80։

ԱԲԵԼՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ, պրոֆ. — 91։

ԱԲՈՎՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ (1809?—1848)—15, 18, 3[ն] 4[ն]։

ԱԴԱՄՅԱՆ ՅԵՂԲԱՅՐՆԵՐ— Պոլսեցի վարպետներ, որոնք աշխատում էին Հ. Ենֆիաճյանի տպարանում։ 21։

ԱԴԻԲԵԿՅԱՆ ԳԵՈՐԳ— 23, 29, 30, 32, 37, 41, 42, 43։

ԱԹԱՆԱՍՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ— Հաշտարխանցի, Պռոշյանի մոտ բարեկամը— 94, 95։

ԱԹԱՆԱՍՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ— 45։

ԱԼԻՇԱՆ ՂԵՎՈՆԴ (1820—1901)— 18, 6[ն]։

ԱՂԱԲԵԿՅԱՆ ՄԱՐԿՈՍ— 20, 21, 30, 31, 79։

ԱՂԱՄՋԱՆՅԱՆ— Դասատվություն հանձն առավ Պռոշյանի նորաբաց դպրոցում Հաշտարխանում։ 92։

ԱՂԱՅԱՆ ՂԱԶԱՐՈՍ (1840—1911)— 97։

ԱՂԱՋԱՆ ԲԵԳ— Շուշեցի, ըստ յերևույթին՝ հոգաբարձու— 38։

ԱՄՐԻԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ— 12, 13։

ԱՄՐԻԿՅԱՆ ՄԻՀՐԴԱՏ— 33, 87։

ԱՅՎԱԶՈՎՍԿԻ ԳԱԲՐԻԵԼ, յեպ.— 55, 56, 2[ն], 3[ն], 8[ն]։

ԱՆՆԱ— տե՛ս Դոլգյան Աննա։

ԱՐԱՄՅԱՆ ԳԵՈՐԳ, վ.— Շուշվա և Ագուլիսի դպրոցների քայքայիչ։ 39—40, 59—63, 64։

ԱՐԱՄԽԱՆՅԱՆ ԱՎԵՏԻՔ— 119—121։

ԱՐԱՄԽԱՆՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ— 52, 65, 67։

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՌԱՔԵԼ— 17, 18, 2[ն], 8[ն]։

ԱՐԶՈՒՄԱՆ (ԴԱԼԼԱՔ ԱՐԶՈՒՄԱՆ)— Պռոշյանի սափրիչը։ 35։

ԱՐԾՐՈՒՆԻ ԱՆԴՐԵԱՍ— 109։

ԱՐԾՐՈՒՆԻ ԳՐԻԳՈՐ (1845—1892)— 84—87, 89, 90, 93, 97, 98, 99, 103, 104, 105, 108—123։



ԱՐԾՐՈՒՆԻ ՅԵՐԵՄԻԱ— 118։

ԱՐՂՈՒԹԻՆՍԿԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ, իշխ.— Մովսես Արղութինսկու յեղբայրը։ 8։

ԱՐՇԱՐՈՒՆԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ, յեպ.— Ստեփանոս յեպիսկոպոսի հաջորդը Յերևանի թեմում։ 46։

ԱՐՏԱԶՅԱՆ— Շիրվանզադեյի կնոջ առաջին ամուսինը։ 122։

ԲԱԲԱՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ— 95, 96։

ԲԱՐԿԵՆՅԱՆՑ ԱԲՐԱՀԱՄ ԴԻՈՍԿՈՐՈՍՅԱՆ— տես՝ Նալբանդյան Միքայել։

ԲԱԲՈՅԻ ՏՂԱ ԳՐԻԳՈՐ— յերևանցի ֆուրգոնատեր. 46։

ԲԱԴԱԼՅԱՆ ՍՏԵՓԱՆՈՍ, արքեպ. (—1865—6?).— Առաջնորդ Շուշում և Յերևանում։ 38, 39, 44—47։

ԲԵԳՆԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ, ք.— 116։

ԲԵՀԲՈՒԴՅԱՆ ԳՐԻԳՈՐ, իշխ.— Թատրոնական ներկայացումներ ձեռնարկողներից 60_ական թ. թ.։ 25։

ԲԵՀԲՈՒԴՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ, իշխ.— Թատրոնական ներկայացումներ ձեռնարկողներից 60-ական թ. թ.։ 25։

ԲԶՆՈՒՆԻ ՍԱՐԳԻՍ, ք.— 76—78։

ԲՈՒՐԺԱԼՅԱՆ— դասատվություն հանձն առավ Պռոշյանի նորաբաց դպրոցում Հաշտարխանում 92։

ԳԱԼՖԱՅԱՆ ԽՈՐԵՆ, վ.— 27—28։

ԳԱՌՆԱԿԵՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ, յեպ.— 113, 115, 117։

ԳԱՍՊԱՐՅԱՆ— Ըստ յերևույթին՝ բժիշկ Շուշում 60—ական թ. թ. 38։

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ, բժ.— 96։

ԳԵՈՐԳ Դ, կաթողիկոս.— 48, 52, 53, 80, 83, 92, 115։

ԳԵՈՐԳԲԵԿՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ (ՄԻՐԶԱՋԱՆ)— Ագուլիսի դըպրոցի աշակերտ։ 58։

ԳԻՔՈ (ԶԱՌԱՓ ԳԻՔՈ)— Թիֆլիսի համքարների գլխավորը (ուստաբաշի)։ 31։

ԳՅՈՒԼԶԱՏՅԱՆ ՍԱՄՎԵԼ— 56։

ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ ԱԲԳԱՐ— Ուսուցիչ։ 56, 57—58, 61։

ԳՈՒԼԲԻՆՍԿԻ— Շուշվա գավառական բժիշկ։ 39։

ԳՐԱՆԻԼՉԻԿՅԱՆ ՀԱԿՈԲ— Հաշտարխանցի վաճառական։ 94—95։

ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ— 6[ն]։

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԶԱՔԱՐԻԱ— 36։

ԴԱՎԹՅԱՆ— Ուսուցիչ— 79։

ԴԱՎԻԹ ՄԱՐԳԱՐԵ— 58։

ԴՈԼԳՅԱՆ ԱՆՆԱ— 80, 91։

ԴՈԼԳՅԱՆ ԱՇԽԵՆ— 79, 80, 91, 92։

ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ ՄԱՐԿՈՍ— 74, 75, 76։

ԵՆՖԻԱՃՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ— 20, 21, 44։

ԶԱՐԴԵՂՅԱՆ ԹՈՎՄԱՍ— Պռոշյանի ընկերը, հայ թատրոնի սկզբնավորության գործիչներից։ 22, 24։

ԶԱՔԵՈՍ— 52։
ԹԱՂԻԱԴՅԱՆ ՄԵՍՐՈՊ— 1, 2։
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ (1869—1923)— 118։
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՅԱԶՈՆ, իշխ.— 28, 31, 32։
ԻԶՄԱՅԻԼՅԱՆ ՊՈՂՈՍ— 87, 90։
ԻԶՄԻՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ— 22, 24, 25, 27, 28, 30, 31, 34։
ԻԶՄԻՐՅԱՆ ՍՈՖԻԱ— 33։
ԻՆՃԻՃՅԱՆ— Հնախոս Մխիթարյան Միաբանությունից։ 7[ն]։
ԻՎԱՆ ԲԵԳ— Ըստ յերևույթին՝ Ավան-Յուզբաշյան, Հոգաբարձու։ 39։
ԼԱԼԱՅԱՆ ՆԻԿՈՂԱՅՈՍ— «Մշակ»-ի սկզբնավորության գործիչ։ 87։
ԽԱՆԱՂՅԱՆ ԳԵՈՐԳ— Էջմիածնի գավառապետի ոգնական, հետագայում գավառապետ— 75։
ԽՈՋԱՅԱՆ (Տ. ԽՈՋԱՅԱՆ)— Բժ. Բ. Խոջայանի կինը—35։
ԽՈՋԱՅԱՆ ԲԱՐՍԵՂ, բժ.— Թատրոնական ներկայացումներ ձեռնարկողներից 60-ական թ. թ.։ 25։
ԽՈՍՐՈՎՅԱՆ ԲԱՂԴԱՍԱՐ— Թատրոնական կոմիտեյի անդամ։ 32։
ԽՈՐԵՆԱՑԻ ՄՈՎՍԵՍ— 6[ն]։
ԾԱՏՈՒՐ ԽԱՆ ԹԱՎՐԻԶՑԵՑԻ— Կաթողիկոսական ընտրությունների պատգամավոր 1866 թ., ազդեցիկ պարսկահայ։ 48, 51։
ԾԵՐԵԹԵԼԻ ԳԻՈՐԳԻ— 123։
ԿԱՄՍԱՐԱԿԱՆ ԲԱՐՍԵՂ— 75։
ԿԱՄՍԱՐԱԿԱՆ ԻՍՈՒՄ— 77։
ԿԱՃԿԱՃՅԱՆ ԹԱՄԱՐ— Բաքվի հայ կանանց ներկայացուցիչը Արծրունու թաղմանը։ 122։
ԿԱՐԱՊԵՏ (տիրացու)— Տես՝ Աբգարյան Կարապետ։
ԿԱՐԱՊԵՏ— Ագուլիսի Թովմա Առաքելո վանքի վանահայր Ստեփաննոս վ. Նախիջևանցու փորդին— 58։
ԿԱՐԵՆՅԱՆ ՀԱԿՈԲ— 17—18, 22, 23—27, 28, 30, 32, 33։
ԿՈԼՈՒՄԲՈՍ— 13։
ԿՈՄՍ ԵՄՄԱՆՎԵԼ— Տես՝ Նալբանդյան Միքայել։
ԿՈՍՏԱՆԴԻՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ— 52։
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՀՈՎՍԵՓ, ք.— 83։
ԿՈՒՍԻԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ— Պռոշյանի ընկերը։42։
ՀԱԽՈՒՄՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ— 39։
ՀԱԽՈՒՄՅԱՆ ՄԱՐԻԱՄ— 38, 39։
ՀԱԿՈԲ— Ցերեկատարդ տաճկաստանցի, վորի հետ Պռոշյանը հանդիպեց Ծաղկաձորում։ 73։
ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ— Ուսուցիչ։ 56։
ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ— Փիլիսոփայության դոկտոր։122։
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՂԱ— Տես՝ Հախումյան Համբարձում աղա։



ՀԱՄԲԱՐՁՈՒՄ-ԲԵԳ— Ըստ յերևույթին՝ Սարուխանբեգյան, Հոգաբարձու, շուշեցի։ 39։
ՀԱՍԱՆ ՋԱԼԱԼՅԱՆ ՑԵՂԻԱ, վ.— 62։
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԻՍԱՀԱԿ— 100—102։
ՀՈՆԱՆՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ— 104, 107—108։
ՀՈՎԲՅԱՆ ԳՐԻԳՈՐ, յեպ— 46—47։
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԲԳԱՐ (1849—1904)— 92, 95—96, 97—106, 107, 110, 113։
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԱԲՐԻԵԼ— Տես՝ Տեր-Հովհաննիսյան Գաբրիել։
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ— 13, 24, 25, 27, 28, 35, 40։
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՅԵՂԻՍԱԲԵԹ— 35, 36, 37, 41, 79։
ՀՈՒԴԱ— 57։
ՀՐԱՉՅԱՆ ՄԱՐԳԱՐ— Ագուլիսի քահանա Փափազյանի տիրացուն։ 58, 59։
ՄԱԼՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ (—1915)— «Մշակ»-ի աշխատակիցներից, հետագայում դաշնակցական։ 97։
ՄԱԿԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ— 45, 79, 103, 110։
ՄԱԿԱՐ ՍՐԲԱԶԱՆ— Տես՝ Մակար կաթողիկոս։
ՄԱՄԻԿՈՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ— Սրա միջնորդությամբ Գեորգ IV-ը ընդունեց Պռոշյանին։ 80։
ՄԱՄԻԿՈՆՅԱՆ-ՋՈԲԱՆՅԱՆ ՄԱՐԻԱՄ— Թիֆլիսի մի խումբ կանանց ներկայացուցիչը Արծրունու թաղմանը։ 119։
ՄԱՄԻԿՈՆՅԱՆ ՅԵՎ ՄԱՐԿՈՍՅԱՆ— 50-ական թվերի վերջին աղջկանց վարժոցներ ունեյին Վանքի թաղումը, Թիֆլիսում։ 34։
ՄԱՅԻԿՈ— Տես՝ Հախումյան Մարիամ։
ՄԱՆԴԻՆՅԱՆ ՍՏԵՓԱՆ, ք. (—1876)— «Մեղու Հայաստանի»-ի խմբագիրը մինչև 1863 թ.։ 87, 2[ն], 8[ն]։
ՄԱՆԿՈՒՆԻ ՎԱՀՐԱՄ, վ.— 84։
ՄԱՏԹԵՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ— 39, 40, 47։
ՄԱՐԳԱՐ— Տես՝ Հրաչյան Մարգար։
ՄԱՐԿՈՍՅԱՆ— Տես՝ Մամիկոնյան և Մարկոսյան։
ՄԱՐԿՈՍՅԱՆ, բժ.— Հայտնի բժիշկ Թիֆլիսում, 60—80-ական թ. թ.։ 42, 43։
ՄԵԼԻՔ ԱՂԱՄԱԼՅԱՆ ՄԱՐԻԱՄ (—1895)— Գ. Արծրունու կինը։ 109, 118։
ՄԵԼԻՔ-ԿԱՐԱԽԱՆՅԱՆ— Սղնախեցի. Հաշտարխանում նյութական ոգնություն է հասցրել Պռոշյանին։ 92։
ՄԵԼԻՔ-ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ— տես՝ Րաֆֆի։
ՄԵԼԻՔ-ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ ԲԱԼԱ-ԲԵԳ— Շուշվա քաղաքացի, հոգաբարձու։ 38։
ՄԵԼԻՔ-ՆԱԶԱՐՅԱՆ ՍՈՖԻԱ— տես՝ Իզմիրյան Սոֆիա։
ՄԵԼՈՒՄՅԱՆ ՄԱՐԳԱՐ— 3։

ՄԵԼՈՒՄՅԱՆ ՑԱԼԱՔ— Պռոշյանի մայրը, Մելումյան Մարգարի աղջիկը: 3:
ՄԵԼՔԻՍԵԴԵԿ— Տես՝ Մուրատյան Գարեգին:
ՄԺԵԺՅԱՆ ՄԱՐՏԻՐՈՍ, վ.— 5—6:
ՄԻՆԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ— 12:
ՄԵԼՔԻՍԵԴԵԿ— Տես՝ Մուրատյան Գարեգին:
ՄԻՐԶՈՅԱՆ ԳԱԲՐԻԵԼ— 108, 113:
ՄԻՔԱՅԵԼ ՆԻԿՈԼԱՅԵՎԻՉ— 31:
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ— Տես՝ Տեր-Միքայելյան Բաղդասար:
ՄԽԻԹԱՐ ԱԲԲԱ— Մխիթարյան Միաբանության հիմնադիր: 6[ն]:
ՄԿՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ, ք.— 1—2:
ՄԿՐՏԻՉ— դեպուտատ: 46, 47:
ՄՈՒՐԱՏՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ— 7, 8, 21, 39, 40, 110:
ՄՍԵՐՅԱՆ ՄՍԵՐ— 17, 18, 2[ն], 8[ն]:
ՅԱՂՈՒԲՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ— Իրավաբան, զբաղվում էր նաև գրականությամբ, ռուս-հայերեն բառարանի հեղինակ: 100:
ՅԵԶԵԿՅԱՆ ԱՎԵՏԻՔ— 119:
ՅԵԶՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ— 39:
ՅԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՍԻԼ— 45:
ՅԵՂԻՇԵ— V դարի հայ պատմիչ: 6[ն]:
ՅԵՆԳԻԲԱՐՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ— Ժուռնալիստ, «Արձագանք»-ի աշխատակից: 101:
ՅԵՐԵՄԻԱ ՅԵՊԻՍԿՈՊՈՍ (—1897)— Սինոդի անդամ, 1891—93 թ. թ. տեղակալ: 115:
ՅԵՐԻՑՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ— 19, 20, 98:
ՆԱԴԻՐՅԱՆ (Տ. ՆԱԴԻՐՅԱՆ)— Ռ. Նադիրյանի կինը: 35:
ՆԱԴԻՐՅԱՆ ՌՈՄԱՆՈՍ, բժ.— Թատրոնական կոմիտեյի անդամ, Պռոշյանի լավ բարեկամը: 29—30, 32, 41:
ՆԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ— 116:
ՆԱԶԱՐՅԱՆ ՍՏԵՓԱՆՆՈՍ (1812—1879)— 1—5[ն], 7—8[ն], 9[ն]:
ՆԱԶԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ— «Աղբյուր»-ի և «Տարազ»-ի խմբագիր: 97, 108:
ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ (1829—1866)— 1[ն], 4[ն], 8[ն], 9[ն]:
ՆԱԼՅԱՆ— Պռոշյանի ընկերներից (60-ական թ. թ.): 42:
ՆԵՐՍԵՍ Ե ԱՇՏԱՐԱԿԵՑԻ— 6, 7, 8, 10, 11, 18, 40:
ՇԱՀԻՆՅԱՆ ՄԿՐՏԻՉ, բժ.— Պարսկաստանցի, Շահենի նախատիպը: 44:
ՇԱՀԽԱԹՈՒՆՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ— 28, 30, 31, 34:
ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՇԱՊՈՒՀ— 4, 6:
ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՎԱՍԻԼ— «Մշակ»-ի սկզբնավորության գործիչ: 87, 90:



ՇԱՆՇՅԱՆ ՊԵՏՐՈՍ— 6—7, 8, 11, 37—40, 55, 60, 62, 77, 94:
ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ ՎԱՍԻԼ— 42:
ՇԻՐՎԱՆԶԱԴԵ ԱԼԵՔՍԱՆԴՐ (1858—1935)— 122—123:
ՇԽՅԱՆՔ— Հայտնի ընտանիք Շուշում: 39:
ՇՈՒԽՅԱՆ ՍԱՐԳԻՍ (—1907)— Աշտարակի տանուտերը 60-ական թ. թ.: 78:
ՇՈՒՇԱՆԻԿ— Տես՝ Տեր-Հովհաննիսյան Ստեփաննոս:
ՉԱՄՉՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ— Պատմաբան Մխիթարյան Միաբանությունից: 7[ն]:
ՉԵՐՔԵԶՅԱՆ ՀՈՎՍԵՓ— 8[ն]:
ՋՄՇԿՅԱՆ ԳԵՈՐԳ— 32, 33, 79, 87, 90, 98, 99, 100:
ՋՄՇԿՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ— 33, 35:
ՋՄՇԿՅԱՆ ՍԻՄԵՈՆ, ք.— Պռոշյանի հետ միասին 1861 թ. բաց է արել առաջին աղջկանց («Գայանյան») դպրոցը: 34, 35, 41, 79:
ՋՈԲԱՆՅԱՆ ՄԱՐԻԱՄ— Տես՝ Մամիկոնյան— Ջոբանյան Մարիամ:
ՊԱԼԱՍԱՆՅԱՆ ՍՏԵՓԱՆՆՈՍ— 87:
ՊԱՏԿԱՆՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ— 22, 23, 24, 25, 25—28, 30, 32:
ՊԵՐՃԱՆՈՒՅՇ— Տես՝ Պռոշյան Պերճանույշ:
ՊՈՂՈՍ— Տես՝ Բենքլյան Պողոս:
ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼ— 62:
ՊՌՈՇՅԱՆ ԱՌԱՔԵԼ, ք.— Պռոշյանի պապը: 3:
ՊՌՈՇՅԱՆ ՊԵՐՃԱՆՈՒՅՇ— Պռոշյանի անդրանիկ դուստրը: 91:
ՊՌՈՇՅԱՆ ՍՏԵՓԱՆ— 3:
ՋԱԼԱԼՅԱՆ ՋԱԼԱԼ— Տես՝ Հասան—Ջալալյան Յեղիա, վ.:
ՋԱԼԱԼՅԱՆ ՌՈՒԲԵՆ— 45, 47, 56, 57—59, 60, 73:
ՋԱԼԱԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ, յեպ.— 10—14, 16, 18, 44, 55, 61:
ՌՈՍՏՈՎԱՆՅԱՆ— 93:
ՍԵԴՐԱԿՅԱՆ ԱՐԻՍՏԱԿԵՍ, յեպ.— 115, 116:
ՍԻՄՈՆՅԱՆ ՊԵՏՐՈՍ— 87—89:
ՍՄԲԱՏՅԱՆ ՄԵՍՐՈԲ, յեպ.— 64, 68—70, 81:
ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ ԳԱԲՐԻԵԼ (1825—1912)— 32, 33:
ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ՍՊԱՆԴԱՐ— «Նոր-Դար»-ի խմբագիր: 97, 104—105, 114:
ՍՎԵՋՆԻԿՅԱՆ ԱՎԵՏԻՔ— Թատրոնական կոմիտեյի անդամ: 32:
ՍՏԵՓԱՆ ՆԱԽԻՋԵՎԱՆՑԻ, վ.— Ագուլիսի Թովմա Առաքելո վանքի վանահայր: 57—58, 60, 63, 64, 68:
ՍՏԵՓԱՆԵ ԽՈՐԵՆ, վ.— 36, 88:
ՎԱՐՇԱՄՅԱՆ ՊԵՏՐՈՍ— Պռոշյանի ընկերը: 42:
ՎԵՀԱՊԵՏՅԱՆ ԳԵՈՐԳ, յեպ.— 53, 55, 91, 92:
ՏԱՏՅԱՆ ՊՈՂՈՍ ԲԵՅ— 6:

ՏԵՐ-ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՑԵՂԻՍԱԲԵԹ— Տես՝ Զմշկյան Սաթենիկ:

ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՇԱԿ— «Մշակ»-ի աշխատակիցներից: 108:

ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ, բժ.— 32, 34, 36, 41—43:

ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ ՆԻԿՈՂԱՅՈՍ— 16, 19, 21:

ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԱԲՐԻԵԼ, բժ.— 83:

ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍՏԵՓԱՆՆՈՍ— 42:

ՏԵՐ-ՀՈՎՍԵՓՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ— 14—15:

ՏԵՐ-ՀՈՎՍԵՓՅԱՆ ՆԻԿՈՂԱՅՈՍ— 16, 75, 78, 83—84:

ՏԵՐ-ՄԱՐԿՈՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ— «Մշակ»-ի աշխատակիցներից: 109:

ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԲԱՂԴԱՍԱՐ— 67:

ՏԵՐ-ՄԿՐՏԻՉ— 12:

ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ ԳՐԻԳՈՐ— 49, 50:

ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ ՄԿՐՏԻՉ ԱՂԱ— 48, 52, 67—68, 70, 71:

ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ ՔՐԻՍՏԱՓՈՐ— 48, 50, 52, 55,—66, 57, 59, 65, 67, 69, 70, 72, 81—82:

ՏԵՐ-ՄՈՒՇԵՂ (հավանորեն՝ Տեր-Ղևոնդյան)— 79:

ՏԵՐ-ՋԱՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ— 64—65:

ՏՈՐՈՉԵԼԼՈՒ— Իտալացի, Թիֆլիսի քաղաքային թատրոնի կապալառու: 28, 32:

ՐԱՖՖԻ (1835—1888)— 87, 90:

ՓԱՆՅԱՆ ԲԱՂԴԱՍԱՐ— 51—52, 65, 72, 81, 82:

ՓԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ— Ագուլիսեցի վաճառական: 69:

ՓԱՓԱԶՅԱՆ ՄԵՍՐՈԲ, ք.— Ագուլիսի յերկսեռ դպրոցի ուսուցիչ: «Հայկական Աշխարհ»-ի և «Արարատ»-ի աշխատակից: 56, 57—59:

ՓՈՆԴՈՅԱՆ ՀՈՎՍԵՓ— 15:

ՓՈՒՂԻՆՅԱՆ ՆԻԿՈՂԱՅՈՍ— 32:

ՔԱԼԱՆԹԱՐ ԱԼԵՔՍԱՆԴՐ— 108:

ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ յեղբայրներ, ՀԱՅՐԱՊԵՏ և ԴԱՎԻԹ— 58, 59:

ՔԱՐԱՄՅԱՆ ՆԻԿՈՂԱՅՈՍ— ժուռնալիստ, հետագայում բանկի ծառայող: 100, 101:

ՔՅԱՆԴԱՐՅԱՆ ՀԱԿՈԲ, վ.— 9, 10—11:

ՔՈՉԱՐՅԱՆ ՄԱՐԻԱՄ— Տես՝ Մելիք Ադամալյան Մարիամ:

ՔՈՒՉԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ, բժ.— Լոռեցի, ավորել է Մոսկվայում, հասարակական գործիչ: 109:

ՀՍՍՀ-ССР
им. А. Мясникяна



Պատ. խմբագիր՝ Հ. ՄԵԼԻՔՅԱՆ

Սրբագրիչ՝ Մ. ՋԱՏԻԿՅԱՆ

Կոնտրոլ սրբագրիչ՝ Ո. ՏՈՆՅԱՆ

Հանձնված է արտադրության 16/XI 1939 թ.

Ստորագրված է տպագրության 12/VII 1940 թ.

Գլավլիտի լիազոր Ե—1136, հրատ. № 67, պատվեր № 811, տիրաժ 1000.

---

Հայկական ՍՍՀ ԺԿԽ-ին կից Թերթերի և ամսագրերի տպարան, Երևան

ՀՀ Ազգային գրադարան
NL0389286

70·885